

ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱԴԱՆ СЕВЕРНЫЙ УНИВЕРСИТЕТ

Հովհաննես Թումանյանի հոգևոր
Ժառանգությունը և արդիականությունը
(Հ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին
նվիրված միջազգային գիտաժողովի
նյութեր, 15-16 մայիսի 2019 թ.)

Духовное наследие Ованеса
Туманяна и современность
(материалы международной научной
конференции, посвященной 150-летию
Ов. Туманяна, 15-16 мая 2019 г.)

Երևան-2019
Հյուսիսային համալսարանի հրատարակչություն

Ереван-2019
Издательство Северного университета

Հրատարակվում է Հյուսիսային համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հովհաննես Թումանյանի հոգևոր ժառանգությունը և արդիականությունը: Հ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր: /15-16 մայիսի 2019 թ./.
Հյուսիսային համալսարան.- Եր.: Հյուսիսային համալսարան,
2019.-397 էջ:

Ժողովածուում ամփոփված են Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակի առթիվ Հյուսիսային համալսարանի ռեկտորատի նախաձեռնությամբ 2019 թվականի մայիսի 15-16-ին անցկացված «Հովհաննես Թումանյանի հոգևոր ժառանգությունը և արդիականությունը» միջազգային գիտաժողովի նյութերը, որոնք ուղղված են հայ դասական գրականության ականավոր ներկայացուցչի հարուստ ու բազմակողմանի ստեղծագործական ժառանգության խոր ուսումնասիրությանն ու իմաստավորմանը, դրա տարբեր շերտերի ու երանգների հետազոտությանը, մեծ մտածողի հազվագյուտ ժառանգության արդիականության ու անանց արժեքի բացահայտմանը: Ժողովածուի մի շարք նյութեր նվիրված են «Հովհաննես Թումանյանը հայ արվեստում» և «Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը միջմշակութային փոխառնչությունների համատեքստում» հարցերի քննությանը:

Ժողովածուն կոչված է նպաստելու Թումանյանի հոգևոր ժառանգության հանրահռչակմանն ու տարածմանը, հատկապես նոր սերնդի, սովորող երիտասարդության գեղարվեստական մտահորիզոնի ընդլայնմանն ու հոգևոր աշխարհի հարստացմանը, գիտելիքների խորացմանն ու ստեղծագործական մտածողության զարգացմանը: Այն կծառայի երիտասարդության հայրենասիրական ու մարդասիրական կերպարի, նրա ակտիվ քաղաքացիական կենսադիրքորոշման ձևավորմանը, արդարության, բարության ու լավատեսության իդեալների հաստատմանը:

Ժողովածուն նախատեսվում է մասնագետների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանների համար:

Խմբագրական-հրատարակչական խորհուրդ

Մակիճյան Բորիս (խորհրդի նախագահ, մանկ. գիտ. թեկնածու, Երևան),
Ասատրյան Գրիգոր (խորհրդի նախագահի տեղակալ, փիլ. գիտ. դոկ., Երևան)

Ախտյան Էմմա (բան. գիտ. թեկ., Թբիլիսի), **Ասատրյան Աննա** (արվեստագիտ. դոկ., Երևան), **Բիստրյանցև Մերգել** (սոց. գիտ. դոկ., Մանկտ-Պետերբուրգ), **Գոմաա Մերվատ** (բան. գիտ. թեկ., Կահիրե), **Դանիելյան Սուրեն** (բան. գիտ. դոկ., Երևան), **Դոլուխանյան Ալեքստա** (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Երևան), **Երիցյան Մերգո** (բան. գիտ. դոկ., Երևան), **Ցալուղելաշվիլի Լևան** (Թբիլիսի), **Հակոբյան Գայանե** (բան. գիտ. թեկ., Երևան), **Հովհաննիսյան Սուսաննա** (բան. գիտ. դոկ., Երևան), **Մկրտչյան Նունե** (բան. գիտ. թեկ., Երևան), **Ջանիելյան Ռայա** (Երևան), **Ջանիդադյան Մազգա** (բան. գիտ. դոկ., Երևան), **Սահակյան Արմեն** (սոց. գիտ. դոկ., Երևան), **Սուքիասյան Հենրիետա** (բան. գիտ. թեկ., Երևան), **Վեստրովսկի Քրիստոֆ** (Շեցին, Լեհաստան), **Ջլջյան Լուսինե** (բան. գիտ. դոկ., Երևան):

Редакционно-издательский совет

Макичян Борис (председатель совета, канд. пед. наук, г. Ереван),
Асатрян Григорий (зам. председателя совета, док. филос. наук, г. Ереван),
Акопян Гаяне (канд. филол. наук, г. Ереван), **Асатрян Анна** (док. искусствоведения, г. Ереван), **Ахтян Эмма** (канд. филол. наук, г. Тбилиси),
Быстрияцев Сергей (док. соц. наук, г. Санкт-Петербург), **Весоловский Кристоф** (г. Шецин, Польша), **Гомаа Мерват** (канд. филол. наук, г. Каир),
Даниелян Сурен (док. филол. наук, г. Ереван), **Джанинян Рая** (г. Ереван),
Джанполадян Магда (док. филол. наук, г. Ереван), **Долуханян Аэлита** (член-кор. НАН РА, г. Ереван), **Ерицян Серго** (док. филол. наук, г. Ереван),
Мкртчян Нуне (канд. филол. наук, г. Ереван), **Оганесян Сусанна** (док. филол. наук, г. Ереван), **Саакян Армен** (док. соц. наук, г. Ереван), **Сукиасян Генриета** (канд. филол. наук, г. Ереван), **Флджян Лусине** (док. филол. наук, г. Ереван), **Цалугелашвили Леван** (г. Тбилиси).

ՄԵԾԱՐԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՀԱՎԵՐԺՈՂ ՀԱՆՃԱՐԻՆ

ԲՈՐԻՍ ՄԱԿԻՉՅԱՆ

Հյուսիսային համալսարանում 2019 թվականի մայիսի 15-16-ին տեղի ունեցած թումանյանական հերթական կարևոր միջոցառումը՝ բուհի ռեկտորատի ձեռնարկած միջազգային գիտաժողովը, նվիրված էր հայ մեծ բանաստեղծի ծննդյան 150-ամյա հոբելյանին և անցկացվեց «Հովհաննես Թումանյանի հոգևոր ժառանգությունը և արդիականությունը» խորագրով:

Գիտաժողովին յուրահատուկ երանգ ու իմաստ հաղորդեց նրա բացումից առաջ կազմակերպված հուշ-ցերեկույթը, որը տեղի ունեցավ մայրաքաղաքի Օդակաձև զբոսայգու Հյուսիսային համալսարանի դիմաց գտնվող Արմեն Տիգրանյանի հուշարձանի մոտ: Պսակադրության հանդիսավոր արարողությունից հետո հանդես գալով ողջունի խոսքով՝ նշեցի. «Այսօր մենք հավաքվել ենք այստեղ՝ այս նշանավոր հուշարձանի մոտ՝ հարգանքի տուրք մատուցելու հայ կոմպոզիտորական արվեստի փայլուն ներկայացուցչի՝ Արմեն Տիգրանյանի հիշատակին, ում նվիրական ջանքերով կյանքի կոչվեց հայ դասական երաժշտության անմահ գոհարներից մեկը՝ թումանյանական տեքստով գրված «Անուշ» օպերան»:

«Հովհաննես Թումանյանը երաժշտության մեջ» հետաքրքիր և բովանդակալի հաղորդմամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, երաժշտության բաժնի վարիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Աննա Ասատրյանը:

Ներկաները հուզմունքով լսեցին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մեներգչուհի Արմինե Մեյրանյանի և ՀՀ վաստակավոր արտիստ Ռուբեն Սահակյանի փայլուն կատարումները:

Այնուհետև արդեն համալսարանի շենքում՝ նիստերի դահլիճի նախասրահում տեղի ունեցավ Թենգիզ Միկոյանցի «Թումանյանի հետքերով» խորագիրը կրող գեղանկարների ցուցահանդեսի բացումը:

Գիտաժողովը, որը համալսարանում դեռևս ամիսներ առաջ հաստատված «Հովհաննես Թումանյան-150» ծրագրի շրջանակներում անցկացվող կարևոր միջոցառումներից էր, ներկայացուցչական լայն ընդգրկում ունեցավ:

Նշենք, որ գիտաժողովը վերջին տասը տարիներին համալսարանում թումանյանական թեմաներով կազմակերպված չորրորդ նմանատիպ միջոցառումն էր, միաժամանակ Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված առաջին միջազգային գիտաժողովը հանրապետությունում: Նրա աշխատանքին մասնակցում էին թումանյանագետներ ինչպես ՀՀ բուհերից (Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, Երևանի պետական համալսարան, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարան և այլն), այնպես էլ գիտնականներ ՀՀ ԳԱԱ արվեստի և պատմության ինստիտուտներից: Մասնակցում էին նաև մասնագետներ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմից, Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանից և այլ կազմակերպություններից: Գիտաժողովի հաջող անցկացմանը իրենց ուրույն նպաստը բերեցին Վրաստանի գրողների միության, Թբիլիսիի «Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնի, Ռուսաստանի Դաշնության, Լեհաստանի, Ռումինիայի և Եգիպտոսի

բուհերի և գրական-մշակութային կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնք զբաղվում են Հ. Թումանյանի հոգևոր ժառանգության տարբեր կողմերի, միջգրական և միջմշակութային կապերի և փոխառնչությունների հետազոտմամբ:

Միջազգային գիտաժողովը ներառական խոսքով բացեց տողերիս հեղինակը, որը գիտաժողովի կազմկոմիտեի նախագահն էր: Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին և արտերկրից ժամանած հյուրերին՝ գիտաժողովին մաղթեցինք հաջող ու արգասաբեր աշխատանք:

Այնուհետև գիտաժողովը ողջունեցին Հայաստանում Վրաստանի դեսպանության ավագ խորհրդական Նինո Ափցիաուրին, Սանկ Պետերբուրգի պետական տնտեսագիտական համալսարանի պրոֆեսոր, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր Սերգեյ Բիստրյանցևը, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Մերվատ Գոմաան (Եգիպտոս), Շեցինի համալսարանի (Լեհաստան) ներկայացուցիչ Քրիստոֆ Վեսոլովսկին և ուրիշներ:

Գիտաժողովն աչքի ընկավ իր մասնակիցների բարձր որակական կազմով: Գիտաժողովի 35 մասնակիցներից 12-ը կամ ավելի քան 1/3-ը գիտությունների դոկտորներ էին, 14-ը՝ գիտությունների թեկնածուներ, մյուս 9 մասնակիցները մշակույթի գործիչներ էին, վաստակաշատ գրողներ, այդ թվում տաղանդավոր բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը:

Գիտաժողովի լիագումար նիստում, իսկ այնուհետև մասնագիտացված երեք խմբերում («Թումանյանի հոգևոր ժառանգության անանց արժեքը», «Թումանյանը հայ արվեստում» և «Թումանյանի ստեղծագործությունը միջմշակութային փոխառնչությունների համատեքստում») լսվեցին հայ

մեծ մտածողի հոգևոր հարուստ ժառանգության տարբեր շերտերը լուսաբանող 35 զեկուցումներ: Հետաքրքիր ու արժեքավոր հաղորդումներով հանդես եկան, մասնավորապես, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր Սուսաննա Հովհաննիսյանը («Լուսավոյչի կանթեղը»), Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը («Հովհաննես Թումանյանի քաղակաները համամարդկային են ու հավերժական»), ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը («Էջեր երաժշտական թումանյանապատումից»), Վրաստանի ներկայացուցիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Էմմա Ախտյանը («Հովհաննես Թումանյանը և Վրաստանը»), Սանկտ Պետերբուրգի պետական տնտեսագիտական համալսարանի պրոֆեսոր, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր Սերգեյ Բիստրյանցևը («Հովհաննես Թումանյանի ստեղծագործության հասարակական նշանակությունը»), վրաց բանաստեղծ Լևան Ցալոլեղլաշվիլին («Հովհաննես Թումանյանը և ժամանակակից Վրաստանը»), «Լոռվա ձոր հայրենակցական միության նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգո Երիցյանը («Թումանյանը և ժամանակը»), բանաստեղծ, պետական մրցանակների դափնեկիր Ռազմիկ Դավոյանը («Համատարած Թումանյան»), Եգիպտոսի ներկայացուցիչ, Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու

Մերվատ Գոմաան («Հովհաննես Թումանյանի և արաբ բանաստեղծների ստեղծագործությունների համեմատական վերլուծություն»), Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր Մագդա Ջանփոլադյանը («Թումանյանական ժառանգության ռուսերեն թարգմանությունների հարցի շուրջ»), ՀՀ Ազգային ժողովի լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ, բանասիրական գիտությունների դոկտոր Ռոբերտ Բադդասարյանը («Հովհաննես Թումանյանը՝ Հայաստանի և Ռուսաստանի հոգևոր միավորման ջատագով»), Հյուսիսային համալսարանի լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Գայանե Հակոբյանը («PR տեխնոլոգիաները Հովհաննես Թումանյանի հեքիաթներում»), Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայ նոր և նորագույն շրջանի գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը («Հովհաննես Թումանյան և Վահան Թեքեյան. գրական առնչությունների շուրջ»), Հյուսիսային համալսարանի հայոց լեզվի, գրականության և լրագրության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Նունե Մկրտչյանը («Հովհաննես Թումանյանը և ժողովրդական բանահյուսությունը»), ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական քարտուղար, ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Մարգարիտա Քամայանը («Հովհաննես Թումանյանը հայ կերպարվեստում»), ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Մարիամ Հովսեփյանը («Հովհաննես Թումանյանի՝ Կոնստան-

տինապոլսի այցելության լուսաբանումը պոլսահայ պարբերականների էջերում»), ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Արսեն Համբարձումովը («Հովհաննես Թումանյանի «Գիքոր» պատմվածքի՝ Ամասի Մարտիրոսյանի էկրանավորումը (կինոգիտական վերլուծություն՝ փաստարկման տեսության հիման վրա»), Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանի գլխավոր ֆոնդապահ Տիգրան Սարգսյանը («Ալմաստ» օպերայի հավերժության գաղտնիքը»):

Հայ ժողովրդի ազգային մտածողությանը և թումանյանական աշխարհընկալմանը ներհատուկ, սակայն տակավին հետազոտողների ուսումնասիրության առարկա չդարձած կարևոր հիմնախնդրի պարզաբանման էր նվիրված Հյուսիսային համալսարանի գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոնի ղեկավար, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահ Գրիգոր Ասատրյանի «Անտրոպոմորֆիզմը Հովհաննես Թումանյանի բանաստեղծական աշխարհում» զեկուցումը: Ուշագրավ հարցեր էին արծարծված փիլիսոփայական գիտությունների դոկտոր Վալերի Միրզոյանի «Տիեզերքի տերն եմ ես» զեկուցման մեջ:

Գիտաժողովում ծավալվեց զեկուցումների, դրանցում արծարծված գաղափարների ու մտքերի, տեսակետների ու կարծիքների ազատ ու անկաշկանդ քննարկում, դրանց համակողմանի գիտական վերլուծություն ու ստեղծագործական համադրում:

Գիտաժողովի արդյունքներն այնուհետև քննության առնվեցին համալսարանի գիտական խորհրդում, որտեղ որոշվեց նախապատրաստել և առանձին ժողովածուով լույս

ընծայել գիտաժողովի նյութերը, ինչն էլ այժմ ընթերցողի սեղանին է:

Հիշատակման է արժանի նաև այն, որ հրնթացս գիտաժողովի տեղի ունեցավ թեև առաջին հայացքից դրա հետ անմիջական առնչություն չունեցող, սակայն խորհրդանշական մի իրադարձություն՝ Հյուսիսային համալսարանը կնքեց միջազգային համագործակցության ևս մեկ պայմանագիր, այս անգամ՝ Լենինգրադի Ա. Ս. Պուշկինի անվան պետական համալսարանի հետ:

Գիտաժողովն իր ամբողջության մեջ նշանակալի քայլ հանդիսացավ՝ ուղղված Թումանյանի կյանքի ու գործունեության առավել լրիվ լուսաբանմանը, հայ դասական գրականության ականավոր ներկայացուցչի հոգևոր հարուստ ժառանգության խոր իմաստավորմանը, նրա տարբեր շերտերի ու երանգների ուսումնասիրմանը, միջմշակութային փոխառնչությունների համատեքստում ու ժամանակների հոլովությամբ Թումանյանի հոգևոր ժառանգության տեղի ու դերի առավել լրիվ ու համակողմանի բացահայտմանը:

Միաժամանակ գիտաժողովի նյութերը, համոզված ենք, մեծապես կնպաստեն Թումանյանի հոգևոր ժառանգության հանրահռչակմանն ու տարածմանը, հատկապես նոր սերնդի, սովորող երիտասարդության գրական-գեղարվեստական մտահորիզոնի ընդլայնմանն ու հոգևոր աշխարհի հարստացմանը, գիտելիքների խորացմանն ու ստեղծագործական մտածողության զարգացմանը: Դրանք, անշուշտ, կծառայեն երիտասարդության հայրենասիրական ու մարդասիրական կերպարի, նրա ակտիվ քաղաքացիական կենսադիրքորոշման ձևավորմանը, արդարության, բարության ու լավատեսության իդեալների հաստատմանը:

Թումանյանական գիտաժողովը նաև լավ առիթ հանդիսացավ համալսարանում լրացուցիչ նորարարական ծրագրերի մշակման համար: Համալսարանում արդեն մշակվել և կյանքի ուղեգիր են ստացել երեք նորարարական ծրագրեր: Դրանցից առաջինը վերաբերում է «Կրթության կառավարում» մասնագիտության գծով մագիստրոսի կրթական ծրագրով համալսարանում 2019-2020 ուս.տարում հեռակա ուսուցմամբ անվճար կրթության կազմակերպմանը: Արդեն ձևավորվել է 14 մագիստրանտներից բաղկացած ուսումնական խումբը, որի կազմում համալսարանի վարչական աշխատողների ներկայացուցիչներից բացի ընդգրկվել են նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության աշխատակազմի 4 աշխատակից:

Այս շաբթի մյուս ծրագրով ընթացիկ ուսումնական տարում համալսարանում սփյուռքահայերի համար անվճար կրթություն է կազմակերպվում հետևյալ 6 մասնագիտությունների գծով՝ նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա, տարրական մանկավարժություն և մեթոդիկա, ինֆորմատիկա, լրագրություն, կառավարում գրոսաշրջության ոլորտում և ծրագրային ճարտարագիտություն:

Եվ, վերջապես, երրորդ նորարարական ծրագրի շրջանակներում իրականացվում է հեռավար կրթության սկզբունքների արմատավորում համալսարանի ուսումնական գործընթացում:

Այս առիթով նշենք նաև, որ գիտակցելով մեծն Թումանյանի դերը մեր հոգևոր ժառանգության մեջ՝ բարձրագույն կրթության ոլորտում առաջատարի դերակատարմանը ձգտող Հյուսիսային համալսարանը մշտապես հանդես է եկել թումանյանագիտության զարգացմանն ուղղված բազմաթիվ նախաձեռնություններով՝ այդ ոլորտում ձեռք բերելով առաջատարի համարում: ՀՀ պարբերական մամուլի ուշադ-

թությունից ևս չի վրիպել Հյուսիսային համալսարանի՝ թումանյանագիտության ոլորտում գրանցած հաջողությունները, իսկ հրապարակված որոշ հոդվածներում Հյուսիսային համալսարանը բնութագրվում է որպես թումանյագիտության ոլորտի առաջատար: 2009 թվականին Հյուսիսային համալսարանում հիմնադրվել է «Վերնատուն» թումանյանագիտական կենտրոնը, որի անդամները կապ են պահպանում Հ. Թումանյանի՝ աշխարհով մեկ ցրված հարազատների հետ, որոնք, տեղեկանալով Հյուսիսային համալսարանում նոր «Վերնատան» հիմնադրման մասին, 2009 թվականին հյուրընկալվեցին բուհում՝ մասնակցելով Ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան 140-ամյակին նվիրված հանդիսություններին: Իսկ Հյուսիսային համալսարանի պատվիրակությունը 2009 և 2019 թվականներին մեկնել է Թբիլիսի՝ Թումանյանի 140 և 150-ամյակներին նվիրված միջոցառումներին մասնակցելու համար: Միայն վերջին տասը տարում Հյուսիսային համալսարանում հրատարակվել են միջազգային կամ միջբուհական գիտաժողովների երեք ժողովածուներ՝ «Թումանյանը և 21-րդ դարը», «Թումանյանը և արդիականությունը» և «Թումանյան-145»: Ինչպես արդեն վերը նշեցինք՝ սա Ամենայն հայոց բանաստեղծին նվիրված թվով չորրորդ գիտաժողովն է: Հյուսիսային համալսարանի կազմակերպած գիտաժողովներին մշտապես մասնակցում են արտերկրի և հայաստանյան առաջատար բուհերի, ինչպես նաև գիտակրթական կազմակերպությունների ներկայացուցիչներ, այդ թվում նաև ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի մի շարք առաջատար գիտաշխատողներ:

Սկսած 2000 թվականից՝ Թումանյանի ծննդյան օրը՝ փետրվարի 19-ին, Հյուսիսային համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները ծաղկեպսակ են

խոնարհում Թումանյանի հուշարձանին, այդ օրը պարգևատրվում են թումանյանագիտության ոլորտում մեծ ավանդ ունեցող մտավորականները, հավաստագրեր են ստանում Հովհաննես Թումանյանի անվան անվանական կրթաթոշակի արժանացած ուսանողները: Թումանյանի ծննդյան օրերին Երևանում և Ալավերդի քաղաքի բաժանմունքում Հյուսիսային համալսարանի կողմից կազմակերպվում են հանդիսություններ, որոնց մասնակցում են պետական գործիչներ և գիտակրթական ոլորտի ներկայացուցիչներ:

Քանի որ Հ. Թումանյանի ծննդյան 150-ամյակի առթիվ 2019 թվականը հայտարարվել է թումանյանական, հարկ ենք համարում համառոտ կերպով ներկայացնել այն հիմնական միջոցառումները, որոնք «Թումանյան-150» ծրագրի շրջանակներում կազմակերպել է Հյուսիսային համալսարանը:

Համալսարանի գիտխորհրդի՝ դեռևս 2018թ. նոյեմբերի նիստում ընդունված «Թումանյան-150» ծրագրով նախատեսված առաջին միջոցառումը 2019 թ. փետրվարի 18-ին Հ. Թումանյանի հուշարձանին ծաղկեպսակ խոնարհելու արարողությունն էր, որին մասնակցեցին ներկայացուցիչներ համալսարանից, հարգարժան հյուրեր հանրապետության տարբեր հաստատություններից: Այդ օրը բուհում հաստատված «Թումանյան-150» հուշամեդալով պարգևատրվեցին գիտամշակութային ոլորտի մի շարք ներկայացուցիչներ: Նմանօրինակ մեկ այլ հանդիսություն էլ անցկացվեց փետրվարի 19-ին Դսեղի տուն-թանգարանում, որի ընթացքում «Թումանյան-150» հուշամեդալով պարգևատրվեց ՀՀ գրողների միության նախագահ Էդ. Միլիտոնյանը:

«Թումանյան-150» ծրագրի համաձայն՝ փետրվարի 20-ին Երևանում կազմակերպվեց հանդիսություն, որի ընթացքում «Թումանյան-150» հուշամեդալով պարգևատրվեցին ՀՀ ԱԺ փոխնախագահ Վահե Էնֆիաջյանը և Մ. Հերացու անվան

պետական բժշկական համալսարանի բժշկական տերմինա-
բանության և հայոց լեզվի ամբիոնի վարիչ Հենրիետա
Սուքիասյանը, միջոցառմանը մասնակցեցին մեծ թվով հնդիկ
ուսանողներ բժշկական համալսարանից, որոնք հայերենով
հնչեցրեցին Թումանյանի ստեղծագործությունները: Իրենց
անմիջական ելույթով հիացրեցին նաև բուհի ավագ դպրոցի
սաները՝ միջոցառման մասնակիցներին ներկայացնելով մեծ
գրողի կյանքի, գործունեության ու ստեղծագործության
հիշարժան էջերը:

Նույնքան տպավորիչ ու բովանդակային առումով
հազեցած էր նաև մարտի 21-ին Ալավերդու «Թումանյան»
բաժանմունքում կազմակերպված՝ «Թումանյանական պատ-
գամներին հավատարիմ» խորագրով միջոցառումը, որին
հրավիրված էին տարբեր բուհերից և տարբեր քաղաքներից
մտավորականներ, պետական և հասարակական գործիչներ:
Միջոցառմանը մասնակցելու համար տողերիս հեղինակի
գլխավորությամբ բուհից Ալավերդի մեկնեց պատվի-
րակություն, որի կազմում էին դասախոսներ, վարչական
աշխատակիցներ, ավագ դպրոցի սաները, տնօրենն ու
ուսուցիչներ: Ներկաներին ողջույնի խոսք ասաց Ալավերդի
համայնքի համայնքապետ Սասուն Խեչումյանը, Հերացու
անվան պետական բժշկական համալսարանի հայոց լեզվի և
բժշկական տերմինաբանության ամբիոնի վարիչ, Բ. Գ.Թ.,
դոցենտ Հենրիետա Սուքիասյանը, բաժանմունքի դասախոս
Անահիտ Մուկուչյանը, այլք: «Թումանյան-150» հուշամե-
դալով պարգևատրվեցին Ալավերդի համայնքի ղեկավար,
Հյուսիսային համալսարանի լավագույն շրջանավարտ Ս.
Խեչումյանը, ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության
ուսուցչուհի Ն. Խաչատրյանը, «Թումանյան» բաժանմունքը
(տնօրեն՝ Ա. Մակիչյան), «Թումանյանական աշխարհ» թերթի

խմբագրությունը, Ալավերդու «Լազուր» ժողգործիքների համույթի ղեկավար Ս. Ալեքսանյանը:

Հանդիսությունն ավարտվեց գեղարվեստական մասով: Ելույթ ունեցան Հյուսիսային համալսարանի ավագ դպրոցի սաները, Ալավերդու «Լազուր» ժողգործիքների համույթը:

Ի մի բերելով մեկ անգամ ևս նշենք, որ Հյուսիսային համալսարանի «Թումանյան-150» հուշամեդալով պարգևատրվել են բազմաթիվ մտավորականներ Երևանից, Թբիլիսիից և Ալավերդուց: Հուշամեդալներ են ստացել նաև «Հյուսիսային համալսարանի թումանյանական «Վերնատուն» գիտամշակութային կենտրոնը», Երևանի Հ. Թումանյանի թանգարանը, Հ. Թումանյանի Դսեղի տուն-թանգարանը, Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը, «Լոռվա ձոր» հայրենակցական միության նախագահ Սերգո Երիցյանը, այլք:

«Թումանյան-150» միջոցառումների համատեքստում համալսարանում տպագրվել է նաև «Հյուսիսային համալսարան» պաշտոնաթերթի հավելվածը՝ նվիրված թումանյանագիտության ոլորտում Հյուսիսային համալսարանում կատարված աշխատանքներին, պատվոգրերով պարգևատրվել և դրամական խրախուսանքի են արժանացել Հ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված միջոցառումներին ակտիվ մասնակցություն ունեցած անձինք: «Հյուսիսային համալսարան» պաշտոնաթերթի մի շարք համարներ ամբողջությամբ նվիրվել են թումանյանական միջոցառումներին:

Մեզ համար առանձնահատուկ նշանակություն ուներ հատկապես Հյուսիսային համալսարանի՝ ավագ դպրոցների 11-12-րդ դասարանների համար կազմակերպած համադպրոցական մրցույթը՝ «Իմ Թումանյանը» խորագրով, որի

արդյունքները ամփոփվեցին մայիսի երկրորդ կեսին՝ բուհի մեծ դահլիճում:

Ուրախալի էր այն փաստը, որ մրցույթին մասնակցության հայտ ներկայացրեցին բավականին մեծ թվով դպրոցականներ՝ հանրապետության շուրջ 30 կրթօջախների 150 աշակերտներ: Մեծ աշխատանք կատարեց հատուկ այդ նպատակով ստեղծված հանձնաժողովը՝ բժախնդիր ու անաչառ կերպով ընտրելով լավագույն մասնակիցներին:

Մրցույթն անցկացվեց երեք անվանակարգերում՝ «Թումանյանի բանաստեղծությունների լավագույն ասմունքող», «Իմ Թումանյանը» (շարադրություն), «Թումանյանին նվիրված աշակերտական բանաստեղծություններ»: Մրցույթի պայմանների համաձայն՝ առաջին մրցանակի արժանացած դպրոցականները (8 հոգի) հնարավորություն ունեցան սովորելու Հյուսիսային համալսարանի անվճար ուսուցման համակարգում ցանկացած մասնագիտությամբ, երկրորդ կարգի մրցանակի արժանացածները (10 հոգի)՝ 50 տոկոս զեղչի հնարավորություն ունեցան, իսկ երրորդ կարգի մրցանակ ստացած աշակերտները (12 հոգի) հոկտեմբերի 12-ին համալսարանի պատվիրակության հետ մեկնեցին Թբիլիսի՝ այցելության «Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոն: Քսան հոգուց բաղկացած պատվիրակությունը՝ ղեկավար պրոֆեսոր Ա. ճուղուրյան, երրորդ մրցանակի արժանացած դպրոցականներ, դպրոցի տնօրեններ, ինչպես նաև թումանյանական միջոցառումներին ակտիվ մասնակցություն ցուցաբերած համալսարանի աշխատակիցներն ու ուսխորհրդի անդամները, անմոռանալի մեկ օր անցկացրեց Թբիլիսիում՝ նախ շրջելով մեծ գրողի՝ կյանքի վերջին տարիներին անցկացրած և ներկայումս էլ գիտամշակութային կենտրոնի վերածված օջախում, այնուհետև եղան Խոջիվանքում՝ ծաղկեպսակ խոնարհելով Ամենայն հայոց բանաստեղծի

գերեզմանին, այցելեցին Սուրբ Գևորգ եկեղեցին՝ մասնակցելով պատարագի, իսկ Սայաթ-Նովայի գերեզմանի մոտ մեր պատվիրակության անդամները ինքնաբուխ ելույթներ ունեցան՝ հնչեցնելով սիրո երգչի անմահական երգերը:

Մեզ համար կրկնակի ուրախություն էր պատվիրակության անդամների ոգևորությունը այցելության ընթացքից, նրանց երախտագիտությունը բուհի ղեկավարությունից՝ նմանօրինակ նախաձեռնության համար:

Հենց այս այցելությամբ էլ ամփոփվեց «Թումանյան-150» ծրագիրը: Սակայն Հյուսիսային համալսարանն իր հետագա գործունեության ընթացքում մշտապես արձագանքելու է Ամենայն հայոց բանաստեղծի կյանքի, գործունեությանն առնչվող յուրաքանչյուր իրադարձության և, համոզված ենք, պահպանելու է թումանյանագիտության ոլորտում առաջատարի համարումը:

РЕЗЮМЕ

ДОЛГ ВОЗВЕЛИЧИВАНИЯ – ВЕЧНОМУ ГЕНИЮ

БОРИС МАКИЧЯН

Статья посвящена анализу и осмыслению проводимых в Северном университете работ по исследованию и распространению духовного наследия Ованеса Туманяна, увековечиванию его памяти. В ней уделяется особое внимание анализу итогов проведенной 15-16 мая 2019 года в Северном университете и посвященной 150 – летию со дня рождения Туманяна Международной научной конференции «Духовное наследие Ованеса Туманяна и современность», раскрытию особой роли конференции в исследовании, осмыслении и популяризации богатого духовного наследия Туманяна.

Ключевые слова: Ованес Туманян, духовное наследие, Северный университет, Научно – культурный центр «Туманянский вернатун» Северного университета, международная научная конференция, армянское искусство, межкультурные отношения, дружба народов.

ABSTARCT
A TRIBUTE TO THE ETERNAL GENIUS
BORIS MAKICHYAN

The article is dedicated to the study and the development of the spiritual heritage of Hovhannes Tumanyan, the analysis and understanding of the works performed at Northern University in memory of the renowned poet and publicist.

It reflects the results of the international conference “The Spiritual Heritage and the Present of Hovhannes Tumanyan” dedicated to the 150th anniversary of Hovhannes Tumanyan “, which was held on May 15-16, 2019 at Northern University.

Key words: Hovhannes Tumanyan, spiritual heritage, Northern University, “Vernatun” research and cultural centre of Northern University, intercultural mergers, Armenian art, the friendship of nations.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԱԶԳԻ ՀԱՐԱՏԵՎՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱՐՁՐԱԿԵՏ

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հովհաննես Թումանյանը մեր այցեքարտն է աշխարհում, այցեքարտ, որի վրա «բնությունն ու աստված են դրել իրենց կնիքը»: Վաղուց է ասվել՝ նա է մեր Պուշկինը, Շեքսպիրը, Գոթեն, Միցկևիչը, այսինքն՝ նա, որից ամեն ազգ միայն մեկն է ունենում: Նրա անունը հավասարի իրավունքով կարող է դրվել միայն Մեսրոպ **Մաշտոցի**՝ որպես հայ ազգին անմահություն պարգևող, Մովսես **Խորենացու**՝ որպես հայոց պատմությամբ ազգի թիկունքն ապահովող, Գրիգոր **Նարեկացու**՝ որպես իր համամարդկային գույնով աշխարհին շլացնող և Արարչի հետ զրույցի բռնված հանճարների կողքին:

Իր քաջությամբ Թումանյանը կարող էր մրցել գորավորներ Վարդան Մամիկոնյանի ու Անդրանիկի, Նժդեհի և հայ պետականությանը նախանձախնդիր յուրաքանչյուր արքայի, Տիգրան Մեծի կամ Աշոտ Երկաթի հետ, իր առողջ մտածողությամբ և իմաստությամբ նա կարող է մրցել ցանկացած փիլիսոփայի ու գիտնականի հետ: Նրա անունը նաև յուրաքանչյուր մեծահարուստ բարերարի՝ Մանթաշովի, իր տարեկից Գյուլբենկյանի և այլոց կողքին է: Սակայն Թումանյանն ավելի մեծ բարեգործ էր, քանի որ թեև պարտատերերից ազատ օր ու ժամ չի ունեցել, սակայն բաշխել է ոչ միայն ունեցածը, այլև չունեցածը, ոչնչից ստեղծել է ինչ, զարմացրել ամենքին՝ թե ինչպես կարելի է ջրի մեջ քարեր գցել, դրանք լոբի դարձնել ու սովից փրկել մի ամբողջ ժողովրդի, դառնալ Ամենայն հայոց հոեբույժ և իր անսասան հավատով, «Ղոչաղ կացեքով», «Էսպես չի մնայով»

համազգային ստրեսից (ճգնաժամից) դուրս բերել մի ամբողջ ազգ:

Թումանյանը բացարձակ, տիեզերական մեծություն է: Այն իր մեջ ներառում է մեր բոլոր հանճարների լույսը: Ահա թե ինչու նա մեր Լուսավորչի կանթեղն է, մեր մեծերի մեծն է, մեր ամենաամենան: Նա և՛ զինվոր է, և՛ գեներալ, և՛ արքա ու սպասավոր, և՛ պոետ, հրապարակախոս ու քննադատ: Նա նաև մեր ապագան է, պահում է մեր ազգի **թիկունքը**. նրանից ծնվել և ծնվելու են մեր գալիքի նոր հանճարները, որոնցից յուրաքանչյուրն իր մեջ կրելու է Թումանյանի մի մասինկը, որն իբրև արյունատար անոթ սնունդ է տալու նրանց սրտին:

Բանաստեղծի ասպետական օրենսգրքի առաջին հոդվածը մարդասիրությունն է. ո՞վ է առաջին հայացքից իր երեխային սպանողի զավակին օրհնել.

Երագումըս մի մաքի

Մոտըս եկավ հարցմունքի.

-Աստված պահի քո որդին,

Ո՞նց էր համը իմ ձագի...¹

Միայն Թումանյանն է ընդունակ այսպիսի մեծահոգության, սակայն հնարավոր է նաև, որ պոետը ոչ թե օրհնել, այլ հեգնել է, կամ սովորեցրել, որ այդպիսի ցավ չի կարելի պատճառել, գուցե բարությանը չարությանը հաղթելու ուղի է ցույց տվել, գուցե հազար ու մի բան. չէ՞ որ ինքն էր ասում «Արվեստը պետք է լինի աչքի նման թափանցիկ, պարզ և աչքի նման բարդ»²:

Գուցե... ամեն դեպքում մարդկային էությանը օտար մի զգացմունք՝ վերերկրային ու աստվածային, որ բանաստեղծին

¹ **Հովհ.Թումանյան** , Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով (այսուհետև ԵԼԺ), (Վերախմբագրված հրատարակություն), հտ.2, Եր., 2018, էջ 24:

² **ՆվարդԹումանյան**, Հուշեր և զրույցներ, Եր., 1987, «Լույս» հրատ., էջ 83:

դարձնում է հոգևոր ու բարոյական արժեքների վիթխարի տիրակալ՝ բարձր անեծքից, վրժեից ու քենից: Նա նույնիսկ 1915-ին չանիծեց մեր դարավոր թշնամուն, ավելին՝ հավատաց, որ եկող սերունդները չեն պղծի իրենց շուրթերն անեծքով, սակայն մի բան, այնուամենայնիվ, անիծեց.

Չարն էլ է միշտ ապրում անմեռ,

Անե՛ծք նըրա չար գործքին....³

Չարի ու բարու վերջ չունեցող պատերազմում բանաստեղծը շահեց իր ճակատամարտը և հասավ հավիտենական սիմվոլների արվեստի բարձունքին, ստեղծեց քաջնազարների, ձախորդփանոսների, կիկոսների, քեռիխեչանների և բազմաթիվ այլ հասարակ անուն դարձած հերոսների կախարդական մի պատկերասրահ: Նա չի խաբում նույնիսկ երեխային, չի թաքցնում, որ անմահ են նազարներն ու փանոսները, կիկոսները, հասաններն ու հուռիները, վստահ է, որ անխելքներն այսպես թե այնպես գայլի կերակուր են դառնալու, և միշտ լինելու է ուրիշի ունեցվածքը յուրացնող, խաբելու հմտություններին ու տեխնոլոգիաներին տիրապետող ուստա փիստ:

Թումանյանն է մեր ամենամեծ ընտրյալը, մեր մինուճարը, անհաս Արարատը, **հանապազօրյա հացը, մեր լավաշ հացը:** Խոստովանենք՝ մեր գրականության մեծերից և **ո՛չ մեկը չի դարձել ժողովրդական առաջնորդ, ո՛չ մեկը չի կրել իր ուսերին հայոց վշտի այնպիսի բեռ, ինչպես Թումանյանը, ո՛չ մեկը այնպես չի մղվել դեպի այն վայրերը, ուր ժողովրդի կենաց ու մահու խնդիրներն էին լուծվում, ոչ մեկը չի եղել այնքան հարազատ, որից ավելի հարազատ չի կարող լինել:**

³ **Հովհ. Թումանյան** , ԵԼԺ տասը հատորով, հտ. 4, Եր., 1991, Հայաստանի ԳԱ հպատ., էջ 47:

Ասել, որ Թումանյանը մեծ բանաստեղծ էր կամ մեծ ազգային գործիչ, նշանակում է ոչինչ չասել: **Նա միայն անհատ չէ, այլ բացառիկ արտասովոր ֆենոմենալ երևույթ:** Հովհաննես Թումանյանը մեր ազգի կարգաբանական աստիճանի՝ պետականության գաղափարի ու մշակույթի բարձրակետն է:

Բանաստեղծը պետականության բացակայության պայմաններում և ողջ կյանքում ստանձնել է անպետական երկրի պետական գործչի դերը: Այսպես՝

Թումանյանը Մշակույթի նախարարություն էր. միաժամանակ նախագահում կամ անդամակցում էր մշակութային տասնյակ ընկերություններ՝ Գրողների, Երաժշտական, Պատմական, Ազգագրական և այլն: Միայնակ ձևավորել և իրականացնում էր ազգային մշակութային քաղաքականություն՝ նախ ճանաչելի դարձնել ազգայինը և ապա հանրահռչակել այն:

Թումանյանը մեր պաշտպանության նախարարությունն էր. զենք էր հայթայթում և հասցնում մեր գոյապայքարի մարտիկներին, Թիֆլիսում Ամերիկյան դեսպանատունը 1918թ. միմիայն Թումանյանին վստահեց և նրան գաղտնի գումարներ տրամադրեց ինքնապաշտպանական մարտերի համար զենք ու զինամթերք ձեռք բերելու նպատակով:

Թումանյանը մեր Արտաքին գործերի նախարարությունն էր: Նրա տունը դարձել էր նախագահի նստավայր: Այստեղ բանակցություններ են եղել գերմանացի, անգլիացի, ֆրանսիացի, լեհ հյուպատոսների, թուրք, վրացի, պարսիկ և այլ ազգերի գործիչների հետ: Թե ինչպես է նրան հաջողվել ռուս բարձրաստիճան պաշտոնյաներին համոզել իր տրամադրության տակ դնել ռուսական զորք ու զենք՝ ուղղելու համար Կովկասի թաթարների դեմ, հայտնի է միայն իրեն:

Թումանյանը կրթության և գիտության նախարարություն էր: Նա Լ.Շանթի և Ստ.Լիսիցյանի հետ հեղինակեց

«Լուսաբեր» դասագիրքը, որը տասնամյակներ շարունակ անփոխարինելի էր⁴: Ցեղասպանության տարիներին ջանք չինայեց ստեղծելու ազգային հմալսարան և ակադեմիա, նյութապես ապահովելու հայ գրողին, գիտնականին ու դասախոսին:

Թումանյանը Մփյուռքի նախարարություն էր: Առաջինը նա կամրջեց Մփյուռքը Հայաստանին: Երբ Մյասնիկյանը 1921-ին առաջարկեց գնալ Պոլիս Հայաստանին նյութական աջակցություն բերելու նպատակով, Թումանյանը նախ հրաժարվեց, քանի որ վատառողջ էր, ապա Երևանի Աստաֆյան փողոցում տեսավ սովից մեռած երեխաների և մտափոխվեց⁵: Պոլիս գնալու օրը, երբ կառքը դրսում սպասում էր, քաղցկեղով արդեն հիվանդ բանաստեղծը խորհում էր՝ երանի ոտքերը կոտրվեին ու չգնար: Այնուամենայնիվ, գնաց և հայերի համար «Արև ծագեց Մարմարա ծովի վրա»⁶: Իր վիթխարի հեղինակության շնորհիվ հարյուրավոր կյանքեր փրկվեցին. Թումանյանը հաց հասցրեց սովյալներին, նրա շնորհիվ շատերը Մփյուռքից տուն վերադարձան:

Թումանյանը սոցալ նախարարություն էր: Ծանոթ և անծանոթ քեռիիեչանների, անապահով գրողների, որբերի ու գաղթականների վիթխարի բազմությունը պոետին հանգիստ չի տվել: Նրանից խնդրում էին աշխատանքի տեղավորել, կրթաթոշակներ նշանակել: Լինում էին նաև «մուննաթներ»,

⁴ Այդ մասին հանգամանորեն տես **Հովհաննիսյան Ս.Գ.**, «Թումանյանը մանկագրության խաչմերուկներում», Եր., 2018, էջ 145-217:

⁵ **Сусанна Ованесян**, Жизнь Ованеса Туиманяна, Ер., изд-во «Гитутюн», 2019, НАН РА, 2019, с. 722-723:

⁶ **Սարյան Օզուն**, « Հովհաննես Թումանյանի հետ», «Լրաբեր», ը քաղաքական (սկզբում՝ երկօրյա, ապա՝ եռօրյա) թերթ: Ստեղծվել է Ամերիկահայ առաջադիմական միության նախաձեռնությամբ, Նյու Յորք, 1969, հոկտեմբերի 21-25 Երեքշաբթի-շաբաթ:

սպառնալիքներ՝ թե եթե իրենց խնդրանքները չկատարվեն, օրինակ՝ քահանա չդառնան, իրենք սովից ու հուսահատությունից կմեռնեն և իրենց երեխաների խնամքը կմնա քանաստեղծի վրա:

Թումանյանը արդարադատության նախարարություն էր: Ամենից շատ նա է զայրույթի նետեր ուղղել խանդի ու նախանձի, չկամության ու տգիտության, կեղծիքի ու ստի, բարոյական ոճիրների դեմ: Համարձակվել է ասել. «...Ուրիշ ճանապարհ չկա. **ներսից է լինելու հաստատ փրկությունը, որովհետև ներսից ենք փչացած**»⁷: Այդ նա էր սահմանում բարոյական օրենքներ: «...Անարդարություն,-ասում էր ,**-Օրենքներ կան, որոնցով ամոթ է օգտվել**»⁸: Մոս Սարգսյանն ասում էր «Թումանյանը մեր դեռևս չգրված սահմանադրությունն է, մեր անձնագիրն աշխարհի առջև»:

Թումանյանը ինքը հրաշալի գիտակցում էր, որ թե ինքը, թե իր ստեղծած ավելի, քան տասնյակ ազգային, հասարակական ու մշակութային կազմակերպությունները ստանձնել են պետական գործառույթներ և ձգտում էր այդ գաղափարով խանդավառել բոլոր նրանց, ովքեր աջակցում էին իրեն և մասնակցում հայ հասարակության ներքին և արտաքին, տնտեսական, սոցիալական, քաղաքական, իրավական, կազմակերպչական, կրթական մշակութային, դաստիարակչական և այլ խնդիրների լուծմանը, ազգային աղետների ու ցեղասպանության հետևանքների վերացմանը, այլ ժողովուրդների հետ փոխհարաբերությունների կարգավորմանը և այլն: Մի առիթով բանաստեղծը, որ նախագահում էր իր հիմնած Հայ Հայրենակցական միությունների միությունը, նույն կազմակերպության կենտրոնական խորհրդի

⁷ Թումանյան, ԵԼԺ, հտ. 6, Եր., 1994, էջ 225:

⁸ Նույն տեղում, էջ 138:

անդամ, Նոր Բայազետի Հայրենակցական միության ներկայացուցիչ Համազասպ Համբարձումյանին ասում է. «Համագա՛սպ, մենք երկուսս կարծես պետություն ենք պետության մեջ: Մեր ժողովուրդների հասարակական ու կուլտուրական կյանքին վերաբերող որևէ հարց կա՞ արդյոք, որը մեր իրավասության տակ չմտնի: Ճիշտ եմ ասում, չկարծես կատակ է: Իսկ ի՞նչ բան է պետությունը, եթե ոչ հենց այնպիսի մի ֆունկցիա, որ մշտապես կատարում ենք մենք երկուսս»⁹: Իսկ պոետի գրուցակիցը՝ «նրա մերձավորագույն աշխատակիցն ու խորհրդականը», որ ապագա աշխարհահռչակ աստղագետ Վիկտոր Համբարձումյանի հայրն էր, վկայում է, որ ազգերի եղբայրության ու «համամարդկային կուլտուրայի համար այրվող իր անխոնջ նախագահը»¹⁰ Թումանյանը «Ակտիվորեն իր վերաբերմունքն էր ցուցաբերում ազգամիջյան ու պետական կյանքի նկատմամբ, եռանդուն կերպով հանդես էր գալիս ոգեշունչ կոչերով, ակտիվորեն դիմում էր Անդրկովկասյան կառավարությանը հայ-թաթարական ընդհարումներն արագ վերացնելու համար: Նա հանդես եկավ որպես ամենաեռանդուն միջնորդը հայ-վրացական անմիտ գժտության ժամանակ... նա միջամտում էր հայ ազգային կուլտուրայի կերտման, գրականության, լեզվի ու գիտության զարգացման ուղղությամբ կատարվող բոլոր ձեռնարկումներին ու գործերին»¹⁰:

Թումանյանն ուներ պետության իր ընկալումը, որը թումանյանական լինելուց բացի միաժամանակ գիտական է և արժանի քաղաքագետների ու իրավաբանների ուշադրությանը: Ըստ բնաստեղծի՝ «Պետությունը մի ամբողջություն է, որ պետք է հոգա իր բաղկացուցիչ մասերի կարիքները և

⁹ Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Տեքստը պպատրաստեց և ծանոթագրեց Լ.Մ. Կարապետյան, Եր., 2009, Էդիթ Պրինտ հրատ., էջ 700:

¹⁰ Նույն տեղում, էջ 699:

ապահովի ոչ միայն ֆիզիկական գոյությունը, այլև էն ամեն իրավունքները, որ չեն խանգարում ուրիշների և ամբողջի բարեկեցությանը»¹¹ :

Այո՛, **Թումանյանը երևույթ է, ազգ, պետություն**, մի ամբողջ ժողովրդի դատախազ, դատավոր ու պաշտպան միաժամանակ: Նա մեր առաքինությունն ու «ազնվականության վկայականն» է, ազգի խիղճը, բարոյական հիվանդություններն ախտորոշողն ու դրանք բուժելու դեղատոմսեր առաջարկողը: Նա է մեզ սովորեցնում չշահարկել ժողովրդի անունը և տարբերել ամբոխը ժողովրդից:

«Շատերը ժողովուրդն ու ամբոխը շփոթում են իրար հետ: Սրանք իրար հակառակ բաներ են: **Ժողովուրդն իմաստուն է, ամբոխը՝ հիմար: Ժողովուրդը ծանր է, ամբոխը՝ թեթև: Ժողովուրդը մեծահոգի ու բարի է, ամբոխը՝ դյուրագրգիռ, վտանգավոր չար (Ժողովուրդն աշխատանք է սիրում, ամբոխը՝ թալան): Ժողովուրդը խաղաղասեր է, ամբոխը՝ կռվարար: Եվ ամբոխսամիտ ու ամբոխավար մարդիկ երբեմն ամբոխի գլուխն անցնելով, որ մի շատ հեշտ բան է, տիրում են ժողովրդին ու նրան զցում զանազան կրակների ու կռիվների մեջ, որ նա չի էլ երազել»¹², - ասում է Թումանյանը և հիշեցնում «Իշխանությունը մարդկանց կուրացնում է, եթե մարդիկ ավելի փոքր են, քան իրենց պաշտոնը, հարբեցնում է, եթե ավելի տկար են, քան իրենց պաշտոնը»¹³:**

Թումանյանը ազգային հերոս է՝ թե իբրև բազում սխրանքներ իրագործող, թե իբրև երկրպագության՝ հիացմունքի՝ ընդօրինակության արժանացած, թե իբրև բոլոր ժամանակների մարդկային նկարագրի լավագույն գծերը

¹¹ **Թումանյան**, ԵԼԺ, հտ.7, էջ 190:

¹² Ն ու յ ն տ ե դ ու մ , է ջ 506:

¹³ **Թումանյան**, ԵԼԺ, հտ.10, Եր., 1999, էջ 385:

մարմնացող անհատականություն: Եղեռնի օրերին վատա-
ռողջ թոքերով բանաստեղծը քայլում էր Արևմտյան Հայաս-
տանի արյունոտ ու սառած ճանապարհներով, որոնց վրա
ձիերն անգամ սայթաքում ու չէին դիմանում, իսկ նա քայլում
էր ավերակների ու դիակների աշխարհում, դժոխային
տեսարանների ուղեկցությամբ, քայլում ճահիճների միջով,
որպեսզի ապրելու հույս ներշնչեր ցեղասպանության դժոխ-
քում ապրող հային ու նրա համար մարտնչող հայ կամա-
վորին: Նա մանկագիր էր, որն Էջմիածնում ամեն օր
մանուկներ էր թաղում, մի օրում, օրինակ թաղել էր 99 երեխա:
Այնուամենայնիվ, դիմանում էր ու չէր խենթանում, ոպեսզի
համաճարակից փրկի մյուսներին, որպեսզի նորանոր
սխրանքներ գործի իր ազգի գոյապայքարում: Եվ դեռ դստերն
էլ կողքին էր պահում, վտանգում նրա կյանքը: Մենք
հերոսների պակաս չունենք, բայց ո՛չ ոք, ո՛չ ոք կամովին չդրեց
հայենիքի գոհասեղանին ամենաթանկը՝ բոլոր զավակների
կյանքը: Եվ եթե Աստվածաշնչում Աբրահամն էր այդպիսի
գոհաբերության ընդունակ, այն էլ Աստվածն էր նրան փոր-
ձության ենթարկում, ապա Թումանյանն իր խղճի ձայնով էր
առաջնորդվում: Եվ եթե Աբրահամի պատմությունը կարող է և
հորինված լինել, ապա Թումանյանի գոհաբերությունը իրա-
կան էր և ոչ մի Աստված չփրկեց նրա որդուն՝ Վանի վերջին
պարետ Արտիկին:

Համակենտրոնացման անխուսափելի մահվան ճամ-
բարում մինչև վերջին ակնթարթը երեխաների կողքին մնալու
համար Յանուշ Կորչակը ընտրեց մահը: Թումանյանը
նույնպես վտանգեց իր կյանքը և 46-ամյա հասակում դարձավ
ալեհեր մի ծերունի: Յուրաքանչյուր մանկան մահը թափուր
գահ թողեց Հայոց որբերի հայրիկի սրտում: Մահկանացու
Թումանյանը, որը սերում էր երկարակյաց տոհմից, ում
պապերը առնվազն 100 տարի էին ապրում, և դեռ 105

տարեկանում դժգոհում էին, թե «Արժե՞ր էս մի քանի օրվա համար ծնվել ու տանջվել»¹⁴, ապրեց նրանց կեսի չափ և հրկիզվեց իր ազգին պատուհասած աղետների հրդեհում: Միշտ ուրիշների, ամենքի համար պատարագ արեց, իսկ իր համար մի մոմ չվառեց, այլ վառվեց ինքը, որպեսզի լույս տալով սպառվի:

Քանի՜ ձեռքից եմ վառվել,
Վառվել ու հուր եմ դառել,
Հուր եմ դառել՝ լույս տրվել,
Լույս տալով եմ ըսպառվել¹⁵:

«Էսպես է. ով ուզում է լույս տա, պետք է էրվի»¹⁶, սա է թումանյանական ճշմարտությունը, որն աքսիոմա է և ապացուցելու կարիք չունի:

Աշխարհի բոլոր հումանիստների, միլիոնավոր կյանքեր փրկած երախտավորների գործունեության գունապնակում Թումանյանը հայկական գույնն էր, համամարդկային կարեկից սրտի ազգային բաբախը: Հայոց պատմության սև օրերի խավարում Թումանյանը ոչ թե մի մոմ, այլ մի ամբողջ ջահ վառեց բնավեր դարձած իր ժողովրդի ու նրա անմայր, անտուն ու անհայրենիք մնացած որբուկների համար:

Բանաստեղծը՝ որպես Որբերի Ամենայն Հայոց Հայրիկ, հայոց մթնած երկնքում դարձավ Լուսավորչի կանթեղը, որ դարերով լույս է տալու, վառվելու է միշտ անշեջ և ամեն անգամ, երբ որևէ մանկան աչքում արցունք և հոգում վիշտ հայտնվի, նա իր չմարող լույսով, իբրև մշտավառ մի ջահ՝ լուսավորելու է նրա կյանքի ուղին, իսկ փոքրիկը նայելու է վերև, տեսնելու է այն կանթեղը, որին ոչ մի մարդկային ձեռք

¹⁴ **Նվարդ Թումանյան**, նշվ. աշխատությունը, էջ 213:

¹⁵ **Թումանյան**, ԵԼԺ, հտ. 2, էջ 22:

¹⁶ Նույն տեղում, հտ.7, Եր., 1995, էջ 105:

չի հասնի, որի մեջ յուղի փոխարեն սուրբի արցունքներն են, նայելու է երկինք և կանչելու է՝ Հայրիկ:

Թումանյանը Լուսավորչի կանթեղ է նաև հայ ազգային ողջ երկնակամարում: Ըստ քրիստոնեական աշխարհայեցության խավարը չարի մարմնացումն է, լույսը՝ բարու: «Լուսավորչի կանթեղը» բալլադը հայ ազգի երազների ու իդեերի խտացումն է: Թումանյանը տեսնում էր անտեսանելին, տվյալ դեպքում Լուսավորչի կանթեղից սպասում էր ազգային իդեերի իրագործում, պարզապես իր ժողովրդի փրկություն, և դեռ չգիտեր, որ հենց ինքն է դառնալու Լուսավորչի կանթեղը՝ մշտավառ մի ջահ, որ դարերով լույս է տալու գալիքի ազգային քաղաքական գործիչներին ու արվեստագետներին: Ինքը՝ բանաստեղծը գիտեր, որ այդ կանթեղը կտեսնի միայն նա,

Ով անմեղ է, լիքը սիրով
Ու հավատով անսասան,
Ով նայում է վառ հույսերով
Դեպի հայոց ապագան,-

Նա կրտեսնի էն մըշտավառ
Ջահը կախված երկրնքից,
Ասես՝ աստծո աչքը պայծառ
Հըսկում է ցած երկրնքից¹⁷:

Հիրավի, նա ով կտեսնի Թումանյանի լույսը, այսինքն՝ ով կտեսնի հայոց երկնքում հետագա բոլոր դարերում շողարձակող Լուսավորչի կանթեղը, նրա ճանապարհը միշտ լուսավոր կլինի, և եթե ամենքը տեսնեն, ապա յուրաքանչյուր գործ արարելիս ազգովի կկատարենք Ամենայն Հայոց

¹⁷ Թումանյան, ԵԼԺ, հտ. 2, էջ 131-132:

բանաստեղծի պատվիրանը և արևի նման կնայենք աշխարհին:

РЕЗЮМЕ
ОВАНЕС ТУМАНЯН
КАК ВЕРШИНА КУЛЬТУРЫ, ИДЕИ ГОСУДАРСТВЕННОСТИ
И И ЖИЗНЕСПОСОБНОСТИ НАЦИИ
СУСАННА ОВАНЕСЯН

Ованес Туманян для мира является нашей визитной карточкой. Он не только великий поэт, но и великий национальный деятель и воин, лучший публицист и литературный критик своей эпохи. Однако даже всё это не может с достаточной полнотой охарактеризовать подлинное величие Туманяна. Гений поэта поистине необъятен, в нём содержится также замечательный дар организатора, благодаря которому он единолично возглавлял всю национальную культурную жизнь. Туманян был не просто масштабной личностью, а совершенно исключительным, уникальным явлением.

Туманян является вершиной нашей национальной культуры и идеи государственности.

В условиях отсутствия государственности Туманян взял на себя роль государственного деятеля: он одновременно выполнял функции министерства иностранных дел, министерства обороны, министерства внутренних дел, министерства культуры, науки и образования, министерства диаспоры, министерства социального обеспечения и трудоустройства.

Ключевые слова: Туманян, государственность, армянская литература, национальная культура, государственный деятель, вершина культуры, национальная идея.

ABSTRACT
HOVHANNES TUMANYAN AS THE TOP OF CULTURE,
IDEAS OF STATE AND VITALITY OF THE NATION
SUSANNA HOVHANNISYAN

Hovhannes Tumanyan is our hallmark for the world. He is not only a great poet, but also a great national figure and a warrior, the best publicist and literary critic of his era. However, even all this cannot adequately describe the true greatness of Tumanyan. The genius of the poet is truly immense, it also contains a wonderful gift of the organizer, thanks to which he single-handedly led the entire national cultural life. Tumanyan was not just a large-scale personality, but a completely exceptional, unique phenomenon.

Tumanyan is the pinnacle of our national culture and the idea of statehood.

In the absence of statehood, Tumanyan assumed the role of a statesman: he simultaneously served as the Ministry of Foreign Affairs, Ministry of Defense, Ministry of Internal Affairs, Ministry of Culture, Science and Education, Ministry of Diaspora, Ministry of Social Security and Employment.

Keywords: Tumanyan, statehood, Armenian literature, national culture, statesman, peak of culture, national idea.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՌՅԱԿՆԵՐԸ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՆ ՈՒ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Կան համաշխարհային ստեղծագործության այնպիսի դրսևորումներ, որոնք համամարդկային են ու հավերժական: Դրանցից են Սողոմոն Իմաստունի «Ժողովողը», Հոմերոսի «Իլիականն ու Ոդիսականը», Գրիգոր Նարեկացու «Մատենանոդերգութեանը», Վիլյամ Շեքսպիրի «Համլետը», Գյոթեի «Ֆաուստը», Վիկտոր Հյուգոյի «Թշվառները» և այլ ազգերի ստեղծած գլուխգործոցները: Դրանց թվում անվերապահ պատվավոր տեղն ունեն Թումանյանի քառյակներն՝ իրենց խոր փիլիսոփայությամբ ու աստվածային կատարելությամբ:

Թումանյանի խոսքի դիպուկությունն ու անմոռաց ներգործությունը փիլիսոփայական խորքով երևան եկան նրա քառյակներում, որոնք գրված են ստեղծագործական կյանքի վերջին շրջանում: Թումանյանագիտության մեծ երախտավոր Էդ. Ջրբաշյանն այդ առիթով նկատում է, թե Թումանյանը 1916 և հետագա տարիներին հասել էր այնպիսի մակարդակի, որը նրան պիտի մղեր դեպի «բանաստեղծական մանրանկարի» ձևը:¹

Հայ ժողովրդական բանահյուսության մեծ գիտակ բանաստեղծը հիանալի գիտեր, որ հայ ժողովրդի դարավոր իմաստությունը հաճախ ամփոփված էր քառյակների մեջ, որոնք սեղմ ծավալի մեջ արտահայտում էին խորունկ ու ամփոփ միտք:

¹ Հովհ.Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով, հ. II, Երևան, 1990, էջ 504:

Արևելքի մեծ բանաստեղծներն ունեին փիլիսոփայական եզակի մտքեր արտահայտող ռուբայիներ՝ քառյակներ, որոնցում քննվում էին մարդուն մշտապես հուզող կյանքի ու մահվան, հոգու և մարմնի, սիրո, հայրենիքի, առաքինության, չարության ու նախանձի, ազահության ու չափավորության հավերժական խնդիրներ:

Կյանքի վաղանցիկությունը մարդ արարածի մշտական ողբերգությունն է: Այդ մասին խորհում է Օմար Խայամը՝ ռուբայի-քառյակի մեծագույն վարպետներից մեկը.

Բրուտանոց մտա մի օր ես տխուր,
երկու հազար կժեր տեսա մունջ ու լուռ,
հանկարծ մի կուժ ինձ ձայն տվեց հեզնանքով՝
շինողն ու՞ր է, գնողն ու՞ր է, ծախողն ու՞ր²:

Ըստ ամենայնի գնահատելով Արևելքի քնարերգությունը և նրանում դրսևորված իմաստությունը՝ Թումանյանը հատուկ սեր ուներ Արևելքի մեծ բանաստեղծների՝ նրանց թվում հիմնալի ռուբայիների հեղինակ Օմար Խայամի նկատմամբ ու նրան նվիրել է խիստ տպավորիչ հետևյալ քառյակը.

Խայամն ասավ իր սիրուհուն.- Ոտըդ ըզգույշ դիր հողին,
Ո՛վ իմանա՝ որ սիրունի բիրն ես կոխում դու հիմի...
Հե՜յ, ջա՛ն, մենք էլ ըզգույշ անցնենք, ո՛վ իմանա, թե հիմի
Էն սիրուհու բիրն ենք կոխում, թե հուր լեզուն Խայամի:³

Կյանքի ու մահվան խնդիրը Թումանյանի քառյակների հիմնական մոտիվն է: Մեծ կենսասերը, հյուրասերն ու մարդասերը ցավով արձանագրում է, թե բացի սեփական կյանքի անցողիկությունից որքան մեծ վիշտ է հարազատների,

² Օմար Խայամ, Ռուբայիներ, Թարգմանեց՝ Վարուժան Խաստուր, Երևան, 1993, էջ 20:

³ Հովհ.Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. II, Երևան, 2018, էջ 46:

արյունակիցների, մտերիմների հեռանալն իրական կյանքից՝ անսպասելի ու անժամանակ, ամենակուլ մահվան պատճառով.

Ու՛ր կորա՛ն,
Մոտիկներըս ու՛ր կորա՛ն,
Ինչքան լացի, ձեն ածի՝
Ձեն չի տըվին, լու՛ն կորան։⁴

Վալերի Բրյուսովը և ընդհանրապես XX դարի սկզբի նշանավոր ռուս բանաստեղծները բարձր էին գնահատում Թումանյանին՝ նրան համարելով հին քաղաքակրթությունը կրող հայ ժողովրդի ազգային ոգու արտահայտիչը. «Թումանյանը կարծես իր մեջ մարմնավորում էր հարավցու այն կերպարը, որում հրաշալի միահյուսված էին երկու սկիզբ՝ ինչույք ու հանճար»։⁵

Իրական աշխարհում չկա որևէ բանական մարդ, որը մահից վախ չունենա։ Ինչպես մեծ Սայաթ-Նովան է տրտնջում.

Ո՛վ կոսե թե յիս կու ապրիմ առուտեմեն ինչրու մուտըն՝

Աստըձու ձիռումըն հիշտ է մարթու աշխարք ելումուտըն...⁶

Անշուշտ, Թումանյանի քառյակների վրա խոր ազդեցություն են թողել 1915 թվականի Արևմտահայության ազգակործան ցեղասպանությունը, եղբայրների կորուստը և որդու՝ հայ կամավորական շարժման մասնակից Արտավազդի եղերական մահը։ 1916 թվականից սկսած՝ մահվան գաղափարը

⁴ Նույն տեղում, էջ 13:

⁵ Поэзия Армении с древнейших времен до наших дней, в переводах русских поэтов, Редакция, вступительный очерк и примечания В.Брюсова, Ереван, 1987, с.78.

⁶ Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, Կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մորուս Հասրաթյան, Երևան, 1963, էջ 70:

կարծես հալածում է բանաստեղծին: 1917-ի նոյեմբերի 7-ին նա գրում է.

Քանի՜ մահ կա իմ սրտում,
Թափուր գահ կա իմ սրտում.
Չէ՞ դու էլ ես մահացու.
Մահի ահ կա իմ սրտում:⁷

Ռուս նշանավոր բանաստեղծուհի Աննա Ախմատովան, որը հատուկ ընտրությամբ է թարգմանել հայ բանաստեղծներին, Հովհաննես Թումանյանից փոխադրել է ընդամենը մեկ քառյակ՝ նրանում դնելով հայ ժողովրդի մեծագույն ուղբերգությունը: Այդ քառյակն է.

Երագումբս մի մաքի
Մոտքս եկավ հարցմունքի.
-Աստված պահի քո որդին,
Ո՞նց էր համը իմ ձագի...⁸

Աննա Ախմատովայի մոտ քառյակը հարստացվել է պատմական կոնկրետությամբ և գրվել է 1937-ին:

С армянского

Я приснюсь тебе черной овцою
На нетвердых, сухих ногах,
Подойду, заблею, завою:
«Сладко ль ужинал, падишах?
Ты вселенную держишь, как бусу,
Светлой волей Аллаха храним...
И пришелся ль сынок мой по вкусу
И тебе и деткам твоим?».⁹

⁷ Հովհ.Թումանյան, ԵԼԺ, հ.II, էջ 16:

⁸ Նույն տեղում, էջ 24:

⁹ Анна Ахматова, Сочинения в двух томах, т.I, Москва, 1990, с.256.

Աննա Ախմատովան ցնցված էր հայոց ցեղասպանության փաստից, բացի այդ, նա անձնապես տուժել է 1937-ին Խորհրդային Միության մտավորականության, պետական պաշտոնյաների, հասարակ մարդկանց նկատմամբ գործադրվող բռնություններից: Թումանյանի քառյակը փոխելով՝ նա երկակի ընդվզում է անմարդկային այդ երկու հրեշագործությունների դեմ:

Փաղիշահ կամ փատիշահ բառը Ստեփան Մալխասյանցը բացատրում է որպես «պարսից և օսմանյաց» թագավորներ:¹⁰

Թումանյանը մեծ մարդասեր էր. նա երագում էր համայն աշխարհի համար կայուն մի խաղաղություն՝ մարդկային սերունդների խաղաղ հերթափոխ և իր հասարակական գործունեությամբ շարունակ նպաստում էր դրան: Ցավով տեսնում էր, թե մարդու ցանկություններն ու դրանք իրականացնելը երբեմն ուղղակի անհնար են.

Ի՞նչ ես թըռչում, իսկ-դև սի՛րտ,
Հազար բանի ետև, սի՛րտ,
Ես ո՞նց հասնեմ հազար տեղ
Քեզ պես թափով, թեթև, սի՛րտ:¹¹

Բանաստեղծն օրինակելի հայր էր, հիանալի զավակների էր դաստիարակել: Նա իր տասը զավակների՝ 4 որդու և 6 դստեր համար երագում էր երջանիկ ու խաղաղ կյանք: Այդ նույն երագանքը օրհնանքի ձևով նա հղում է համայն մարդկությանը.

Լինե՛ր հեռու մի անկյուն,
Լինե՛ր մանկան արդար քուն,

¹⁰ Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. IV, 2-Ֆ, 2010, էջ 28:

¹¹ Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. II, էջ 28:

Երազի մեջ երջանիկ,

Հաշտ ու խաղաղ մարդկություն:¹²

Արշակ Չոպանյանը՝ մեծ երուդիցիայի տեր գրականագետը, բանասերը, թարգմանիչն ու գրողը, Հովհաննես Թումանյանին կոչում էր «ամենեն հայր»:¹³ Միաժամանակ նշում էր, թե իր քառյակներով նա լիովին բարձրանում էր ազգայինից ու դառնում համամարդկային. «...մարդկային կյանքի խորհուրդը կերգեր իր ընդլայնված, մեծցած, ավելի ևս նրբացած, բարձրագույն բանաստեղծության ոլորտը վերացած քնարը»:¹⁴

Զգայուն մարդու համար հայրենի եզերքն ունի եզակի խորհուրդ: Նա միշտ կարոտում է հայրենի բնությանը, պապենական տանը, որոնք նրա հուզաշխարհում յուրօրինակ ձևով անձնավորվում են ու դառնում շնչավոր հարազատներ.

Ո՞վ է ձեռքով անում, ո՞վ,

Հեռվից անթիվ ձեռքերով.

-Ձա՛ն, հայրենի անտառներ,

Դուք եք կանչում ինձ ձեր քով:¹⁵

Այս համամարդկային զգացմունքին հանդիպում ենք աշխարհի նշանավոր գրողների երկերում: XX դարի համաշխարհային գրականության մեծերից Վիլյամ Սարոյանը այդ սրբազան զգացմունքին է անդրադարձել լավագույն երկերից մեկում՝ «Իմ սիրտը լեռներում է» պիեսում: Վիլյամ Սարոյանի սիրտը լեռներում էր՝ պապենական Բաղեշ հինավուրց քաղաքը եզերող գեղատեսիլ լեռներում, որոնց մասին լսել էր իր ծնողներից: Այդ համամարդկային

¹² Նույն տեղում, էջ 30:

¹³ Արշակ Չոպանյան, Երկեր, Երևան, 1988, էջ 729:

¹⁴ Նույն տեղում, էջ 731:

¹⁵ Հովհ.Թումանյան, ԵԼԺ, հ.II, էջ 33:

զգացմունքը գրողն արտահայտել է բոլոր շոտլանդացիների համար հայերի Հովհաննես Թումանյանի արժեքն ունեցող Ռոբերտ Բըրնսի «Իմ սիրտը լեռներում է» բանաստեղծությամբ՝ դրանով սկսելով իր պիեսը և նույն բանաստեղծությունը դնելով պիեսի սկզբում.

Իմ սիրտը լեռներում է, իմ սիրտն այստեղ չէ,

Իմ սիրտը լեռներում է, եղնիկ է նա որսում,

Վայրի եղնիկ բռնում, այծյամին վազում,

Իմ սիրտը լեռներում է, ուր էլ որ լինեմ:¹⁶

Հրանտ Թամրազյանը իր հիանալի «Հովհաննես Թումանյան, Բանաստեղծը և մտածողը» մենագրության մեջ ունի ուշագրավ դիտարկում. նա փաստում է, թե մեծ բանաստեղծն իր գրույցներում հաճախ էր ասում, որ քառյակները Արևելքի պոեզիայի զարդն են և ունեն համաշխարհային մեծ խորհուրդ:¹⁷

Բանաստեղծը կարդում էր Արևելքի իմաստուն մտածողներին, յուրացնում համաշխարհային գրականության գանձերը և նրա մտածողության մեջ Արևելքն ու Արևմուտքը միավորվում էին որպես համընդհանուր մարդկային իմաստության հանրագումար, որով պետք է ընթանար մարդկությունը՝ դասեր քաղելով համամարդկային դարավոր փորձից.

Արևելքի եղեմներին իջավ պայծառ իրիկուն,

Հեքիաթական պալատներում ըսպասում են իմ հոգուն.

Ի՛նչ եմ շինում ես ցեխերում, աղմուկի մեջ վայրենի...

Ա՛խ, թե նորից գըտնեմ ճամփան, դեպի էնտե՛ղ, դեպի

տո՛ւն...¹⁸

¹⁶ Wiliam Saroyan, Eight plays, Yerevan, 1987, p. 19.

¹⁷ Հրանտ Թամրազյան, Հովհաննես Թումանյան, Բանաստեղծը և մտածողը, Երևան, 1995, էջ 466:

¹⁸ Հովհ.Թումանյան, ԵԼԺ, հ.II, էջ 38:

Գոյի և տիեզերքի, մարդու և Աստծու դարավոր կապը դառնում են բանաստեղծի քառյակների սևեռամիտ քննարկման խնդիրը: Իրական աշխարհն ու անդրաշխարհը, մարմնի ժամանակավոր կյանքը և մարդկային հոգու անմահության գաղտնիքները, որոնց անհայտությունը տառապեցրել է մարդկության իմաստուն մտքերին, տարատեսակ դրսևորումներով ներկայացվում են բանաստեղծի քառյակներում: «Խոսքը նայած, թե ինչ մարդուց ում է ուղղված, ամենագորեղ բժիշկն է»¹⁹-գրում է Թումանյանն Անուշավան Աբովյանին:

Մեծ բանաստեղծները մարգարեներ են, իսկ Թումանյանը մարգարե էր.

Ի՞նչ իմանաս Ըստեղծողի գաղտնիքները անմեկին.

Ընկեր տըվալ, իրար կապեց էս աշխարհքում ամենքին.

Բանաստեղծին թողեց մենակ, մեն ու մենակ Իրեն պես,

Որ Իրեն պես մըտիկ անի ամեն մեկին ու կյանքին:²⁰

Բախվելով կյանքի դժվարություններին, տառապելով մարդկության սանձազերծած բռնություններից՝ բանաստեղծը չի դադարում մտածել աստվածային արդարության մասին.

Ես շընչում եմ միշտ կենդանի Աստծու շունչը ամենուր.

Ես լըսում եմ նըրա անլուռ կանչն ու հունչը ամենուր.

Վեհացնում է ու վերացնում ամենալուր իմ հոգին

Տիեզերքի խոր մեղեդին ու մըրմունջը ամենուր:²¹

Քառյակների մի մասում Թումանյանը Գրիգոր Նարեկացու նման քննում է տիեզերական մտքի՝ Աստծու և անցավոր մարմին ունեցող բանականի նմանություններն ու տարբերությունները.

¹⁹ Հովհ.Թումանյան, Մտքեր, Կազմեց Նարինե Թուխիկյան-Խաչատրյանը, Երևան, 2011, էջ 9:

²⁰ Հովհ.Թումանյան, ԵԼԺ, հ.II, էջ 45:

²¹ Նույն տեղում, էջ 50:

Աստծու բանտն են տաճարները-աշխարհքներում
բովանդակ.

Իբր էնտեղ է ապրում տերը, պաշտողների փակի տակ:
Հարկավ՝ ազատ նա ժըպտում է ամենուրեք ամենքին,
Բայց դու նայիր իսեղճ ու կըրակ մարդու գործին ու
խելքին:²²

Իրենց խորունկ մտքերով Թումանյանի քառյակները
թվում են Դավթի սաղմոսների հոգևոր շարունակությունը:
Դավթի սաղմոսները դարեր շարունակ հավատով ու ջեր-
մեռանդ հնչել են աշխարհի քրիստոնյաների շուրթերին ու
խոսել նրանց սրտի հետ՝ դարձել յուրօրինակ կապ մարդու և
Աստծու միջև.

Թըշնամիներն իմ թող վրաս չխնդան,

Նրանք, որ ատում էին ինձ առանց պատճառի...²³

Թող ամաչեն ու կորստյան մատնվեն ինձ չարախոսները,

Թող ամոթանք ու խայտառակություն կրեն իմ դեմ չար
խորհողները...²⁴

Մարդկային կյանքը լի է չարությամբ, դրան բանաստեղ-
ծը պատասխանում է ավետարանական լավատեսությամբ.

Ինչքան ցավ եմ տեսել ես,

Նենգ ու դավ եմ տեսել ես,

Տարել, ներել ու սիրել,

Վատը՝ լավ եմ տեսել ես:²⁵

Մարդկային ազահությունը ծնում է բռնություն, և նախա-
մարդ մարդակերը հազար դարում հազիվ դարձել է մարդա-
սպան: Միջնադարին հատուկ չափավորության պահանջով

²² Նույն տեղում, էջ 58:

²³ Դավթի սաղմոսների զիրքը, 34, 19:

²⁴ Նույն տեղում, 70, 13:

²⁵ Հովհ.Թումանյան, ԵԼԺ, հ.II, էջ 23:

բանաստեղծը զգուշացնում է մարդ արարածին հեռու մնալ ազահությունից, խաղաղ և ուրախ անցնել կարճատև կյանքի ճանապարհը.

Հե՛յ ազահ մարդ, հե՛յ անգոհ մարդ, միտքըդ
երկար կյանքդ կարճ,

Քանի՛ քանիսն անցան քեզ պես, քեզնից
առաջ, քո առաջ.

Ի՞նչ են տարել նրանք կյանքից, թե ինչ տանես դու
քեզ հետ,

Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվա
էս ճամփեդ:²⁶

Նույն կենսահաստատ պատգամն է ուշ միջնադարում հղում մարդուն Նաղաշ Հովնաթանը՝ Հովհաննես Թումանյանի սիրելի բանաստեղծը.

Վաղիւն ոչ գիտես, թե զի՞նչ ծնանք,

Մարդոյս կեանքն վայրի ծաղկի նմանի,

Ո այսօր բացուեալ է, վաղիւն անցան.

Խմե՛, եղբա՛րք, գինի,

Բանն աստուած շինի:²⁷

1919-ի նոյեմբերին գրված «Ազատ օրը, ազատ սերը»... սկսվածքով քառյակում Թումանյանը խիստ կարևորում է Աստծու կողմից մարդուն տրված անձնիշխանությունը, որը մարդը չի կարողանում հասկանալ, թե ինչ մեծ շնորհ է, և անխելք մարդը չի թողնում, որ ապրողն ապրի սրտալի ու վայելի շեն ու լի աշխարհը:²⁸

Մի շարք քառյակներում բանաստեղծը ներկայացնում է սեփական հանճարի ինքնագնահատականը: Նա իրեն

²⁶ Նույն տեղում, էջ 40:

²⁷ Նաղաշ Հովնաթան, Տաղեր, Երևան, 1983, էջ 83:

²⁸ Հովհ.Թումանյան, ԵԼԺ, հ.II, էջ 41:

համարում է Աստծուց շռայլորեն պարզևատրված: Ինչպես հեթանոս հայերի քաջության աստված Վահագնը ծնվում է երկնքի ու երկրի երկունքից, բանաստեղծն իրեն կապում է Աստծու արարչագործության երևույթների հետ: Նրան բանաստեղծ կնքելու հանդիսավոր պահի վկաներն են երկինքը, արևը, սարը, ցողը և հենց ինքը՝ Արարիչը.

Իմ կրնունքին երկինքը ժամ, արևը՝ ջահ սըրբազան,
Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան.

Սարը եղավ կրնքահայրըս, ցողը՝ մյուռոն կենսավետ,

Ու կրնքողըս նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ:²⁹

Բանաստեղծը խոստովանում է, թե իր լուսավոր հայացքը, աստվածային պատվիրաններով ապրելը, միահյուսվել է կենդանության ժամանակ կորած անթիվ լավերի խոր ցավին և չի էլ հիշում, թե երբ են եղել ուրախ օրերն իր կյանքում:³⁰

Իր ոչ երկար կյանքի նախավերջին տարում՝ 1922-ին է գրված ցնցող փիլիսոփայական իմաստ ունեցող այն քառյակը, որում նա իրեն առավել տեսնում է երկնքում՝ Աստծու մոտ, քան թե երկրի վրա՝ մարդկանց կողքին.

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին.

Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին

Հեռացել է ու վերացել մինչ աստղերը հեռավոր,

Վար մնացած մարդու համար արդեն արդեն խորթ է իմ
հոգին:³¹

Իրենց շոշափած խնդիրներով, մարդու հարուստ ներաշխարհը ներկայացնող փիլիսոփայական խոհերով, իրական կյանքը աղավաղող չար մարդկանց արարքների

²⁹ Նույն տեղում, էջ 60:

³⁰ Նույն տեղում, էջ 64:

³¹ Նույն տեղում, էջ 63:

պատկերներով, մարդ արարածին մեղքերից ազատված տեսնելու երազանքով, համամարդկային ու հավերժական մեկնաբանություններով Հովհաննես Թումանյանի քաղաղական երբ ձայնակցում են համաշխարհային գրականության համանման դրսևորումներին՝ միայն թե խիստ անհատական հայկական հնչերանգով:

РЕЗЮМЕ
ЧЕТВЕРОСТИШИЯ ОВАННЕСА ТУМАНЯНА
ОБЩЕЧЕЛОВЕЧНЫ И ВЕЧНЫ
АЭЛИТА ДОЛУХАНЫ

Меткость и незабываемое влияние слов Туманяна проявились с философской глубиной в его четверостишиях, написанных в последний период его творческой жизни.

Великий поэт и знаток армянского фольклора прекрасно знал, что вековая мудрость армянского народа часто сконцентрирована в четверостишиях, в малом объеме которых выражена глубокая и сжатая мысль.

С проблемами, которых они касаются, с их философскими мыслями, представляющими богатый внутренний мир человека, с образами поступков злых людей, искажающих реальную жизнь, с мечтой о том, чтобы увидеть людей, освобожденных от грехов, с общечеловеческими и вечными комментариями, четверостишия Ованнеса Туманяна перекликаются с аналогичными произведениями мировой литературы, только с очень типичными армянскими нюансами.

Ключевые слова: О. Туманян, четверостишие, мудрость, вечный, божественный, душа и тело, философия, человек, вселенная.

ABSTRACT
QUATRAINS OF HOVHANNES TUMANIAN ARE UNIVERSAL
AND ETERNAL
AELITA DOLUKHANYAN

Accuracy and unforgettable influence of the Tumanian's words manifested themselves with philosophical depth in his quatrains, written in the last period of his creative life.

The great poet and connoisseur of Armenian folklore knew perfectly well that the age-old wisdom of the Armenian people was often concentrated in quatrains, in the small volume of which a deep and concise idea is expressed.

With the problems touched upon, with their philosophical thoughts, representing the rich inner world of the human being, with the images of evil people actions which distort real life, with the dream of seeing people freed from sins, with their universal and eternal commentaries, Hovhannes Tumanian's quatrains have many things in common with similar works of world literature, only with very typical Armenian nuances.

Key-words: H. Tumanian, quatrain, wisdom, eternal, divine, soul and body, philosophy, human being, universe.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԸ

ԷՄՄԱ ԱԽՏՅԱՆ

Առանց ժողովուրդների կապի, փոխգործողության չկա մեծ մշակույթ, մեծ գրականություն: Աշխարհի մեծ գրականությունների ու գրողների հարստության գաղտնիքը նախևառաջ նրանում է, որ նրանք ներառել են իրենց և աշխարհի շատ ժողովուրդների համամարդկային մշակույթում բյուրեղացած հարստությունները:

Այդ հարցը շոշափելիս առաջին իսկ պլան է մղվում հայ գրականության խոշոր ներկայացուցիչը՝ Հովհաննես Թումանյանը թե՛ իր էությանմբ, թե՛ իր կատարած գործով և թե՛ գրչով: Դժվար է այդ երեքից որևէ մեկին առավելություն տալը, քանզի նա իբրև մարդ, հասարակական գործիչ ու բանաստեղծ անկրկնելի է:

Անկրկնելի է Թումանյանը և իբրև մեր երկու ժողովուրդների՝ հայերի ու վրացիների բարեկամության ջատագով, դարերի խորքից եկող բարեկամություն, որն առ այսօր լուսավորում է մեր հոգևոր կյանքի համարյա բոլոր ոլորտները, առավել ևս վիրահայ գրական աշխարհը, և ոչ միայն վիրահայ:

Հայտնի է, որ Վրաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո, մոտ երկու տասնամյակ Թբիլիսին շարունակում է մնալ հայ մշակույթի խոշոր կենտրոններից մեկը: Այդ ժամանակահատվածում մեծ լոռեցին՝ Հովհ. Թումանյանն արդեն Թբիլիսիում էր, նա դեռևս 1883 թվականին, 14 տարեկան հասակում էր եկել այստեղ՝ սովորելու նպատակով: Ներսիսյան դպրոցը շատ էր գրավում նրան: Նյութական ծանր պայմանները սակայն ստիպում են Թումանյանին անցնել աշխատանքի:

Դժվար տարիներ էին Թումանյանի համար թրիլիայան տարիները: Չնայած դրան, նա չէր կարող չհմայվել այս քաղաքի յուրահատուկ կենցաղով: -Զուռնա, դիռլ, դայիրա, նաղարա, ծափ, ծիծաղ, պար, երգ... Էն էլ ոչ թե տներում, այլ դուրսը, դռներին, կտուրներին, մանավանդ իրիկնապահերին: Կիրակի ու տոն օրերը հո, գլուխ բեր, որ դիմանաս: Զուգված, զարդարված չրխկում ու զրնգում էր ամբողջ քաղաքը: Տեսնողը զարմանում էր, թե էս մարդիկ ե՞րբ են աշխատում, որ էսպես շարունակ ուրախանում են ու պար գալիս – գրում է Թումանյանը: Իր անմահ «Գիքորում» ևս Թումանյանը տալիս է հին Թիֆլիսի կոլորիտային պատկերը՝ իրար ետևից սլացող կառքեր, ուղտերի սայլեր, կանաչի բարձած ավանակներ, թափախները գլխներին կինտոներ, կապիկ ման ածող պարսիկ, մրգով լիքը խանութներ, դեզերի նման դարսած գույնզգույն չթեր, տեսակ-տեսակ խաղալիքներ... Թումանյանը սիրեց այդ քաղաքն ու դրան տոն տվող վրացական զվարթ ոգին: Եվ ոչ միայն քաղաքը, այլև ողջ Վրաստանը:

Մի առիթով Թումանյանը Աբասթումանին անվանում է «փոքրիկ գեղեցիկ հովիտ», որն անջնջելի ու հաճելի էջ է կազմել նրա հիշողության մեջ: Հիշեցնենք, որ այնտեղ է բանաստեղծը մշակել «Անուշը», գրել «Փարվանան» և «Թմկաբերդի առումը», բանաստեղծություններ... «Ճշմարիտ որ սիրելի Աբասթուման..., այնքան թանկագին ցնորքների ու զգացմունքների հետ է կապված...», - գրում էր բանաստեղծը:

Թումանյանը Թրիլիսիում է սկսում իր գրական գործունեությունը: Այստեղ են անցնում նրա կյանքի նշանակալից օրերը, այստեղ է նա անցնում իր կյանքի մեծ ու ծանր դպրոցը: Այստեղ է ընթանում նրա ստեղծագործական, հասարակական աշխատանքը, այստեղ են հիմք դրվում նրա բազմազան ու բազմերանգ գրական-հասարակական կապերին:

Դժվար ժամանակներ էին Թումանյանի համար: Ամուսնությունից հետո՝ ընտանեկան անթիվ հոգսեր, բնակարանային դժվար պայմաններ: Նա ստիպված է եղել հաճախ փոխել բնակավայրը. սկզբում ապրել է Հավլաբարում, ազգականի մոտ, հետո՝ Պլեխանովի պողոտայի նեղիկ ու խոր մի նկուղում, այնուհետև Խարփուխ թաղամասում, ամուսնությունից հետո՝ կնոջ ծնողների բնակարանում, հետո՝ Էնգելսի փողոցում և վերջին 14 տարին Սոլովակում, այժմ՝ Ամաղլեբա փողոցում, որտեղ և այսօր նրա անվան Գիտամշակութային կենտրոնն է՝ «Թումանյանի տունը» (տնօրեն՝ Գիսանե Հովսեփյան):

Թումանյանն արդեն երիտասարդ հասակում գտնվեց նաև պատմական դեպքերի դժվարին հորձանուտում: Հայթուրքական կռիվների, ազգային կուսակցությունների հրահրած հայ-վրացական բախումների, ժողովրդական բազմաթիվ հուզումների և էլի բազմաբնույթ անախորժ իրավիճակների ականատեսն իր ունեցած հեղինակությամբ հնարավորինս կասեցնում էր դրանք ու մարդկանց առաջնորդում դեպի բարին, դեպի հաղթանակ: Հիշատակարժան է այն փաստը, որ երբ 1905 թվականին, Լոռու և Ղազախի շրջաններում, Շուլավերում սկսվում են հայթուրքական կռիվները, օգնության համար ժողովուրդը դիմում է Թումանյանին: Թումանյանն անհապաղ հավաքում է 100 ձիավոր, իսկ ինքը հեծնելով իր Մարս ձին, շրջում է գյուղից՝ գյուղ, հայաբնակ ու թուրքաբնակ վայրերը, խաղաղության կոչ անում: Ու հաջողվում է նրան իր խոսքի ուժով հասնել նպատակին: Մի առիթով նա գրում է. –Ամեն ջանք շարունակ գործ եմ դրել մեր գավառներում խաղաղությունը պահելու և կոտորածների առաջն առնելու: Եվ այսօր ես այնքան գոհ չեմ, որ գրականության մեջ մի որևէ բան եմ արել, որքան գոհ եմ, որ ակներև կարողացա իրար դեմ կանգնած ժողովուրդների

սրերը պատյան դնել տալ և շատ ու շատ անմեղների ազատել այս գազանական կոտորածից:

Ադրբեջանցի մի ծերունի այդ օրերի մասին գրում է. «Էս սարսափի ու արյան օրերում, երբ դարավոր հարևան թուրքերն ու հայերը իրար տուն են քանդում առանց պատճառի, ինչ որ սև սատանայի դրդմամբ, Թումանյանը հանդիսանում է այն մարդը, որ արյունը ջրով է լվանում, որ առանց արյուն թափելու հասկացնում էր թուրքերին և հայերին իրենց մեծ սխալը և եղբայրություն ու հաշտություն սերմանում: Սրա եկած ճամփին թող վարդ, մանուշակ, շուշան սմբուլ ու ալվան ծաղիկներ բուսնեն»:

Իր հոգու բոլոր թելերով աշխատավոր ժողովրդի հետ կապված մեծ Թումանյանը անչափ վրդովված էր 1918 թվականի դեկտեմբերի հայ-վրացական ընդհարումի կապակցությամբ, որը մենշևիկյան և դաշնակցական «կառավարությունների» շովինիստական քաղաքականության արդյունք էր:

1918 թվականի դեկտեմբերին Հովհաննես Թումանյանը «Թիֆլիսսկի լիստոկ» թերթում տպագրում է հոդված՝ ուղղված այդ «սոսկալի անմիտ և աղաղակող» ընդհարման դեմ: Նա այդ թյուրիմացությունը վերջ տալու կոչ է անում, և առաջին օրինակն ինքը ցույց տալիս: 1918 թվականի դեկտեմբերի 1-ին «Հայաստանի հանրապետության կառավարությանը» գրություն է ուղարկվում Հովհ. Թումանյանի ստորագրությամբ, որի մեջ Հայոց Հայրենակցական Միությունների կենտրոնական խորհրդի անունից հայտարարվում է վճռական բողոք կատարվող արյունահեղության դեմ ու պահանջվում է անմիջապես դադարեցնել թշնամական գործողություններն ու գումարել հայ-վրացական կոնֆերանս, խաղաղ ու հաշտ ճանապարհով վերջ տալու ծանր ու կործանարար հետևանքներով հղի այս վեճերին:

Հ. Թումանյանը դադար չունի, նա ձեռնարկում է ամեն միջոց արյունահեղությունը դադարեցնելու նպատակով: Վրաց հասարակական և գրական գործիչների հետ միասին նա ստիպված է լինում բանակցություններ վարել այն ժամանակվա վրացական «կառավարության» ներկայացուցիչների հետ, միայն թե հաստատվի խաղաղություն: Համոզվելով այդ, ինչպես ինքն է անվանում, «ապիկար գործիչների» հակաժողովրդական քաղաքականության մեջ, նա համարձակորեն մերկացնում է նրանց, իսկ դաշնակցական և մենշևիկյան «հանրապետություններին» տալիս «մանրապետություններ» անունը (Ն.Թումանյան, Երևան, 1939, էջ 141): Նա համոզված է, որ ժողովրդի կյանքում վճռորոշը «մանրապետությունների ու «մանր պետականների» որոշումներն ու քայլերը չեն, այլ ինքը՝ ժողովուրդը. «կառավարությունները ժամանակավոր են ու փոփոխելի, ժողովուրդները մշտական ու անփոփոխ»: Այդ «մանրպետականներին» նա հակադրում է հայ ու վրաց ժողովուրդների ներկայացուցիչներին, որոնք տարիներ շարունակ միասին են կռվել, միասին տառապել, միասին ուրախացել, իսկ այժմ հարկադրաբար դուրս են բերվել միմյանց դեմ: Եվ նրանք հրացանները բռնած համառ նայում են միմյանց, իսկ երբ համոզվում են, որ մեծավորներից ոչ ոք չի երևում մոտակայքում, մոտենում են միմյանց, գրկախառնվում ու համբուրվում: «Թշնամությունը, – գրում է Թումանյանը, – որ ստեղծված է մեր ժողովուրդների մեջ, արհեստական է, իսկ սերն ու եղբայրության զգացմունքը բնական և շատ ավելի ուժեղ, քան թե կարծում են մեզանում»:

Պայծառ էջեր» հոդվածում Թումանյանը «ցուցաբերում է երևույթների պատճառների դրսևորման ու նրանց մեկնաբանման զարմանալի խորություն: Նա շատ լավ հասկանում է, որ ռուսական բյուրոկրատիան՝ վախեցած

հեղափոխության ուրվականից, 1904 թվականի անհաջող պատերազմից հետո ձգտում է ինչպես մյուս ժողովուրդներին՝ Ռուսաստանում, այնպես էլ հային, վրացուն, ադրբեջանցուն՝ Անդրկովկասում, իրար դեմ հանել:

Պատերազմի ու հաշտության հարցը, որ այնքան կարևորում էր Թումանյանը, միշտ գտնվել է նրա ուշադրության կենտրոնում: Այս ասպարեզում ծավալվող բանավեճերի հիմնական ծանրությունը վերցնելով իր վրա, նա ձգտում էր անարձագանք չթողնել վիճարկող կողմերին թշնամացնելու նպատակով բանավոր ու գրավոր բանասարկությունները, հասարակական երևույթների չարամիտ մեկնաբանությունները, կրքեր բորբոքող զանազան խնդիրների արծարծումը, ազգային մեծերի հասցեին արված հերյուրանք-գրպարտանքները և այլն: Այդուհանդերձ, Թումանյանն այդ ճակատում գրեթե մենակ էր: Ահա ինչ է գրում նրա մեկ այլ ժամանակակիցը՝ նշանավոր դրամատուրգ Շավա Դադիանին (1874-1959). «Երբ Վրաստանում և Հայաստանում իրար դեմ թշնամական ժանիքներ էին սրում, մտավորականության շրջանում Թումանյանի նման քչերը կային: Մենակ էր Հովհաննեսը. որք էր մնացել այս անվեհեր մարդն այն տխուր ու մռայլ օրերին՝ ժողովուրդների եղբայրության քարոզով... Սրտանց ցանկանում էիր, որ շատերն այդ որբի նման լինեին, նրա կողքին, բազմանային թե՛ մեզանում, թե՛ մեր յուրայինների մեջ, բայց այդ տխուր օրերին դա միայն երազել կարելի էր»: Մեծ արվեստագետը գրել է նաև նրա կազմակերպչական ջանքերի, ծանրագույն իրադրություններից փրկության ելքեր գտնելու մասին:

Գրավիչ են անվանի բանաստեղծ Եղիշե Չարենցի խոսքերը Թումանյանի մասին. «Նա Թիֆլիսում, այդ բազմացեղ քաղաքում, արևելքի և արևմուտքի այդ երփներանգ խառնարանում, դարձել էր միջցեղյան մերձեցման աշտարակ,

այլազան մշակույթների սինթետիկ դեմք... Ամեն ժողովրդի ու ցեղի պոետ, ամեն մշակույթի տիպական ներկայացուցիչ նրա շուրջն էին խմբվում, հարազատանում նրան...»:

Ուսումնասիրելով վրաց պատմությունն ու գրականությունը Հ. Թումանյանը գալիս է այն համոզման, որ Վրաստանը թե՛ հնում, թե՛ նոր ժամանակներում միշտ էլ գտնվել է առաջավոր ժողովուրդների շարքում, որ վրաց ժողովուրդն իր ազնիվ մաքառումների, վսեմ ձգտումների և սրտի պարզության համար արժանի է լավագույն օրերի: Այդ ժողովրդի գրականության մեջ առաջին տեղը, իրավամբ, նա տալիս է Շոթա Ռուսթավելուն, իսկ նրա քնարը համարում ոսկեհար: Նա Ռուսթավելուն դասում է համաշխարհային գրականության ամենամեծ ներկայացուցիչների թվին:

Իոսեփ Գրիշաշվիլին հիշում է, գրական աշխատանքի շուրջը զրույցից հետո Հովհաննեսը հայտնեց. «Ցանկանում եմ երկար ժամանակվա իդձս իրագործել, ցանկանում եմ թարգմանել Հոմերոսին, Ֆիրդուսուն և Ռուսթավելուն, մանավորապես հավանում եմ «Վեփիխստղառսանին» և, եթե հիվանդությունս չխանգարեց, մտածում եմ այս մեծ աշխատանքին ձեռնարկել գարնանից»: Սակայն անողորմ հիվանդությունը խանգարեց:

Ըստ Թումայանի, «վրացու անմիջական ու սրտաբաց բնավորությունը, բնական մաքրությունն ու անարատությունը, սրտի ազնվությունը, ազատությունն ու գեղեցկության սերը, այս բոլորն ամեն կողմից լուսավորված է կյանքի սիրով ու նուրբ վշտով Ռուսթավելու մոտ, նա իր ամբողջ էությամբ վրացի բանաստեղծ է», և այս հատկությունները, որ ներդաշնակորեն մարմանավորված են «Վագրենավորում», բնորոշ են բոլոր ժողովուրդների համար: Այդ է պատհառը, որ Ռուսթավելին հարազատ է աշխարհի առաջադեմ

մարդկությանը և նրա պոեմն իր բարձր արվեստով, վեհ գաղափարներով նվաճել է մշտնջենական կյանքի իրավունք:

Հ. Թումանյանի գտնում էր, որ միայն գիտությունը, գրականությունը և արվեստն են ի վիճակի հաղթահարելու այն անդունդը, որը բաժանում է ժողովուրդներին ու միայն նրանք կարող են ստեղծել ապագայի լավագույն կյանքն ու իսկական մարդուն... Ես ոգևորությամբ եմ պատկերացնում կենսունակ ու բարյացակամ վրացուն, որը բարձրագույն կրթությունը իր մայրենի լեզվով է ստանալու: Ժողովրդի գրականությունը, - գրում է Թումանյանը, - նրա հոգու իսկական արտացոլումն է, իսկ այդ հոգու կրողը բանաստեղծն է... Վրացին երբեք հոգով չի ընկճվել, նա իբրև հարևան ամբողջ աշխարհում ամենլավերից մեկն է:

Թումանյանը մտահոգացել էր կազմել ժողովածու՝ նվիրված մեր ժողովուրդների փոխադարձ կապին ու եղբայրությանը: Նա սկսում է հավաքել նյութեր, փաստեր: 1919 թվականին թերթերում հետևյալ բովանդակության հայտարարություն է տպագրում. «Ով գիտե էդ տեսակ որևէ դեպք, նեղություն քաշի իր գիտեցածը տեղով ու անունով գրի ու իր ստորագրությունով ինձ ուղարկի»:

Այո, սիրելի էր Հ. Թումանյանի համար Վրաստանը, բազում փորձությունների բովով անցած նրա բովանդակալից ու հետաքրքիր ճամփան:

Վրաց անվանի բանաստեղծ Տիցիան Տափձեն Հովհաննես Թումանյանին, իբրև հայ և վրացի ժողովուրդների մշակութային մերձեցման համար պայքարողի, անվանել է ռահվիրա: Եվ զարմանալի չէ, որ Հովհաննես Թումանյանի ծննդյան հիսունամյակին նվիրված հանդեսները Թիֆլիսում շարունակվել են շուրջ մեկ ամիս և վերածվել համաժողովրդական ցույցերի՝ հանուն ժողովուրդների բարեկամության: Իսկ բանաստեղծի մահը մարտ ամսի մառախլապատ

մի օր, երբ երկնքից թափվում էր ձյունախառն անձրև, մեծ Հովհաննեսի, այդ հիրավի Անդրկովկասյան ժողովուրդների բարեկամության ջատագովի հուղարկավորությունը վեր է ածվել Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության վիթխարի ցույցի: Տեղին է մեջ բերել Իոսեփ Գրիշաշվիլու բանաստեղծության տողերը՝ գրված մեծ բանաստեղծի մահվան կապակցությամբ.

Հերքո՛ ճերմակ էր, հասակդ սակայն
Արմավենու պես վեհ ու սլացիկ,
Խլեց մեզանից մահը դժնկամ
Քո արևաշունչ կյանքը գեղեցիկ:
Արցունքն աչքերիս չի էլ ցամաքում,
Ի՞նչ խոսք ասեմ ես, սփռվեմ որի՞ն.
Արդյոք խորտակված սիրո աշխարհում
Կա՞ մարդ, որ զգա իմ ցավը խորին:
Գնում ես... Ահա անցյալը քեզ հետ,
Սակայն ոչ թե հին փառքը տանելով.
Երկինքն ամպերով ահա լուսավետ
Կքաղցրանա քո լույս ժպիտներով:

Հովհաննես Թումանյանն իր ժողովրդին անվանում էր «եղբայրության ու սիրո էնքա՛ն կարոտ ժողովուրդ»: Ինքն էլ, իր ժողովրդին հարազատ ու արժանի զավակը, սիրո ու եղբայրության ջատագովն ու դրոշակակիրը հանդիսացավ: Նա իր ողջ կյանքի ընթացքում հետևողականորեն կոչ էր անում հաշտ ու համերաշխ ապրել հարևանների, իսկ մեծ պետություններից՝ Ռուսաստանի հետ: Մեծ բանաստեղծը գործով ու գրչով պայքարել է հանուն խաղաղ կյանքի, արդար աշխատանքի ու եղբայրության: Եվ, զարմանալի չէ, որ նա ոսկու իշխանությանը հակադրում է սեր և եղբայրություն:

Բանաստեղծը մի առիթով գրել է. «Ես հավատում եմ, գալու է այն օրը, որ բոլոր շովինիստների ջանքերին

հակառակ, հաղթանակելու է ժողովուրդների միության ու եղբայրության գաղափարը, ազատության մեջ ավելի ու ավելի են ամրանալու մեր դարավոր եղբայրական կապերը և մեր ինքնուրույնությունը, շքեղ ու ինքնատիպ, ծաղկելու է մեր գեղարվեստի ու գրականության մեջ: Եվ Վրաստանը, որ չքնաղ է եղել նույնիսկ իր դժբախտության օրերում, ազատ Կովկասի, ազատ ժողովուրդների եղբայրության մեջ պետք է դառնա ավելի չքնաղ ու ավելի սիրելի»:

Զարմացնում է Թումանյանն իր բազմակողմանի, բազմահարուստ գործունեությամբ, աննկուն ու անհանգիստ ոգով, անսպառ եռանդով, զուլալ ու սիրող, «ջինջ, բարի ու մանկորեն անարատ» (Ս. Մարշակ) հոգով, լավատեսությամբ, գծեր, որոնք սնունդ են առնում նրա ժողովրդասիրությունից, ժողովուրդների բարեկամության վեհ գաղափարից: Հ. Թումանյանի խոսքը, գործերը, առանց մեկնաբանության էլ բացահայտում են, ինչպես Ավ. Իսահակյանն է ասում «հազար կյանքով ապրող այդ հոյակապ մարդու» հոգին:

Հովհ. Թումանյանը երբեք չէր բավարարվում եղածով, իր արածով: Նրա մոտ միտք է հղանում ստեղծել մի օջախ, որը կհամախմբեր արվեստի հայ գործիչներին: Եվ ահա, 1921 թվականի մարտի 29-ին կայացած արվեստի ներկայացուցիչների խորհրդակցությունում որոշվում է արվեստի հայ աշխատողներին տրամադրված շենքը անվանել Հայարտուն և կոչել Վահան Տերյանի անունով: Այն գործում է մեծահարուստ Ավան Յուզբաշյանի տանը: Ընտրվեց նաև Հայարտան խորհուրդ, որի կազմի մեջ էր և Հովհ. Թումանյանը: Հայարտան նպատակն էր կապվել մայր հայրենիքի մշակութային կյանքին, նպաստել Հայաստանից դուրս գտնվող գրողների և արվեստագետների ստեղծագործությանը, արվեստի մասսայականացմանը: «Հ. Թումանյանի գլխավորությամբ այս գրական օջախը Վրաստանի գրական-հասարակական շարժումը

բարձրացրեց որակական նոր աստիճանի: Հետզհետե այստեղ են ձուլվում հայ խմբակներ, միավորումներ, ստեղծվում են երաժշտության, թատերական, գրական մասնաճյուղեր:

Հ. Թումանյանի առաջարկով 1922 թվականին «Հայարտուն» է ստեղծվում և Կոնստանտնուպոլսում, իսկ 1923 թվականին՝ Բաթումիում:

Իսկ տակավին 1899 թվականից Թբիլիսիում գործում էր «Վերնատուն» գրական մությունը, որը դարձավ հայ գրականության պատմության գեղեցիկ էջերից մեկը: Խմբակի հանդիպումները անց էին կացվում Հովհ. Թումանյանի տանը՝ Բեյբության փողոցի թիվ 44-ի վերնահարկում: Ի դեպ, Թումանյանը միշտ վերջին հարկն էր ընտրում բնակարանի համար, մտածելով, որ իրենից վերև պետք է լինի երկինքը և աստված:

Ասենք, որ «Վերնատանը» ոչ միան գրականությանն ու արվեստին վերաբերող հարցեր էին քննարկվում, այլ նաև հասարակական ու քաղաքական: «Վերնատան» հիմնական անդամներն էին Լևոն Շանթը, Դերենիկ Դեմիրճյանը, Ավետիք Իսահակյանը, Ղազարոս Աղայանը, Հովհաննես Թումանյանը, Նիկոլայ Աղբալյանը: Դ. Դեմիրճյանն իր հուշերում հաճախ է անդրադարձել «Վերնատան» գործունեությանը, ընդգծելով, որ բավականին հետաքրքիր էին անցնում գրական ասուլիսները, տպագրված և անտիպ գործերի քննարկումները, որոնք շարունակվում էին մինչև ուշ գիշեր կամ լուսաբաց: «Վերնատունը» գործեց մինչև 1908 թվականը, իսկ հետագայում, 1912-ին, հենց այդ միավորման հինքի վրա Թիֆլիսում հիմնադրվեց Հայ գրողների կովկասյան ընկերությունը, որի նախագահը նույնպես Հովհաննես Թումանյանն էր:

Փաստեր, որոնք կարելի է բերել վկայելու Թումանյանի՝ Վրաստանի նկատմամբ տածած հարգանքի ու սիրո մասին,

բազմաթիվ են: Դրա ամենավառ ապացույցն ըստ իս, բանաստեղծի կտակն է՝ իր աճյունը հուղարկավորեն իր այնքան սիրած Թիֆլիսում:

Նրա ցանկությունը կատարվեց: Ու մենք՝ վիրահայերս, հնարավորություն ունենք մեծ սիրով ու հպարտությամբ, ժամանակ առ ժամանակ, ցանկացած պահին այցելելու մեր հայրենակցին (մենք նրան միշտ կենդանի ենք զգում)՝ Ամենայն Հայոց բանաստեղծին և իր սիրելի Վրաստանի բուրումնավետ ծաղիկները խոնարհելու նրա շիրմին:

РЕЗЮМЕ
ОВАНЕС ТУМАНЯН И ГРУЗИЯ
ЭММА АХТЯН

Статья посвящена осмыслению вклада Туманяна в укреплении и развитии дружбы армянского и грузинского народов, анализу различных сторон неутомимой деятельности Туманяна по дальнейшему укреплению и гармонизации духовных связей и контактов между двумя братскими народами, раскрытию его исключительной роли в этом.

Ключевые слова: Ованес Туманян, Грузия, армянин, грузин, дружба народов, литература, духовная культура, «Вернатун», «Айартун».

ABSTRACT
EMMA AKHTYAN
HOVHANNES TUMANYAN AND GEORGIA

The article is devoted to understanding contribution and unique role of Hovhannes Tumanyan's in strengthening and developing friendship between the people of Armenia and Georgia, as well as the analysis of the different aspects of Tumanyan's tireless

work in deepening and harmonizing the spiritual ties and contacts of the two fraternal peoples.

Key words: Hovhannes Tumanyan, the friendship of peoples, spiritual culture, “Vernatun”, “Hayartun”.

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ՝ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍ

ՍԵՐԳՈ ԵՐԻՑՅԱՆ

Անկասկած մեզանից յուրաքանչյուրը Հովհաննես Թումանյանին գիտի որպես Ամենայն հայոց բանաստեղծի, ով հայոց ազգային պոեզիան մի այնպիսի բարձրունքի է հասցրել, որին ձգտելն անգամ շատ դժվար է լինելու: Դրանում մենք համոզվում ենք անգամ նրա ծնունդից 150 տարի անց ամեն օր, ամեն առիթով, երբ հնարավորություն ենք ունենում շփվելու նրա պոեզիայի ցանկացած նմուշի հետ: Այս ամենի հետ մեկտեղ քչերը գիտեն, որ Թումանյանը որքան մեծ բանաստեղծ է, այնքան էլ հզոր գրաքննադատ էր, վերլուծաբան, հրապարակախոս, ով անտարբեր չմնաց իր ժամանակների և ոչ մի խնդրի նկատմամբ: Այդ ամենը նա բարձրաձայնում էր այդ ճանապարհին հասարակական անհանգիստ մտքի դրսևորումները, մանավանդ, երբ Թումանյանը առաջին հերթին անտարբեր չէր իր ասպարեզին՝ գրականությանը առնչվող խնդիրների նկատմամբ: 18-րդ դարի 90-ական թվականներին բարձրաձայնում էր իր մտքերը գրողի կոչման մասին. «... Բոլորը հաստատ միայն մի բան գիտեն, որ ունեն մի թշվառ հայրենիք, բայց թե ի՞նչ բան է այդ հայրենիքը, ինչի՞ մեջն է նրա թշվառությունը, ի՞նչպես են ապրում, ինչպես խոսում, լալիս, ուրախանում, և այլն, և այլն, նրա ժողովուրդը, ահա, այդ է հարկավոր, այդ

առավելությունները, այդ հատկությունները միայն կարող են նրանց ձեռնադրել հայոց բանաստեղծ, հակառակ դեպքում կմնան հայ բանաստեղծներ, ոչ թե հայոց բանաստեղծներ: Եվ միայն այդքանը, և այդքանը գիտեն...»¹:

Փաստորեն սա մեծն Թումանյանի առաջին հրապարակային բարձրագույն մտքերից է, որը թվում է, թե միայն գրողի կոչման մասին է: Բայց այստեղ նա հայոց բանաստեղծի, գրողի առաքելությունն է ձևակերպում՝ անգամ բանաձևում: Այդ նույն ժամանակաշրջանում նա իր մտքերն է արտացոլում գրական լեզվի մասին. «... մեր աշխարհիկ լեզուն գրական լեզուն ընդամենը 50 տարեկան է և մի հատ մատղաշ հասակ մանավանդ լեզվի համար: Եվ չի կարելի ասել, թե նրա զարգացման գործը այս 50 տարվա ընթացքում գոնե բարեհաջող պայմանների մեջ է եղել: Եթե լեզուն ճոխանում, կազմակերպվում է գեղարվեստական գրականության մեջ՝ այդ գրականությունն ինքը այնքան աղքատ է եղել, որ յուր է գնացել համարյա լրագրական լեզվով: Եթե լեզուն կանոնավորվում է գիտական ուսումնասիրություններով, ապա մեր մի ջուխտ ու մի կենտ լեզվագետները դեռ վիճում են տարրական բաների վրա...»²:

Ինչպես և պետք էր սպասել՝ Հովհաննես Թումանյանի գրական հրապարակախոսությունը նախևառաջ առնչություններ պիտի ունենար գրական գործին («Մոճոռյանց Պետրոս») վերլուծության, Խորենացու («Տենչայր Սաթենիկ» հոդվածի առթիվ) նամակների (Ղ. Աղայանին, Տ. Միմեոն Հովվյանին), գրախոսությունների գենքով («Համլետ»): Ինչ խոսք, որ այս ամենին զուգակցվում էին հոդվածները ժամանակի գրական աշխարհի վերաբերյալ («Տաղանդ և

¹ Թումանյանը՝ քննադատ, Եր., 1939, էջ 18:

² Թումանյանը՝ քննադատ, Եր., 1939, էջ 18:

բթամտություն», «Մեր գրական վարք ու բարքից», «Ընդդիմախոսություն»):

Թերևս Թումանյանի մոտ նամակագրությունը անկեղծ է, քննական ոգի ունի, եթե անգամ դրանց հասցեատերերը իր նամակի համակրելի ու ընդունելի մարդիկ էին: Օրինակ, 1899 թվականի հունիսի 24-ին Դսեղից Իշխանուհի Մարիամ Թումանյանին հասցեագրած նամակում նկատում է. «Պետք է ասել, որ մեր ժողովուրդը զարմանալի արագությամբ մոռանում է իր հին զրույցներն ու ավանդույթները ոչ թե նրա բառերը, այլ նրա սիրտը: Աստծո նման սրտագետ լինի ու խորաթփափանց, գտնի ամեն բանի աղբյուրն ու արմատը, որ կարողանա ճշմարիտ գտնել և արդար դատել: Այն ժամ կպարզվեն մթությունները, հասկանալի և բնական կերևան ըստ երևույթին հակասությունները և քառսի մեջ կհայտնվի ներդաշնակությունը՝ եթե կա: Ամենից առաջ հարկավոր է, որ մեկը բանաստեղծ լինի, բառի լուրջ իմաստով: Նրանից հետո պետք է նրան հասկանալ»³:

Ընդհանրապես Հովհաննես Թումանյանին հետաքրքրում ու անհանգստացնում էր գրականության զարգացումը, և 1907 թվականին հանդես եկավ «Կյանք և գրականություն» դասախոսությամբ՝ ձգտելով հասկանալ հայ գրականության մասին՝ ընդգծելով, որ այն դեռ փոքր գրականություն է, դեռևս չմշակված լեզվով, ասելիքի պակասով: Վերլուծելով կոնկրետ հեղինակի ստեղծագործությունները՝ Թումանյանը իր սպասելիքներն է արտահայտում դրանցից: Պատահական չէ, որ մեկ այլ հոդվածում իր սպասելիքներն է արտահայտում թարգմանական գրականությունից: Հայոց նոր գրականության հիսնամյակը հոդվածում մատնանշելով

³ Թումանյանը՝ քննադատ, Եր., 1939, էջ 109:

Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» հրատարակության 50-ամյակը, առաջարկում է առիթը օգտագործել և «Հավերժացնել հայ մտքի այդ տոնը՝ նոր ուսումնարաններ և գրադարան-ընթերցարաններ բանալ, կենտրոնական համագային գրադարան կամ թանգարան հաստատել, կամ հիմնել հայոց գրական ֆոնդը, նրանով միանգամ ընդմիջտ վերացնել ամեն մի գրողի հորելյանին փող հանգանակելու սովորությունը և հորելյանները վերածել զուտ գրական տոների»⁴:

Եվ պատահական չէր, որ նա կանգ չառավ և գրեց «Հորելյանների դեմ» վերնագիրը կրող հոդվածը, ու ընդգծում, որ հորելյաններ տոները ինքնանպատակ չպետք է լինեն: Նպատակը որևէ գործչի սոսկ գովաբանությունը չպետք է լինի, այլ ժողովրդի ոգին ու էությունը, խնդիրները հասկանալն ու արտահայտելը: Բնական է, որ նա պարբերաբար անդրադառնում է հենց ժողովրդի խնդիրներին, անհրաժեշտ համարում, որ գործող մամուլը ավելի ակտիվ լինի, սերտ կապեր ունենա ընթերցողի հետ. «Եվ չի ուղղվելու հայ թերթը, մինչև չտեսնի այն պատկառելի ընթերցողը, որ հասկանալ և պահանջել գիտի, որ թույլ չի տալ իրեն հետ ամեն բան խոսել և ամեն ձևով խոսել»⁵:

Թումանյանը իրավացիորեն նկատում էր, որ թերթերը պետք է զբաղվեն ազգային խնդիրները լուսանբանումով, մասնավորապես՝ հայ դպրոցի, հայ թատրոնի ու գրականության՝ միշտ առաջին պլան մղելով՝ անկողմնապահ և բազմակողմանի քննության ենթարկել այդ երևույթները: Եվ պատահական չէ, որ Թումանյանը առանձին անրադառնում է ազգագոյական նյութերի հավաքչությանը ու վերլուծությանը («Ազգրագրական գործը մեզանում»), հայոց թատրոնի

⁴ Թումանյանը՝ քննադատ, Եր., 1939, էջ 122:

⁵ Թումանյանը՝ քննադատ, Եր., 1939, էջ 169:

բացմանը և զարգացմանը, մասնավորապես Թիֆլիսի Հայոց թատրոնի բացմանը («Հայկական թատրոնի ընթացիկ սեզոնի բացման առթիվ»), հայ գրականության զարգացման միտումներին, մասնավորապես նորերի առջև ճամփա բացելու անհրաժեշտությանը («Նորերի համար»): Թումանյանը գրականության վերաբերյալ իր մտքերի ընթացքը շարունակում է արտահայտել «Լ. Տոլստոյի մահվան առթիվ», «Շիրվանզադեի հոբելյանը», «Ամենքը միասին», «Հայ գրողներին», «Գավառական ցերեկայիններ», «Գրական լեզվի մասին», «Նաղաշ Հովնաթանը և նրա Քուչակ Նահապետի ու Սայաթ-Նովայի սերը»: Թումանյանը անհանգստացած էր ոչ միայն հայ գրականության, այլև պատմության խնդիրներով: «Հայոց պատմություն» հոդվածում մեծն Թումանյանը ընդգծում է. «Մի «Հայոց պատմություն» պետք է տալ այս ժողովրդին, որ նրան դատողը դատելիս կարողանա ծանոթանալ և այնպես դատել, որ նրան պաշտպանողը պաշտպանելիս առաջ քաշի այդ պատմությունը և այնպես պաշտպանի, որ նա ինքը՝ պատասխանի կանչելիս բաց անի այդ պատմությունն ու այնտեղից հանի իր պատասխանը, որ ուրիշներն էլ ճանաչեն նրան, ինքն էլ ճանաչի իրեն»⁶:

Ընդհանրապես Թումանյանը անընդհատ, ամենօրյա պայքար էր մղում ազգային ինքնության պահպանման համար, քանի շատ ցաքուցրիվ հավաքական ու ամբողջական չէր տեսնում և անընդհատ ուղիներ փնտրում ցանկալի արդյունք ունենալու համար: Մասնավորապես նա պաշտպանում էր Հայագիտության ազգային ֆոդ ունենալու գաղափարը⁷: Նա ուզում էր, որ դա լայն նախաձեռնություն

⁶ Թումանյանը՝ քննադատ, Եր., 1939, էջ 210:

⁷ Տես՝ Հայագիտության ազգային ֆոնդը, Թումանյանը՝ քննադատ, էջ 201-212

դառնա հայոց գրականության 400-ամյակի առթիվ: Ինչ խոսք, գաղտնիք չէ, որ Թիֆլիսը 20-րդ դարի սկզբին հայ գրականության կենտրոնն էր, ուր ոչ միայն ապրում էին հայ գրչի վարպետներ ու սկսնակները, այլև հենց այստեղ էին տեղի ունենում հիմնական գրական գործընթացները, որոնցով էլ արժեվորվում էր հայ գրականության զարգացումը, մասնավորապես հայ գրողների կովկասյան ընկերության ցերեկույթների տեսքով, որոնց մասնակցում ու ելույթներ է ունենում Հովհաննես Թումանյանը. «Ո՛չ, չպետք է կործանվի հայոց գրական ընկերությունը: Քանի որ մի երկրում, մի հասարակության մեջ էդ տեսակ մարդիկ կան, էդ տեսակ մամուլ ու էդ տեսակ վերաբերմունք կա դեպի գրողն ու գրականությունը, նա, ընդհակառակը պետք է հաստատուն կանգնի, մեծանա, ուժեղանա, հարազատ ու տաք օջախ դառնա հայոց հալածական գրականության համար, ամուր նեցուկ ու պաշտպան դառնա հայոց խանգարված գրողի համար և պատվար ամեն չարության և հալածանքի հանդեպ: Եվ նրա հարկի տակ պետք է հավաքվեն բոլոր նրանք, որոնք երագում և ձգտում են տանելու հայ ժողովրդին դեպի գեղեցիկը, ազնիվն ու կատարյալը»⁸:

Ի դեպ՝ Թումանյանը հասարակական, գրական, մշակութային կյանքում ակտիվ էր, որովհետև Թիֆլիսում կամ նա՝ նման բնույթի հիմնական միջոցառումների կազմակերպիչն էր, կամ էլ ինքը չէր հրաժարվի մասնակցել, օրինակ, պատանիների ցերեկույթի և հանդես գալ ընդարձակ ելույթով: Ներկայացնելով գրականությունը, նա ընդգծում է. «Եթե գրականությանը կյանքի հայելին ասենք, ապա գրականության ամեն տեսակի ստեղծագործությունների աղբյուրը ամենից առաջ մարդու սիրտն է: Եվ երբ էսպես է, աշխատեք

⁸ Թումանյանը՝ քննադատ, էջ 224:

ձեր սրտերը պահել մաքուր և լիքը ամենալավ ու մանեաբարի զգացմունքներով և աշխարհքին ու մարդուն նայեցեք բարի սրտով ու պայծառ հայացքով: Արևի նման նայեցեք աշխարհքին»⁹:

Թումանյանը երբեք չզլացավ և իր գնահատանիքի խոսքը ուղղեց մեր գրականության մեծերին՝ Սայաթ-Նովա, Խաչատուր Աբովյան, Բաֆֆի, Գաբրիել Սունդուկյան, Ղազարոս Աղայան, Ռափայել Պատկանյան, Վահան Տերյան: Բայց ամենից շատ հոգվածներ է հեղինակել և ելույթներ ունեցել նվիրված մեծն Սայաթ-Նովային: Նա առաջիններից էր, որ հասկացավ ու շատ բարձր գնահատեց Սայաթ-Նովայի պոեզիան, ձգտեց հասկանալ այդ ամենի առանձնահատկություններն ու ծալքերը, նրան համարելով «մի ամբողջ ժողովրդի պարծանք, անմաշ ու անմահ: Ով նրան մին լսեց, մյուս անգամ ավելի սիրով կլսի, ով նրան մին սիրեց, էլ չի դադարիլ սիրելուց»¹⁰:

Թումանյանը անտարբեր չէր և՛ ռուսական, և՛ վրացական գրականության նկատմամբ: Պատահական չէ, որ նա մի քանի անգամ հանդես եկավ Վ. Բրյուսովին նվիրված տարբեր միջոցառումներում՝ արժանին մատուցելու հայ ժողովրդի լավագույն բարեկամին: Թումանյանը լինելով գիտակ համաշխարհային գրականության, առիթը բաց չէր թողնում Շեքսպիրին և Սերվանտեսին հիշելու համար: Թումանյանը չի մոռանում և՛ արվեստի մյուս ճյուղերը, մասնավորապես թատրոնը և՛ նրա գործիչներին, մասնավորապես Պետրոս Աղամյանին, որի խաղով հպարտանում է մեծ բանաստեղծը՝ համոզված լինելով, որ աշխարհահռչակ իտալացի Ռոսիի «Համլետը սքանչելի է .. Բայց Աղամյանին չի հասնիլ: Ես իմ

⁹ Թումանյանը՝ քննադատ, Եր., 1939, էջ 245:

¹⁰ Թումանյանը՝ քննադատ, Եր., 1939, էջ 258:

կյանքում, թերևս, երբեք, ինձ էնքան հպարտ չեմ զգացել իբրև հայ, ինչպես էն գիշերը: Բայց, այնուամենայնիվ, չեմ կարող ասել՝ հպարտությու՞նս ավելի մեծ եղավ, թե՞ վիշտս... Նա մեզանում չգնահատվեց՝ և անպաշտպան, անժամանակ գերեզման իջավ»¹¹:

Թումանյանն իր հասարակական և հրապարակախոսական անհանգստություններում ցանկանում էր, որ հայությունը ունենա այն բնորոշ ազգային կառույցները, որոնք անհրաժեշտ են լինելու ցանկացած պետության: Թերևս դրա արտահայտություններից էր «Հայկական ընկերությունը» հոդվածը, ուր հատուկ խնդիրներ է դնում Հովհաննես Թումանյանը, իհարկե մինչ այդ վերլուծել իրավիճակը. «Պետք է համախմբել հայ գիտնականներին, ստեղծել գիտություն հայերեն լեզվով և հայ գիտնականների կաճառ, գիտության օջախ, հայկական ակադեմիա: Եվ պետք է ստեղծել հայոց համալսարանը, ուր կարելի լինի բարձրագույն գիտությունները ավանդել և սովորել հայերեն լեզվով: Մեր տարրական և միջնակարգ դպրոցների մեջտեղը պետք է կառուցանել և պահել մի գիտության տաճար, մեր մանր ու մեծ ճրագների մեջտեղը պետք է վառել մի մեծ ջահ՝ Հայկական Համալսարան»¹²:

Թումանյանի մոտակա տեսլականը հայոց պետությունն էր՝ իր ազգային բաղկացուցիչներով, պատահական չէ, որ այդ ամենը անցնում է ողջ հրապարակախոսական և քննադատական խոսքի մեջ: Թերևս նրա թողած ժառանգությունը այս առումով էլ հարուստ է, որ նրա ծննդյան օրվանից 150 տարի հետո էլ դա մնում է այսօրվա համար նախատեսված ասելիքով: Ուրեմն էլ ոչ միայն գրական

¹¹ Թումանյանը՝ քննադատ, Եր., 1939, էջ 372:

¹² Թումանյանը՝ քննադատ, Եր., 1939, էջ 418:

Ժառանգությամբ, այլև քննադատությամբ ու հրապարակա-
խոսությամբ Թումանյանը անմահ է և բոլոր ժամանակներինը:

РЕЗЮМЕ ТУМАНЯН КАК ПУБЛИЦИСТ СЕРГО ЕРИЦЯН

В статье делается попытка в общих чертах представить и проанализировать выступления, статьи, анализы поэта всех армян, с которыми он параллельно с произведениями поэзии и других литературных жанров, выступал перед общественностью. И неслучайно, что параллельно со своими литературными шагами стремился понять литературный мир, читателя и в различных сферах жизни, особенно в вопросах, касающихся национальной сущности и духа. Он хорошо понимал, что любой народ должен стремиться к созиданию государственности, к ее составляющим, которые позволят встать на этот путь. Естественно, что хотел видеть реальное развитие и литературы, и искусства, и культуры, и образования, и науки, которого достоин многострадальный армянский народ. Туманян выступал как передовик сплочения армянского общества, как минимум в Тифлисе – гарантией безопасности, борющийся с болью и горестями, дающее свободу мечтам и целям.

Ключевые слова: Туманян, поэт всех армян, критика, публицистика, анализ, общественные проблемы, письма, статьи, выступления.

ABSTRACT
TUMANYAN AS A PUBLICIST
SERGO YERITSYAN

The article attempts to outline and analyze the speeches, articles, analysis of the All-Armenian poet, which he had in front of the public alongside with his poetry and other literary genres. And it is not occasionally, that along with his literary endeavors he sought to understand the literary world, the reader, and the existing difficulties and problems related to various spheres of life, particularly the existing national essence and spirit. He was well aware that every nation should strive to build statehood, and to achieve that, they should have the components, which would allow them to take that path. It was natural that he wanted to see the development of literature, art, culture, education, and science which the long-suffering Armenian people deserve. Tumanyan acted as a pioneer of the consolidation of the Armenian society in Tiflis, at least, guaranteeing security, pursuing the dreams and goals of the Armenian nation without enduring pain and hardship.

Key words: Tumanyan, All-Armenian poet, criticism, publicity, analysis, public issues, letters, articles, speeches.

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՆԱՐԵԿԱՑԻՆ
(ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ)

ՌԱԶՄԻԿ ԴԱՎՈՅԱՆ

Թեև Թումանյանը և Նարեկացին ապրել ու ստեղծագործել են պատմական տարբեր դարաշրջաններում, սակայն այդ հանճարների ընդհանրությունները, հոգևոր, ստեղծա-

գործական և գաղափարական փոխկանչը ջնջում են պատմական ու ժամանակային բոլոր պատենշները և զարմանալի կամուրջ ստեղծում գրչի ու մտքի երկու տիտանների միջև:

Համոզված ենք, որ Թումանյանը դեռևս իր ստեղծագործական կյանքի սկզբնավորման շրջանում արդեն ծանոթ է եղել Նարեկացու Տաղերին ու «Մատյանին» և հենց այդ ժամանակ էլ ստեղծագործական կողմնորոշման որոշ երկփեղկվածության զգացում է ունեցել: Միանգամայն իրավացի են նրանք, ովքեր գտնում են, որ Թումանյանի «Կանչ» (1891թ.) բանաստեղծությունը չէր գրվի, եթե նա արդեն ծանոթ չլիներ Նարեկացու արվեստին: Հենց միայն Աստծո հետ զրույց բանալու, երկրային կյանքի մեղքերի, չարի մշտական գոյության մասին Արարչին պատմելու ընտրված ձևը գուտ նարեկացիական է, որն անխուսափելի է դարձնում «Մատյանի» շեշտի ներկայությունն այդ բանաստեղծության մեջ.

Ինչո՞ւ տակավին
Չես պատժում չարին,
Ո՞ւյժդ է պակասում,
Թե՛ չենք աղերսում:
Թե՞ չարագործին
Դու՛ չես տվել սուր,
Որ խաղաղ հոգին
Սարսափի իգուր:
Թե՞ դու չըգիտես,
Որ այստեղ, երկրում
Մարդը ժպտերես
Մարդ է գիշատում. –
Դե արի՛ ու տե՛ս,
Զարկի՛ր ու շանթի՛ր,
Եթե աստված ես
Դու վրեժխնդիր:

«Եթե»-ների այն համակարգը, որ կա բանաստեղծության սկզբից մինչև վերջ,

«Եթե կա, աստված,

Եվ չես ստեղծել

Արտասուք ու լաց...»,

«Թե դու չես ասել,

Որ կյանքը այսպես

Լինի անսպառ

Տանջանքի հանդես...»...

և այլն, բնավ չի նշանակում, թե նա կասկած ունի Աստծո գոյության կամ արդարություն իրագործելու Նրա կամքի հանդեպ: Դա պարզապես բանաստեղծական մի հնարք է, որով Բանաստեղծն իր անհանգստությունն է արտահայտում մարդկության ճակատագրի համար՝ նրանց դժոխքային կյանքի դառնությունները Տիրոջը ներկայացնելիս և Նրանից օգնություն և արդար դատաստան աղերսելիս:

Այս «Կանչ» բանաստեղծությունից տասը տարի հետո, անդրադառնալով թեմային, Թումանյանը գրում է «Աստծո սպառնալիքը» բանաստեղծությունը, որը գրականագետ Էդ. Ջրբաշյանի բնորոշմամբ. «...որոշ իմաստով կարող է համարվել «Կանչի» ուղղակի շարունակությունը և Արարչի գալուստն է ազդարարում. «Այժմ ես կգամ, ասում է Աստված, օգնել աղքատին իր ծանր կովում»: Կարծեք արձագանքելով դրանից տասը տարի առաջ տազնապալի հարցին՝ «Ո՞ւյժդ է պակասում, թե՞ չենք աղերսում», բանաստեղծն այստեղ Արարչի անունից պատասխանում է. «Մի՞ թե կարծում եք՝ ուժն էր պակասում, եթե համբերեց դատելուց առաջ»:

Ահեղ վրեժով է սպառնում Աստված աշխարհի հզորներին՝ նրանց գործած բոլոր չարիքների համար.

Ես հուր եմ ձրգում ճընշվածի հոգին-

Նորա համարձակ լեզվով ձեզ դատեմ,

Ես ուժ եմ տալիս աղքատի բազկին,
Նորա թիկունքին՝ գալիս եմ ձեր դեմ:

«Այստեղ մենք տեսնում ենք, - գրում է Ջրբաշյանը, - կրոնական մոտիվների միանգամայն իրական բովանդակությունը, նրանց կապը սոցիալական արդարության թումանյանական իդեալի հետ»: Լա՛վ. միայն թե՛ ո՛չ «կրոնական մոտիվներ» և ո՛չ լոկ «սոցիալական արդարություն», այլ մոտավորապես այսպես՝ Աստծո մոտից եմ գալիս և նրա հուսատու արձագանքն եմ բերել ձեզ համար, իմ տառապյալ հայրենակիցներ: Ե՛վ Նարեկացին, և՛ Թումանյանը Առաքելական եկեղեցու հարազատ գավակներ, երկուսն էլ իրենց առաքելությունը չեն սահմանափակել կրոնական մոտեցումներով, այլ ամեն բան դիտարկել են, Թումանյանի խոսքով ասած, «ավելի լայն ու խորը»՝ համամարդկային հայացքով:

Ուշադիր ընթերցողը չի կարող չնկատել, որ և՛ խորքային, և՛ բառապաշարի, և՛ բանաստեղծական շեշտի առնչություն կա Թումանյանի «Տիեզերքի ընթերցումը» բանաստեղծության և Նարեկացու Մատյանի հետևյալ հատվածի միջև.

«Դո՛ւ, որ վե՛ր ես հանում երկրի հողից
բուսականություն և կենդանացնում անշունչ մեռյալին, որ ինչ
անշարժ է՝ կառավարո՛ւմ ես որպես ընթացող, անարգ
արգանդից ծնեցնում ես Քեզ պատկերակիցնե՛ր, բարիք
ըմբռնող ծնոտներ տալիս պատանիներին և մազածածկո՛ւյթ
ընծայում նրանց մաքուր այտերին, որ սաղարթներն ես
սևթույր մազերի փոխում զարմացնող ձյա՛ն ճերմակության՝
ցույց տալով այդպես, որ կարողության սահմանները Քո
չունեն սահմաններ՝... Դո՛ւ, որ քանդո՛ւմ ես տարրերը իբրև
անցավոր բաներ, և դարձյալ նրանց ի՛ մի ես բերում, կապո՛ւմ
ես իրար՝ իբրև հարակա արտահայտություն և այդտեղից էլ
վստահեցնո՛ւմ ես, հո՛ւյս տալիս կրկին, որ մեր մեղքերի

բազմություններն էլ կարող ես թողնել նույն զորությամբ, որ՝
տարրերի հետ ես հզոր վարվում. . .», և այսպե՛ս, այսպե՛ս ու
այսպե՛ս՝ անվերջ արարչագործություն և աստվածային հզո-
րություն:

ՏԻԵԶԵՐՔԻ ԸՆԹԵՐՅՈՒՄԸ

Ո՛վ, որ հայացք ես ինձ տվել վերամբարձ՝
Սուզվելու վերին սահմաններն արփի,
Որ միտք ես տվել երկնաճեմ ու բաց
Չափելու ահեղ բացերն անչափի,

Որ կապել ես մեզ, հոգիս Քեզ արել՝
Հոգուս անհունի հրճվանքը տալով,
Բարձրը ճակատիս ժլպիտ ես վառել,
Վառել, զարդարել արփենի փայլով.

Անթարթափ աչքով, անխարխափ հոգով
Կարդում եմ Քո վե՛հ ազդումներն անվերջ,
Կարդում եմ պայծառ, ուրախ ցերեկով,
Ու գիշերները ահավոր ու պերճ:

Վերանում է վեր հոգիս զրվարթուն-
Չըկա մոտ ու տար, չըկա վեր ու ցած,
Տիեզերքն ամբողջ հայրենիք ու տուն,
Ու ես մի ազատ՝ անտարբեր աստված:

Հետագայում բավական թվով գրավոր և բանավոր
վկայություններ կան առ այն, որ Թումանյանը զանազան
առիթներով Նարեկացու բանաստեղծական հանճարի վերա-
բերյալ բարձր գնահատանքի խոսք է հնչեցրել: Դա երևում է ն՝
Բրյուսովի՝ Թիֆլիս այցելության ընթացքում նրա պատվին

տրված ճաշկերույթի ժամանակ, երբ շատ բարձր գնահատելով ռուս մեծ բանաստեղծի կողմից հայ պոեզիայի անթուղիքի հրատարակելու աննախադեպ գործի կազմակարպումն ու այդ անթուղիքի որակական բարձր մակարդակը, Թումանյանը Նարեկացուն առանձնացնում է որպես տիեզերական հանճար, ինչպես նաև՝ Մայաթ-Նովայի հուշարձանի բացման կապակցությամբ արտասանած նրա խոսքում, որտեղ Թումանյանը առաջարկում է կանգնեցնել նաև Նարեկացու հուշարձանը և ոչ թե՛ բարեգործությամբ կամ նվիրատվությամբ, այլ՝ համաժողովրդական ջանքերով... Սույն վերաբերմունքն ու հնչեցված գնահատականները հաստատում են, որ Նարեկացին Թումանյանի էության մեջ նստած է եղել շատ վաղ ժամանակներից, դեռևս երիտասարդության տարիներից, երբ նա գրում էր «Կանչ» բանաստեղծությունը, կամ գուցե թե՛ ավելի վաղ:

Հավերժության մեջ ապրող երկու խոշորագույն անհատականությունների համար հազար տարին մեծ ժամանակահատված չէ, որ նրանց միջև հոգևոր, գաղափարական կամ ստեղծագործական փոխկանչը տարօրինակ կամ արտասովոր թվա: Նախ պիտի ասեմ, որ «հավերժության մեջ ապրող» արտահայտությունը պիտի չընդունել փիլիսոփայական ձևակերպման իմաստով, որ նկատի ունի՝ ստեղծագործության անմահությունը, ինչն ինքնին հասկանալի է: Տարիներ առաջ արդեն մեկ անգամ ընդվզել եմ դրա դեմ՝ գրելով «Մինչև որ հասնես նախապապերիդ» աշխատանքը, որի մեջ հարցին, թե՛ ժամանակային առումով որտե՞ղ է Թումանյանը, պատասխանը լինի՝ մեզանից հարյուր հիսուն տարի առաջ, և մատով ցույց տանք մեր թիկունքը, այսինքն՝ մեզանից ետ, այսինքն՝ մենք՝ այսօրվա ապրողներս նրանից առաջ ենք հարյուր հիսուն տարով: Դա բացահայտ աբսուրդ է. «առաջ», այսինքն՝ առաջ: Շատ չմանրամասնելով՝ հարց տամ՝

եթե հավատացալը գնում է Աստծո դուռը և Նրա պատկերի առջև աղոթք-աղաչանք է անում, նա ո՞ւմ է անում աղոթք-աղաչանքը՝ այդ պատկերի՞ն, թե՞ կենդանի Աստծուն: Պատասխանը միանշանակ է՝ նա աղոթում և օգնության է դիմում կենդանի Աստծուն: Ուզում եմ ասել, թե Թումանյան-Նարեկացի փոխկանչը կարող էր լինել թե՛ Նարեկացու կողմից, որ Թումանյանից հազար տարի առաջ է, թե՛ Թումանյանի կողմից, որ Նարեկացուց ետ է ընդհամենը հազար տարով: Նրանց միջև ժամանակային խոչընդոտ գոյություն չունի:

Ստեղծագործական կապերի, առնչակցությունների մասը հարցի մի կողմն է, որ վերաբերում է երկու խոշորագույն անհատների մասնավոր կողմնորոշումներին, որոնց դեռ կանոնադաշտանք:

Այլ է գաղափարական առնչակցության խնդիրը, որ վերաբերում է ընդհանուր մարդկության, հասարակության, աստվածակերտ մարդու նախաստեղծ տեսակի և նրա հետագա կենսակերպի, գոյաձևի, հասարակական համակեցության ընտրության գլոբալ խնդիրներին: Այստեղ Նարեկացու և Թումանյանի փոխկանչը ուղղակի հիացմունք է պատճառում՝ ընդարձակելով մեր ոչ միայն ժամանակային, այլև գոյաբանական տեսողության դաշտը: Թումանյանի՝ հայ մարդ-հայ անհատ և հայ հասարակության կերտելու կամովին-անհրաժեշտաբար ստանձնած առաքելության մասին բավական ընդարձակ խոսել ենք ուրիշ առիթներով: Այժմ անհրաժեշտ ենք համարում համեմատության մեջ տեսնել, թե Նարեկացին ի՞նչ առաքելություն էր ստանձնել՝ գրելով իր «Մատյան ողբերգության» անկրկնելի, բացառիկ պոեմ-աղոթագիրքը: «Մատյանին» «պոեմ-աղոթագիրք» բնութագիրը տալով՝ ուզում եմ ճշտել, որ երկուսն էլ Նարեկացու բնորոշումներն են իր ստեղծագործությանը: Բանաստեղծ,

հմուտ գրաբարագետ-թարգմանիչ Մաքսիմ Ոսկանյանը, ի վերջո ամբողջացնելով Մատյանի լիակատար թարգմանությունն արևելահայ աշխարհաբարով, ներառելով մինչ այժմ չթարգմանված գլուխները, որոնք ինչ-ինչ պատճառներով բացակայում էին նախորդ թարգմանություններում, վերջնականապես հաստատեց և՛ Մատյանը գրելու շարժառիթը, և՛ հեղինակի կողմից դրա անվանումը: Բանաստեղծական բարձրագույն ոգով և բանաստեղծական անօրինակ շոայլ պատկերավորությամբ գրված Մատյանը շարադրված է արձակ տեքստով՝ առանց տողատումների: Հենց դրան էլ հավատարիմ է մնացել Մաքսիմ Ոսկանյանը՝ ականջալուր լինելով Մեծն Աղոթողի բազմանգամյա հորդորներին, թե իր Մատյանը աղոթագիրք է՝ ներշնչված բազում ճգնավորների, անապատականների հորդորներից, որոնք աղերսում էին իրեն մի աղոթագիրք հորինել՝ մխիթարվելու և մեղքերից ազատվելու համար. «... որ գրեցինք մենակյաց հայրերի խնդրանքների ու հայցման համաձայն. Գրիգորի՝ Նարեկավանքի վանականի Մատյան ողբերգությանը»:

Այժմ անդրադառնանք, թե այս նշվածներից զատ, ո՞րն է Նարեկացու ստանձնած առաքելությունը, որ համախոս է Թումանյանի առաքելության հետ: Այսպես ուրեմն՝ եթե Թումանյանի մտահոգությունը հայ անհատի և հայ հասարակության համապատասխան որակի ապահովման խնդիրն է, որ կարողանա միջազգային հանրությանն արժանի պատկերով ներկայանալ, ապա Նարեկացու մտահոգությունը համամարդկային ներդաշնակ հասարակության երազանքն է, որի իրագործողն այդ մարդկությունն արարող Աստված է, Ում առջև փռելով մարդկային մեղքերի անագորույն իրականությունը՝ խնդրանք-աղոթք-աղաչանք է անում, որ Արարիչը հանի մարդկությանն այդ դժոխային վիճակից՝ հավաստիաց-

նելով, որ մարդը հասել է այդ գիտակցությանը, որի ապացույցն իր կողմից Նրա առջև դրված մեղքերի խոստովանության՝ մինչ այդ չտեսնված բարձրագույն վկայությունն է: Նարեկացին խտրականություն չի դնում ազգերի, ցեղերի, մարդկային տեսակների, կրոնների ու գաղափարախոսությունների միջև: Եվ այնպիսի անկողմնակալ, անանձնական նվիրումով, որ հավատում է, թե՝ «Արդ այս ամենը՝ իմ թշվառացյալ իղձերով շնչիս, դավանությունս է Քեզնո՛վ, Քե՛զ ուղղված հարմար խոսքերով, քանի որ, Աստված, ամենայնս Ինքդ ես Բանի միջոցով ողջ բովանդակում, որոնց մասին, որ նախկին ճառերում խոսել եմ արդեն և երկրորդներում նույնն եմ անելու: Եվ հանդիմանման շարքերն են գրիս բանական քարոզ, որոնց միջոցով ես թվարկեցի արգահատանքս բոլոր մեղքերին և աղերսներս բարեմաղթության, որոնք որ իրենց ներքինում ունեն գոհաբերություն: Եվ իմ մատյանի քարոզներն այս Քեզնով ուղղված են տարբեր ազգությունների բազմություններին, և պիտ թարգմանվեն ժողովուրդներին՝ որպես նվերներ»:

Մարդուն դարձյալ բարությամբ նորոգելու և մեկ անգամ ևս ճշմարիտ ճանապարհով ուղղորդելու ողջ ուժը, կարողությունը, հնարը Տիրոջ ձեռքին է, և անտեղի, վերացական չեն իր բոլոր աղոթքներն ու աղաչանքները, քանի որ ինքը և իր հետ մարդկային ամեն արարած մեղքերի իրենց սրտաբուխ խոստովանությամբ հող են նախապատրաստում՝ Արարչից այդ նվերն ստանալու համար: Իր գրի միջոցով «թվարկում է իր արգահատանքը բոլոր մեղքերին և աղերսանքները բարեմաղթության», «...որքան որ իրենց ներքինում ունեն գոհաբերություն», և դա հղում է աշխարհի բոլոր ժողովուրդներին: Հավասարատեսության այս սկզբունքով Նարեկացին ասում է. «Ամեն ոգի քեզ է ուղղված հույսի ակնկալիքով և սպասում են, որ իրենց միայն Ինքդ

նորոգես, ամենքն են կարոտ Քո շնորհներին՝ երկնայիններ լինեն նրանք, թե երկրավորներ, նրանք, ովքեր որ ընկած են մեղքով, և նաև նրանք, որ արդարությամբ բարձրացան վեր, թե՛ տեր, թե՛ ծառա՛, թե տիկի՛ն լինի և թե աղախի՛ն, ամեն-ամենքի կենդանի շունչն է Քո ձեռքերի մեջ »:

Թումանյանը ևս անխտրական բարի վերաբերմունք ունի մարդկանց ու ժողովուրդների նկատմամբ: Նա գրում է. «Պարզ հասկանալու համար երևույթի վրա պետք է նայել բնության ու պատմության օրենքների բարձրությունից, էն լայն, խաղաղ ու խոր հայացքով, որ նրանք միայն կարող են տալ»: Նրա գնահատմամբ՝ բոլոր ժողովուրդներն իմաստուն են, իշխանությունները՝ հիմար: Նրանք են ժողովուրդների կյանքը խառնշտորում՝ իրենց չար ու անասնական կրքերին՝ հագուրդ տալու համար, նրանց հանում են իրար դեմ՝ սանձազերծելով պատերազմներ ու ամեն տեսակի ոճիրներ: Անվերջ, անդադար շարունակում է բախել մեր ժողովրդի հասկացողության դուռը՝ հավաստիացնելով, թե ինքը լավ է հասկանում, լավ գիտի մեր ժողովրդի դառնանալու պատճառները, բայց... Բայց դրա պատճառով պետք չէ դառնացած մնա... Եթե իր տիեզերակալ նախորդը դեռևս հազար տարի առաջ հորդորում էր արարիչ Աստծուն, թե մարդու նորոգման բոլոր միջոցներն ու հնարները Նրա ձեռքում են, պատմությունը ցույց է տալիս, որ մարդն, աղոթելուց բացի, էլի կարևոր բաներ ունի անելու: Որոշակի հանգամանքների հետ միասին «...գարհուրելի ծնող է եղել մեզ համար մեր պատմությունը: Նա երկար դարերով մեզ դրել է բարբարոս ժողովուրդների ոտների տակ: Իսկ ամեն կենդանի գոյություն, որ ոտնատակ է ընկնում, եթե չի մեռնում, այլանդակվում է, դառնանում ու փչանում: Էսպես է բնության օրենքը... Էնպես դառնանում և դաժանանում է և՛ մարդը, նրա հոգին, սիրտը, միտքը, ու ներքին դառնությունը դուրս է տալի,

հայտնվում է ն՝ աչքերում, ն՝ դեմքին, ն՝ խոսքերում, ն՝ գործերում, ամեն տեղ, ամեն ասպարեզում, ու ամբողջ կյանքը դարձնում է դառն ու դաժան: Եվ էս տեսակ կյանքը կունենա, այո՛, շատ բան, ն՝ «հառաջադիմություն», ն՝ «կուլտուրա», ն՝ «մամուլ», ն՝ «գրականություն», ն՝ «դպրոց», ն՝ «բարեգործություն», բայց էդ բոլորը ներսից ճիճվի կերած պտուղի նման են, և տառապում են հիմնական պակասություններով, մի ընդհանուր ցավով, որի ճարը դրսից անել չի կարելի: Էդ տեսակ կյանքը կտա և տաղանդավոր մարդիկ, սակայն նրանք էլ կլինեն դառն ու դաժան: Բայց նա չի կարող ծնել ազնիվ մարդիկ, բարի սրտեր ու բարձր ոգիներ, հենց է՛ն, ինչը որ դարձնում է մի կյանք գեղեցիկ ու հրապուրիչ և մի ժողովուրդ՝ թանկ ու համակրելի:

Արդ՝ եթե մենք ունենք ազգային իմաստություն, հոգու արիություն և առողջ բնագոյներ, անկարելի է աչքերս փակենք մեր էս ծանր հիվանդության առաջ, և չզգանք, որ մեր հոգին շատ է դառնացած, մեր ներքին մարդը շատ է փչացած, և դրա դեմ կռվելու, առողջանալու առաջին պայմանը էն է, որ մենք ն՝ մեր սրտերում, ն՝ աշխարհքի առաջ անկեղծ խոստովանենք ու ճանաչենք մեր դժբախտությունը: Ապա թե էդ փրկարար գիտակցությանը կհետևեն ինքնակատարելագործության բարձր ցանկությունն ու ազնիվ գործը: Ուրիշ ճանապարհ չկա, ներսից է լինելու հաստատ փրկությունը, որովհետև ներսից ենք փչացած»:

Միջանկյալ հետևելով մեր երկու տիեզերակալ մտավորականների՝ Նարեկացու և Թումանյանի այս զրույցին՝ այն հաստատ համոզմանը եկա, որ եթե մենք ցանկություն ունենք մեր կյանքն ինչ-որ չափով բարենորոգելու, մտահոգված ենք մեր ժողովրդի ու երկրի ապագայի համար, ապա նրանց երկուսին էլ հրատապ պիտի ներգրավենք մեր առօրյա կյանքի մեջ. գուցե նրա՞նք կարողանան ճնշել նեղմիտ,

սահմանափակ ուղեղներով մարդկանց ու խմբերի իշխանատենչության մոլուցքը և մեր ժողովրդին, մեր երկիրը դուրս բերեն, Նարեկացու հավաստմամբ. «...գազանակեր ժանիքներից...», կամ աստամների միջից վիշապի՝ ի կյանք կորզելու, խոր անդունդներից ի լույս հանելու բերկրության մեջ, և մեր մեղքերի հեղձուկ ծփանքից տանելու համար և բազմեցնելու արդարների հետ՝ երջանի՝ կ փառքով»:

РЕЗЮМЕ
ТУМАНЯН И НАРЕКАЦИ
(ИДЕЙНЫЕ И ТВОРЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ)
РАЗМИК ДАВОЯН

В статье рассматривается вопрос об идейных и творческих общностях Туманяна и Нарекаци. Выдвигается и подвергается научному осмыслению тезис, согласно которому, несмотря на различия между историческими эпохами жизни и деятельности двух гениев, их взаимный духовный, творческий и идейный зов преодолевает все исторические и временн^{ые} преграды.

Ключевые слова- Туманян, Нарекаци, взаимный духовный, творческий и идейный зов, связь времен, общечеловеческие идеалы, общенациональные идеи и цели.

ABSTRACT
TUMANYAN AND NAREKATSI
(IDEAL AND CREATIVE SOLUTIONS)
RAZMIK DAVOYAN

The article deals with the ideological and creative similarities in the works of Tumanyan and Narekatsi. It is argued

that despite the differences between the historical ages of life and activity of the two geniuses, there is a spiritual, creative, and ideological recall between them that transcends all historical and temporal barriers.

Key words: Tumanyan, Narekatsi, spiritual, ideological and creative recall, the connection of times, universal ideals, nationwide ideas and goals.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ԱՆՆԱ ԱՄԱՏՐՅԱՆ

«Երաժշտությունը արվեստների մեջ էն կախարդ ուժն է, որ անմարմին արտահայտություններով կարողանում է անմիջականորեն ու միանգամայն տիրել մարդու բովանդակ գոյությունը, նրա մարմնին ու հոգուն՝ և տիրաբար տանել, ուր որ կամենա: Էսպետով էլ նա, արվեստների մեջ ամենազգայականն ու ամենավերացականը միաժամանակ, հանդիսանում է ամենաուժեղ արտահայտությունը ժողովուրդների ոգեկան կյանքի և՝ բարձրագույն հաճույքներ տալով հանդերձ՝ դառնում է բարձրագույն կրթության միջոց»¹:

Հովհաննես Թումանյան

Երևանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի՝ հայ իրակա-նության մեջ առաջին ու միակ պետական օպերային թատ-

¹ Թումանյանն ասում է..., «Սովետական արվեստ», 1969, 9, էջ 23:

րոնի հրապարակում հանդիսատեսին ողջունում է Հովհաննես Թումանյանի՝ 1957 թվականի նոյեմբերի 17-ին կանգնեցված 8,5 մետրանոց բրոնզաձույլ հուշարձանը, որի քանդակագործն է Արա Սարգսյանը, իսկ ճարտարապետը՝ Գրիգոր Աղաբաբյանը:

Թումանյանն այստեղ է կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի հարևանությամբ. չէ՞ որ Հայկական ԽՍՀ ժողկոմխորհի 1932թ. մայիսի 13-ի որոշմամբ ստեղծված Երևանի օպերային թատրոնը (1938-ից՝ Ա. Սպենդիարյանի անվան, 1956-ից՝ ակադեմիական) երաժշտասերների առջև իր դռները 1933-ի հունվարի 20-ին բացեց հենց Ա. Սպենդիարյանի՝ ամենայն հայոց բանաստեղծի «Թմկաբերդի առումը» պոեմի հիման վրա գրված «Ալմաստ» օպերայի բեմադրությամբ: «Գրանիտե աստիճանավոր պատվանդանների վրա բազմոցին թիկնած Ա. Սպենդիարյանի և ժայռաբեկորին նստած Հ. Թումանյանի ֆիգուրներն իրենց դասական համաչափ ձևերի, կոմպոզիցիոն պարզ լուծումների, տարածության մեջ ընտրված տեղի ու օգտագործված նյութի շնորհիվ ներդաշնակորեն կապվում են ինչպես Ա. Թումանյանի ճարտարապետական կոթողի, այնպես էլ միմյանց ու շրջապատի հետ»²:

Եվ այդուամենայնիվ նշենք, որ վաստակաշատ թումանյանագետ՝ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի երկարամյա տնօրեն, «Թումանյանի աշխարհը» (1966) ծավալուն մենագրության հեղինակ, նույնպես լոռեցի՝ ակադեմիկոս Լևոն Հախվերդյանը, ում կարապի երգը ևս նվիրված էր Թումանյանին (խոսքը 2000-ի տարեմուտին լույս տեսած «Թումանյանը և հայոց պատմական ճակատագիրը»

² **Աղասյան Արարատ**, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, 2009, էջ 121:

գրքի մասին է), գտնում էր, որ այդ տեղում պետք է լիներ ոչ թե Թումանյանի, այլ կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի հուշարձանը, քանի որ դա «Անուշ» օպերան ստեղծողի տեղն է՝ բոլոր առումներով. «ոչ մի ազգային օպերա այդքան չի ներկայացվում, որքան «Անուշը»»³:

Առաջնորդվելով ակադեմիկոս Լ.Հախվերդյանի տրամաբանությամբ՝ գտնում ենք, որ այդ հրապարակում հայ օպերային երաժշտության երկու երախտավորների հարևանությամբ պետք է կանգնեցվեր նաև Տիգրան Չուխաճյանի հուշարձանը՝ չէ՞ որ նա է հայ երաժշտական թատրոնի հիմնադիրը... Մանավանդ, որ շենքի հակառակ կողմում գտնվում է հայկական առաջին բալետի հեղինակ Արամ Խաչատրյանի հուշարձանը...

Լ.Հախվերդյանի կարծիքով՝ «Թումանյանն այնպիսի անգուգական մեծություն է, որ նրա համար առանձին հուշարձան պիտի կառուցվի, առանձին տեղ պետք է գտնվի (ինչպես տարիներ անց գտնվեց Իսահակյանի համար)»⁴: Ավելին՝ արձանը տեղադրելուց տարիներ անց, 1968-69-ին, երբ նա Թումանյանի ծննդյան 100-ամյակի կառավարական հանձնաժողովի քարտուղարն էր, նման առաջարկ էր արել, որին ի պատասխան կառավարական հանձնաժողովի նախագահ՝ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանն ասել էր. «Ես որոշել եմ ոչինչ չքանդել», և դրանով իսկ հարցը փակվել էր:

³ **Հախվերդյան Լևոն**, Թե ինչու եմ ես նեղացած Թումանյանի փոխարեն, «Ազգ», 22 հունիսի, 1999: Տե՛ս նաև **Հախվերդյան Լևոն**, Մենք և մեր դժվար օրերը, Երևան, 2000, էջ 25:

⁴ Նույն տեղում:

Այդ ամենով հանդերձ՝ հայ մեծ բանաստեղծի հուշարձանը հենց այս հրապարակում խիստ խորհրդանշական է. չէ՞ որ Հովհաննես Թումանյանն այն բացառիկ հայ բանաստեղծներից է, ում ստեղծագործությունը եղել է, է ու կմնա հայ կոմպոզիտորների ուշադրության կենտրոնում:

Երկար ու բեղմնավոր ուղի է անցել հայ երաժշտական թումանյանապատումը: Հովհ. Թումանյանն այն եզակի հայ բանաստեղծներից է, ում ստեղծագործությունը մի կողմից՝ մեծապես նպաստել է հայ երաժշտության առաջընթացին, մյուս կողմից՝ խթանել հայ կատարողական արվեստի զարգացումը՝ շրջադարձային նշանակություն ունենալով հայ կատարողական և բեմադրական արվեստի ներկայացուցիչներից շատերի՝ երգիչներ Շարա Տալանի և Հայկանուշ Դանիելյանի, Ավագ Պետրոսյանի և Գոհար Գասպարյանի, ռեժիսոր Վարդան Աճեմյանի և Էլի շատ-շատերի ստեղծագործական ճակատագրում:

Թումանյանն անձնական շփումներ է ունեցել հայ երաժիշտներից շատերի՝ այդ թվում կոմպոզիտորներ Կոմիտասի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Արմեն Տիգրանյանի, Անտոն Մայիլյանի, Ռոմանոս Մելիքյանի, Մուշեղ Աղայանի, Անուշավան Տեր-Ղևոնդյանի, Սարգիս Բարխուդարյանի, երգիչ Վահան Տեր-Առաքելյանի և այլոց հետ:

Թումանյանի պոեզիայի հիման վրա ստեղծված ստեղծագործությունները վաղուց արդեն ձևավորել են երաժշտական թումանյանապատումը:

Հասկանալի է, որ մեկ հոդվածի շրջանակներում հնարավոր չէ լիարժեք կերպով ներկայացնել և հանգամանորեն բնութագրել այդ մեծաքանակ նյութը. դա կարոտ է առանձին ծավալուն ուսումնասիրության:

Թումանյանական թեմաներով ստեղծված հարուստ երաժշտական գրականությունն ըստ ժանրերի կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

1. Թումանյանի ստեղծագործությունը հայ երաժշտական թատրոնում (օպերաներ և բալետներ),
2. Թումանյանի ստեղծագործությունը հայ սիմֆոնիկ և վոկալ-սիմֆոնիկ երաժշտության մեջ (սիմֆոնիկ պոեմ, սիմֆոնիկ պատկեր, կանտատ, կինո-երաժշտություն ևն),
3. Թումանյանի պոեզիան հայ վոկալ երաժշտության մեջ (մեներգեր, ռոմանսներ և խմբերգեր),
4. Թումանյանը՝ մանուկներին (մանկական օպերաներ և երգեր, մուլտֆիլմերի համար գրված երաժշտություն):

Թումանյանի ստեղծագործությունն ամենախոր հետքը թողել է **օպերային թատրոնում**⁵: Նրա ստեղծագործության հիման վրա օպերաներ են գրել թե՛ իր ժամանակակիցները՝ Արմեն Տիգրանյանը («Անուշ»), Ալեքսանդր Սպենդիարյանը («Ալմաստ») և Կոմիտասը («Անուշ» անավարտ) և թե՛ երիտասարդ սերնդի կոմպոզիտորները՝ նրա մահից շատ հետո: Երևանի օպերային թատրոնում 1970-ին բեմադրվել է Էրիկ Հարությունյանի «Մի կաթիլ մեղրը» երկու գործողությամբ օպերան՝ հեքիաթը մեծահասակների համար, իսկ 1980 թվականին՝ Վարդան Աճեմյանի «Կիկոսի մահը» օպերան:

Թումանյանի ստեղծագործությունը ոգեշնչել է սփյուռքահայ կոմպոզիտորներին ևս:

Նիկոլ Գալանդեթյանն իր երեք օպերաներից մեկի համար հիմք դարձրեց Թումանյանի «Փարվանա» լեգենդը,

⁵ Մանրամասն տե՛ս **Ասատրյան Աննա**, Էջեր երաժշտական թումանյանապատումից, Պատմաբանասիրական հանդես, 2019, 1, էջ 51-75:

հենց այն ստեղծագործությունը, որն առաջարկել էր քանաստեղծը Սպենդիարյանին: 1931-1932 թթ. Գալանդերյանը գրեց «Փարսանա» օպերան՝ երեք գործողությամբ և քալետային տեսարանով, լիբրետոն կազմեց ինքը՝ կոմպոզիտորը: Օպերան, ցավոք, չի բեմադրվել, «որովհետև հսկայ ծախսերի հետ կապուած է եղել եւ բացի այդ էլ արգելառիթ պատճառներ նպաստել են չբեմադրւելուն»,⁶ և մինչ օրս սպասում է իր բեմելին:

Երաժշտական թատրոնի համար սփյուռքահայ կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ և երաժշտական-հասարակական գործիչ Համբարձում Պերպերյանի երեք գործերից երկուսի համար հիմք է դարձել Թումանյանի ստեղծագործությունը: Դրանցից մեկը՝ երեք արարից բաղկացած, «Շողիկ» օպերան է (1939), որի համար նյութ է ծառայել Հ.Թումանյանի «Երկրում» պոեմը: Մյուսը «Արեգնազան» օպերա-կանտատն է՝ գրված Հ.Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի հիման վրա, 1940-ին Պերպերյանը տեղյակ չի եղել Ա.Ա.Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի գոյության մասին:

1958-ին Վիեննայում Լորիս Զգնավորյանն ստեղծել է «Աղավնու վանքը» մեկ գործողությամբ օպերան:

Թումանյանի ստեղծագործությունը հիմք է դարձել հայկական **բալետների** համար ևս: 1966 թվականին Երևանի օպերային թատրոնում բեմադրվել են Գրիգոր Հախինյանի «Ախթամար», «Ուռենի» և «Լոռեցի Սաքոն» մեկ գործողությամբ բալետները՝ Ե.Չանգայի բեմադրությամբ:

Հովհաննես Թումանյանի պոեզիան մարմնավորվել է **սիմֆոնիկ երաժշտության** մեջ՝ ստեղծվել են ծրագրային

⁶ Նիկոլ Գալանդերեան, Օպերաներ, հատոր Է, Երևան, 2003, էջ 5:

սիմֆոնիզմի նմուշներ, որոնց համար հիմք են դարձել բանաստեղծի պոեմները, բալլադներն ու լեգենդները:

Հենց Թումանյանի պոեզիան հիմք հանդիսացավ հայկական ծրագրային սիմֆոնիզմի անդրանիկ նմուշների ստեղծման համար: «Նվագախմբի համար չորս երգերի» (Ширакские этюды) ատեղծումից հետո Անուշավան Տեր-Ղևոնդյանը 1923 թվականին Թումանյանի «Ախթամար» լեգենդի հիման վրա ստեղծել է ազգային պոլիֆոնիկ ծրագրային սիմֆոնիկ առաջին երկերից մեկը՝ «Ախթամար» ծրագրային սիմֆոնիկ պատկերը, որը կոմպոզիտորին բերեց այն տարիների հայ սիմֆոնիկ երաժշտության մեջ առաջատար տեղերից մեկը:

1958-ին ստեղծվում է Գրիգոր Հախինյանի «Աղավնավանք» պոեմը սիմֆոնիկ նվագախմբի համար՝ ըստ Թումանյանի «Աղավնու վանքը» բալլադի, որի պրեմիերան տեղի ունեցավ 1959-ին:

Սիմֆոնիկ թումանյանապատումից հիշատակության է արժանի Էդվարդ Միրզոյանի դեբյուտը սիմֆոնիկ երաժշտության մեջ. նրա առաջին սիմֆոնիկ ստեղծագործությունը՝ 20-ամյա կոմպոզիտորի դիպլոմային աշխատանքը «Լոռեցի Սաքոն» սիմֆոնիկ պոեմն է, որը ստեղծվել է 1941-ին, ընդամենը երեք ամսում, Թումանյանի համանուն պոեմի հիման վրա: «Լոռեցի Սաքոն» սիմֆոնիկ պոեմի պրեմիերան տեղի ունեցավ 1942թ. մարտի 2-ին, Երևանում, Հայֆիլհարմոնիայի դահլիճում, սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ, Կոնստանտին Սարաջևի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ: Հայ կոմպոզիտորական արվեստի 10-րդ՝ «Տերտերյան-Ֆեատ» հոբելյանական փառատոնի երրորդ համերգին՝ 2019թ. մարտի 6-ին, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ, Ռուբեն Ասատրյանի ղեկավարությամբ կրկին հնչեց Էդ. Միրզոյանի «Լոռեցի Սաքոն»:

1969թ. մեծ հանդիսավորությամբ նշվեց Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյա հոբելյանը: Այդ կապակցությամբ երաժշտական թումանյանապատումը համալրվեց արժեքավոր նոր ստեղծագործություններով:

Էդգար Հովհաննիսյանը երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար գրում է «Հայոց լեռներում» կանտատը, որը կատարվում է 1969թ. սեպտեմբերին Դսեղում, ապա Երևանում, Հայաստանի երգչախմբային ընկերության երգչախմբի կատարմամբ, Էմմա Օատուրյանի ղեկավարությամբ⁷: Իսկ «Մովետական արվեստի» 1969թ. սեպտեմբերյան համարում տպագրվում են բարիտոնի և դաշնամուրի համար գրված Էդգար Հովհաննիսյանի «Հայոց վիշտը» երգի նոտաները⁸:

Թումանյանական տարին Էդգար Հովհաննիսյանը եզրափակում է երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար գրված «Ձոն Թումանյանին» ստեղծագործությամբ, որը, ցավոք, մինչ օրս չի հնչել և որի ձեռագիրը գտնվում է կոմպոզիտորի անձնական արխիվում:

Ալեքսանդր Հարությունյանը գրեց «Հայրենիքիս հետ» ծավալուն երգ-կանտատը մենակատարների, երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար՝ Թումանյանի «Հայրենիքիս հետ» բանաստեղծության հիման վրա, որը բանաստեղծը գրել էր 1915 թվականին՝ իր ժողովրդի ապագայի հանդեպ հավատով լի:

«Օպերային թատրոնում կայացած եզրափակիչ համերգին հնչելով՝ այդ երգը, կարծես, հանդիսության վերջաբանը

⁷ Տե՛ս **Էդգար Հովհաննիսյան**, Կյանքս հուշերում, տեքստը գրի առավ և կազմեց Օովինար Մովսիսյանը, Երևան, 1998, էջ 233:

⁸ Տե՛ս «Հայոց վիշտը», երաժշտությունը՝ Էդգար Հովհաննիսյան, խոսք՝ Հովհաննես Թումանյանի, «Մովետական արվեստ», 1969, 9, ներդիր՝ 4 թերթ:

դարձավ: Ելույթ ունեցան հանրահայտ երգիչներ Լուսինե Զաքարյանը և Հենրիկ Ալավերդյանը, Ակադեմիական կապելլան և օպերային թատրոնի նվագախումբը: Կատարումը հրաշալի ղեկավարեց Հովհաննես Չեքիջյանը: Դահլիճում ներկա էին բազմաթիվ հյուրեր միութենական հանրապետություններից և արտասահմանյան երկրներից»⁹:

Ի դեպ՝ 2019թ. մարտի 2-ին Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի ունեցավ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի համերգը՝ նվիրված Թումանյանի ծննդյան 150-ամյա հոբելյանին: Համերգը, ինչպես և հիսուն տարի առաջ, եզրափակեց Ալ.Հարությունյանի «Հայրենիքիս հետ» երգ-կանտատը՝ հայկական փառապանծ կապելլայի անգուգական կատարմամբ, Ամենայն հայոց մաեստրո Հովհաննես Չեքիջյանի անկրկնելի ղեկավարությամբ:

Թումանյանի պոեզիայի հիման վրա են ստեղծվել Կոմիտասի, Ռոմանոս Մելիքյանի, Ազատ Մանուկյանի, Դանիել Ղազարյանի, Միքայել Միրզայանի, Երվանդ Սարգսյանի, Ստեփան Դեմուրյանի, Անուշավան Տեր-Ղևոնդյանի, Հարո Ստեփանյանի, Մարտին Մազմանյանի, Մուշեղ Աղայանի, Գեղունի Չթյանի, Տիգրան Մանսուրյանի, Ստեփան Լուսիկյանի, Լևոն Աստվածատրյանի, Էրիկ Հարությունյանի, Վաղարշակ Կոտոյանի, սփյուռքահայ կոմպոզիտորներ Նիկոլ Գալանդեթյանի (Իրան), Սիրվարդ Գարամանուկյանի (Թուրքիա), Ալան Հովհաննեսի (ԱՄՆ), Ժան Ալմուխյանի (Արգենտինա), Էդգար Մանասի (Թուրքիա), Սեզալի (Սեդա Գալանդեթյան, Իրան), Համբարձում Պերպերյանի (ԱՄՆ) և էլի շատ-շատերի վոկալ ստեղծագործությունները՝ ռոմանսները, մեներգերն ու խմբերգերը:

⁹ **Ալեքսանդր Հարությունյան**, Հուշեր, Երևան, 2000, էջ 70-71:

Կամերային երաժշտական լիրիկայի հրաշալի գործեր են ստեղծվել ոչ միայն Թումանյանի ստեղծագործությունների, այլև նրա բարձրարժեք թարգմանությունների հիման վրա: Այդ շարքի ստեղծագործությունների մեջ արժեքավոր է հատկապես Ռ.Մելիքյանի «Վարդը»՝ ստեղծված Գյոթեի հայտնի բանաստեղծության թումանյանական թարգմանության հիման վրա, որը կոմպոզիտորի առաջին ռոմանսներից էր և հրատարակվեց 1911 թվականին Պետերբուրգում:

Բազմաթիվ մանկական երգեր և օպերաներ են ստեղծվել Թումանյանի տեքստերով: Շատերին է ծանոթ «Փիսիկի գանգատը» երաժշտական պատկերը, սակայն քչերը գիտեն, որ դրա հեղինակը կոմպոզիտոր Դանիել Ղազարյանն է:

Թումանյանական սյուժեներով են գրվել Կարո Զաքարյանի «Գառնիկ ախպեր» (4 գործողությամբ), Դանիել Ղազարյանի «Գայլը» (4 գործողությամբ) և «Շունն ու կատուն», Սուրեն Մուրադյանի «Շունն ու կատուն», Ազատ Մանուկյանի «Չարի վերջը», Երվանդ Սարգսյանի «Պոչատ աղվեսը», Միքայել Միրզայանի «Ծիտն ու սագը», Արեգ Լուսինյանի «Ծիտը» (1 գործողությամբ, առաջին կատարումը՝ Երևան, 1987) և այլն, ինչպես նաև Նիկոլ Գալանդեյանի «Չարի վերջը», «Ուլիկը» և «Ծաղիկների երգը», Աշոտ Պատմագրյանի «Շունն ու կատուն» և «Տերն ու ծառան» և այլ մանկական օպերաները, որոնք ժամանակին բեմադրվել են մանուկների ուժերով՝ մեծապես նպաստելով մատաղ սերնդի գեղարվեստական կրթությանն ու գեղագիտական դաստիարակությանը:

Մանկական օպերաներից առանձնացնեմ Գևորգ Արմենյանի «Մարո» 2 գործողությամբ մանկական օպերան (Թբիլիսի, 1938), որը բախտորոշ դեր կատարեց կոմպոզիտորի ստեղծագործական կյանքում: 1937 թվականին տասներորդ դասարանցի Գևորգ Խաչատրյանը (հետագայում՝ Գևորգ

Արմենյան) դառնում է Թբիլիսիի հայկական միջնակարգ դպրոցներից մեկի երգ-երաժշտության դասատու, դպրոցում կազմակերպում եռաձայն երգչախումբ և մանդոլինահարների խմբակ: 1939-ին նշվելու էր Թումանյանի ծննդյան 70-ամյակը: Այդ առիթով Գևորգը գրում է իր երաժշտական առաջին խոշոր կտավի ստեղծագործությունը՝ «Մարո» մանկական օպերան, որի լիբրետոն կազմում են ինքն ու իր դասընկերը: Դերակատարներն էին դպրոցական երգչախմբի մենակատարները, դպրոցականներ էին նաև դիրիժորն ու խմբավարը: «Խորհրդային Վրաստան» թերթն իր 1938թ. մայիսի 21-ի համարում գրում է. «1938թ մայիսի 18-ին Թբիլիսիի 40-րդ միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ երաժշտության դասատու Գևորգ Խաչատրյանի «Մարո» մանկական օպերայի (ըստ Հովհ. Թումանյանի համանուն պոեմի) ցուցադրումը՝ նույն դպրոցի աշակերտների ուժերով... «Մարո» մանկական օպերան լուրջ աշխատանքի արդյունք է: Գ.Խաչատրյանն անպայման օժտված է ստեղծագործական ունակություններով և ունի լավ ապագա»¹⁰: Այս օպերան ճակատագրական եղավ ապագա կոմպոզիտորի կյանքում: Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ՝ երաժշտագետ և կոմպոզիտոր Մուշեղ Աղայանը, ծանոթանալով օպերայի երաժշտությանը, խորհուրդ է տալիս պատանուն. «Երևան պիտի գաս, սովորես: Արի՛, տղաս. հայերի տունը՝ Հայաստանն է»¹¹: Շուտով Գևորգն ընդունվում է Թիֆլիսի 3-րդ երաժշտական ուսումնարանի ֆլեյտայի դասարանը (ուսումնարանը ստեղծագործական դասարան չուներ) և ընտրում կոմպոզիտորի մասնագիտությունը: Ի՛նչ իմանար պատանին, որ տարիներ անց պիտի ոչ միայն հեղինակեր «Խաչատուր Աբովյան» (1958,

¹⁰ Գրիգորյան Քնարիկ, Գևորգ Արմենյան, Երևան, 1981, էջ 15:

¹¹ Նույն տեղում, էջ 15-16:

բեմադրվել է Երևանում 1960-ին) և «Խորտակում» (1968, բեմադրվել է Երևանում 1968-ին, Պերմում՝ 1972-ին) օպերաները, այլև 1968-1970 թվականներին աշխատելու էր որպես Երևանի Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի տնօրեն և գեղարվեստական ղեկավար:

«Թումանյանը՝ մանուկներին» թեմայի անբաժան մասն են կազմում թումանյանական սյուժեներով ստեղծված մուլտֆիլմերը, որոնց համար երաժշտություն են գրել Ռոբերտ Ամիրխանյանը («Մի կաթիլ մեղր», «Փարվանա», «Ձախորդ Փանոսի հեքիաթը»), Սարգիս Բարխուդարյանը («Շունն ու կատուն»), Տիգրան Մանսուրյանը («Աղքատի պատիվը»), Դավիթ Ազարյանը («Քաջ Նազարը») ևն, ինչպես նաև տիկնիկային թատրոնի ներկայացումների համար Ռոբերտ Ամիրխանյանի, Մարտին Վարդազարյանի և այլոց գրած երաժշտությունը:

РЕЗЮМЕ ОВАНЕС ТУМАНЯН И МУЗЫКА АННА АСАТРЯН

Ованес Туманян – один из тех исключительных армянских поэтов, чье творчество было, есть и будет в центре внимания армянских композиторов. Музыкальные произведения, созданные по туманяновским сюжетам, можно разделить по жанрам следующим образом:

1. творчество Туманяна в армянском музыкальном театре: оперы и балеты,
2. Туманян в армянской симфонической и вокально-симфонической музыке: симфонические поэмы, кантаты, музыка к кинофильмам и др.,

3. творчество Туманяна в армянской вокальной музыке: романсы, песни и хоры,

4. произведения Туманяна в музыке для детей: детские оперы, песни, а также музыка к мультфильмам.

Ключевые слова : Ованес Туманян, оперы «Ануш», «Алмаст», балеты «Ахтамар», «Ивушка», «Лореци Сако», симфонические поэмы «Ахтамар», «Лореци Сако», кантаты «В армянских горах», «С Отчизной», романсы, песни и хоры.

ABSTRACT
HOVHANNES TUMANYAN AND MUSIC
ANNA ASATRYAN

Hovhannes Tumanyan was one of those outstanding Armenian poets, whose oeuvre was, is and will be in the center of attention of Armenian composers. Musical compositions, based on Tumanyan's plots, can be divided by genres as follows:

1. Tumanyan's oeuvre in the Armenian musical theater: the operas and ballets,

2. Tumanyan's oeuvre in the Armenian symphonic and vocal-symphonic music: symphonic poems, the cantatas, music for movies, etc,

3. Tumanyan's oeuvre in Armenian vocal music: romances, songs and choirs,

4. Tumanyan's works in music for children: children's operas, songs, music for cartoons.

Key words: Hovhannes Tumanyan, the operas "Anush", "Almast", ballets "Akhtamar", "Willow", "Loretsi Sako", symphonic poems "Akhtamar", "Loretsi Sako", the cantatas "With the Homeland", "In the Armenian Highlands", romances, songs and choirs.

**ՄԵԾ ԼՈՌԵՑՈՒ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄԱՐԴԵՐԳՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ
ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

**ՀԵՆՐԻԵՏԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ՆԱԻՐԱ ԹՈՌՈՒՆՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության աչքի ընկնող մասնավոր բուհերից է 1996թ. հիմնադրված և լիարժեք ու լիիրավ պետական հավատարմագրում ստացած Հյուսիսային համալսարանը: Նրա բազմազան ու բազմաբեղուն գիտակրթական, մշակութային ու հասարակական գործունեության ծիրում կարևոր տեղ ունի թումանյանագիտությունը: Դա պատահական չէ: Ամենայն հայոց բանաստեղծի ու մեծ լոռեցու՝ Հովհաննես Թումանյանի հայրենակիցն է համալսարանի հիմնադիր և մինչ օրս ռեկտոր Բորիս Մակիչյանը: Լինելով ծնունդով լոռեցի (հանրահայտ Օձուն գյուղից)՝ նա մշտապես եղել է իր անմահ հայրենակցի մեծ երկրպագուն:

Եվ ահա իր հիմնադրման օրվանից համալսարանում թևածում է թումանյանական ոգին: Մեծ լոռեցու պայծառ անձը, գրական ստեղծագործությունն ու ազգային-հասարակական գործունեությունը ոգեկոչվում են տարբեր միջոցներով՝ գրական-երաժշտական հանդեսներ, ասմունքի երեկոներ, թումանյանական ընթերցումներ, հոբելյանական հանդիսություններ, գիտական նստաշրջաններ, հրատարակված գրքեր, թումանյանական թեմաներով շարադրությունների, թատերական ներկայացումների, գեղանկարների, ասմունքի մրցույթներ, այցելություններ բանաստեղծի անձի ու գործունեության հետ կապված վայրեր ու հուշարձաններ, թումանյանական անվանակոչումներ, անմահ լոռեցու գաղափարների ու ավանդների տարածմանն ու իրականացմանն

ուղղված գործունեություն, թումանյանական քարոզչություն...

Բուհի ղեկավարության համար մշտապես կարևոր են եղել Թումանյանի գրական ժառանգությունը, ազգանվեր գործունեությունն ու կյանքի հիշարժան դրվագները ժողովրդին հասու դարձնելը, նոր սերունդներին թումանյանական ոգով կրթելն ու դաստիարակելը:

Այս նկատառումներով ավելի քան երկու տասնամյակ առաջ մշակվեց թումանյանագիտության զարգացմանն ուղղված համապարփակ ծրագիր, որի իրականացումը շարունակվում է առ այսօր:

1990-ականների վերջին Ալավերդի քաղաքում հիմնադրվեց Հյուսիսային համալսարանի «Թումանյան» մասնաճյուղը: Դրա միջոցով սկսեց իրականացվել Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանի և Վրաստանի հայաբնակ վայրերի երիտասարդների բարձրագույն կրթության կազմակերպումը: Դա նաև քայլ է հայերի արտագաղթը մասամբ կանխելու ուղղությամբ: Մասնաճյուղի առաջին իսկ շրջանավարտները ներգրավվեցին տարածաշրջանի ձեռնարկություններում ու համայնքային կառավարման մարմիններում: Ուշագրավ է այն փաստը, որ 2012 թ. կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքում տարածաշրջանի 12 բնակավայրերի համայնքապետեր դարձան մասնաճյուղի շրջանավարտները: Ալավերդու մշակութային ու մարզական առօրյայում կարևոր տեղ են գրավում մասնաճյուղի նախաձեռնությամբ կազմակերպված բազմաբնույթ միջոցառումները, հատկապես թումանյանական հանդեսները, որոնք լուրջ ներդրում են երիտասարդության մշակութային-հայրենասիրական դաստիարակության և մասնաճյուղի հեղինակության բարձրացման գործում:

Հյուսիսային համալսարանը հատկապես մեծ ոգևորությամբ ձեռնամուխ եղավ 2009-ին Հ. Թումանյանի ծննդյան 140-ամյակին նվիրված տոնակատարությունների շրջանակում իր նախաձեռնած միջոցառումները պատշաճ մակարդակով անցկացնելու գործին: 2008-ի տարեսկզբին ռեկտոր Բորիս Մակիչյանի ղեկավարությամբ և մի շարք անվանի լոռեցիների մասնակցությամբ Հյուսիսային համալսարանում հիմնադրվեց «Լոռվա ձոր» հայրենակցական միությունը: Կազմակերպվեց և հաջողությամբ անցկացվեց «Թումանյանը և 21-րդ դարը» գիտաժողովը, որին մասնակցեցին թե՛ բուհի լավագույն դասախոսները, թե՛ բազմաթիվ հյուրեր գիտակրթական այլ կենտրոններից: Կարճ ժամանակ անց լույս տեսավ գիտաժողովի նյութերի ժողովածուն: Զուգահեռաբար կազմակերպվեց բանաստեղծին նվիրված գրական-երաժշտական հուշ-երեկո Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահում հանրապետության անվանի դերասանների մասնակցությամբ և ՀՀ մշակույթի նախարարության ու Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ:

2008-2009 ուստարվա ընթացքում Հյուսիսային համալսարանի դասախոսների ջանքերով Երևան քաղաքի, Լոռու, Արարատի և Արագածոտնի մարզերի հարյուրավոր դպրոցներում կազմակերպվեցին օլիմպիադաներ՝ «Իմ Թումանյանը» խորագրով, որոնց մասնակցեցին հազարավոր բարձրդասարանցիներ: Հաղթողներն արժանացան պարգևների: Օլիմպիադայի կազմակերպմանն օժանդակելու համար պատվոգրերի ու դրամական պարգևների արժանացան նաև դպրոցների մի շարք տնօրեններ և ուսուցիչներ:

2008թ. աշնանը, Հ. Թումանյանի ծննդյան 140-ամյակին ընդառաջ, Հյուսիսային համալսարանի միջոցներով կազմակերպվեց երևանաբնակ հարյուրավոր լոռեցիների այցելությունը բանաստեղծի ծննդավայր՝ Դսեղ, որտեղ անմահ

լոռեցու տուն-թանգարանում տեղի ունեցան համերգներ ու հրապարակային հանդիսություններ:

2009-ի փետրվարի 19-ին՝ բանաստեղծի ծննդյան օրը, Հյուսիսային համալսարանի և «Լոռվա ձոր» հայրենակցական միության կողմից պատվիրակությունը գործուղվեց Թբիլիսի՝ հանդիպելու տեղի հայ համայնքին և այցելելու մեծ լոռեցու գերեզմանին: Մեկ այլ պատվիրակություն էլ մեկնեց Դսեղ՝ մասնակցելու բանաստեղծին նվիրված հորեյանական հանդիսություններին:

Հաջորդ օրը Հյուսիսային համալսարանում հանդիսավոր պայմաններում ու մեծ շուքով տեղի ունեցավ նորաստեղծ «Վերնատուն» թումանյանագիտական կենտրոնի բացումը: Կենտրոնը իր տարիների բեղմնավոր գործունեությամբ վերածվեց մի յուրօրինակ գիտահետազոտական հաստատության, որի ուշադրության կենտրոնում, ի թիվս տարաբնույթ գիտական խնդիրների, թումանյանագիտության զարգացումն է:

2010թ. Հյուսիսային համալսարանի հրավերով մեծ բանաստեղծի աշխարհասփյուռ հետնորդներից 30-ը ժամանեցին Երևան, հյուրընկալվեցին բուհում, ծանոթացան ու հիացան «Վերնատուն» թումանյանագիտական կենտրոնով, ապա շնորհակալություն հայտնեցին բուհի և «Լոռվա ձոր» հայրենակցական միության ղեկավարությանը՝ թումանյանական ոգին ու շունչը միշտ վառ պահելու, բանաստեղծին առնչվող ամեն մի իրադարձությանն արձագանքելու համար:

Հյուսիսային համալսարանի ղեկավարությունը և «Լոռվա ձոր» հայրենակցական միության խորհուրդը ջանքեր չխնայեցին, որպեսզի Հ. Թումանյանի ծննդյան 140-ամյակը շուքով նշվի թե՛ հանրապետության տարբեր վայրերում, թե՛ օտարերկրյա մի շարք բուհերում ու սփյուռքահայ համայնքներում:

2009-ից սկսած՝ ամեն տարվա փետրվարի 19-ին Հյուսիսային համալսարանում հանդիսավոր նիստ է գումարվում՝ նվիրված Հ. Թումանյանի ծննդյան հերթական տարեդարձին: Այդ օրը թումանյանագիտության ոլորտում նկատելի ավանդ ներդրած անձինք պարգևատրվում են պատվոգրերով, «Թումանյան-145» հուշամեդալով, արժանանում Հյուսիսային համալսարանի «Պատվավոր պրոֆեսոր» և «Լավագույն բարեկամ» պատվավոր կոչումներին: Հյուսիսային համալսարանի կողմից ծաղկեպսակ է դրվում բանաստեղծի հուշարձանին և հատուկ պատվիրակություն է գործուղվում Դսեղ: «Թումանյանական ոգին Հյուսիսային համալսարանում» վերտառությամբ ցուցապաստառը ինչպես բուհում, այնպես էլ Ալավերդու «Թումանյան» մասնաճյուղում և Դսեղի տուն-թանգարանում, դառնում է հանդիսության լուռ վկան:

Հ. Թումանյանի ծննդյան տարեդարձների կամ մահվան տարելիցների առթիվ Հյուսիսային համալսարանում գումարված միջբուհական գիտաժողովներից հիշարժան են «Թումանյանը և 21-րդ դարը» (2009 թ.), «Հովհաննես Թումանյանը և արդիականությունը» (2013թ.), «Թումանյան-145» (2014) խորագրերով միջոցառումները: Դրանց նյութերի ժողովածուները նույնպես հրատարակվել են առանձին գրքերով:

Վերջին տասնամյակում Հյուսիսային համալսարանում թումանյանագիտության զարգացման ասպարեզում մեծ աշխատանքներ են կատարվել, որոնք միտված են բացահայտելու մեծ բանաստեղծի կյանքի ու ստեղծագործության ոչ միայն անհայտ էջերը, այլև նորովի լուսաբանելու, վերաիմաստավորելու և վերագնահատելու արդեն իսկ հայտնի դրվագները: Այդ ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփվել են գիտական ու հրապարակախոսական զեկուցումներում ու հոդվածներում, որոնք լույս են տեսել ոչ միայն վերոհիշյալ

ժողովածուներում, այլև Հյուսիսային համալսարանի կողմից հրատարակվող «Հյուսիսափայլ» գիտական տարեգրքում:

Ավելի քան մեկ տասնամյակ է, ինչ Հյուսիսային համալսարանում պարբերաբար տեղի են ունենում թումանյանական ընթերցումներ ռեկտոր Բորիս Մակիչյանի գործուն աջակցությամբ և «Վերնատուն» թումանյանական կենտրոնի ու նրա ղեկավար թումանյանագետ Սուսաննա Հովհաննիսյանի ջանքերով:

Խրախուսելի է, որ Թումանյանի ծննդյան 150-ամյակին ընդառաջ արդեն մի քանի տարի է, ինչ համալսարանի օտար լեզվի մասնագետների ուժերով կատարվում են բանաստեղծի երկերի թարգմանություններ անգլերենով, ֆրանսերենով և իսպաներենով: Դրանց մի մասը հրատարակվել է վերոհիշյալ «Թումանյան-145» ժողովածուում:

2019 թվականը հռչակված է թումանյանական տարի, քանի որ փետրվարի 19-ին լրացավ մեծ բանաստեղծի ծննդյան 150-ամյակը: Համահայկական ու համաշխարհային հնչեղություն ունեցող այս հոբելյանին ամենայն պատշաճությամբ է պատրաստվել նաև Հյուսիսային համալսարանը: Հպարտությամբ նշենք, որ բուհը այս առումով առաջատարներից է: Ինչպես խոստովանում են թումանյանագետները, հատկապես վերջին տասնամյակում մեր հանրապետությունում չի եղել որևէ այլ հաստատություն, որն այսչափ հետևողական լիներ մեծ բանաստեղծի կյանքին, գործունեությանն ու ստեղծագործությանն առնչվող իրադարձությունները մեծ շուքով նշելու, հանրությանը դրանց ներգրավելու, թումանյանական ավանդները հատկապես նոր սերնդին հասու դարձնելու առումով:

Հ. Թումանյանի ծննդյան 150-ամյակի առթիվ Հյուսիսային համալսարանը հիմնադրեց «Թումանյան-150» հուշամեդալը, որը կփոխարինի «Թումանյան-145» հուշամեդալին և կտրվի թումանյանագիտության նվիրյալներին:

Հոբելյանական հանդիսությունների շրջանակում Հյուսիսային համալսարանը փետրվարի 18-ին ծաղկեպսակ դրեց Հ. Թումանյանի՝ Երևանի Ազատության հրապարակի հուշարձանին: Հաջորդ օրը համալսարանի պատվիրակությունը մեկնեց Դսեղ և մասնակցեց համապետական հոբելյանական հանդիսությանը, «Թումանյան-150» հուշամեդալով պարգևատրվեցին մի շարք թումանյանագետներ: Ծրագրվում է մեկ այլ պատվիրակության մեկնումը Թբիլիսի և Խոջիվանքի գերեզմանատուն, որտեղ դրվելու է ծաղկեպսակ Հ. Թումանյանի շիրիմին՝ մասնակցելով նրա հոգեհանգստի արարողությանը:

Փետրվարի 20-ին Հյուսիսային համալսարանում Հ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված հանդիսությամբ մեկնարկեց բուհի թումանյանական տարին: Ուսանողներով, դասախոսներով ու հյուրերով լեփ-լեցուն դահլիճում թևածում էր Ամենայն հայոց բանաստեղծի ոգին, հնչում էին նրա բանաստեղծությունները: Միջոցառման ավարտին իրենց ելույթով ներկաներին հիացրին Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի «Վերնատուն» գիտամշակութային կենտրոնի «Վերնատուն» համույթի հնդիկ ուսանողները, որոնց հայեցի խոսքն ու երգը դահլիճին փոխանցեց Ամենայն հայոց բանաստեղծի անմահ ստեղծագործության ոգին: Գրական-երաժշտական միջոցառմամբ հանդես եկան նաև Հյուսիսային համալսարանի ավագ դպրոցի սաները: Նույն օրը հոբելյանական հանդիսավոր նիստ տեղի ունեցավ Հյուսիսային համալսարանի Ալավերդու «Թումանյան» մասնաճյուղում:

Եվ շնորհիվ արվեստի յուրահատուկ լեզվի ու պատկերավորման, ժամանակի ու տարածության ընդգրկման անչափելի հնարավորության Թումանյանի արվեստը միավորում է դեպի իրեն ձգտողներին, նրանց հոգիներում ծնում է լույս ու դառնում մարդկանց ապրումների ու երազների թարգմանը:

Անմահ է մեծն Թումանյանը, անմահ է տիեզերքի անհուններում դեգերող նրա հավերժական հոգին, անմահ է մարդերգության իր դասերով ու սերունդներին դաստիարակելով, անմահ է «Գործն է անմահ, լավ իմացեք» բարոյագիտական բանաձևով:

РЕЗЮМЕ

ОСВЕЩЕНИЕ ВЕЛИКИХ УРОКОВ ЭТИКИ И ГУМАННОСТИ ВЕЛИКОГО ТУМАНЯНА В СЕВЕРНОМ УНИВЕРСИТЕТЕ

ГЕНРИЕТА СУКИАСЯН

НАИРА ТОРУНЯН

Одним из выдающихся частных университетов Республики Армения является Северный университет, который основан в 1996 году и полностью аккредитован.

В этом году, 20 февраля, в рамках празднование 150 - летия со дня рождения Ог. Туманяна, в Северном университете отмечался год Туманяна. В статье освещаются ежегодные мероприятия, посвященные литературному наследию и патриотической деятельности Туманяна.

Ключевые слова: Северный университет, Туманяноведение, литературное наследие, духовный образ Туманяна, восприятие человечности.

ABSTRACT

THE COURAGE OF THE GREAT TUMANYAN'S ETHICS AND HUMANITY LESSONS AT THE NORTHERN UNIVERSITY

HENRIETA SUKIASYAN

NAIRA TORUNYAN

One of the prominent private universities of the Republic of Armenia is the Northern University which was founded in 1996 and accredited.

This year, on February 20th, the Tumanyan year was celebrated at Northern University dedicated to H. Tumanyan's 150th anniversary. The article covers the annual events dedicated to the Tumanyan literary heritage and patriotic activities.

Key words: Northern University, Tumanyan's studies, literary heritage, Tumanyan Spirit, spinning humanity.

ОВАНЕС ТУМАНЯН КАК СИМВОЛ ПОЭЗИИ АРМЯНСКОГО НАРОДА

СЕРГЕЙ БЫСТРЯНЦЕВ
АРМЕН СААКЯН

Для человека иной национальной культуры, выросшего в другой языковой среде, очень трудно дать оценку творчеству национального писателя. Я обращаю это суждение к моей сегодняшней задаче. Ованес Туманян – один из величайших армянских литераторов, его творчество, его стихи и поэмы – отражение истории, жизни и души армянского народа. В его строках армянский язык оживляет душу армянского народа, народа труженика, народа воина. Мы же только странники, прилетая в аэропорт Звартноц, «Храм недремлющих ангелов», можем наблюдать, удивляться и восхищаться Арменией.

Вдали сияет Арарат.
Благоуханьем ветерка -
Добрей, чем отчая рука, -
Гегамы шлют тебе привет
И Арагац, травой одет.
А там, как одинокий глаз,
Блеснет Севан, в горах таясь,
Резвясь, играя с тенью скал,
Шумя, вздымая синий вал.
Мерцает, блещет и горит,
Волной сверкает и гремит,
А то печален и угрюм,
Чернее тучи, полон дум.
И та гора, гигант-шатер,
Гора из гор и царь всех гор,
Седой прикинув головой
К небесной груди голубой,
Встает, торжественно скорбя.
Вдали – и в сердце у тебя.

Биография О.Туманяна, я уверен, что многие слушатели знают её очень хорошо, тесно связана с историей армянского народа. Для русскоязычного читателя творчество и биография великого армянского поэта и писателя известна по глубоким и подробным работам Сусанна Гургеновны Ованесян, Магды Георгиевны Джанполадян, Роберта Багдасаряна.

Нельзя не обратить внимание на характеристики О.Туманяна и его творчества. В 1919 году газета «Ашхатавор» написала: «Если вы хотите узнать армянский народ, узнайте Ованеса Туманяна». Эту замечательную цитату упоминает в своей содержательной статье Сусанна Ованесян.

Ованес Туманян написал о своей миссии как поэта:

Я мирской рукой зажжён,
В пламя весь я превращён.

Пламя весь – я свет даю.
Свет отдав – я истощён.

Современниками он характеризуется как сам армянский народ со всем его «природным и божественным поэтическим даром и величественной, искренней и неподкупной человечностью». Валерий Брюсов переводил стихи и поэмы О.Туманяна, встречался с ним в Ереване и Тбилиси, с восхищением отмечал: «в Тифлисе нет ни одного человека, который бы не любил его как человека и замечательного писателя». Современник Туманяна Ашот Атанасян пишет: «И я могу поклясться, что все учителя Армении, все духовные пастыри, все писатели, министры, лидеры, девушки и дамы, учительницы и необразованные люди проголосуют в пользу нашего Ованеса».

В этом году, в феврале месяце исполнилось 150 лет со дня рождения Ованеса Туманяна. Он родился в селе Дсех, марза Лори, в семье священника. Родовое предание Туманянов гласит, что они восходят к роду нахараров – Мамиконянов, правивших в средневековье в Лори.

Воспоминания о родном Лори, его природе поэт выразил во многих поэтических и прозаических строках:

Когда осенний грустен вид,
На кочке жалостно сидит
Лорийский жаворонок мой.
Он в сторону мою глядит.

Потом в жизни будущего писателя были приходская школа, переезд в Тифлис, армянская гимназия Нерсисян. Окончить гимназию из-за материальных трудностей не удалось, и Ованес Туманян работает сначала в духовной консистории в Тифлисе, затем в армянском издательском обществе.

Первая статья под названием «Об одном предании» опубликована в газете «Нор-Дар», в 1887 году. В первой

половине 90-х гг. выходят два сборника его «Стихотворений». Он получает признание как первый среди поэтов Армении.

На крестинах моих день – факелом был, а церковью – небосвод.
И народа любовь, что купель моя, свет радуги – мой народ.
Мне живительным миром была роса, а взгорье – крестным отцом.
И я тем был крещен, кто создал меня поэтом, – самым творцом.

Поэтический дар, проявивший себя в творчестве Ованеса Туманяна, был из тех, которые относят к высшим духовным дарованиям. Поэзию нельзя понимать как просто слова, рифмующие какую-то мысль. В поэтических строках много чувства, которое трудно объяснить. И красивых восторженных слов недостаточно. Настоящие поэтические строки рождаются от наблюдений за страданием души, эмпатией. Поэт первоначально только предчувствует общее направление, имеет только отдельные слова, фразы, рифмы. Отказаться от них ему не даёт ощущение тревоги, напряжение, которое сопровождается радостью или восторгом. Вероятно, можно говорить о некоей поэтической эйфории. И такое состояние индивидуально, неповторимо, поэтому говорят о таинстве поэтического творчества, когда творец улавливает идеи и строки откуда-то свыше. Состояние беспокойства и неудовлетворённости продолжается до тех пор, пока не находятся нужные слова, не будет исчерпана идея, реализующая замысел. Возвращение к душевному равновесию происходит тогда, когда поэт начинает догадываться, что найденные им слова и рифмы позволяют читателю прикоснуться и ощутить возвышенную Любовь и Истину. Емкость слова и фразы, глубина мысли, многогранность смыслов, затрагивающих самые тонкие чувства человека – вот качества, которые характеризуют поэтическое творчество О.Туманяна. Эти качества почувствовали читатели в строках стихов и народных баллад Ованеса Туманяна.

Как тайну бога распознать? Кто посягнет судить о ней?

Всем в мире близких он послал, он всех связал на много дней.
Лишь, как подобие свое, певца оставил одного,
Чтоб так же, как он сам, поэт взирал на мир и на людей.

Поэзия О.Туманяна чиста, легка, утончённа, увлекает душу читателя к прекрасному. В его стихах-гармония звуков и стройность народной мелодии. Источником для его поэзии была глубочайшая традиция армянского литературного фольклора, сформировавшегося ещё до появления письменности. Это рассказы и былины о Хайке, Араме, Аре Прекрасном, Торке Ангехе, Аравате Ваагне, Тигране и Аждааке, Ерванде и Ервазе. Богатейшая устная литературная традиция!

Месроп и Саак, а с вами все те,
Что не дали нам блуждать в темноте,
Открыли родник умов и сердец, -
Ваш лоб венчает алмазный венец!
Пока существуют подобные вам,
Внимая призыва горячим словам,
Все вверх, все вперед неуклонно пойдем,
Как ни был бы крут и тяжел подъем.
И праздник настанет, награда близка.
И мир узнает, что сквозь века
В писаньях и в песнях из рода в род
Свой светоч пронес армянский народ.

Древняя традиция армянской поэзии имеет начало в церковно-религиозных, духовных гимнах. До XII века армянская литература пишется на грабаре – древнеармянском литературном языке. Представителями этой традиции стали создатели жанра шараканов - Иоанн Мандакуни, Месроп Маштоц, Мамбре Верцанох и некоторые другие, творчество которых лежит в основе армянской поэзии последующих веков. Продолжил традиции лирической поэзии в армянской литературе Григор Нарекацы. Его творчеством начинается тематика любви и

любование природой в армянской лирике. Знаменитая поэма «Книга скорбных песнопений» - шедевр не только армянской, но и мировой средневековой литературы. Армянская поэтическая традиция развивается в творчестве Григора Пахлавуни, Вардана Анеци.

Следует обратить внимание на то, что О.Туманян во многих своих произведениях использует форму «айренов», четырёхстрочных лирических стихов. Содержание айренов призвано выразить чувства полноты жизни, восхищение красотой мира. Форму айренов следует считать вершиной средневековой армянской поэзии. Частью это анонимные произведения, написанные народными певцами гусанами. В начале XVI века появляется Наапет Кучак, который довёл стихотворную форму айренов до совершенства. Он писал айрены такой красоты, что, по легенде, исцелил султаншу. Айрены дошли до нашего времени в рукописях. Ованес Туманян возрождает эту стихотворную форму.

В 1899 г. под руководством О.Туманяна создается литературный кружок «Вернатун» («Мансарда»), куда вошли видные армянские писатели (Г. Агаян, А. Исаакян, Л. Шант, Д. Демирчян и др.). Об этом вспоминает другой гений армянской поэзии, Аветик Исаакян, Варпет, когда пишет о незабываемых прекрасных часах, "глубоко содержательных и вдохновенных", проведенных с Туманяном и другими писателями в "Вернатуне" в Тифлисе.

В 1912 О. Туманяна избрали председателем Кавказского общества армянских писателей, просуществовавшего до 1921. Туманян содействовал сплочению талантливых демократически настроенных армянских писателей и поэтов.

Ованес Туманян писал и рассказы. Его рассказы посвящены быту и тяжёлому труду армянского крестьянина, полны глубоких художественных обобщений, правдивы и точны в деталях, показывают полноценные сложные человеческие характеры.

Писатель сотрудничает с детским журналом «Аскер» и пишет замечательные армянские сказки для детей. Уже в

советское время детские сказки были переведены на русский язык Самуилом Маршаком и стали известны детям республик всего Советского Союза. Возможно, с этой стороны творчества армянского писателя мы знакомимся в первую очередь, ещё в детстве, особенно со сказками, написанными О.Туманяном и талантливо переведёнными С.Маршаком, В.Звягинцевой, Н.Гребнёвым, М.Петровых, а также армянским переводчиком Леоном Мкртчяном. Многие дети в России знают наизусть строчки из легенды «Пёс и кот» («Кот-скорняк»). Они весёлые, нравятся детям, в них звучит задор армянского народа, а Самуилу Маршаку удалось подобрать такие слова, которые этот задор и юмор передали, передали простонародную основу ритма армянской речи:

Папаху шить
Не шубу шить,
Для друга
Можно
Поспешить!

Папаху шить
Не шубу шить.
С деньгами
Можно
Не спешить!

Работая в детском журнале, размышляя над тем, как сделать доступными детям разных возрастов, пусть простые, но литературные сюжеты, О.Туманян вышел на своего рода «лубочный стиль в литературе», своеобразный фольклорный стиль, разрывающий со скучными традициями книжной поэтики. Здесь, в своей первой «народной легенде» О.Туманян осознал себя мастером повествовательного жанра, сила которого в фабульных, сюжетных стихах, неразрывно связанных с народной жизнью и народным творчеством.

О. Туманян стремился познакомить своих армянских читателей с поэзией выдающихся авторов европейской, русской и даже американской литературы. Им переведены стихи А.С.Пушкина, «Шильонский узник» Дж. Байрона, «Мцыри» М. Ю. Лермонтова, русские былины, сербские эпические песни,

отрывки из «Песни о Гайавате» Г. Лонгфелло. Он пытался расширить мир для своих армянских читателей:

Для души нашёлся дом –
Вся вселенная кругом.
Я - вселенной властелин.
Люди знают ли о том?

Участвуя в дискуссии об эстетических принципах, на которых должна быть основана новая армянская литература, О.Туманян пишет многочисленные заметки и статьи с оценками творчества А.С. Пушкина, М. Ю. Лермонтова, Л. Н. Толстого, ряд статей он посвятил У. Шекспиру.

Для него важно было содействовать сплочению демократических сил в современной ему армянской литературе, пропаганде передовых эстетических принципов. В многочисленных статьях он освещал вопросы общественной жизни, литературы, фольклора, развития армянского литературного языка и диалектов, оставаясь на Родине:

Пускаться в бегство? Тщетный труд,-
Я связан тысячами пут:
Со всеми вместе я живу,
За всех душой страдаю тут.

О.Туманян, оставаясь армянским патриотом, был сторонником, не отделения, а наоборот, сближения с Россией. И не потому, что Россия сильна армией, а потому что Россия сильна своей культурой, которая может обогатить и армянский народ. Его российская ориентация была отражена в статьях: «Вот почему», «Армянский вопрос и его решение», «Испытатель», «С непоколебимой верой» и других. Существование армянской государственности и самого армянского народа в тот период было невозможно без России. Конечно, он хорошо видел, ощущал мертвящее давление официального самодержавия.

Кстати, дважды (в 1908 и 1911) он был арестован властями. В 1913 году писатель пишет: «Мы пришли и идём к великой России, к великому русскому народу, мы полюбили его и примкнули к нему».

Туманян призывал к сотрудничеству с передовыми демократическими силами России, с русской культурой он связывал развитие армянской культуры, литературы. «В России мы находимся среди одного из лучших народов мира и под влиянием одной из лучших литератур». Он был восхищён Пушкиным, Лермонтовым, Л.Н.Толстым. Мастерски переводил Пушкина, Лермонтова, Жуковского, Некрасова, Кольцова, Надсона, Блока. О.Туманян много писал о русской литературе, будучи председателем Кавказского общества армянских писателей, организовывал встречи с русскими поэтами и писателями. Его личными гостями были В.Брюсов, С.Городецкий, К.Бальмонт.

К сожалению, Россия не смогла в тот период решить «армянский вопрос» с наименьшими потерями. В Западной Армении османами был развязан кровавый геноцид. Восточная Армения, находясь в составе Российской империи, была спасена.

Сочувствие освободительной борьбе трудового народа привело Туманяна к безоговорочному принятию Октябрьской революции и Советской власти в Армении. Туманян был председателем Комитета помощи Армении (1921—22), возглавлял Дом армянского искусства в Тбилиси, активно участвовал в строительстве новой культуры. Это время, когда писатель стремился помочь людям, своему народу не просто выжить, а заложить основы достойной национальной жизни.

Куда ты стремишься безумно, душа?
За тысячью дел ты стремишься, душа!
Но как же поспею я в тысячу мест
С твоею поспешностью лёгкой, душа?

Творчество великого национального поэта оказало значительное влияние на развитие принципов народности и

реализма в современной армянской литературе. В свою очередь русские литераторы и общественные деятели высоко ценили творчество Ованеса Туманяна. Его произведения переводились на русский язык В. Я. Брюсовым, К. Д. Бальмонтом, Вячеславом Ивановым, В. Ф. Ходасевичем, С. Я. Маршаком и другими. В 1916 Брюсов высоко оценивая поэзию Туманяна, писал: «В целом поэзия Туманяна есть сама Армения, древняя и новая, воскрешенная и запечатленная в стихах большим мастером» («Поэзия Армении», под ред. В. Брюсова, Ер., 1966, с. 83). Сочинения Туманяна переведены почти на все языки народов СССР и на многие иностранные языки. Такова биография выдающегося армянского поэта, писателя и общественного деятеля, всю свою жизнь отдавшего служению армянскому народу, своей стране.

Для читателей иной культуры в творчестве Ованеса Туманяна заметно обращение к армянской мифологии и народному историческому фольклору. Он замечает, что «литература каждого народа развивается, приобретает своеобразие и утверждает себя благодаря народным легендам, творениям национального духа». После присоединения к Российской империи начинается формирование армянской интеллигенции, исторический процесс, в котором Ованес Туманян сыграл заметную роль. Появление интеллигенции как социальной группы связано с важнейшей функцией – поиском и утверждением национальной идентичности. Неизбежно повышается интерес к историческим корням народа. О.Туманян писал: «Литература каждого народа развивается, приобретает своеобразие и утверждает себя благодаря народным легендам, творениям национального духа» (Собр. соч., т. 4, Ереван, 1969, с. 337—38, на арм. яз.).

История армянского народа начинается за многие века до рождения Христа. Армянские просветители XIX века активно собирали, записывали и публиковали легенды и мифы народа. Размышляя об истории и исторических событиях, О.Туманян замечает:

В наш мир, где тьма людей перебивала,
Приходит каждый день людей немало,
Чтоб опытом столетий пренебречь
И путь извечный начинать сначала.
Перев. Наума Гребнёва

Возможность не забыть, «не пренебречь» - это записать миф, легенду и дать ей новую жизнь в новом времени. Ованес Туманян на основе армянских героических мифов создаёт поэму «Давид Сасунский», одну из выдающихся поэтических обработок народных сказаний в армянской литературе. В поэмах О. Туманяна, особенно в балладе «Взятие Тмкаберда», чувствуется влияние Нерсеса Шнорали, его «Элегии на взятие Едессы».

В языческой ещё Армении, как можно предположить, существовала похожая, но появившаяся независимо от общеизвестного библейского текста, легенда о богатырях, о Санасаре и Адрамелеке (Багдасаре), о покровителе их рода орле-арциве. Об этом мифе упоминает Мовсес Хоренаци в своей «Истории Армении». Но, как известно, он относился с недоверием к легендам и сказкам, пытаясь отделить вымысел от исторической правды. Этот легендарный сюжет имеет общекавказский след: в Осетии есть легенда об Артавызе, в Грузии – Амирани, в Абхазии – об Абрскиле. В Армении, помимо записанной Хоренаци и существовавшей только в устных преданиях легенды об Артавазе, сохранился вариант легенды о Шидаре. Шидар иногда обозначен как сын Артаваза. От рождения Шидар был помешанным, не совсем нормальным. Это очень напоминает сюжет «Давида Сасунского» Оганеса Туманяна.

Как бы не были велики бедствия, которые переживал в своей истории армянский народ, он возрождался, избавлялся от захватчиков и завоевателей. Таков пафос «Давида Сасунского».

И все же, свидетель тому весь свет,
Не сломлен наш дух годами бед,

Живет он везде, куда б ни проник
И где б ни звучал армянский язык.

Чуковский был приглашён на 100-летие рождения О. Туманяна, не приехал, но написал: «Я сегодня всей душой в Ереване. Пылко приветствую мой любимый армянский народ с гордым и радостным туманяновским праздником».

ԱՄՓՈՓՈՒՄ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ
ՊՈԵԶԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՆՈՇ
ՍԵՐԳԵՅ ԲԻՍՏՐՅԱՆՏԵՎ
ԱՐՄԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Հոդվածի հեղինակները Հովհաննես Թումանյանին ներկայացնում են որպես մեծ մտածողի և բոլոր ժամանակների բանաստեղծի: Կոնկրետ օրինակներ բերելով մյուս մեծ գրողների ստեղծագործություններից՝ մատնանշում են նրա լայն մտահորիզոնը ոչ միայն որպես բանաստեղծի, այլև բարերարի ու հովանավորի: Արդյունքում կարելի է եզրակացնել, որ մեծ ուսուցչի ստեղծագործությունը հավերժ կապրի մարդկանց սրտերում:

Բանալի բառեր. պատմություն, ժողովուրդ, ստեղծագործություն, գրականություն, կյանք, բնություն:

ABSTRACT
HOVHANNES TUMANYAN AS SYMBOL OF THE
ARMENIAN POETRY
SERGEY BYSTRYANTSEV
ARMEN SAHAKYAN

The authors of this article showed Hovhannes Tumanyan as a great thinker and poet at all times. Citing specific examples from the works of other great writers, they showed a broad outlook for his

poetry, not only as a great writer, but also as a philanthropist and philanthropist. As a result, we can conclude that the work of a great teacher will forever remain in the hearts of people.

Keywords: history, people, creativity, literature, life, nature.

ԹՈՒՄԱՆԵԱՆ ԵՒ ԹԷՔԷԵԱՆ. ԳՐԱԿԱՆ ԱՌԸՆՉՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼ ԵԱՆ

Գեղագիտական ընկալման գուգահեռները հայեացքի միասնական պատուհան են բացել Թումանեանի եւ Թեքեանի աշխարհներից ներս: Վաղուց երկշերտ տեսողութեամբ այն առանձնացել է որպէս հայրենիքի եւ աստուածայինի քննական միահիւս բաղադրիչ, որտեղ առաջինը քաղաքական գոց, երկփեղկուած ճակատագրի որոնումների դաշտն է, իսկ երկրորդը փիլիսոփայական, Թեքեանի բառով, «*ոլորտներուն մէջ երկնի*» երկուստեք ճախրը՝ անընտել, բայց գեղեցկագոյն:

Հայրենիքի եւ Աստուածայինի այս երկու նիւթերը երկու բանաստեղծների համար ընտանի ու սիրական հիւն երազն են, փայփայուած, լրութեան մէջ անցնող: Երիտասարդ Թումանեանը նոյնպէս փորձում է գտնել բանաստեղծ-Արուեստագետի նկարագիր, որը, սակայն, լրութիւնը ճեղքելու խիզախութիւնն ունի, այն, ինչ չես գտնի առ հասարակ իր քերթողական յատկանիշների մէջ.

*Ա՛խ, ես երանի
Կայծա՛կ լինէի,
Որոտ-ճայթիւնով*

*Ցոյց տայի մարդուն
Գաղտնիքը՝ վերին,
Որ տեսներ՝ այնտեղ*

*Մոայլ ամպերից
Ժայթքէի ըմբոստ,
Զարկէի ուժգին,
Պատռէի խաւար
Կամարը երկնի,*

*Ի՞նչ բան կայ ահեղ,
Կամ *ո՞վ է նըստած,*
Եւ *ո՞ր է Աստուած...¹:**

Ընդ որում բերուած հատուածում մենք որսում ենք ուղղութեան ընտրութեան փորձ, ըստ էութեան՝ ռումանտիկ յածումի՝ աստուածորոնումի գրեթէ դուրեանական փոթորկոտ խաղարկում՝ «*որոտ-ճայթին, կայծակ*», «*ահեղ բան*», «*ո՞ր է Աստուած*» հարցադրումներով: Իսկ Վ. Թէքէեանի անցեալ դարասկզբին գրուած յատկապէս «*Իրիկունան խորհուրդներ*»ում քնարական հերոսը գրեթէ չի տարբերում թումանեանական «*ուխտաւորից*», որը երգչին խորհուրդ է տալիս՝

*Կտրէ՛ վերարկու
Մը գիշերէն, եւ ալ գնա՛, ուխտաւո՛ր,
Հոգւոյդ ահարկու
Ճամբաներէն, լեռնէ՛ի լեռ, միայնակ,
Ժայռերուն անխնայ
Զարնուելով եւ սըրելով զերդ դանակ
Կամքըդ անոնց վրայ...*

Եւ շարունակութիւնը՝

*Հովերուն մէջ, ահեղօրէն տարածուող
Թեւերըդ պարզէ՛*

¹ **Թումանեան Յովհ.**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով (վերախմբագրուած հրատարակութիւն), հատոր առաջին՝ բանաստեղծութիւններ, Եր., 2018, էջ 94:

*Եւ քանդումի՛ ելիր անոնց պէս կարող...
Անգղ, արծիւ, բազէ
Թո՛ղ սորվեցնեն իրենց խաղերը քեզի,
Թէ ինչպէս, զերդ սլաք,
Իրենց թիոր որսին վրայ կը նետուի՝
Անշեղ եւ արագ...²:*

Այս երկու իմացական բանաստեղծութիւնները երեւան են հանում գոռ պայքարի նետուելու պատրաստ Թումանեանին եւ Թէքէեանին, նրանց հագուազիւտ երեւան հանած ընդվզումի մղումները:

Բոլորս քաջ գիտենք Թումանեանի «Մեր նախորդներին» անգուգական քերթուածը, որը, յայտնի է, առաջին անգամ լոյս է տեսել թիֆլիսեան ժողովածուում, գրութեան ժամանակից մէկ տարի անց, 1903-ին, թէեւ ակադեմիական խմբագրուած 2018 թուականի տարբերակի համար մեր նոր թումանեանագէտները նախընտրել են Պոլսի «Բանաստեղծութիւններ» գրքի մէջբերումը³:

Այստեղից է սկիզբ առնում Թումանեանի իրապաշտական տողանցքը, ամէնից շքեղը եւ հարուստը հայ գրականութեան ճանապարհներին: Դեռ թւում էր, թէ երէկը շարունակում էր, մինչդէռ այն անցաւ մարեց անցեալի գովուած երգիչների թարմ երգերի հետ, երգիչներ, որոնք ապրում էին հայրենիքի խուլ պատրանքով՝ «*խըրո՛խտ, վեհապանծ, թէպէտեւ գերի*»: Դեռ ունկերում հնչում էր նրանց «*առաւօտեան շեփորի*» ձայնը, «*երազներն ապրում էին դեռ, / Ոսկի երազներն հայ փրրկութեան*»:

² Թէքէեան Վ., Գաղտնի պարտեզ, Պէյրութ-Եր., 2003, էջ 69:

³ Թումանեան Յովհ., Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր առաջին, էջ 675:

Սակայն ինչպես ամպրոպը, գրական մեր երկնակամարում
բացում է Թումանյանի բանաստեղծի շառաչող ճշմարիտ
ձայնը՝ մի՛ եղեք այդքան կոյր, արթնացե՛ք, իսկ որ աւելի
կարելորդ է, արթնացրե՛ք անհայրենիք ժողովրդին:

*Ա՛խ, նա յօշոտուեց մեր աչքի առջև,
Եւ մեր ըզգայուն սրբուներն իրեն հետ,
Ոսկի երագներ՝ միրաժի նրման՝
Մեր անապատում չըքացան անհետ:*

Ճշմարիտ լինել ժողովրդի հետ, չգուրգուրալ սին երագներ,
- ահա՛ Թումանյանի գրական նոր պրիսմակը,- նրա ռեալիզմը
դառնում է անողոք, երեկույալ քնարերգութեան առեջքներում
նա չի փորձում այլեւս հանգիստ առնել, բանաստեղծի զգայուն
սիրտը նոյնպես յօշոտուած է: Նա մտածում է՝ ժողովրդին
նոյնպես պիտի դուրս բերել պատրանքների դաշտից: Սա՛ է
«Մեր նախորդներին» քերթուածի ծրագրային նշանա-
ռութիւնը: Ու ծնւում են ահասարսուռ տողերը՝

*Եւ մենք խորտակուած մեր կեանքի ծեղից,
Անյոյս ու դալուկ, ճակատներըս ցած,
Ընկնում է քընար մեր մատաղ ձեռքից,
Ընկնում են սրբոյից ե՛ւ երգ, ե՛ւ Աստուած՝:*

Պատրանքները պայքարի ոգեշունչ շեշտերով պահելու
ջիղով առանձնանում էր 19-րդ դարի երկրորդ կեսի հայ
բանաստեղծութիւնը՝ Ռաֆայել Պատկանեան, Միքայել
Նալբանդեան, Մկրտիչ Պէշիկթաշլեան եւ Պետրոս Դուրեան:
Այն 90-ականներին ամփոփելու ելաւ Լեւոն Շանթը իր
նշանաւոր «Ես պատրանքը սիրեցի» բանաստեղծութեամբ,

⁴ Նոյն տեղում, էջ 223:

որով պաշտպանում ու արդարացնում էր գորշ իրականությունից վեր սալառնելու հայ մարդու տեսլականի հին ձգտումները՝ *«հայրենիքի հուր կարօտը բնածին»*.

*...Ես դառնացայ, բայց ալ ուժգին այդ օրէն
Իմրս չեղող հայրենիքըս պաշտեցի՝*

Լ. Շանթը դեռ մտմտում էր՝ յիրաւի, եթէ սա՛ է պատրանք կոչուած *«խտէալը կենսածին»*, ուրեմն գեղարուեստական այլ յանձնառութիւն չպիտի ունենայ բանաստեղծութիւնը, որի ենթահողը գրական հայեացքի բեռով ռոմանտիկական է, ուրեմն՝ նա պիտի որ հաստատի նախորդների ականդոյթը՝ *«Ես պատրանքը սիրեցի»*:

1916-ին, խորքով որսալով եւ ընդունելով Թումանեանի իրապաշտական սուր հարցադրման արդարամտութիւնը, Վահան Թեքեանը սահմանագծում է հայ նոր քերթութեան հանգրուանը՝ յստակ ճամբաբաժան քաշելով Երազի եւ իրականութեան մշակութային մեկնութեան շուրջ՝ ի մտի ունենալով ցեղասպանութեան ողբերգական անդրադարձը գրականութեան նոր ընկալումների դիմաց: Եթէ կար ժամանակ, որ մենք փայփայտում էինք բացարձակ պատրանքը, ապա այժմ երազին տիրում ենք՝ *«մեռցընելո՛ւ՝ զանհկա»*, *«ինչպէս տիրեց Շամիրամ իրմէ փախչող Արային»*: Մեր Երազը՝ ճիշդ սրտից նետահար, խոցուած: Այլաբանօրէն այն Թումանեանի հետագծով ուրուագծուած մեր քաղաքական ի դերեւ ելած երազների բանաստեղծական շրջանի շիջումն է, որի լինելութեան նկատմամբ խաբկանքը զուր ու անօգ միսիթարութիւն է՝

⁵ *«Լեւոն Շանթի երկերը»* / գեղարուեստական գրութիւններ, 1891-1894, Ա. հատոր, Պէյրութ, 2008, էջ 337:

...դուն արդ մեռա՞ծ ես ի սպառ...

*Բայց ո՛վ Երագ, զոր կ'ուտեն արդեն որդերը քանդիչ,
Կ'ուզեն խաբել ես աշխարհն, ինչպէս ինքզինքս այ մի քիչ,
Թէ դուն կ'ապրիս՝ մի շտ աղուոր, հոգիիս մէջ՝ մի շտ պայծառ՝:*

Այսպիսով, նոյնն է Թումանեանի ու Թէքէեանի գրական պատրանքների դեմ սկզբունքների ռեալիստական հակադարձութեան թիրախը. նրանք երկուսով ազդարարում են տեւական երագներից ձեռքազատման բանաստեղծական իրենց վճռականութիւնը, թէւ նկատենք, որ Վ. Թէքէեանը վաղուց էր անցել սիմվոլի եւրոպական ընկալումների համակարգի իւրացման արդէն իր համար ընտանի դարպասներից: Թէքէեանի մօտ մնում է ինքնախաբկանքը, բայց այն անհնար է շփոթել քաղաքական նոյն եւրոպական խաղերի փորձառութեան հետ:

Մի այլ առիթով, արդէն «*Պատերազմ*» բանաստեղծութեան մէջ, մարդու երագը բարձր պահող ուժը Վ. Թէքէեանը համարում է «*մարդոց միջեւ ...Միրոյ, Եղբայրութեան քաղցր Երագի*» շարունակականութիւնը՝

*...աստուածութի՞ւնը մարդուն
Որ կը ջանայ, չի կրնա ը խանձարուրքէն դուրս ելլել...⁷:*

Այստեղ պիտի մի փոքրիկ «Բայց» դնես, որ ունկնդիր լինես Յովհ. Թումանեանի մարդու եւ մարդկայինի որոնման մէջ

⁶ Թէքէեան Վ., Գաղտնի պարտեզ, էջ 88:

⁷ Նոյն տեղում, էջ 150:

հեռահար, զուսպ ու հատու յուսահատութեամբ արձագանգին, թէ՛ «*Ու հեռու է մինչեւ Մարդը իր ճամբան*»⁸, էլ ինչ կ'ուզես, եղբայր:

Թումանեանը եւ Թէքէեանը նշանաւորեցին իրենց քառասնամեակների հատումը առանձին փիլիսոփայական խոկումներով՝ առաջինը «*Վայրէջք*»ով (1909) եւ երկրորդը «*Քառասնամեակ*» եռեակ հնչեակներով: Թումանեանը դիտում է այն դէպի «...*վեր -/ Դէպ Անյայտը սուրբ, աշխարհքը պայծառ*» ահարկու ճամբայ, երբ թողել է «*ներքեւ, մեծ լերան տակին, / Ե՛ւ փառքը, ե՛ւ զանձ, / Ե՛ւ քէն, ե՛ւ նախանձ - / Ամէնը, ինչ որ ճընշում է հոգին*», մինչդեռ ինքը իջնում է զուարթ իր լերան ետեւ «*անհոգ ծիծաղով*», ինչպէս «*խմաստուն, ու բեռքս թեթեւ*»⁹: Թումանեանը կարելորում է «*վայրէջքի*» իր երթը: Թէքէեանը խորհրդածում է մօտալուտ մահուան մասին համանման պատկերներով, ըստ էութեան՝ չհեռանալով Թումանեանի մտքերի ու պատկերների կառուցիկ եղանակից, ջանալով «վերլուծել իր (այսինքն՝ լոյսի – Ս.Դ.) երանգներն անհամար»

*Քառասունին կ'ըսենք ա՛յ. – կը հեռանաս մենէ, կեա՛նք.
Զգալապէս երէկէն աւելի մութ է այսօր.
Մինչ երէկ լեռն ի վեր ելած էինք, արդ կ'իջնանք,
Կ'իջնայ մեզ հետ ապագա՛ն ալ յոյսերուն հետ բոլոր*¹⁰:

⁸ **Թումանեան Յովհ.**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով (վերախմբագրուած հրատարակութիւն), հատոր երկրորդ / քառեակներ, բալլադներ, թարգմանութիւններ, Եր., 2018, էջ 36:

⁹ **Նոյնը**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր առաջին, էջ 261:

¹⁰ **Թէքէեան Վ.**, Գաղտնի պարտեզ, էջ 116:

Թումանեանի նման նա եւս իրաւունք է վերապահում իմաստութեան դիմելու, բայց, երբ կեանքը մեզ չի ջամբում ոչինչ՝ «Ո՛չ իսկ կաթիլ մը գորով, ո՛չ յոյս եւ ո՛չ իսկ պատրանք, / Իմաստութեան մրուրով մենք քիչ մը դեռ կ'արբենանք»¹¹։ Բառերն իրենց տեղում են, կարելի է ասել՝ «թումանեանաշունչ», գորովը գութի հոմանիշն է, պատրանքը՝ գեղազիտական ծրագիր՝ մեր արդէն յիշատակած հրաժարումը, իսկ իմաստութեան հպումը՝ իր համեստութեան ցուցիչը՝ մրո լրն էլ կը բաւէ իրեն։

Դեռ Վարդան Արեւելցուց եկած «Լուսաւորչի կանթեղը» նիւթի՝ անցեալ դարասկզբին եռեակ մշակումներով Յովի. Յովհաննէսեանը, Թումանեանը եւ Վ. Թէքէեանը խնդիր դրեցին ընդառաջ գնալ հաւատարծարծ զգացումի ծաւալումին, ընդ որում՝ արեւմտահայ բանաստեղծը՝ երկիցս։ Նախ, վերջինիս «Հոգէր» երախայրիքի 25-րդ քերթուածը Թումանեանից առ նուազն մէկ տարի առաջ ակնարկում է Լուսաւորչի լեզենդի հանդէպ բուռն հետաքրքրութիւնը, թէեւ սրտի մէջ են բիւրեղ կանթեղները, ուր «նըշուլեցաւ բոցը սիրոյդ»։ Պատկերը համակում է առաջին իսկ փոխաբերութեան ինքնութեան կառոյցով՝ տարանջատ աւանդութեան թելադրութիւնից, իբրեւ սիրոյ խորհուրդ.

*Եւ կանթեղին մէջ, իւղի տեղ,
Հոսեցուցի կեանքըս պուտ պուտ։*

15-ամեայ պատանու հետեւութիւնն էլ ձգւում է դէպի սիրոյ դաշտ՝

Իմ մարմինիս թաց ըսպունգէն

¹¹ Նոյն տեղում, էջ 117։

*Քամուած կեանքը երբ որ ցամքի՝
Միրոյս կանթեղն ալ այն ատեն,
Լոկ ա՛յն ատեն մարի պիտի¹²:*

Դէպի նիւթը Վ. Թէքէեանի բանաստեղծական հասունացումը ծնունդ է 1911-ին Հայաստան պատմական այցի, ինչի արդիւնքում գրուեց «Արարատեան դաշտին մէջ» շարքը, ուր ընդգրկուել էին անմիջական տպաւորութեամբ նաեւ՝ «Հրագդան», «Մասիսին», «Զուարթնոց տաճարին մէջ» սքանչելի քերթուածները: Ինչ վերաբերում է լեզենդի վերջին մշակումին, ուշագրաւ են ընդհանրական գուգահեռները նախ եւ առաջ Թումանեանի հետ, որոնք պատահականութեան կնիք չունեն, այլ՝ միասնական հայեացքի սրութիւն: Թումանեանի համար Լուսաւորչի կանթեղը անմար է, «լոյս է տալիս երկա՛ր դարեր», կէս գիշերին անգամ կախ ընկած «Հայոց մթնած երկընքից»: Թէքէեանի մօտ երկնքի միակ հայկական աստղն է այն, որ շողում է ամէն գիշեր «Արագածի գլխուն վրայ», «ա՛յնքան անջատ միւսներէն», որ անձեռակերտ է թւում («ուրիշ ձեռք մը կարծես զանի վառեց զաղտնօրէն»): Լեզենդի թումանեանական «ընթերցումն» առաջինն է բացում «ձեռքի» եւ «անձեռակերտի» խորհուրդը՝ «Ոչ մարդկային ձեռ կը հասնի / Էն ահաւոր բարձունքին, / Եւ ոչ քամին կը հանգցընի, / Վիշապ-քամին ահագին»¹³: Եւ եթէ հաւատաս պարզ կը դառնայ՝ «Ասէս Աստծոյ աչքը պայծառ / Հըսկում է ցած երկընքից»¹⁴: Եւ եթէ Թումանեանի հաւատով անսասան եւ վառ յոյսերով դէպի Հայոց ապագան յառած հայեացքը

¹² Նոյն տեղում, էջ 29:

¹³ Թումանեան Յովհ., Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր երկրորդ, էջ 131:

¹⁴ Նոյն տեղում, էջ 132:

համադրենք Թեքեանի համարժեք պատկերին («Այդպէ՛ս հաւտաց ու այդպէ՛ս դէռ կը հաւտայ հայ հոգին / Որ միշտ դարձաւ, նայեցաւ եւ յառեցաւ ի անձկագին»¹⁵), կ'որսանք երկու հանճարեղ արուեստագետների գեղարուեստական ընկալումների միասնական դաշտը:

Լեզենդի երկու մեկնությունները իւղի, արցունքի ազգայինի պաշտպանութեան հրանիւթի մասին են: Վերջապէս դիմորոշ հարցը՝ ինչո՞վ է լցուած կանթեղը. գրական հրաշալի գիտն այստեղ է. կանթեղն այս անգամ իւղի տեղ լցուած է «Սուրբի մաքուր արցունքներով» (Թումանեան) եւ «հայութեան ջինջ արտասուքով» (Թեքեան): Յայտարարը մէկն է՝ իբրեւ վճիտ շող, այն փոխանցում է Լուսաւորչից բանաստեղծների հոգուն՝ ծաւալուելով, մեծնալով, դառնալով ապագայի ակունք, սպասուած «Այգ մը նոր»:

РЕЗЮМЕ ТУМАНЯН И ТЕКЕЯН: ЛИТЕРАТУРНЫЕ СВЯЗИ СУРЕН ДАНИЕЛЯН

Бурное поэтическое начало 20-ого века в творчестве Туманяна и Текеяна соотносилось с контекстом поисков национального идеала. Поэты в дебрях истории высветили известную восточную легенду о лампаде Пророка Григора, повествующую о том, как она помогла народу сохранить стойкость и веру на долгие века, как от слезы Святейшего разгорелся тлеющий огонь вечности на горе Арагац. Такая интерпретация легенды роднит двух армянских поэтов.

В статье раскрываются новые аналитические стороны старой темы.

¹⁵ Թեքեան Վ., Գաղտնի պարտեզ, էջ 144:

Ключевые слова: Ованес Туманян, Ваган Текеян, литературные связи, национальные устремления, мечта и реальность, “Лампада Просветителя”, романтизм, эпический взгляд, символы Отечества и Божества.

ABSTRACT

TUMANIAN AND TEKEYAN: LITERARY RELATIONSHIPS

SUREN DANIELIAN

The beginning of 20th century in poems of Tumanian and Tekeyan developed with investigation national dreams. Both of them tried to rise from history the famous example of oriental spiritual legend about the chandelier of Saint Gregory the Illuminator and to show how continued believing in it, how the his tear burns on the top of mountain Aragats as a symbol of eternity.

These questions connect two great poets. And aim of the author of this article is to reveal new analytic approaches to the old item.

Key words: Hovhannes Tumanian, Vahan Tekeyan, literary relationships, national aims, explanation of dream and reality, “Chandelier of Illuminator”, romanticism, realistic view, symbols of Homeland and Godness.

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅԻ ԵՎ ԱՐԱԲ ՊՈԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵՐՎԱԹ ԳՈՄԱԱ

Հայ-արաբական հարաբերությունները բնորոշվում են նրանով, որ դրանք ձգվում են պատմության խորքերը: Այդ հարաբերությունների հիմքը դրվել է դեռևս հայոց թագավոր Տիգրան Մեծի գահակալության շրջանից սկսած: Մյուս կողմից՝ Հայաստանի միացումը Արաբական Խալիֆայությանը իրան հանդիսացավ երկու ժողովուրդների միջև մշակութային և մտավոր փոխադարձ կապերի էլ ավելի ամրապնդման համար: Երկու ժողովուրդների միջև գոյություն ունեցած լեզվական և կրոնական տարբերությունները խոչընդոտ չեն հանդիսացել պատմության ընթացքում հայ-արաբական հարաբերությունների ամրապնդման համար:

Ընդ որում, արաբներն ու հայերը նմանատիպ պատմական իրադարձությունների միջով են անցել, որոնք երբեմն, համընկնում են միմյանց հետ: Մասնավորապես, արաբներն ու հայերը ընկել են Օսմանյան կայսրության գերիշխանության տակ և երկուստեք տուժել Օսմանյան Կայսրության հալածանքներից և ռասիզմից: Ինչպես նաև երկու ժողովուրդները զրկանքների են ենթարկվել օտար գաղութատիրոջ տիրակալության արդյունքում ու թեև գաղութատերերի անունները եղել են տարբեր, բայց և այնպես՝ նրանք համախմբված են եղել մեկ նպատակի շուրջ, այն է՝ գերիշխանության տակ գտնվող երկրների հարստահարում՝ ի օգուտ գերիշխող ուժերի:

Այսպիսով, հայ ժողովրդի և արաբ ժողովուրդների կյանքի էջերը լի են մարդկային կորուստներով, որոնք

ուղեկցվել են սպանությունների, բռնաբարության, բռնի տեղահանման և հարստահարման տեսարաններով: Սակայն, չնայած արաբ ժողովուրդների ունեցած ցավերին ու վերքերին, այնուամենայնիվ, նրանք չեն մոռացել իրենց եղբայրների մասին (հայոց փառապանծ ժողովրդին, ով պատմության ընթացքում ենթարկվել է մարդկային ամենասարսափելի ոճրագործություններին), և արաբները գրկաբաց ընդունել են օսմանյան կոտորածներից փախուստի դիմած հայերին, օգնության ձեռք են մեկնել և փրկել նրանց: Այնուհետև հայերը հայտնվել են Սիրիայի, Իրաքի, Եգիպտոսի և Լիբանանի տարածքներում՝ գտնելով ապահով ապաստան իրենց համար, որտեղ իրենց առջև արաբները բացել են իրենց տան դռները և, այդպիսով, հայերը սկսել են ակտիվորեն ներգրավվել նոր տնտեսական և հասարակական կյանքի մեջ՝ կողք-կողքի ապրելով արաբների հետ մեկտեղ, միննույն ժամանակ ձեռնամուխ լինելով մասնակցել իրենց նոր հայրենիքների կառուցմանը:

Սակայն, այդ ամենով արաբների դերակատարությունը չի ավարտվել, քանզի արաբ գիտնականներն ու կրոնական առաջնորդները հանդես եկան հայոց ցեղասպանության քրեականացմամբ և նման ոճիրի արգելմամբ, ուստի 1909 թվականին Ալ-Ազհար մզկիթի (ի դեպ՝ այն հանդիսանում է մուսուլմանական աշխարհի խոշորագույն իսլամական հաստատությունը) Մեծն Իմամ Շեյխ Սալիմ ալ-Բիշրին ֆեթվա է արձակել, ըստ որի արգելվում էր հայերի նկատմամբ սպանող իրականացնել, քանի որ այն անպատիվ է իսլամի և մուսուլմանների համար, ու ճշմարիտ իսլամը չի պարունակում որևէ տեքստ, որը խթանում է կրոնախախտների սպանությունը:

1916 թվականի նոյեմբեր ամսին Կահիրեի «Ալ-Մուկատտամ» թերթը հրապարակել է սիրիացի իրավաբան Ֆայեզ

ալ-Ղուսեյնի «Կոտորածները Հայաստանում» խորագրով գիրքը, որը հանդիսանում է աշխարհի մասշտաբով առաջին գիրքը, որում խոսվում է կոտորածների մասին և բացահայտվում Թուրքիայի կողմից արված խախտումները՝ արդարացնելով իսլամին՝ անմեղ մարդկանց նկատմամբ կոտորածների և սպանոցների իրականացման հրահրման մեղքից: Ցեղասպանության թեմային են անդրադարձել նաև արևմտյան թերթերը՝ հղում կատարելով վերը նշված գրքին, որի վառ վկայությունը 1916 թվականի «New York Times» թերթն է:

Այս ամենը այսքանով չի սահմանափակվել. Մեքսայի շերիֆ Հուսեյն բին Ալին 1918 թվականի հուլիսի 18-ին հրամանագիր է արձակել՝ կոչ անելով բոլոր իշխաններին և մուսուլմանական համայնքերին օժանդակություն ցուցաբերել հայերին ասելով. «Օգնե՛ք հայկական համայնքին իրենց բոլոր հարցերում և պաշտպանե՛ք նրանց այնպես, ինչպես պաշտպանում եք ձեզ, ձեր ունեցվածքը, ձեր երեխաներին և բավարարե՛ք նրանց կարիքները՝ երկրում բնակություն հաստատելիս կամ երկրից հեռանալիս: Նրանք մուսուլմանների պաշտպանության տակ գտնվող ժողովուրդ են, ում վերաբերյալ Մարգարեն ասել է. «Ով նրանցից ինչ-որ բան վերցնի անիրավացի կերպով, նույնիսկ եթե դա լինի «ջորու թուր»», ես նրա թշնամին կլինեմ համբարձման օրը»: Դա ամենակարևոր բաներից մեկն է, որը մենք հանձնարարում ենք ձեզ ու սպասում ձեր մարդկային հատկանիշների ցուցաբերմանը ու ջանքերի կիրառմանն այդ գործում»:

Արաբական երկրներում հայերը թույլտվություն ստացան նաև կառուցել իրենց եկեղեցիներն ու դպրոցները և պահպանել իրենց ինքնությունը:

Եթե մենք համակարծիք ենք նրանում, որ գրականությունն այն հայելին է, որն արտացոլում է ժողովուրդների կյանքն ու

նկարագրում նրանց առօրյան, ինչպես նաև այն գրանցամատյանն է, որտեղ ներկայացվում է մարդկանց կյանքը, նրանց ցավերն ու զրկանքները, ապա մեծ նմանություն կգտնենք հայ և արաբ գրականության միջև, հատկապես 19-րդ և 20-րդ դարերի միջակայքում, քանի որ հենց այդ ժամանակաշրջանում է մասնավորապես 1869 թվականին, որ հայոց հողի վրա ծնունդ առավ մեծն Բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, ով հասարակ Բանաստեղծ չէր թերևս, քանզի պատմությունը որոշ գրողների ու Բանաստեղծների դասում է իրենց ժողովրդի հոգևոր և գրական ժառանգության հիմնադիրների դասին, ովքեր մարմնավորում են իրենց ժողովրդի անցյալը, ներկան, ձգտումները, ցավերն ու հույզերը: Նման անձանց շարքին են դասվում Գյոթեն, Պուշկինը, Տագորը: Ահա Հայաստանի պատմության էջերում փայլում է Բանաստեղծ Հովհաննես Թումանյանի դեմքը, ով անվանվել է Ամենայն Հայոց Բանաստեղծ անվամբ և այդ անունը պահպանվել է մինչ օրս:

Թումանյանն արտահայտել է ողջ հայության կյանքը, նրանց ցավերը, զրկանքները, առօրյա կյանքը, հպարտությունն ու փառքը, նրանց կապվածությունը իրենց անցյալին և հնագույն քաղաքակրթությանը, նկարագրել է, թե ինչ է կատարվել նրանց հետ օսմանյան բռնապետական գերիշխանությունից ազատվելուն միտված ցեղասպանության պատերազմի ընթացքում: Նա չի բավարարվել միայն բառերով և Բանաստեղծություններ հյուսելով ու դրանք համայն հայության մեջ տարածելով, դրանով փորձելով խանդավառություն ստեղծել և նպաստել նրանց դուրս գալու զրկանքների և կեղեքումների անարդարություններից և ուղղվելու դեպի ազատության և ճշմարտության լույսը: Թումանյանը այնպիսի եզակի Բանաստեղծ էր, ով ոչ միայն իր Բանաստեղծություններով հետևել է իրադարձություններին

հեռվից, այլ ջանք ու եռանդ չի խնայել ու մասնակցել է այդ ամենին թե՛ իր պոեզիայով և թե՛ իր գործով, մասնավորապես հավաքագրելով այն երեխաներին, ովքեր մազապուրծ են եղել ցեղասպանությունից՝ կատարելով նրանց պաշտպանելու և կրկին ամենօրյա կյանք վերադարձնելու պարտավորությունը, այն բանից հետո, երբ նրանք անցել էին այնպիսի աղետների միջով, որոնք հավերժ կմնան իրենց հիշողություններում: Սակայն, հիվանդությունը վրա հասավ Թումանյանին և նա մահացավ Մոսկվայում 1923 թվականին: Թումանյանը վախճանվեց, և նրա հոգին համբարձվեց իր Տիրոջ մոտ: Թումանյանի մահվան օրը աշխարհի բոլոր ծայրերում գտնվող համայն հայության համար վերածնունդի օր էր՝ հավասարապես մեծերի ու փոքրերի, կանանց ու տղամարդկանց համար: Թումանյանը մահացավ՝ թողնելով մի ամբողջ լացող և սգացող ազգ, որը միաժամանակ հպարտանում էր ու հաղթանակներ տանում՝ երգելով նրա բանաստեղծությունները, մի ազգ, ով կապված է իր անցյալի հետ, ազգ, ով ծնել է հազարավոր Թումանյաններ, ազգ, ով իր բանաստեղծի անունը դարձրեց հպարտության, փառքի և հաղթանակի խորհրդանիշ, ազգ, որն անկոտրում է. . .

Եթե մի պահ հեռանանք արաբական արևելքից և ուղղվենք արաբական արևմուտք, ապա կտեսնենք, որ իրավիճակն այնքան էլ լավ չի եղել: 1881 թվականին Ֆրանսիան և Իտալիան իրենց գերիշխանությունը հաստատեցին արաբական արևմուտքի երկրների վրա: Գաղութատերը ռճրագործություններ իրականացրեց արաբ ժողովուրդների դեմ՝ գերիշխանություն հաստատելով նրանց վրա քաղաքական առումով, ինչպես նաև սպառելով նրանց մարդկային և նյութական հարստությունները: Եվ ահա այդ ժամանակ երևան է գալիս արաբ բանաստեղծ Աբու ալ-Կասիմ ալ-Շաբին, մի բանաստեղծ, ով երկար կյանք չունեցավ: Աբու

ալ-Կասիմ ալ-Շաբին, ով կրում էր «կանաչապատ Թունիսի բանաստեղծ» մականունը, ապրեց այնպես, որ կարծես թե Թումանյանի հոգին հառնեց արևելքում, որ վերածնվի արևմուտքում՝ հայտարարելով փառահեղ մի բանաստեղծի ծնունդի մասին և ապացուցելու, որ տարիքը որոշվում է ոչ թե ապրած տարիների թվով, այլ նրանով, թե ինչ է արել տվյալ անձը իր կյանքի ընթացքում: Այդ թունիսյան բանաստեղծը, ով ապրեց ընդամենը 25 տարի, չիմացավ հանգստության և երջանկության համն իր սրտի անբուժելի հիվանդության պատճառով և չնայած իր կարճաժամկետ կյանքին՝ նա իր կյանքի մեծ մասն անց է կացրել հիվանդանոցներում՝ փնտրելով իր ցավերը մեղմացնող դարման և իրեն նոր կյանք հաղորդող միջոց, սակայն դա նրան չի հաջողվել անել: Այնուհանդերձ, այդ ժամանակահատվածում հենց ինքն է նորովի ոգի հաղորդել արաբական պոեզիային: Դա մի ժամանակաշրջան էր, երբ գրականագիտությունն ու պոեզիան այնպիսի հետընթաց և անկում էին ապրում, ինչպես ողջ արաբ ժողովուրդների գիտական, մտավոր, տնտեսական և մշակութային կյանքն էր՝ սկսած թուրքական գերիշխանությունից մինչև օտարի օկուպացիան, որոնք էլ ամբողջովին սպառեցին գիտական և մտավոր կյանքը, ինչպես նաև մարդկային և նյութական հարստությունները:

Բանաստեղծը երբեմն երգում ու արտասանում էր իր բանաստեղծությունները գաղութատիրոջ առաջ, և երբեմն էլ կյանքից հուսահատված վատատես մարդկանց առաջ՝ միահյուսելով իր պոեզիան կյանքի ու մահվան, ցավերի ու հույզերի հետ:

Այստեղ փոքր-ինչ կանգ կառնենք՝ ուսումնասիրելու և համեմատելու համար Թումանյանի և ալ-Շաբիի բանաստեղծությունները՝ ևս մեկ անգամ ապացուցելու այն փաստը, որ արաբների և հայերի կյանքը մեկը մյուսի արտացոլանքն է, և

որ պոեզիան այդ իրադարձությունները լուսաբանող գրանցամատյան է: Հմուտ բանաստեղծը տիրապետում է իր բարոյական և մտավոր գործիքներին, ինչը ակներև է Թումանյանի և Շաֆիի պոեզիայում:

Ստորև կներկայացնենք որոշ օրինակներ, որոնք ավելի հստակ կերպով ցույց կտան Թումանյանի և Շաֆիի պոեզիաների միջև առկա նմանությունը՝ սկսած բառերի ընտրությունից մինչև ստեղծագործական և մտավոր նմանություն:

رفض الظلم

يبدو أن طومانيان بلغ من الشعور بالظلم مبلغه فقد ضل القلب والفكر طريقهما
وعاد غير قادر على التفكير والشعور وأضحى قلبه يتقلص ويبكي بحسرة ومرارة
فالبكاء هو الطريق الوحيد الذي يفرغ فيه شحنات همه وحزنه. وهو يرى القطعان
الهمجية تعوي وتخرب في بلده وتحوله إلى وطن الآلام ووطن اليتامي، ولكن يختم
كلماته بنظرات تحدي وثقة بالنصر لكنك ستبقى حيا واقفا في قلب جراحك يا
وطني.

يقول طومانيان:

منذ عهد بعيد وأنا ألاحق المجهول

قلبي وفكري يضلان في اللانهائي

قلبي يتقلص وأبكي بحسرات مريرة.

يا وطن الألم يا وطني

يا وطن اليتامي يا وطني.

ولكنك ستظل حيا واقفا في قلب جراحك.

Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռվում
Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն է թափառում,

Բայց՝ կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի
քեզ
Մղկըրտում է սիրտըս անվերջ քո թառանչից աղեկեզ,
Ու գաղթական զավակներիդ լուռ շարքերից
ուժասպառ,
Ե՛վ գյուղերից, և՛ շեներից՝ տըխո՛ւր, դատարկ ու
խավար,
Զարկվա՛ծ հայրենիք, Զըրկվա՛ծ հայրենիք:

ونجد الشابي يردد ما يقوله طومانيان: بأنه التزم الصمت وكأنه غير مكترث لما
يجرى حوله من مصائب في بلده، عندما زادت المصائب والظلم بالرغم من أنه
الذي لا يصمت فهو الحالم وهو الصائح في همس النسيم، ولكن تاهت نفسه وفقد
شعوره عندما وجد مجد بلاده مصلوب على حسك الآلام يغمره الدم، وينادي الظلم
محذرا إياه من الثأر الذي سيكون على يد رجال لا يخافون الموت سيحطمون
أغلال الظلم والذل.

تُسالني: مالي سكتٌ، ولا أهب..... بقومي، وديجورُ المصائب مُظْلِمٌ
تصيحُ إلى همس النسيم، وتحلمُ سَكْتُ، وقد كانت قناتي غُصَّةً
على حَسَكِ الآلم، يغمره الدَّمُ أرى المجدَ معصوب الجبين مُجْدَلًا
يهبُ إلى الجَلَى، ولا يَتَبَرَّمُ» وقد كان وضاح الأسارير، باسمًا
يرويدك! إن الدَّهر يبنني ويهدمُ فيا إيها الظلمُ المصْعُرُ حدَّه

Ինձ հարցրեցին ինչու եմ լուռ, եւ չեմ կանչում իմ
ազգին, դժբախտությունների թանձր մշուշն է կանչում
զեփյուռի շշուկին, լռություն, սակայն իմ համոզմունքը
զգում է ցավը, ես տեսնում եմ ի հայտ եկող հյուսված
փառքի պսակը փակ աչքերով, որը հետզհետե

մոտենում ժպտադեմ, բայց եւ այնպես աշխարհը
կառուցվում եւ կործանվում անարդարության միջոցով:

التحدي والإصرار

يلتقي طومانيان مع الشابي في امتلاكهما روحا التحدي والإصرار على النصر
والبقاء رغم كثرة التحديات ومجابهة الصعوبات، وهي الروح التي استمدا منها
الشاعران قوتهما وصمودهما في وجه مصائب الحياة.

يتحدى الشابي المرض والعدو بكلمات صارمة وقوة وعزيمة ولم يكتف بالبقاء
في صفوف المشاهدين يراقب ما يجري حوله من أحداث بل سيكون مثل النسر
يراقب من بعيد ويتدخل بنفسه إذا لزم الأمر ذلك، وسيكون هدفه الوصول
للشمس ويقصد بها هنا الحرية والعدالة ولن توقفه السحب قسوة الطبيعة.

يقول الشابي سأعيش رغم الداء والأعداء..... كالنسر فوق القمة السماء
أرنو إلى الشمس المضيئة هازنا..... بالسحب والأمطار والأنواء

Ինչքան էլ ցավեր ու թշնամիներ լինեն,
ես կապրեմ արծվի նման հպարտ զագաթին,
և կնայեմ լույս ճառագող արեգակին՝
անտեսելով ամպերն, հողմերը ու անձրևներն:

يقول طومانيان:

ويشاركه طومانيان الفكرة في قوله أربعون عاما وأنا أسير في الحياة شامخا
منتصب القامة صبوراً لم أهتز هدفه الوصول إلى القمم العالية ليصل للنور
ويقصد بالنور الحرية والعدل كما قصدها الشابي،

طوال أربعين عاما وأنا أترق طريق الحياة، منتصب القامة صبورا، نحو الذرى
العالية نحو النور نحو المجهول...

Քառասուն տարի բռնած ճանապարհ՝
Շիտակ, անվեհեր,
Գընում եմ ես վեր՝
Դեպ Անհայտը:

الربيع

عندما يداعب طومانيان الربيع ويصف الورد بأنهم أولاد الشمس التي توقظهم
من نومهم وتقولوا لهم انهضوا فيخرجون هامتهم من تحت غطاءهم ويفتحون
عيونهم فرحين بقدمها. وتغلب على صور طومانيان الشعرية بيئة الثلجية
فيشبه الثلج بالغطاء الذي تلتحف به الورود بالرغم من برودته ولكن تصالح
طومانيان مع طبيعته حولت قسوة وبرودة الثلج لغطاء دافئ تلتحفه الورود
لحمايتها من برد الشتاء.

أين ذهبت الورود إنها نائمة تحت الأرض ساكنة يلتحفون بغطاء ناصع البياض
طول الشتاء.

وعندما تعود شمس الربيع بأشعتها الممزوجة بالحياة مع زمهرير الشتاء،
ويأخذا غطاء الثلج معه وهو يقول مفاجا لهم: انهضوا يا أولادي فيخرجون
هاماتهم ويفتحون أعينهم.

Ծաղիկները

-Ո՞ր գնացին ծաղիկները:

Սո՛ւս, քնած են հողի տակ,

-Տաք ծածկված ողջ ձմեռը

Ձյուն-ծածկոցով սպիտակ:

Կգա գարնան արևն էլ ետ

Իր շողերով կենդանի,

Ձմռան սաստիկ ցրտերի հետ
 Ձյուն-ծածկոցը կտանի:
 «Ելե՛ք, կասի, իմ մանուկնե՛ր».
 Ու հենց նրանք իմանան,
 Դուրս կը հանեն գլխիկները,
 Աչիկները կբանան:

وعلى الجانب الآخر نجد الشابي يصور لنا الربيع بالكائن الحي والروح الحاملة
 والشباب في قوته يسير بجلبابه المعطر، ومع صور الورد التي تنبثق من أشعة
 الشمس يضيف العشب الذي هو مصدر الرزق والخير لأهل البيئة الصحراوية
 لما يحمله من غذاء لحيواناتهم وأغنامهم التي يستمدون منها قوتهم وطعامهم.

كَانَ الرَّبِيعُ الحَيُّ رَوْحاً، حَالِماً غَضَّ الشَّبَابُ، مُعَطَّرَ الْجِلْبَابِ
 وَالْأَفْقُ يَمْلَأُهُ الحَنَانُ، كَأَنَّهُ لِلشَّمْسِ، فَوْقَ الْوَرْدِ والأَعْشَابِ
 شَعَرَ السَّعَادَةِ وَالسَّلَامِ، وَنَفْسُهُ سَكَّرَى بِسِحْرِ الْعَالَمِ الْخِلَابِ

Կենդանի գարունը այն ոգին էր, որը երազում էր.....
 իր ծաղկման եւ բազմաբույր շրջանի գալուստին
 Եվ հորիզոնը լցված էր քնքշությամբ, որը կարծես
 արեւի համար, վարդերից եւ խոտերից էլ վեր էր
 երջանկության եւ խաղաղության պոեզիա էր, եւ հենց
 ինքն էլ հարբած գրավիչ աշխարհի
 կախարդանքով:

المرأة

صورة المرأة في شعر أبي القاسم الشابي:

رفع أبو القاسم الشابي مكانة المرأة ومنزلتها من مجرد جمال حسي يلتقي
بشهوات الرجل إلى صورة شفافة عذرية طاهرة في تجربة وجدانية سامية نبيلة
، فصورة المرأة عنده محاطة بهالة من النور والسمو والإجلال وحيث يمتزج
الحب بالتصوف بالعفة وكأن المرأة في مرتبة مقدسة لديه ويتضح هذا بجلاء
في ديوانه (صلوات في هيكل الحب)

"عذبة أنت ، كالطفولة ، كاللحن كالصباح الجديد!

كالسماء الضحوك ، كالليلة القمر ، كالورد ، كابتناسم الوليد.

يا لها من طهارة ، تبعث التقديس في مهجة الشقي العنيد.

Դու հաճելի ես, ինչպես

Մանկությունն ու մեղեդին, ինչպես այգը թարմ:

Ինչպես ժպտադեմ երեքը, ինչպես լուսնկա գիշերը,

ինչպես վարդը կամ ժպիտը նորածնի:

Օ , ինչպիսի մաքրություն, որ նույնիսկ նվիրման ոգի է
հաղորդում կամակոր ու չարաճճիի սրտին:

ووصفه للمرأة يلتقي مرة أخرى وليست الأخيرة مع طومانيان الذي رصد في

أشعاره المرأة ليس فقط بجمالها الظاهري وأنوثتها بل الجمال العذري المرفع عن

الشهوات كما رصد في الحبيبة الحزن والبؤس والشكوى وكأن محبوبته هي

وطنه الجريح النازف وبالرغم الآلام تبدو وكأنه تعيش في سلام فيقول:

أنا أحببت الورد الباهتة التي تأذت وجنتيها من الحب، وفي عينيها السوداء

سلام هادئ، أنا احتفظت في أعماق قلبي بسر صامت عن الحب ولن أتغنى به

أمام الملاء، إلا إنني غير قادر على حفظه، آآه ما أصعب الصبر لكن لن أقول

أنا محظوظ وكيف أحببت...

ԻՄ ՍԵՐԸ

Ես սիրել եմ վարդը տըժգույն
 Միրուց տանջված այտերի,
 Մելամաղձոտ խաղաղություն
 Զույգ սևորակ աչքերի:
 Ես պահել եմ սրտիս խորքում
 Մի լուռ գաղտնիք սիրային,
 Եվ այն երբեք, ոչ մի երգում
 Հայտնելու չեմ աշխարհին:
 Բայց և պահել անկարող եմ,
 Օ՛, դրժվար է համբերել,
 Չասել՝ ինչով բախտավոր եմ,
 Չասել՝ ինչպե՛ս եմ սիրել:

РЕЗЮМЕ
СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ СТИХОТВОРНЫХ
ПРОИЗВЕДЕНИЙ ОВАНЕСА ТУМАНЯНА И АРАБСКИХ
ПОЭТОВ
АКОПЯН ВАГЕ
МЕРВАТ ГОМАА

Авторы статьи подвергают сравнительному анализу стихотворные произведения Ованеса Туманяна и арабских поэтов, раскрываются как их общие черты, так и различия. В общем контексте идущих из глубины веков армяно-арабских культурных и интеллектуальных связей, в частности, проводится интересная параллель между стихами Ованеса Туманяна и арабского поэта Абу аль-Касима аль-Шаби.

Ключевые слова: армяне, арабы, поэт, Ованес Туманян, Абу аль- Касим аль-Шаби, поэзия отношений.

ABSTRACT
COMPARATIVE ANALYSIS OF THE VERSES OF HOVHANNES
TUMANYAN AND THE ARAB POETS
VAHE HAKOBYAN
MERVAT GOMAA

The authors of the article make a comparative analysis of the poetic works of Hovhannes Tumanyan and Arab poets, disclose both their common features and differences, in the general context of Armenian-Arab cultural and intellectual ties that were originated many centuries ago. In particular, an interesting parallel is drawn between the verses of Hovhannes Tumanyan and those of the Arab poet Abu al-Qasim al-Shabbi.

Keywords: Armenians, Arabs, poet, Hovhannes Tumanyan, Abu al-Qasim al-Shabbi, relationship poetry.

ЮБИЛЕЙНАЯ РУССКАЯ КРИТИКА ОБ ОВАНЕСЕ ТУМАНЯНЕ

МАГДА ДЖАНПОЛАДЯН

В 1969 году в Советском Союзе торжественно, на правительственном уровне был отмечен 100-летний юбилей Ованеса Туманяна. Юбилейные мероприятия, в числе которых были и торжественные заседания, и научные сессии, и различные вечера, прошли не только в Ереване и Дсехе – на родине поэта, но и в Москве, Ленинграде и других городах страны. Подготовка к юбилею началась более чем за год: были созданы комиссии, запланированы и осуществлены различные издания произведений поэта на русском и других языках. Сегодня, спустя полвека, эти дни стали уже историей. И прекрасно, что есть возможность воскресить эту историю – благодаря двум сборникам, вышедшим в свет уже после юбилея, – на армянском (1972) и русском (1974) языках, под названием: «Туманян–100. Юбилейная летопись». В этих книгах документально воспроизведен весь процесс проведения юбилея; здесь помещены различные материалы – статьи, выступления, доклады о Туманяне – не только армянских общественных деятелей, писателей, поэтов, литературоведов и критиков, но и представителей самых разных национальностей. Все эти материалы спустя полвека нуждаются в исследовании и оценке, но **отдельного внимания заслуживают мысли о Туманяне, высказанные не армянами:** нам, армянам, особенно интересно, как воспринимали Поэта всех армян иноязычные читатели, что их привлекло в наследии Туманяна и что запомнилось, как интерпретируют они его творчество, с которым познакомились через переводы. Ведь известно, что

перевод, даже близкий к совершенству, не может стопроцентно воссоздать всю художественную силу подлинника. И все же, как показывают эти материалы, даже у иноязычных читателей есть свой Туманян, которого они любят, цитируют, исследуют... Значит, великий армянский национальный поэт вошел в их духовную жизнь, и это – еще одно свидетельство общечеловеческого значения его творчества.

Конечно, в рамках одного доклада невозможно охарактеризовать и оценить все публикации сборника «Туманян–100» 1974 года, принадлежащие неармянскому читателю. Прежде всего остановимся на статье известного русского поэта и переводчицы Марии Петровых. Ее суждения об Ованесе Туманяне имеют особое значение: ведь она принимала активное участие в создании ереванского юбилейного трехтомника Туманяна¹, который по праву считается лучшим русским изданием поэта. Мария Петровых была редактором первого – поэтического тома. О том, с какой ответственностью относилась она к этой работе, можно узнать из книги Левона Мкртчяна о Петровых «Так назначено судьбой»², где опубликованы и ее письма автору в процессе подготовки переводов к изданию. Редакторская работа помогла М. Петровых особенно глубоко проникнуть в мир Туманяна. Свое восприятие и оценку этого мира она изложила в статье «Его поэзия бессмертна», которая была впервые опубликована в республиканской газете «Коммунист» от 23 сентября 1969 года.

¹ Ов. Туманян. Избранные произведения в трех томах. Составители Л. Ахвердян и Л. Мкртчян. Ереван, «Айастан», 1969.

² Л. Мкртчян. Так назначено судьбой. Заметки и воспоминания о Марии Петровых. Письма Марии Петровых. Ер., изд. РАУ, 2000.

С самого начала статьи можно заметить отсутствие торжественной парадной лексики, традиционных возвышенных «юбилейных» слов. Петровых пишет с особой теплотой и задушевностью, и со свойственной ей искренностью сразу отмечает основную тему своей статьи: «Я же могу писать о поэзии Туманяна, лишь попытаюсь ответить самой себе: что всего дороже для меня в этом замечательном поэте?» И первый ее ответ таков: «Больше всего люблю и ценю в Туманяне его внутреннюю свободу, независимость, самобытность его поэтической мысли, всегда глубоко человеческой»³. По мнению Петровых, эта «внутренняя свобода» пера Туманяна ярче всего проявилась в его четверостишиях, которым она дает очень высокую оценку: «Глубоко проникновенные, написанные с присущей Туманяну сдержанной страстностью, произнесенные тихим голосом – они являются и беседой поэта с самим собою, и беседой его с мирозданием. **Четыре строки заключают в себе целый мир пережитого, передуманного** (выделено мной – М.Д.), целый мир предвидений, предчувствий. Каждое четверостишие – драгоценность». Выделенные нами слова из этой характеристики четверостиший очень близки мнению самого Туманяна, высказанному им незадолго до смерти: «Четверостишия – заметил он в одной из бесед, – очень сильные штрихи, они – биография моей души»⁴.

М. Петровых отмечает, что некоторые творения поэта, ставшие классикой армянской литературы, были написаны им еще в юном возрасте. «Подумать только, – пишет она, – одно из

³ М. Петровых. Его поэзия бессмертна. См.: Туманян-100. Юбилейная летопись. Ереван, «Айастан», 1974, с.310. Далее при ссылках на эту статью страницы указываются в тексте.

⁴ Н. Туманян. Воспоминания и беседы. Ереван, «Луйс», 1969, с. 305 (на арм. яз.).

наиболее совершенных стихотворений, блистательную маленькую поэму «Пес и Кот» Туманян написал, когда ему было 17 лет!» (с. 310). Здесь Петровых допускает некоторую неточность в жанровом определении, называя «Пес и Кот» «маленькой поэмой». Так же – «маленькими поэмами» – называет она и «Проклятую невестку», и «Парвану», и Каплю меда», в то время как эти произведения относятся к жанру баллады и помещены они в редактируемом ею томе в разделе «Легенды и баллады». Но это чисто литературоведческое, теоретическое определение жанра для Петровых как поэта было, думается, не столь важно. Гораздо важнее было то художественное, эстетическое впечатление от произведений Туманяна, которое она и постаралась выразить в своей статье. Примечательно, что, говоря о произведениях этого жанра, М. Петровых обратила внимание и на связанную с «Каплей меда» важную деталь, характеризующую удивительную человеческую натуру, личность Туманяна: «Нельзя забыть о том, – пишет она, – что одна из лучших маленьких поэм – «Капля меда» была создана Туманяном в крепости, в тюрьме. **Какой нравственной силой надо было обладать** (выделено мной – М.Д.), чтобы, находясь в заключении, написать эти веселые, стремительные, жгучие, саркастические стихи!» (с. 310).

Значительная часть статьи уделена одному из шедевров Туманяна – его поэме «Ануш». Но Петровых не пишет об идейно-тематическом содержании поэмы, не характеризует образы героев. Она удивительно точно подметила и выделила черты художественного своеобразия и богатства поэмы. Вот некоторые наблюдения автора (приводим их с сокращениями – М. Д.): «Поэма поражает обилием и разнообразием звучащих в ней голосов. Это не только человеческие голоса, но и голоса природы... С глубоким волнением звучит и голос самого поэта:

поэма начинается воспоминаниями о детстве и юности, проведенными в Лори... Исключительное мастерство Туманяна сказалось в совершенно незаметном, естественном переходе от этих воспоминаний к самому сюжету. Большая поэма не кажется длинной: композиция ее совершенна, развитие событий, чувств, взаимоотношений до предела напряжено, ритмы, продиктованные развитием поэтической мысли, – разнообразны. ...Героев поэмы мы видим всегда в минуты их крайнего душевного напряжения. Над поэмой будто непрерывно идут и сгущаются темные тучи, а редкие проблески солнца ...лишь подчеркивают грозовой мрак. ...Только в двух строфах эпилога автор смягчает напряженность трагической поэмы: души погибших влюбленных в ночь под Вознесение встречаются на небе, как две звезды» (с. 311)... Эти наблюдения о поэтике «Ануш» очень верно подмечены и говорят о тонком художественном чутье автора.

Небольшая статья Марии Петровых интересна и некоторыми параллелями, которые она проводит между отдельными мотивами и эпизодами в творениях Туманяна и в образцах русской и мировой классики. Так, о поэме «Лориец Сако» она пишет: «Пересечение в этой поэме реалистического плана с волшебным, фантастическим напоминает самые пленительные и «жуткие» рассказы Гоголя из «Вечеров на хуторе близ Диканьки» (с. 310). А описание душевного состояния Ануш после убийства Саро вызывает у Петровых такие ассоциации: «Когда ...по весенним лугам идет Ануш, лишившаяся рассудка, бредящая, поющая безумную песню, – невольно вспоминаются и пушкинская Мария из «Полтавы», и шекспировская Офелия» (с. 311). И еще на одну очень важную мысль в этой статье хотелось бы обратить внимание: «Когда говорят о том, что Туманян писал «просто», не следует

забывать, что **эта простота доступна лишь редкому дарованию и великому мастерству**» (с. 311, выделено мной – М.Д.). Отметив, что русский читатель знает и любит поэзию Туманяна, Петровых заканчивает статью мыслью о необходимости совершенствовать русские переводы: «поиски ее (поэзии – М.Д.) наилучшего воплощения на русском языке не прекратятся никогда, ибо поэзия Ованеса Туманяна бессмертна» (с. 312).

Несомненною литературно-критическую ценность представляет статья видного осетинского поэта, переводчика, литературоведа и публициста Нафи Джусойты «Он смотрел на мир, как солнце». Статья была опубликована в московском журнале «Дружба народов» (1969, № 10)⁵. Она написана в художественно-очерковом стиле, разделена на небольшие части, в каждой из которых автор высказывает свои мысли и наблюдения по разным вопросам, связанным с миром Туманяна, его творчеством и личностью. Причем он дважды подчеркивает, что это мысли читателя, знакомящегося с Туманяном через переводы. «Нетрудно догадаться, – пишет Джусойты, – что о Туманяне-поэте у нас, читающих его в переводах, весьма приблизительное представление. Ведь чем самобытнее поэт, тем больше он теряет в передаче на другой язык, как бы искусен ни был переводчик» (с. 347, см. также с. 345).

Заметим, что, будучи по национальности осетином, Джусойты читал армянского поэта в русских переводах: на осетинском языке юбилейный сборник избранного Туманяна вышел в свет в 1970 году⁶. Но при этом национальная

⁵ Статья Н. Джусойты цитируется по сборнику «Туманян – 100. Юбилейная летопись» с указанием страниц в тексте.

⁶ См. с. 369 Юбилейной летописи «Туманян-100».

принадлежность Нафи Джусойты – уроженца горного края – не могла не сказаться на ракурсе восприятия им туманяновской поэзии. И не случайно в начале статьи после некоторых обобщающих характеристик творчества Туманяна автор погружает читателя в мир родной природы поэта: он описывает реку Девбет, называет все горы Лорийского края, заметив: «Все они в поэзии Туманяна в одном ряду с его любимыми героями. ...Зеленые горы Лори – друзья его детства, родные до слез. И говорит о них поэт, как об односельчанах» (с. 345). Будучи сам горцем, Джусойты особенно тонко уловил туманяновское восприятие родной природы и ее отображение в своем творчестве. И это стало для осетинского поэта, по его собственному признанию, тропинкой, по которой он входил и погружался в мир Туманяна. «Да, Лорийское ущелье невыразимо прекрасно, – пишет он. – Мне понятны теперь и неистребимое пристрастие Туманяна к горам, и тот едва уловимый тембр его поэтического голоса, по которому безошибочно узнаешь горца. ...Туманяну не суждено было вернуться к лорийским горам, но он остался верен им в своей поэзии. **И мне, горцу, это дает психологический ключ к особенностям его поэтического мироощущения**» (с.346, выделено мной – М.Д.).

Обращаясь непосредственно к тем сторонам творчества Туманяна, которые он считает наиболее важными, Джусойты подчеркивает его роль в развитии народного армянского литературного языка, и поскольку он – русский читатель Туманяна – не может показать это на конкретных примерах, автор ссылается на авторитетные мнения Ваана Терьяна и Стефана Зорьяна, цитирует их (что свидетельствует о его знакомстве и с критической литературой о Туманяне на русском языке). В частности, он приводит точные слова Зорьяна

о том, что искусство Туманяна «вобрало и сконцентрировало в себе народный стиль и формы выражения, и прозрачную чистоту родного языка»; о том, что Туманян ... «одарен величайшим чувством меры и тончайшим языковым чутьем, чувством слова», что он «крупнейший мастер национальной формы и национального стиля среди наших писателей» (с. 346 - 347).

Другая важная особенность творчества Туманяна, которую выделяет Джусойты, – это отраженные в наследии поэта «тысячелетия армянской истории, национальная судьба армян, армянская действительность конца XIX начала XX веков». При этом автор подчеркивает, что у Туманяна «собственно исторических произведений нет», что прошлое армянского народа не интересовало его в плане художественного воплощения, но поэт «неотступно вопрошал» это прошлое, «чтобы найти решение проблем современных и предугадать будущее» (с. 347). Как отмечает Джусойты, боль судьбы родного народа никогда не забывалась Туманяном. Он называет поэму «Старая война» и различные стихотворения, в которых «трагическая судьба народа была для Туманяна непреходящей тревогой и безысходной болью» (с.347). И кульминацией этой выстраданной Туманяном боли он считает стихотворение «Панихида» (это стихотворение – «Հոգեհալսիւթիւն» – в переводе Наума Гребнева печатается под названиями «Поминование», «Оплакивание»), написанное в трагическом для армян 1915 году и обращенное к жертвам Геноцида. Джусойты цитирует отрывок из этого стихотворения, завершая цитату его заключительными строками:

Мир праху, сироты мои, нет окончанья бедам –
Как в век пещерный, человек остался людоедом.

(с. 348).

Стихотворение это Джусойты охарактеризовал как «величаво-скорбный шаракан, поминальную песню невероятной силы, подобную хору древнегреческой трагедии» (с. 348). Это настолько точная и яркая характеристика, что она так и просится в цитату.

Очень глубоко вник Нафи Джусойты в суть народности Туманяна. Здесь, думается, сказалось наличие у автора публицистической грани дарования и интереса к критико-публицистическому наследию Туманяна. Джусойты ссылается на публицистические статьи поэта, в которых Туманян раскрывает причины тяжелого положения народа, специфики армянского народного характера. «В интерпретации народного характера, – пишет автор, – Туманян оставался на почве историзма» (с.349). Джусойты выделяет также очень важную черту туманяновской народности и истинного патриотизма: «Он был далек от идеализации своего народа. Он считал, что художник вправе не только гордиться своей нацией, но и стыдиться всего несовершенного и негуманного в ее историческом и нравственном опыте. Художник – и певец, и судья» (с. 349). Пятый и шестой разделы статьи посвящены раскрытию не только сути туманяновской народности, но и общественно-социальных взглядов поэта. И здесь Джусойты также выделяет характернейшую черту мировоззрения Туманяна: «Дух доброжелательства, уважения ко всем народам был неистребим в Туманяне. **Он резко разграничивал народы и правителей** (выделено мной- М.Д.), этим пронизано все его творчество, даже легенды, сказки («Шах и разносчик», «Кувшин с золотом» и эпос (слово старика в «Давиде Сасунском»)» (с. 350). Джусойты очень точно выделил еще одну характерную черту народности армянского поэта:

«Особенность народности Туманяна, его «собирающей армянской психологии» в том, что Туманян **не пишет о народе со стороны. Он выражает его его же собственными средствами**» (выделено мной – М.Д., с. 351). И эту черту автор считает особой: «Новизна тем, идей, героев Туманяна в их исключительной внутренней содержательности, – отмечает автор. – Сочувственное изображение бедных крестьянских детей можно найти в любой литературе. Но Гикор – один в армянской прозе. Он совсем новый персонаж, и его место – в ряду таких типов, как Ванька Жуков и Гаврош» (с. 351-352).

Безусловный интерес представляют, на наш взгляд, отдельные наблюдения Н.Джусойты о Туманяне как художнике слова, о присущей ему манере письма. Вот одно из них: «Как ни многолико творчество Туманяна, в нем всегда угадывается незримое присутствие его неповторимо оригинальной личности. ...А порой и угадывать не надо: в лирических отступлениях автор сам раскрывает себя, как, скажем, в «Ануш»» (с. 352-353). Что касается поэмы «Ануш», то примечательны и другие мысли автора о ее поэтике. Он отмечает, что Туманян непосредственно не вмешивается в повествование, но «слезы и улыбки, грусть и радость автора – самостоятельный компонент произведения»(с. 353). И еще: «Каждому персонажу он будто бы дал оригинальную музыкальную партию – даже полусонному старику, который всего-то и видел, что две тени, скрывшиеся в ущелье. Ритмическое и интонационное богатство поэмы необыкновенно, а ведь трагедии бывают порой утомительно однообразны даже у классиков» (с. 353). Джусойты делится еще одним своим личным наблюдением о характере туманяновской поэзии: « В его поэзии много движения, взрывов энергии, темпераментных жестов. Специалисты радостно отмечают:

поэзия действия! Мне же кажется, что в ней немало и тихого, задумчивого созерцания. Односторонность вообще чужда его таланту и мышлению» (с. 353). Эта мысль осетинского поэта очень интересна, убедительна и может быть проиллюстрирована отрывками из произведений Туманяна разных жанров – стихотворений, четверостиший, поэм.

Начало и конец статьи Нафи Джусойты объясняют ее заголовок – «Он смотрел на мир, как солнце». В самом начале статьи автор пишет, что, входя в мир поэзии Туманяна, «с первых же шагов начинаешь ощущать его **величие, подобно прикосновению солнечных лучей** (выделено мной - М.Д.). Оно не ошеломляет великолепием, не подавляет превосходством, но незаметно выпрямляет тебя, приобщает к своей возвышенной сути и увлекает к вершинам красоты и благородства» (с. 344). А в конце статьи автор признается: «... У меня после чтения Туманяна каждый раз возникает ощущение, словно **на душу падает солнечный луч** (выделено мной - М.Д.), только что пробившись сквозь пелену облаков» (с. 354). Цитируя слова Туманяна из его речи, обращенной к начинающим писателям: «Смотрите на мир так, как смотрит солнце»⁷, Джусойты завершает свою статью тем, что именно так смотрел на мир сам поэт.

* * *

Мы рассмотрели всего две статьи об Ованесе Туманяне, авторы которых познакомились с творчеством Поэта всех армян по русским переводам. Суждения Марии Петровых и Нафи Джусойты показывают, что даже через переводы они глубоко

⁷ Ов. Туманян. Избранные произведения в трех томах, том 3. Ереван, «Айастан», 1969, с. 278.

проникли в мир туманяновского творчества и высказали очень ценные, порой и новые мысли и наблюдения, несомненно, обогащающие туманяноведение.

ԱՄՓՈՓՈՒՄ
ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՌՈՒՄ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ
ՄԱԳՐԱ ՋԱՆՓՈԼԱԴՅԱՆ

Հոդվածում ներկայացված և քննության են առնված Հովհաննես Թումանյանի մասին ռուս բանաստեղծ և թարգմանիչ Մարիա Պետրովիչի և օսեթական բանաստեղծ Նաֆի Ջուսոյտիի քննադատական նյութերը՝ զետեղված “Թումանյան-100” հոբելյանական ժողովածուում / ռուսերեն, Եր., 1974/: Տարբեր օրինակներով ցույց է տրված, որ հեղինակները դրսևորել են Թումանյանի ստեղծագործության ուշագրավ և հետաքրքիր ընկալումներ, արտահայտել են արժեքավոր մտքեր, որոնք հարստացնում են թումանյանագիտությունը և հավաստում են հայ մեծ բանաստեղծի համաշխարհային արժեքը :

Բանալի բառեր. Թումանյան, 100-ամյակ, ռուս քննադատություն, Պետրովիչ, Ջուսոյտի, արժեքավոր մտքեր, դիտարկումներ, թումանյանագիտության հարստացում:

ABSTRACT
RUSSIAN JUBILEE CRITICISM ABOUT TUMANYAN
MAGDA JANPOLADJAN

Critical materials on Russian poet and translator Maria Petrovich and Ossetian poet Nafi Jusoyti on Hovhannes

Tumanyan are presented and discussed in the "Tumanyan-100" jubilee collection / Russian, Yer., 1974 /. Various examples show that the authors have shown valuable and interesting perceptions on Tumanyan's work, expressed valuable ideas that enrich Tumanyan studies and attest to the world the value of the great Armenian poet.

Key words - Tumanyan, 100th Anniversary, Russian Criticism, Petrovich, Jusoyti, Enlightenment, valuable thoughts, observations, enrichment of Tumanyan studies.

արմատները թաքնված են հազարամյակների խորքում: Նա իր թվագրությունն սկսում է այն ժամանակներից, երբ սոցիալ-կենսաբանական ու մտավոր էվոլյուցիայի որոշակի փուլում մարդը, ի տարբերություն վայրենու, սկսեց իրեն առանձնացնել բնությունից, ճանաչել շրջապատող աշխարհն ու ինքն իրեն:

Անդրադառնալով նախամարդու մտածողության մեջ անտրոպոմորֆիզմի տեղի հարցին, Ն.Չերնիշևսկին գրում է. «... անգարգացած մարդը բնության մեջ տեսնում է մարդուն նմանվող ինչ-որ բան, կամ տեխնիկապես արտահայտված՝ բնության մեջ մտցնում է անտրոպոմորֆիզմ, նրանում ենթադրում է մի այնպիսի կյանք, որը նման է մարդկային կյանքին»³: Հենց այդ իմաստով էլ անտրոպոմորֆիզմը պետք է դիտել որպես արտաքին աշխարհի ճանաչման, նրա առարկաների ու երևույթների ընկալման յուրահատուկ ձև:

Անտրոպոմորֆիզմի վառ ու պատկերավոր դրսևորումների ենք հանդիպում արդեն աշխարհայացքի առաջին պատմական տիպի՝ դիցաբանության տիրապետության դարաշրջանում, և կարելի է ասել, որ անտրոպոմորֆիստական

անտրոպոմորֆիզմն առաջանում է որպես աշխարհայացքի նախասկզբնական ձև և արտահայտվում է ոչ միայն կենդանիների մարդկային հոգեկան կերտվածքով օժտելու, այլև անշունչ առարկաներին գործելու, ապրելու և մեռնելու, ապրումներ ունենալու ընդունակություն վերագրելու մեջ (օրինակ, «աշխարհը քնած է», «երկինքը մռայլվում է» և այլն) (տե՛ս Философский энциклопедический словарь, Издательство «Советская энциклопедия», М., 1983, стр. 30): Անտրոպոմորֆիզմն իր ամբողջության մեջ նույն ոգով է մեկնաբանվում նաև «Փիլիսոփայական հանրագիտարանի»՝ դրան նվիրված համեմատաբար ավելի ծավալուն հոդվածում (տե՛ս Философская энциклопедия, Государственное научное издательство «Советская энциклопедия», т. 1, М., 1960, стр 80):

³ Чернышевский Н.Г. Избранные философские сочинения, т. 1, М., 1950, стр. 245.

շնչով է տոգորված աշխարհի դիցաբանական պատկերը:

Իր մի շարք կողմերով անտրոպոմորֆիզմի կնիքն է կրում դիցաբանությանը փոխարինելու եկած աշխարհայացքի մյուս պատմական ձևը՝ կրոնականը: Հետաքրքիր է նկատել, որ աշխարհի անտրոպոմորֆիստական ընկալումը, որոշ կերպարանափոխություններով հանդերձ, շարունակում է պահպանվել ու արմատավորվել նաև աշխարհայացքի հաջորդ՝ պատմականորեն առավել հասուն ձևի՝ փիլիսոփայական աշխարհայացքի տիրապետության դարաշրջանում:

Այս առիթով նշենք, որ աշխարհի փիլիսոփայական պատկերը, փիլիսոփայությունն իր ամբողջության մեջ ինչպես Արևմուտքում, այնպես էլ Արևելքում սկսել է ձևավորվել դիցաբանության և կրոնի հետ միահյուսված և ելակետ ունենալով աշխարհի՝ որպես շնչավոր համակարգի մասին չտարանջատված, սինկրետիկ պատկերացումը: Իր հետագա զարգացման ընթացքում արևմտաեվրոպական փիլիսոփայությունն ավելի ու ավելի է լցվում գիտառացիոնալիստական բովանդակությամբ՝ պրոբլեմատիկայի առումով դառնալով աշխարհաճանաչողական գիտելիքների ավելի տարբերակված համակարգ՝ հատկապես գոյաբանության (օնտոլոգիա) և իմացաբանության (գնոսեոլոգիա) ոլորտում:

Անտրոպոմորֆիստական պատկերացումներն են ընկած դիցաբանական աշխարհայացքի հիմքում: Եվ չնայած տարբեր ժողովուրդների կերտած անտրոպոմորֆիստական պատկերների յուրահատկություններին՝ դրանց ներհատուկ են ընդհանուր գծեր, նմանատիպ կամ կրկնվող թեմաներ ու մոտիվներ: Այս առումով առավել տիպական են բնության զանազան առարկաների ու երևույթների (փոթորիկ, ամպրոպ, կայծակ և այլն), տիեզերքի, այդ թվում՝ Արեգակի, Լուսնի, աստեղերի էության ու ծագման, ինչպես նաև կենդանիների մասին առասպելական պատկերացումները: Առանձին տեղ

են գրավում այն առասպելները, որոնք վերաբերում են քաղաքակրթության բարիքների ձեռքբերմանը (կրակի գյուտ, արհեստների հայտնագործում, երկրագործության ներդրում և այլն): Նման թեմատիկայով բոլոր առասպելներին, անկախ նրանց կոնկրետ բովանդակությունից, բնորոշ են անտրոպոմորֆիստական ընկալումները, բնության առարկաների ու երևույթների նախվ մարկայնացումը, դրանց համընդհանուր անձնավորումը:

Այդ ամենի հետ մեկտեղ՝ նախնադարյան համայնական հասարակությունում առասպելը կատարել է նաև իմացաբանական ֆունկցիա, հանդես եկել որպես աշխարհի ճանաչման ուրույն եղանակ:

Անտրոպոմորֆիզմը բնորոշ է նաև կրոնական աշխարհայացքին: Այն հարուստ ու բազմազան ձևերով է դրսևորվել հատկապես անտիկ հույների կրոնական պատկերացումներում: Հոմերոսի պոեմներում, հին հունական ողբերգակների ստեղծագործություններում հանդես եկող աստվածները, ինչպես որ անտիկ հույների բոլոր աստվածները՝ Ջևսի գլխավորությամբ իսկական մարդիկ են՝ իրենց արժանիքներով ու թերություններով, այն տարբերությամբ միայն, որ նրանք սովորական մարդկանցից ավելի հզոր են ու անմահ:

Ուստի պատահական չէ, որ հին հունական արվեստի ստեղծագործություններում՝ քանդակագործության և գեղանկարչության մեջ աստվածներն ու աստվածուհիները պատկերվում էին գեղեցիկ տղամարդու կամ կնոջ տեսքով: Հետաքրքիր է նկատել, որ հեթանոսության շրջանի այս ավանդույթը հետագայում փոխանցվեց քրիստոնեությանը և մինչև օրս էլ պահպանվում է՝ իր արտացոլումը գտնելով հատկապես ուղղափառ ու կաթոլիկ եկեղեցիների սրբապատկերներում. հայր-աստվածն այստեղ պատկերվում է որպես պատկառազոր ծերունի, որդի-աստվածը (Քրիստոսը)՝ կամ

որպես գեղեցիկ մանկիկ կամ որպես բարեստես երիտասարդ, «երկնային տիրուհին» (աստվածամայրը) հանդես է գալիս գեղեցիկ կնոջ-մոր կերպարանքով, իսկ «սուրբ հոգին»՝ ավետաբեր աղավնու տեսքով:

Սակայն անտրոպոմորֆիզմը, բացի կրոնական հավատալիքներից, արտացոլում է գտնում նաև ժողովրդական բանաստեղծական ստեղծագործություններում, նաև հեքիաթներում ու երգերում: Այստեղ կենդանիները, բույսերը, ինչպես նաև անշունչ առարկաները հաճախ օժտվում են մարդկային հատկանիշներով, խոսում ու գործում են մարդկանց նման: Այդ «պոետական» անտրոպոմորֆիզմը այլ արմատներից է սնվում, քան կրոնականը: Ինչպես նկատում է Մաքսիմ Գորկին, անտրոպոմորֆիզմի այս տեսակը «... ծնունդ է առել աշխատանքի պրոցեսից և արտահայտում է մարդու միանգամայն բնական ձգտումը՝ աշխատանքի առարկաներն ու գործիքները օժտել մարդկային հատկանիշներով՝ դրանք հասկանալու և յուրացնելու համար»⁴:

Արդեն իսկ հին հունական մտածողները և ամենից առաջ՝ Քսենոփանեսը⁵, հանդես գալով որպես անտրոպոմորֆիզմի վերլուծաբան, գտնում էր, որ մարդիկ իրենք են բնության առարկաներին ու երևույթներին, վերերկրյա ուժերին մարդկային ձևեր ու հատկանիշներ վերագրում, նրանք են ստեղծում աստվածներին՝ իրենց տեսքով ու նմանությամբ: Եվ եթե, ասում է նա, եզները, ձիերը և առյուծները ձեռքեր ունենային և մարդկանց նման կարողանային արվեստի

⁴ **Горький М.** Собрание сочинений, т. 27, М., 1953, стр. 189.

⁵ Քսենոփանես Կոլոփոնցի (VI-V դարեր, մ.թ.ա.) – վաղ շրջանի հին հունական փիլիսոփա, համարվում է նշանավոր էլեական դպրոցի հիմնադիրը. եղել է նաև էլեգիագիր բանաստեղծ ու երգիծաբան: Հայտնի է որպես անտրոպոմորֆիզմի և դիցաբանության վերլուծաբան:

ստեղծագործություններ նկարել, ապա ձիերն աստվածներին կպատկերեին ձիերի, եզները՝ եզների, առյուծները՝ առյուծների նմանությամբ և այդ պատկերները նրանք կներկայացնեին իրենց սեփական պատկերների նման՝ յուրաքանչյուրը յուրովի:

Այս դիրքերից նա պարսավում է Հոմերոսին՝ աստվածների անտրոպոմորֆիստական պատկերման համար:

Վերը նշված համատեքստում անցկացնենք մի պատմական գուգահեռ: Քսենոփանեսի ապրած ժամանակներից շուրջ 2,5 հազարամյակ անց նմանատիպ, սակայն ավելի խորունկ ու պատկերավոր մտքերի ենք հանդիպում գերմանական դասական փիլիսոփայության հանճարեղ եզրափակողի՝ Լյուդվիգ Ֆոյերբախի աշխատություններում: Երբ մի փիլիսոփայի ասացին,- գրում է Ֆոյերբախը,- որ աստված է ստեղծել մարդուն՝ իր պատկերով ու նմանությամբ, ապա նա պատասխանեց, որ մարդն էլ աստծուն հատուցել է ճիշտ նույն կերպ: Ոչ թե աստված է արարել մարդուն, այլ մարդն է ստեղծել աստծուն՝ իր կերպարանքով ու նմանությամբ: Այս միտքը Ֆոյերբախի փիլիսոփայության հիմնարար սկզբունքներից է, որն անցնում է ոչ միայն նրա գլխավոր երկի՝ «Քրիստոնեության էությունը» աշխատության, այլև նրա ամբողջ փիլիսոփայության միջով և որը մեծ մտածողի կամքով դրոշմվել է նաև նրա շիրմաքարին՝ «Մարդն աստծուն ստեղծել է իր պատկերով ու նմանությամբ»:

Ըստ Ֆոյերբախի՝ «Եթե աստված թոչունի համար օբյեկտ լիներ, նա նրան կթվար փետրավոր էակ. թոչունի համար ավելի մեծ երջանկություն չկա, քան թևեր ունենալը»⁶:

⁶ Ֆոյերբախ Լ., Քրիստոնեության էությունը, Երևան, 1968, էջ 60:

«Աստվածային էությունը,- գրում է նա,- ոչ այլ ինչ է, եթե ոչ մարդկային էություն, որը զտված, ազատված է անհատական սահմաններից, այսինքն՝ իրական, մարմնական մարդուց, օբյեկտիվացված է, այսինքն՝ **դիտվում և պաշտվում է որպես կողմնակի, առանձին էություն**: Ուստի աստվածային էության բոլոր **սահմանումները** վերաբերում են նաև մարդկային էությանը»⁷:

Դիմելով ընդհանրապես մարդուն՝ նա գրում է. «Դու աստծուն սեր ես վերագրում, որովհետև ինքդ սիրում ես, դու աստծուն իմաստուն ու բարի ես համարում, որովհետև բարությունը և բանականությունը համարում ես քո բարձրագույն արժանիքները, դու հավատում ես, որ աստված գոյություն ունի, որ նա սուբյեկտ կամ էակ է, որովհետև դու ինքդ գոյություն ունես, դու ինքդ էակ ես...»⁸:

«Այն ամենը, ինչ **մարդը** վերագրում է **աստծուն, իրականում վերագրում է հենց մարդուն. այն ամենը, ինչ մարդն ասում է աստծու մասին, իրականում** նա ասում է հենց իր մասին»⁹: «Կրոնը մարդկային հոգու երազն է»¹⁰: «**Մարդը աստծու մեջ և նրա միջոցով որոնում է միայն ինքն իրեն**»¹¹: Այսպիսին է ֆոյերբախյան անտրոպոմորֆիստական մարդաբանության կրեդոն:

Եվ այդ ամենով հանդերձ՝ անտրոպոմորֆիզմը զարմանալի կենսունակություն է դրսևորում նաև մեր օրերում՝ ակամա կազմելով ժամանակակից մարդու ինտուիտիվ-մտավոր և հոգեկան-հուզական աշխարհի անբաժանելի մասը:

⁷ Նույն տեղում, էջ 55-56:

⁸ Նույն տեղում, էջ 61:

⁹ Նույն տեղում, էջ 76:

¹⁰ Նույն տեղում, էջ 29:

¹¹ Նույն տեղում, էջ 78:

Անտրոպոմորֆիզմը որպես աշխարհընկալման ուրույն ձև խոր արմատներ ունի հայոց ազգային մտածողության մեջ: Այն խիստ բնորոշ է մեր ժողովրդի հոգեկերտվածքին և դարեր ու հազարամյակներ շարունակ վառ արտացոլում է գտել նրա հոգևոր ստեղծագործության մեջ: Անտրոպոմորֆիստական մտածողության փայլուն ու ինքնատիպ դրսևորումներով են աչքի ընկնում հատկապես հայ ժողովրդական երգն ու բանաստեղծական արվեստը: Ընդ որում այդ աշխարհընկալման մաքուր ու բյուրեղացված նմուշներին մենք հանդիպում ենք հայ ժողովրդական երգի գրեթե բոլոր ժանրերում և ամենից առաջ աշխատանքային երգերում (հատկապես երկրագործական աշխատանքային երգերում կամ հոռովելներում), քնարական երգերում («Հով արեք, սարեր ջան», «Ծիրանի ծառ», «Սարերի հովին մեռնիմ» և այլն): Ժանրերի այս շարքում հատուկ տեղ են գրավում պանդխտության երգերը կամ անտունիները («Կռունկ», «Կանչե, կռունկ»), որոնք իրենց բովանդակությամբ լինելով համազգային դրամատիկ ու ողբերգական տրամադրությունների արտահայտություն, մերձենում են մեր պատմահայրենասիրական երգերին: Որոշ երաժշտագետներ այդ ստեղծագործություններն անվանում են «համաժողովրդական վշտի երգեր»¹²:

Վերը նշված մոտիվներով աչքի են ընկնում նաև հայ հին ու միջնադարյան տաղերն ու գուսանական երգերը, որոնք ունեն հարուստ ու ուսանելի ավանդույթներ: Նման բովանդակությամբ գուսանական երգերի փայլուն օրինակներ են հատկապես Սայաթ-Նովայի ստեղծագործությունները («Բըլբուլի հիդ», «Քամանչա», «Ուստի՞ գու քաս, դարիբ բլբուլ» և այլն): Պատմական անցյալի լավագույն ավանդույթներն իրենց

¹² **Շահվերդյան Ա.**, Հայ երաժշտության պատմության ակնարկներ, Երևան, Հայպետհրատ, 1959, էջ 429:

շարունակությունն են գտել նորագույն ժամանակների հայ գուսանական երգարվեստի այնպիսի ստեղծագործություններում, ինչպիսիք են «Խելքի աշեցեք» (Ջիվանի), «Սյունյաց սարեր», «Խռով գնաց» (գուսան Աշոտ), «Իմ Ալազղազ» (գուսան Շահեն), «Սարեր, կաղաչեմ» (Շերամ) և այլն:

Հայ երգարվեստի գանձարանում բացառիկ տեղ են գրավում Կոմիտասի գրի առած ու մշակած ժողովրդական երգերը:

Անտրոպոմորֆիստական գաղափարներով է շնչում հայ բանաստեղծական արվեստը՝ սկզբնավորման ժամանակներից մինչև մեր օրերը: Դարերի ու հազարամյակների խորքում են գտնվում այդ ավանդույթների արմատները: Տակավին վաղնջական ժամանակներից հայ բանաստեղծական խոսքը տոգորված է եղել անտրոպոմորֆիստական շնչով:

Աշխարհի անտրոպոմորֆիստական ընկալման ինքնատիպ դրսևորումների ենք հանդիպում վաղ շրջանի հայ ժողովրդական բանահյուսության մեջ («Հայկ և Բել», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Տորք Անգեղ», «Տիգրան և Ածղահակ», «Արտաշես և Արտավազդ» և այլն): Այդ պատկերացումներն արտացոլում են գտել նաև հայոց հին գուսանական ստեղծագործություններում, որոնց համար նյութ են ծառայել ժողովրդի վաղնջական անցյալը, դիցաբանական կերպարանք ստացած պատմական դեպքերն ու դեմքերը:

Անտրոպոմորֆիստական հզոր պաթոսով է ներթափանցված, օրինակ, հայ ժողովրդական բանահյուսության գոհարներից մեկը՝ «Վահագնի ծնունդը», որտեղ նկարագրվում է հայկական հին դիցաբանության մեջ քաջության աստված հանդիսացող Վահագնի ծննդյան տեսարանը.

Երկներ երկին, երկներ երկիր,

Երկներ և ծովն ծիրանի.

Երկն ի ծովուն ուներ

Եւ զկարմրիկն եղեգնիկ.

Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր.
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ.
Նա հուր հէր ունէր,
Ապա թէ բոց ունէր մօրուս,
Եւ աչկունքն էին արեգակունք:

Ինչպէս պարզորոշ երևում է, տեսարանի կիզակետում ժողովրդի էպիկական հերոսն է, դյուցազնի հատկանիշներով օժտված Վահագնը, ով, ըստ ավանդության, կռվել է վիշապների հետ և հաղթել նրանց¹³:

Հայկական մի շարք առասպելներում զգալի տեղ է հատկացվում կենդանիներին ու նրանց մարդանպաստ գործողություններին: Նրանք ակտիվորեն մասնակցում են մարդկային կյանքին, օգնում մարդուն որպէս նրա հավատարիմ բարեկամ: Նման դեպքերում գլխավոր հերոսն ու կենդանին հանդես են գալիս միասնաբար. ավելին՝ հերոսի կյանքում կատարած բախտորոշ դերով երբեմն առաջին պլան է մղվում կենդանին, որը դառնում է ծավալվող իրադարձությունների առաջնդիշ ուժը: Նման դեր են կատարում, օրինակ, շղթայված Արտավազդին ազատագրելու համար նրա կապանքները կրծող շները, կռվի դաշտում զոհված Արային կենդանացնող արալեզները և այլն¹⁴:

Անտրոպոմորֆիստական գաղափարներով է ներթափանցված հայոց էպիկական ստեղծագործության զարդը՝ «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսը (IX դար):

¹³ Տե՛ս Մովսէս Խորենացի, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1913, էջ 85-86:

¹⁴ Տե՛ս **Գրիգորյան Գ.**, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, «Լույս» հրատ., 1967, էջ 79:

Անտրոպոմորֆիստական մտածողության բազմապիսի դրսևորումների ենք հանդիպում միջնադարյան հայ պոեզիայում, հատկապես Նարեկացու ստեղծագործության մեջ: Այս առումով աչքի են ընկնում հատկապես նրա տաղերը: «Վարդավառի տաղը», օրինակ, հանդես է գալիս որպես անտրոպոմորֆիստական աշխարհընկալման, բնության պաշտամունքի փայլուն արտահայտություն.

Գոհար վարդն վառ առեալ
ի վեհից վարսիցն արփենից:
Ի վեր ի վերայ վարսից
ծավալէր ծաղիկ ծովային:
Ի համատարած ծովէն
պղպջէր գոյնն այն ծաղկին,
Երփին երփնունակ ծաղկին
շողշողէր պտուղն ի ճղին...

Հայոց պոեզիայի անտրոպոմորֆիստական տոհմիկ ավանդույթները շարունակվել և ուրույն ու վառ արտացոլում են գտել նորագույն շրջանի հայ գրականության դասականների երկերում: Դրանց փայլուն ու անկրկնելի նմուշներին մենք հանդիպում ենք Խաչատուր Աբովյանի («Վերք Հայաստանի», «Մոլլա Մասրադինի պղինձը», «Ծառերն ու կացինը», «Աղվեսն ու գելը», «Բարդին (չինարին) ու վագը», «Էջն ու բլբլուրը», «Բաղդադի ճամփորթ էջը»), Միքայել Նալբանդյանի («Ազատություն», «Վագող ջրին», «Վայր ընկնող աստղեր», «Աղցմիք»), Բաֆու («Ձայն տուր, ո՛վ ծովակ»), Ռաֆայել Պատկանյանի («Արաքսի արտասուքը», «Ամպամած Մասիս», «Ուռը»), Հովհաննես Հովհաննիսյանի («Վահագնի ծնունդը», «Արտավագդ», «Արծիվն ու արտույտը», «Քեզ սպասող չմնաց»), Վահան Տերյանի («Արծաթաշող առուն», «Ոչ, մենակ չեմ ես լեռներում», «Պետերբուրգ», «Fatum», «Գիշեր», «Քնկոտ առվին թեքվեց ուռին»), Գևորգ Դողդիսյանի

(«Ծիծեռնակ», «Մանուշակ»), Եղիշե Չարենցի («Դանթեական առասպել», «Ամբոխները խելագարված», «Մահվան տեսիլ», «Կապուտաչյա հայրենիք», «Նորք», «Քամին», «Շան կարոտներ»), Ավետիք Իսահակյանի («Դարդս լացեք», «Ուրին», «Սև-մութ ամպեր», «Հեյ, Արագած», «Ախ, իմ ճամփես», «Մայրիկիս», «Քնքուշ հովիկ»), Հովհաննես Շիրազի («Միամանթո և Խաչեզարե», «Ամպեց, կորավ լուսընկան»), Պարույր Սևակի («Անլուելի զանգակատուն», «Ծառերի օգնությամբ», «Անսպասելի փոթորիկ», «Կեսգիշերային բնանկար», «Ավազը՝ հովազ», «Միայնակ ծառը», «Աշխարհին մաքրություն է պետք», «Աշխարհի հին սպիները», «Կարոտ»), Համո Սահյանի («Քարափների երգը», «Իրիկնահաց», «Կանաչ, կարմիր աշուն» բանաստեղծությունների ժողովածուներ) և ուրիշների ստեղծագործություններում:

Մատնանշված առումով բացառություն չի նաև արևմտահայ գրականությունը: Այս համատեքստում հիշատակության են արժանի հատկապես Ղևոնդ Ալիշանի «Երգք Նահապետի» բանաստեղծությունների շարքը, Մկրտիչ Պեշկեթաշյանի («Գարուն», «Վերադարձ», «Աշուն», «Առ զեփյուռն Ալեմտաղի»), Պետրոս Դուրյանի («Լճակ», «Մանիշակ», «Վիշտք հայուն», «Սիրել»), Միսաք Մեծարենցի («Սիրերգ», «Ճերմակ վարդեր», «Ձմրան պարզ գիշեր», «Ուրիներու շուքին տակ...»), Դանիել Վարուժանի («Ձոն», «Ցեղին սիրտը», «Նեմեսիս», «Օձը», «Ծեր կռունկը») և մի շարք ուրիշ գրողների բանաստեղծությունները:

Այժմ փորձենք այս ընդհանուր ֆոնի վրա անդրադարձ կատարել Թումանյանի անտրոպոմորֆիստական պատկերացումներին, մեծ մտածողի բանաստեղծական աշխարհում դրանց դրսևորումներին:

Իսկ մինչ այդ նշենք, որ Թումանյանի ամբողջ ստեղծագործության, այդ թվում պոեզիայի լայթմոտիվը հայրենասիրության ու հումանիզմի գաղափարներն են, հայ ժողովրդի ազգային նպատակների, իղձերի ու իդեալների նուրբ ու խորունկ ըմբռնումը, բարու և գեղեցիկի պաշտամունքը, չարի, նսեմի, ժամանակավորի, անցողիկի մերժումը, վեհ ու անանց արժեքների հաստատումը:

Հայ ժողովրդի նվիրական նպատակների, նրա ազգային իղձերի ճանաչման ու հաստատման առումով բացառիկ են նրա «Մեր ուխտը» բանաստեղծությունում արծարծված գաղափարները, լուսավոր գալիքին ուղղված նրա խոսքերը.

Մենք ուխտ ունենք՝ միշտ դեպի լույս,

Ու գընում ենք մեր ճամփով,

Մըրրիկներով պատած անհույս,

Սև խավարով, մութ ամպով:

Մենք անցել ենք արյան ծովեր,

Սուր ենք տեսել ու կըրակ,

Մեր ճակատը դեմ ենք արել

Մըրրիկներին հակառակ...

Բայց գընում ենք մենք անվեհեր

Զարկերի տակ չար բախտի,

Մեր աչքերը միշտ դեպի վեր՝

Դեպի լույսը մեր ուխտի¹⁵:

Կարևոր ենք համարում շեշտել, որ անտրոպոմորֆիստական մտածողությունը, աշխարհի անտրոպոմորֆիստական ըմբռնումը կազմում են բասաստեղծի փիլիսոփայական-ստեղծագործական խառնվածքի կարևոր ու անբաժանելի մասը:

¹⁵ Հովհաննես Թումանյան, Երկեր երկու հատորով, հատոր առաջին, Երևան, Հայպետհրատ, 1958, էջ 100-101:

Վաղ է արթնացել Թումանյանի հանճարը: Եվ դրան զուգահեռ ձևավորվել ու զարգացել են աշխարհի մասին նրա անտրոպոմորֆիստական պատկերացումները:

Անտրոպոմորֆիստական մտածողության բազմազան ու հարուստ դրսևորումների ենք հանդիպում Թումանյանի չափածո բոլոր ժանրերում՝ պոեմներում («Անուշ»¹⁶, «Մարոն», «Թմկաբերդի առումը», «Լոռեցի Սաքոն», «Սասունցի Դավիթը» և այլն), լեզենդներում, բալլադներում ու առակներում («Ախթամար», «Փարվանա», «Լուսավորչի կանթեղը», «Երկինք ու երկիր», «Արև և լուսին», «Արծիվն ու կաղնին», «Անբախտ վաճառականներ», «Շունն ու կատուն», «Չարի վերջը», «Մոծակն ու մրջյունը» և այլն), ինչպես նաև մանկական բանաստեղծություններում («Փիսիկի գանգատը», «Բզեզի դպրոցը», «Աղվեսը», «Քամին», «Գետակը», «Մուկիկի մահը», «Մանուկն ու ջուրը», «Շունը», «Մարտ» և այլն):

Չափազանցություն չի լինի ասել, որ Թումանյանի պոեզիան ծնվել ու հասակ է առել անտրոպոմորֆիզմի քուրաներում: Ու թեև թումանյանագիտության մեջ բանաստեղծի ողջ պոեզիան բաժանում են երկու առանձին մասերի՝ քնարական և էպիկական, սակայն անհրաժեշտ է նկատել, որ անտրոպոմորֆիզմի դրսևորումները, անտրոպոմորֆիստական առկայծումները խորապես բնորոշ են նրա թե՛ քնարական և թե՛ էպիկական ստեղծագործություններին, նրա բանաստեղծական աշխարհին՝ իր ամբողջության մեջ:

Անտրոպոմորֆիստական աշխարհընկալման թումանյանական հակումները վառ ու պարզորոշ ուրվագծվում են

¹⁶ Տե՛ս **Ասատրյան Գ.**, Աշխարհի անտրոպոմորֆիստական ըմբռնումը Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմում, Հյուսիսային համալսարանի «Հյուսիսափայլ» գիտական աշխատանքների ժողովածու, տարեգիրք, Երևան, 2019 (4), էջ 104-114:

արդեն բանաստեղծի ամենավաղ շրջանի ստեղծագործություններում: Դրա առաջին նշաններն առկա են պատանի Թումանյանի խոշոր կտավի առաջին ստեղծագործության մեջ՝ «Մարոն» պոեմում (1887թ.):

Պոեմն սկսվում է անտրոպոմորֆիստական զարմանալի շնչով տոգորված հուզիչ, սակայն միաժամանակ տխուր ու խոր դրամատիզմով լի բանաստեղծական պատկերներով, որոնք նախորդում են պոեմի հետագա տեքստում նկարագրվող ողբերգական իրադարձությունների հիմնական սյուժեն բովանդակող վերհուշին՝ այն դարձնելով առավել տպավորիչ ու ներգործուն.

Մեր գյուղն էն է, որ հըպարտ,
Լեռների մեջ միգապատ,
Խոր ձորերի քարափին
Ձեռը տըված ճակատին
Միտք է անում տըխրադեմ.
Ի՛նչ է ուզում՝ չըզիտեմ...¹⁷

Այնուհետև պոեմում դրան հետևում են անտրոպոմորֆիստական պաթոսով ներթափանցված բանաստեղծական տողերը, որոնք կերտում են հայրենի բնության, մենավոր ու սգավոր ուռենու, նրա տակ խոխոջացող անհանգիստ լեռնային վտակի և կանաչ մարգերի գունեղ, ներդաշնակ ու իդիլիական տեսարանը.

Մեր գյուղից վեր մինչ էսօր
Կա ուռենի մի սըզվոր:
Մեծ անտառից նա գատված,
Մարդու կացնից ագատված՝
Կանգնած է դեռ ու շոգին

¹⁷ Հովհաննես Թումանյան, Ընտիր երկեր երկու հատորով, հատոր երկրորդ, Երևան, Հայպետհրատ, 1988, էջ 7:

Հով է տալիս մըշակին:
Գիժ, լեռնային մի վըտակ
Խոխոջում է նըրա տակ,
Խաղում կանաչ մարգերին...¹⁸

Այս առումով հատկապես բնորոշ է տակավին իր ստեղծագործական էվոյուցիայի արշալույսին՝ 1890 թվականին 21-ամյա Բանաստեղծի գրած «Նախերգանք»¹⁹ ստեղծագործությունը:

«Նախերգանքի» առաջին երկու քառատողերի գլխավոր մոտիվը Բանաստեղծի նվիրական սերն է հայրենի եզերքի և նրա յուրահատուկ խորհրդանիշը հանդիսացող լեռների ու ձորերի նկատմամբ.

Լեռնե՛ր, ներշնչված դարձյալ ձեզանով,
Թընդում է հոգիս աշխուժով լըցված,
Ու ջերմ ըղձերըս, բախտից հալածված,
Ձեզ մոտ են թըռչում հախուռն երամով:
Ձեզ, ձեզ վերըստին, ամպամած լեռներ,
Կյանքի տխրության ամպերի տակից՝
Ես ձայն եմ տալիս ու ծանրաթախիժ
Հոգուս ձայները ձեզ բերում նըվեր...
Այնուհետև՝
Ո՛վ, որ կանչում ես գիշեր ու ցերեկ

¹⁸ Նույն տեղում, էջ 7-8:

¹⁹ «Նախերգանքը» Թումանյանի «Հառաչանք» նշանավոր պոեմի սկիզբն է, որն իր բացառիկ արժեքով առանձնանալով պոեմից, ձեռք է բերել ինքնուրույն ստեղծագործության նշանակություն: Ինչ մնում է «Հառաչանք» պոեմին իր ամբողջության մեջ, ապա այն, ցավոք, մեզ հասել է անավարտ վիճակում: 1893 և 1914 թվականներին մամուլում տպագրվել են դրա միայն երկու մասերը, իսկ մյուսները կորել են 1909-ին Ժանդարմական վարչության խուզարկության ժամանակ: Պոեմում, ինչպես հայտնի է, պատկերված է բռնության և կոպիտ ուժի դեմ ժողովրդի ցասումը, սոցիալական արդարության ու հավասարության երազանքը:

Հագար ցավերով, հագար ձներով, -
Ոգևորության հրգոր թներով
Քեզ մոտ եմ գալիս, հայրենի ք իմ հեգ:
Գալիս եմ, բայց ոչ ուրախ երգերով
Քո ծաղիկներին ծաղիկ ավելցնեմ,
Այլ դառն հեծության հառաչանքներով
Էդ անդընդախոր ձորերըդ լըցնեմ²⁰:

Սակայն մեզ հետաքրքրող պրոբլեմի տեսանկյունից առավել արժեքավոր է «Նախերգանքի» եզրափակիչ մասը, որն աչքի է ընկնում անտրոպոմորֆիստական մտածողության խորունկ, միաժամանակ՝ վառ ու կրքոտ դրսևորումներով, բնության, սար ու ձորի անտրոպոմորֆիստական ցայտուն ու անգուգական պատկերներով.

Ձորե ր, ա յ ձորեր, սև, լայնաբերան,
Սըրտիս էս խորունկ վերքերի նըման.
Աստծու հարվածի հետքերն եք դուք էլ,
Ձեզ մոտ եմ գալիս, ուզում եմ երգել:
Դուք էլ խոսեցե՛ք, դուք էլ պատմեցե՛ք,
Ձեր անդունդներով եկեք չափվեցե՛ք,
Դուք է՛լ եք, տեսնեմ, էնքան մեծ ու խոր,
Ինչքան իմ հոգու թախիծն ահավոր...²¹

Նշենք, որ սա այն հազվագյուտ (եթե չասենք՝ բացառիկ) դեպքերից է, երբ ստեղծագործողը բնության նկատմամբ անտրոպոմորֆիստական մոտեցումը միաժամանակ ծառայեցնում է իր անձնական ներաշխարհի բացահայտմանն ու ճանաչմանը: Տվյալ դեպքում հայրենի ձորերի չափերը, դրանց անդունդների մեծությունն ու խորությունը դառնում են Թումանյան բանաստեղծի անձնական զգացմունքների ու

²⁰ Հովհաննես Թումանյան, Երկեր երկու հատորով, հատոր 1, էջ 17:

²¹ Նույն տեղում, էջ 17-18:

ապրումների, նրա «հոգու թախծի» արտահայտման յուրահատուկ միջոց:

Թումանյանի գրչի տակ կենդանության անսովոր հատկանիշներով են օժտվում բնության առարկաներն ու երևույթները, կենսական շնչով են շնչում հայրենի բնության՝ Լոռվա բնաշխարհի տեսարանները:

Անտրոպոմորֆիստական գաղափարներով ներթափանցված բանաստեղծական տողերը Թումանյանի մոտ իրենց բովանդակությամբ հարուստ են ու խորիմաստ, պատկերավոր ու ազդեցիկ, ներդաշնակ ու գեղեցիկ: Դրանք միաժամանակ տոգորված են հուզական ներգործության հսկայական լիցքով:

Նկատենք նաև, որ Թումանյանի անտրոպոմորֆիզմի հիմքում ընկած է մարդասիրության գաղափարը, չարի մերժումը, բարու պաշտամունքը, լավատեսությունն ու հումանիզմն իր ամբողջության մեջ: Աշխարհից, սոցիալական իրականությունից որքան դառնացած ու հիասթափված, սակայն միաժամանակ որքան բարի ու ներող, լայնախոհ ու մեծահոգի պետք է լինել գրելու համար՝

Ինչքա ն ցավ եմ տեսել ես,

Նենգ ու դավ եմ տեսել ես,

Տարել, ներել ու սիրել,

Վատը՝ լավ եմ տեսել ես²²:

Անտրոպոմորֆիստական խոր ու գունագեղ ընդհանրացումների, բնության ու ոգու, երկրայինի ու երկնայինի, մարդկայինի ու աստվածայինի միասնության ու ներքին ներդաշնակության գաղափարի վրա է հիմնված Թումանյանի «Ամառային երեկո» գողտրիկ ու հուզիչ բանաստեղծությունը.

Ամռան գիշերվա երկինքն աստղալի,

²² Նույն տեղում, էջ 150:

Յուր հսկայական վրբանի ներքո
Գրկած շարքերը բարձր լեռների,
Պատմում է երկրին մեծությունն աստծո:
Եվ բարիքներով լցված – լիացած
Երկիրն ունկնդիր երկնքի ճառին,
Քնելուց առաջ, խոնարհ, երկյուղած
Փառաբանում է մեծագոր տերին:
Եվ փառք է տալիս իր շուրջը բոլոր,
Ամեն մի տերև, ամեն շրնչավոր...²³

Անտրոպոմորֆիստական վառ ու կենդանի պատկերներով է համեմուն Թումանյանը հայոց պատմական հողի՝ Մշո դաշտի առավոտվա իր նկարագրությունը «Տարոնի առավոտը» պոեմում: Անտրոպոմորֆիստական նուրբ ու վարպետ հնարների կիրառման շնորհիվ բնության պատկերները ձեռք են բերում զարմանալի կենդանություն ու շնչավորություն, փայլում անկրկնելի գեղեցկությամբ ու դրախտային հանգստությամբ: Ահա այդ պատկերներից մեկը.

Կարմիր արևն առավոտյան
Պայծառ ցոլաց դեպի Մուշ,
Ծավալվեցավ ծովի նման
Մշու դաշտը քաղցրահուշ:
Նրա շուրջը խոշոր դեմքով
Կանգնած լեռներն ահագին,
Քնաթաթախ, լուռ աղոթքով,
Նայում են վեր՝ երկնքին:
Արածանին օձապտույտ
Ծաղկադալար ավերում,
Մշուշի մեջ, ազատ, անփույթ

²³ Նույն տեղում, էջ 61:

Խաղ է անում, փրփրում²⁴:

Անտրոպոմորֆիստական շնչով տոգորված մի շարք կենդանի պատկերների ենք հանդիպում «Ախթամար» լեգենդում: Այստեղ մի դեպքում՝

Ծըփում է ծովն ալեծածան,

Ծըփում է սիրտը տըղի.

Գոռում է ծովն ահեղաձայն,

Նա կըռվում է կատաղի²⁵:

Մեկ այլ դեպքում՝

Միայն ալիքը Վանա ծովի

Մեղմ դիպչում են ափերին,

Հըրհըրելով հեռանում են

Շըշունջներով անմեկին:

Նըրանք ասես փրսփրսում են...

Ու աստղերը կամարից

Ակնարկելով բամբասում են

Լիբբ, անամոթ Թամարից...²⁶: (Ընդգծումը մերն է – Գ.Ա.):

Անտրոպոմորֆիստական անսովոր պաթոսով ներթափանցված՝ եղերական ցնցող պատկերներ է կերտել Թումանյանը «Հոգեհանգիստ» բանաստեղծության մեջ: 1916 թվականին գրված այս ստեղծագործության լեյտմոտիվը հեղինակի կողմից «վերջին հանգստի» մատուցումն է Հայոց եղեռնի «անբախտ զոհերին», նրանց հանդիսավոր ոգեկոչումն ու հիշատակի հավերժացումը, որը Թումանյանի գրչի ուժով վերածվել է բանաստեղծական պաթետիկ սիմֆոնիայի՝ տխրալի ու միաժամանակ հուզիչ ու խորհրդավոր: Բանաս-

²⁴ Նույն տեղում, էջ 37:

²⁵ Նույն տեղում, էջ 205:

²⁶ Նույն տեղում, էջ 206:

տեղծական տողերին անսովոր խորություն ու հուզականություն են հաղորդում անտրոպոմորֆիստական պատկերները, ասես, մարդկային նուրբ զգացմունքներով տոգորված բնության, երկնքի ու երկրի, լեռների ու ձորերի, գետերի ու հովիտների կենդանի մասնակցությունը այդ ահասարսուռ ու խորհրդավոր տեսարանին.

Ու վեր կացա ես, որ մեր հայրենի օրենքովը հին՝
Վերջին հանգիստը կարդամ իմ ազգի անբախտ
գոհերին...

Ու կըրակ առա հայոց հրդեհի կարմիր բոցերից,
Էն խաղաղ ու պաղ երկնքի ծոցում վառեցի նորից
Մասիսն ու Արան, Միփանն ու Սըրմանց, Նեմրուք,
Թանդուրեք,

Հայոց աշխարհի մեծ կերոնները վառեցի մեկ-մեկ,
Սուրբ Արագածի կանթեղն էլ, ինչպես հեռավոր արև,
Անհաս, աննըվազ, միշտ վառ ու պայծառ, իմ գըլխի
վերև...

Աջիցըս Եփրատ, ձախիցըս Տիգրիս՝ ահեղ ձեներով,
Սաղմոս կարդալով՝ անցան, գընացին խոր-խոր ձորե
րով,

Ամպերն էլ ելան Զիրավի ձորից, հըսկա բուրվառից,
Ճանապարհ ընկան Ծաղկանց սարերից, Հայկական պարից,
Բույլ-բույլ, բուրավետ, շարժվեցին դեպի կողմերը հեռու,
Գոհար ցողելու, ծաղկունք բուրելու, բուրմունք խընկելու
Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծովն Հայոց,
Մինչև Հելլեսպոնոս, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ...

— Հանգե՛ք, իմ որբեր... իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր և անշահ...
Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կըմնա...²⁷

²⁷ Նույն տեղում, էջ 132:

Իր բնույթով անտրոպոմորֆիստական է ժողովրդական բանահյուսության հիմքի վրա գրված թումանյանական «Կաքավի ողբը» ընդարձակ (60 բանաստեղծական տողից բաղկացած) ստեղծագործությունը, որտեղ հեղինակը վառ ու կենդանի լեզվով ներկայացնում է իր հարազատ բույնն ու սիրասուն ձագերին կորցրած կաքավի հոգեկան ապրումները, նրա կսկիծն ու գանգատը հավքերին՝

Կըտուցը լիքը արին
Կաքավը նըստել քարին,
Ձեն է տալիս, կըղկըղում,
Գանգատ անում հավքերին.
Ա՛յ քուրիկնե՛ր,
Ա՛յ հավքե՛ր:
Բուն շինեցի էն սարում,
Ձագ հանեցի աննըման.
Իջավ՝ խաղա մարգերում,
Եկան կալան ու տարան,
Ա՛յ քուրիկնե՛ր,
Ա՛յ հավքե՛ր...²⁸

Անտրոպոմորֆիզմի դրսևորումներով հարուստ է դարձյալ ժողովրդական մոտիվներով գրված մեկ ուրիշ քնարական ստեղծագործությունը՝ «Կաքավի գովքը» բանաստեղծությունը: Այն սկսվում է

Արև բացվեց թուխ ամպերեն,
Կաքավ թըռավ կանաչ սարեն,
Կանաչ սարեն՝ սարի ծերեն,
Բարև բերավ ծաղիկներեն.
Սիրունի՛կ, սիրունի՛կ,

²⁸ Նույն տեղում, էջ 115:

Նախշուն կաքավիկ...»²⁹ մուտքով և ավարտվում է կաքավի ստեղծագործական բարեմասնությունները գովերգող հետևյալ տողերով.

...Երբ կրկանգնես մամռոտ քարին,
Տաղեր կասես ծաղիկներին,
Սարեր, ձորեր զվարթ կանես,
Դարդի ծովեն սիրտս կըհանես.
Սիրունի՛ կ, սիրունի՛ կ,
Նախշուն կաքավիկ³⁰:

Անտրոպոմորֆիզմի նրբին երանգներ է պարունակում Թումանյանի՝ ժողովրդական քնարի մոտիվներով գրված «Սոխակի վիշտը» բանաստեղծությունը: Այս ստեղծագործությունը մտերմիկ ու հուզիչ երկխոսություն է վշտակիր սոխակի և նրան հանդիպած «օտար թռչունի» միջև: Վերջինս տեսնելով սոխակի խորունկ ու անողորմ ողբը, կարեկցանքով ու մտերմությամբ է լցվում նրա նկատմամբ՝ միաժամանակ ձգտելով փարատել ու ամոքել նրա վիշտը.

...- Ինչու՞, ասավ, սոխա՛կ սիրուն,
Ինչու՞ կուլաս կուց-կուց արուն.
Ինչու՞, մինչ ե՞րբ դու երերուն,
Տըխուր կուլաս չոր թըփերուն,
Աշխարհ ամեն վառ քո սիրուն,
Էդ ճըովռան քո երգերուն,
Հապա ինչու՞ դու օրնիբուն,
Էս լուս ու մութ առավոտուն,
Էս շատ անուշ զով հովերուն
Ախ ու վախով կուլաս արուն³¹:

²⁹ Նույն տեղում, էջ 103:

³⁰ Նույն տեղում, էջ 104:

³¹ Նույն տեղում, էջ 113:

Դրան հաջորդում է սոխակի՝ կշտամբանքով լի խոսքը, որում բացահայտվում է նրա ապրումների ու տառապանքի խորությունը.

- Ի՞նչ կըխոսես, օտար թըռչուն,
Խենթ ու խելառ դու ցընորուն.
Ձըմե՛ռ նստեց մեր սարերուն,
Կըտրեց ջըրիկ աղբյուրներուն,
Կըտրեց հոտիկ ծաղիկներուն,
Կըտրեց ձենիկ իմ ձագերուն,
Ի՞նչպես չըլամ կուց-կուց արուն³²:

Բանաստեղծության հերոսների՝ սոխակի և «օտար թըռչունի» երկխոսությունն ավարտվում է վերջինիս ջերմ ու լավատեսությամբ տոգորված խոսքերով.

Էլի ասավ օտար թըռչուն.
- Հերիք դու լաս, սոխա՛կ սիրուն,
Հերիք դու լաս կուց-կուց արուն.
Էլի կուգա քեզ նոր գարուն,
Արև ծագե էս վայրերուն,
Հալին ձյուներ մեր սարերուն,
Բացվին ջըրեր աղբյուրներուն,
Ու շուրջ առած քո ձագերուն
Բարև կուտաս ծաղիկներուն³³:

Անտրոպոմորֆիստական հետաքրքիր պատկերի վրա է կառուցված «Ինչու՞ այդպես» քնարական բանաստեղծությունը.

- Ինչու՞ այդպես ինձ մոռացար,
Ասավ աղջիկն ինձ մի օր:
- Ինչու՞ այդպես մեզ մոռացար,

³² Նույն տեղում, էջ 113-114:

³³ Նույն տեղում, էջ 114:

Գանգատվեցին սար ու ձոր...
- Ի՞նչ է ցավըդ, մի ճար անենք,
Ասավ աղջիկն անձնըվեր.
- Ի՞նչ է ցավըդ, տո՛ւ ր՝ մենք տանենք,
Ասին սարեր ու ձորեր:
Ո՛հ, չէ, սիրու՛ն, էլ ոչ մի սեր
Ճար չի անի իմ սրբտին,
Դուք էլ, անուշ սար ու ձորեր,
Չեք դիմանա էս դարդին...³⁴

Անտրոպոմորֆիստական մտածողությունը ուրույն ու ինքնատիպ ձևերով, նոր անսովոր գույներով ու երանգներով է դրսևորվում Թումանյանի քառյակներում³⁵:

Բերված օրինակները գալիս են հաստատելու, որ անտրոպոմորֆիզմի դրսևորումները, անտրոպոմորֆիստական պատկերները կազմում են Թումանյանի բանաստեղծական աշխարհի զարդերից, նրա պոեզիայի արտակարգ հմայքի, բացառիկ գրավչության, ընդգրկունության ու խորության գաղտնիքներից մեկը: Դրանք Թումանյանի բանաստեղծական խոսքը դարձնում են առավել գեղեցիկ ու պատկերավոր, վառ ու կենդանի, ցայտուն ու տպավորիչ, դրանով իսկ՝ հուզիչ ու ներգործուն:

³⁴ Նույն տեղում, էջ 91:

³⁵ «Անտրոպոմորֆիստական պատկերները Թումանյանի քառյակներում» թեմայով զեկուցմամբ հանդես ենք եկել ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 21-25-ին անցկացված «Հովհաննես Թումանյան - 150» գիտական նստաշրջանում:

РЕЗЮМЕ
АНТРОПОМОРФИЗМ В ПОЭТИЧЕСКОМ МИРЕ
ОВАНЕСА ТУМАНЯНА
ГРИГОР АСАТРЯН

Статья посвящена рассмотрению сущности антропоморфизма как специфической формы мировосприятия и характеристике особенностей его проявления в духовном мире людей. В контексте общей приверженности армянского менталитета антропоморфическому мироощущению философскому анализу подвергаются наиболее яркие и живые отражения антропоморфизма в поэзии Ованеса Туманяна, раскрываются их общие черты и специфические особенности.

Ключевые слова: Туманян, поэтический мир, антропоморфизм, внешний мир, мироощущение, духовная реальность, человеческие качества, антропоморфическая картина мира.

ABSTRACT
ANTHROPOMORPHISM IN THE POETIC WORLD OF
HOVHANNES TUMANYAN
GRIGOR ASATRYAN

The article analyzes the essence of anthropomorphism as a specific form of world outlook and characterizes the peculiarities of its manifestation in the spiritual world.

In the context of general adherence to anthropomorphism, typical of Armenian people, most vivid and lively reflections of anthropomorphism in the poetry of Hovhannes Tumanyan are studied philosophically, their typical traits and peculiarities are revealed.

Key words: Hovhannes Tumanyan, poetic world, anthropomorphism, outer world, world outlook, spiritual reality, human features, the anthropomorphist image of the world.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՆԱՆՑ ԱՐԺԵՔԸ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

ՆՈՒՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Ժողովրդական բանահյուսությունն ազգային հոգևոր արժեքի կարևորագույն մասերից է, որը, սերնդեսերունդ փոխանցվելով, բյուրեղացել, հասել է մինչև մեր օրերը՝ հարուստ նյութ դառնալով գեղարվեստական գրականության, պատմագիտության և արվեստի զարգացման համար: Եվրոպական առաջավոր երկրների բանագիտական մտքի ազդեցությամբ XIX դ. կեսերին հայ մտավորականությունը ևս կարևորեց մեր ժողովրդի բանավոր ավանդության տարբեր ժանրերի գրառման, հրատարակման և ուսումնասիրման պատմամշակութաբանական անհրաժեշտությունը: Նշյալ դարի 90-ական թվականներին հայագիտության մեջ սկսեց գործածվել «ժողովրդական բանահյուսություն» եզրույթը, և առաջ եկան բանահավաքներ: Նրանք ամբարելով ժողովրդական բանահյուսության գանձերը, բազմակողմանիորեն ուսումնասիրելով, համեմատելով, համադրելով դրանք, նոր ուղիներ բացեցին, բազմապիսի միջոցներ հայտնագործեցին՝ բանահյուսությունը գեղարվեստական գրականության մեջ օգտագործելու ասպարեզում: Այդ երախտավորներից էր Հովհ. Թումանյանը: Նրա համար բանահյուսությունը մի աշխարհ էր՝ մեծ ու բազմախորհուրդ օրենքներով, իր հերոսներով ու դեպքերով: Թումանյանը կարևորում է գրականության մեջ

ժողովրդական բանահյուսության նյութերի օգտագործումը և գտնում, որ «Սա է էն ուղիղ ճանապարհը»:¹

Հարուստ ու բազմակողմանի են բանահյուսության հետ Թումանյանի ունեցած կապերը, որովհետև գրողի ստեղծագործության համար այն կենարար աղբյուր է, սնուցող հող: Ինչպես նշում է Ղանալանյանը. «Ոչ մի այլ հեղինակ մեզանում բանահյուսության իմաստն ու խորհուրդը այնպես խորիմաստ չի ըմբռնել և ծառայեցրել իր ստեղծագործական նպատակադրմանը, ինչպես այդ արել է Թումանյանը»:²

Թումանյանին հարազատ էին բանահյուսության բոլոր ժանրերը՝ առասպելները, ավանդությունները, առած-ասացվածքները, թևավոր խոսքերն ու ասույթները: Վարպետն իրավացիորեն նշում է՝ Թումանյանի կախարդական գրիչը ուր դիպչում է, կատարվում է արվեստի իսկական հրաշքը՝ լինի առակ, քառյակ, հեքիաթ, պատմվածք, հովվերգություն թե վիպերգություն: Գրողը գտնում է, որ ամեն մի ազգի պատմություն ազգային ոգու ստեղծագործություններով և ժողովրդական լեգենդներով է զարգանում: Այս կարծիքի ցայտուն ապացույցն էլ իր գրական գոհարներն են, որոնք մեծ անհատի ինքնուրույն կնիքն են կրում և հայ գրականության հարստություններից են: Մի առիթով Թումանյանը նշել է. «Ես իմ լեգենդներն էլ եմ ժողովրդից առել, բոլոր հեքիաթներն ու զրույցներն էլ եմ ժողովրդից ու ժողովրդականիցն առել, ու միշտ աշխատել եմ ու աշխատում եմ ինչքան կարելի է մոտիկ ու հարազատ մնալ. Սասունցի Դավիթը կազմելիս էլ եմ էդպես

¹ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951, էջ 266—267:

² Ա. Ղանալանյան, ժողովրդական բանահյուսության տեղն ու դերը Թումանյանի ստեղծագործության մեջ, «Տեղեկագիր» Եր., 1943, № 3:

արել, նույնիսկ Անուշն էլ, Թմբկաբերդն էլ, մյուսներն էլ, որտեղ քեֆս տվել է, օգտվել եմ ժողովրդական նյութերից ...»:³

Մեծ բանաստեղծը եռանդուն ջանքերի շնորհիվ ավելի է խորացնում իր ընկալումները ու մի-մի գոհարներ դարձնում լսած ու կարդացած բանահյուսական փաստերն ու իրողությունները: Հարուստ գիտելիքներով զինված Թումանյանը ձեռնամուխ է լինում բանահավաքչական դժվարին աշխատանքին՝ գրի առնելով հեքիաթներ, ավանդություններ, գրույցներ, երգեր: Ու մինչև իր կյանքի վերջն էլ Թումանյանը բանահավաքի ջանասիրությամբ բաց չէր թողնում լսած ժողովրդական որևէ իմաստություն, առած ու ասույթ: Այս առումով ուշագրավ է, որ Թումանյանը, մեկնելով Հայաստանի զանազան գավառները (Ղարս, Իգդիր, Ալաշկերտ և այլուր), ծոցատետրում դեպքերի ամենօրյա իր գրառումների հետ պահպանել է նաև տեղացի մի բանասացից «Հազարան բլբուլի» մի նոր գրառում: Շիրվանզադեն, ով ուղեկցում էր Թումանյանին, իր մի հողվածում հիշում է, թե ինչպես պատերազմի թոհուրոհի մեջ էլ Թումանյանը չէր մոռանում իր սիրած զբաղմունքը: Նա նամակներով ու բանավոր հորդորներով խրախուսում էր մտավորականներին հավաքելու ժողովրդական բանահյուսության նյութերը գավառական բանասացներից. «Այսպիսի ծերեր պատահում էին մեզ գրեթե ամեն գյուղում: Սրանց ամեն մեկը ավանդությունների, առասպելների, հին գրույցների, ժողովրդական հավատալիքների մի շտեմարան, մի թանգարան է»:⁴

³ Նվ. Թումանյան, Թումանյանը քննադատ, Երևան, 1939, էջ 268:

⁴ Նվ. Թումանյան, Թումանյանը քննադատ, Երևան, 1939, էջ 32:

Բանաստեղծի բանահյուսական մշակումների մեջ ծանրակշիռ տեղ են գրավում վիպական բանահյուսության այնպիսի սիրված տեսակները, ինչպիսիք են ավանդությունները, լեգենդները, առասպելական գրույցները և ժողովրդական վեպը՝ էպոսը: Ժանրային առանձնահատկությունների խոր իմացությամբ և անգուգական արվեստով են ստեղծվել նրա բալլադներն ու լեգենդները, չափածո առակները: Հայտնի է, որ բանահյուսական հիշյալ տեսակները առավել սերտ ու անմիջականորեն են կապված ազգային ավանդույթներին. դրանք անդրադարձնում են ժողովրդի հնամենի հավատալիքները, սովորույթներն ու ծեսերը, ընդգծում են ազգային երանգը: Թումանյանն այս առթիվ նշել է, թե ամեն մի ազգի բանաստեղծություն ժողովրդական լեգենդներով, ազգային ոգու ստեղծագործություններով է զորանում ու հաստատվում, առաջ է գալիս մի ամբողջ ժողովրդի խոսք և դրանով էլ դառնում պատկառելի: Նա, ձեռքի տակ ունենալով գեղարվեստական ամբողջականությունից զուրկ, կցկտուր ավանդական բեկորներ, փաստագրական տեղեկություններ, տեղագրական ու ծագումնաբանական ստուգաբանություններ, գեղարվեստական լիարժեք ստեղծագործություններ է կերտել, որոնք գեղարվեստական խոսքի պատկերավորությամբ, գաղափարական հարուստ բովանդակությամբ հայ դասական գրականության անփոխարինելի արժեքներ են: «Թմկաբերդի առումը» հռչակավոր պոեմի համար Թումանյանը հենվել է Ե. Լալայանի՝ Ջավախքում գրի առած հետևյալ ավանդության վրա: Բանասացը գրի է առնում Թմկաբերդի քրդերի պատմությունը, որ մի ժամանակ Թմկաբերդում իշխում էր մի իշխան: Պարսից թագավորը եկել, երկար պաշարել էր այս բերդը, սակայն չէր կարողանում գրավել այն. «Իշխանի կինը սիրահարվել է պարսից շահին և ծածուկ առել նորա

հաճությունը յուր հետ ամուսնանալու, եթե ինքը սպանե յուր ամուսնուն և բերդը հանձնե շահին: Եվ իբր նա սպանել է ամուսնուն, հարբեցրել է զորքին և բերդի բանալիները ուղարկել շահին: Շահն այսպիսով տիրել է և հարցրել է մատնիչ իշխանուհուն. «Ես եմ գեղեցի՞կ, թե՞ ամուսինդ»: Եվ երբ սա պատասխանել է, թե ամուսինս գեղեցիկ էր, շահը հրամայել է կապել սորան ձիու ագիից և քարշ տալ մինչև մեռնելը, ասելով, թե «եթե ամուսինդ շահից գեղեցիկ էր, ինչո՞ւ սպանեցիր»:⁵

Ավանդության այս չոր փաստերին Թումանյանը շունչ ու ոգի է տվել՝ կերտելով իր հոյակապ պոեմը, ուր չափածո սյուժետային կառուցվածքի հետ գործողության ասպարեզ է հանել գունեղ կերպարներ «գինով ու կնոջ սիրով» ոգեշնչված ազնիվ ու հայրենասեր իշխան քաջ Թաթուլին, փառասիրությամբ արբած ու դավաճանական իր արարքը զղջացած Թմկա տիրուհուն, դաժան ու նենգ պարսից բռնակալ Նադիր Շահին և այլն: Հոգեցունց այս զրույցը, թրծվելով բանաստեղծի ստեղծագործական քուրայի մեջ, ստացել է դասական պոեմի սքանչելի տեսք: Պոեմի առանձնահատկություններից է նաև այն, որ Թումանյանը ինքը չի պատմում ասքը, այլ դերը վստահում է «թափառական աշուղին», գտնելով, որ պատումի խրատական-բարոյախոսական բնույթն ավելի բնական կհնչի աշուղի մատուցմամբ: Այս պոեմը, որը տոգորված է ժողովրդական խորունկ իմաստությամբ, մարդու անբիծ կոչման ու բարի գործի հավերժ կենդանության մասին է:

Անց ենք կենում . . . միայն անմահ
Գործն է խոսվում լավ ու վատ.

⁵ Լալայանց Ծ., Զավախքի բուրմունք, Թիֆլիս, 1892, էջ 571:

Ա՛խ , երանի ՝ ո՛վ մարդ կըգա,
Ու մարդ կերթա անարատ:

Ժողովրդական խորունկ իմաստության, մարդու անբիժ կոչման, բարի գործի, հավերժ կենդանության մասին են նաև Թումանյանի գրած «Աղավնու վանքը», «Թագավորն ու չարչին» բանաստեղծությունները, որոնց հիմքում նույնպես ընկած են ավանդական փոքրիկ գրույցներ և գրավոր մատենագրական ակնարկներ: Այս ստեղծագործություններում Թումանյանը պատմական որոշակի դեմքեր է ներկայացրել (Նադիր Շահ, Լենկ Թեմուր, Շահ-Աբաս և այլն)՝ դրանք կապելով հայ ժողովրդի պատմական կյանքի օրհասական պահերի հետ:

Հավերժական թեմաների՝ սիրո, անձնվիրության մոտիվներով են գրված Թումանյանի «Ախթամար», «Փարվանա», «Աղջկա սիրտը» և շատ այլ լեգենդներ ու բալլադներ, որոնց սկզբնաղբյուրները հիմնականում հավաքել է բանաստեղծը: Լսելով լեգենդը և տեսնելով Թափարվան լճի կամ, ինչպես նշում է Ղևոնդ Ալիշանը, «Ծով Հյուսիսոյի» չքնաղ գեղեցկությունը՝ «Թումանյանը հուզմունքից իր երկար բազուկները մեկնած դեպի լիճը, մերթ գոռում էր լճից ավելի բարձր, արտասանում քառյակներ, մոնոլոգներ, մերթ բողոքում, մերթ աղերսում: Մինչդեռ ճանապարհին բանաստեղծը լուռ էր: Հավանավար, արդեն խորհում էր Փարվանա դստեր, անշեջ սիրո և հանուն այդ սիրո թիթեռների դարձող Փարվանա կտրիճների մասին»: ⁶

Հենց Տերյանների տանն էլ սկսում է շարադրել «Փարվանան» և բոլորի համար արտասանում է նախերգանքն ամբողջությամբ.

⁶ Ս. Հովհաննիսյան, Պատմություններ Հովհաննես Թումանյանի կյանքից, Եր., 2010, էջ 99:

Բարձրագահ Աբուլն ու մթին սարեր,
Մեջք մեջքի տըված կանգնել վեհափառ,
Իրենց ուսերին, Ջավախքից էլ վեր՝
Բըռնած պահում են մի ուրիշ աշխարհ:

Անգուգական բանագետ Թումանյանը տվել է ժողովրդական բանահյուսությունից օգտվելու և դրանք առանձնահատուկ գործեր դարձնելու սահմանումը. «Ամբողջ իմաստությունը կայանում է նրանում, որ պետք է գիտենալ թե ի՞նչը փոխարինել, ի՞նչը դեն ձգել, ի՞նչը թողնել, ինչ լեզվով և ինչպես պատմել, որ լինի գեղարվեստական և չկորցնի իր առանձնահատկությունն ու հմայքը»:⁷

Ասածի վառ ապացույցն է «Որբը» հայ ժողովրդական ավանդության թումանյանական մշակումը, որի գրելու թիվն անհայտ է: Այն առաջին անգամ տպագրվել է «Թատրոն» հանդեսում, 1899, № 6, «Որբ թռչունը» վերնագրով և «Ժողովրդական ավանդություն» ենթավերնագրով, հեղինակի հետևյալ ծանոթագրությամբ. «Որբ թռչունը Ծոտ կոչված թռչունն է, որ գիշերները տխուր ձայն է տալիս, ասես թե «Սըհա՛կ» է կանչում»: Երկրորդ անգամ, մշակված, տպագրվել է «Հայրենիքիս հետ» ժողովածուի մեջ, հեղինակի մի այլ ծանոթագրությամբ. «Գիշերահավի ցեղից մի փոքրիկ թռչուն է, որ գիշերները տխուր ձեն է տալիս, ժողովուրդը Որբ է անվանում»: Թումանյանը հավանորեն օգտագործել է «Սըհակ» անունով թռչունի մասին Գ. Սրվանձտյանի «Համով – հոտով» – ի (Կ. Պոլիս, 1884) մեջ եղած ժողովրդական ավանդությունը: Պահպանելով բնագրի սյուժետային կմախքը և հիմնական գործող անձանց՝ Թումանյանը յուրօրինակ փոփոխություն է կատարել: Նա երբորը հափշտակող արծվի կամ գազանի փոխարեն ստեղծել է գեղեցկուհի քրոջը

⁷ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951, էջ 96:

առնանգելու եկած չարագործ թուրքին՝ դրանով իսկ նոր միտք հաղորդելով իր ստեղծագործությանը:

— Սըհա՛կ... Սըհա՛կ... գիշերն ի բուն, Կանչում է Որբն աղեկըտուր,
Աշխարհքն այնինչ մըտած խոր քուն, Ինքը մենակ ու շուրջը լուռ:

Աղջիկ էր նա մի ժամանակ, Էնպես աշխո՛ւյժ ու գեղանի.
Թուրքը տեսավ, խելքը զընաց, Ուզեց զոռով հարեմ տանի:
— Ա՛խ, ի՛նչ կըլնի թռչուն դառնամ... Կանչեց ահից խեղճը
հանկարծ,

Ու, բաց էին դռներն երկնից, Լքսեց նըրա ձենը աստված:
Դարձավ թռչուն մի թևավոր, Երկինքն ելավ, թռռա՛վ,
պըրծա՛վ.

Սընա՛ց, մընա՛ց, մինչև էսօր Քաջ ախպերը ետ չըդարձավ:
Էն օրվանից թռչուն քույրը Ցերեկն ահով կուչ է գալի,
Հենց հասնում է մութ գիշերը — Սըհա՛կ... Սըհա՛կ... ձեն է
տալի:

Բանահյուսական նմուշներին նոր հնչեղություն, փայլ ու անփոխարինելի արժեք հաղորդող Թումանյանի դեմ եղել են նաև քննադատական հարձակումներ: Իր ժամանակին գտնվել են որոշ քննադատներ (Դրամբյան, Ռ., Ս. Հ.), որոնք հանդես են եկել Թումանյանի բանահյուսական մշակումների դեմ, համարելով դրանք բանագոռություն: Թումանյանը, իր երկու հոդվածներով («Ոչ գրական ոչնչությունները քննադատ», 1909 թ. և «Հայոց դրամբյանիզմն ու ես», 1913 թ.) բանավեճի մեջ մտնելով, հայկական, ռուսական ու եվրոպական բանահյուսությունից ու գրականությունից բերած բազմաթիվ օրինակներով հիմնավորապես ջախջախեց այդ սին քննադատներին՝ ցույց տալով նրանց տգիտությունն ու ամբարտավանությունը. ««Ոչ-գրական ոչնչությունները քննադատ»-ը լինելով Թումանյանի հրապարակային պատասախանը

Դրամբյանին՝ միաժամանակ ժողովրդական բանահյուսության և գեղարվեստական գրականության հարաբերության հարցի շուրջ թումանյանական տեսության փայլուն արտահայտությունն է»:⁸

Թումանյանն այդ հոդվածներում միաժամանակ փայլուն կերպով վեր հանեց բանահյուսությունից կատարվող գրական մշակումների առանձնահատկությունները՝ բացատրելով, որ «...բանահավաքն ուրիշ է, բանաստեղծն ուրիշ, մեկի գրածի պատասխանատուն ժողովուրդն է, մյուսինը-ինքը: ...Երբ ասում են հեքիաթ, առակ, լեգենդ, ամեն մի գրականությունից տարրական հասկացողություն ունեցող մարդ, մինչև իսկ ռամիկը, գիտեն, որ էդ կնշանակի ընդհանուր ժողովրդական ստեղծագործություն, որ ամեն մարդ էլ կարող է նյութ առնել ու գրել, պատմելով, փոփոխելով, ավելացնելով ու պակասեցնելով, հեռանալով կամ մոտիկ մնալով»:⁹

Սակայն ոչ մի «զգվելի թալան, կեղտոտ ուղի, ավերիչ ժանտախտ, գրական շանտաժ» չնսեմացրին Թումանյան գրական մեծության աստղը: Նրա բոլոր երկերը շնչում են ժողովրդական բանահյուսությամբ, ներծծված են ժողովրդական բանարվեստի, բառ ու բանի գունագեղ եղանակներով: Թումանյանի համար բանահյուսությունը դրդապատճառ ու ազդակ է եղել ժողովրդական նոր երկեր վերստեղծելու և հրաշակերտելու համար: Նրա արվեստի գաղտնիքը պատմելու շնորհքն է: Շատ դիպուկ բնութագրում է տվել Ստ. Զորյանը ասելով, թե Թումանյանն իր արվեստով նման է կախարդի ու նրա յուրաքանչյուր երկը ժողովրդական մի

⁸ Սուսաննա Հովհաննիսյան, Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության պատմությունը(1900-1912թթ.), Երևան, 2012, էջ 419:

⁹ Նվ. Թումանյան, Թումանյանը քննադատ, Երևան, 1939, էջ 267-268:

կենդանի խոսք է՝ իր ձևերով, երանգներով ու հույզերով: Օգտագործելով բանահյուսական նյութը՝ Թումանյանը ստեղծել է բարձրարժեք երկեր, որոնք հազեցված են ժողովրդական իմաստություններով, հաղթանակի հավատով, արդարության, բարոյական մաքրության, մարդկային վսեմ երազանքներով:

Նրա բոլոր գործերը գրված են բանաստեղծի ասած «ուժեղ, հարուստ, կենդանի լեզվով», հատկանշվում են պատումի խոր հուզականությամբ, ճշմարիտ արվեստի ազդեցիկ ուժ ունեցող բարոյախրատական, ուսուցողական-դաստիարակչական բնույթով: Բանահյուսությունը մեծապես օգնեց Թումանյանին իր ժողովրդի հոգեբանությունն ու մտածելակերպը հասկանալու գործում՝ դառնալով նրա ստեղծագործության ժողովրդայնության ու համազգային ճանաչման կարևորագույն գործոններից մեկը: Թումանյանի պատգամն է՝ ժողովրդին խոսք ասողը պետք է մեծահոգի լինի և ոչ թե նեղ ու կրքոտ: Նեղսիրտ, նեղհոգի մարդը ժողովրդական լինել չի կարող, ինչպես չարը՝ քրիստոնյա:

РЕЗЮМЕ ОВАННЕС ТУМАНЯН И ФОЛЬКЛОР НУНЕ МКРТЧЯН

Богаты и разносторонны связи Туманяна с фольклором, потому что для произведений Туманяна это жизненно важный родник и питающая земля. Ни один из авторов не воспринял и не употреблял в своих произведениях так глубоко знание и смысл фольклора, как Туманян. Фольклор очень помог Туманяну понять психологию и суждение народа, которое стало важным фактором для народного и всемирного признания. Вот один из афоризмов Туманяна. человек, который представляет

народное слово, должен быть великодушным, а не маладушным и злым.

Ключевые слова: народный фольклор, произведение автора, жизненно важный родник, питающая земля, психология и суждение народа.

ABSTRACT

HOVHANNES TUMANYAN AND ARMENIAN FOLKLORE NUNE MKRTCHYAN

Tumanyan's links with folklore are rich and comprehensive, the latter being the basis and source for his works. Nobody else but Tumanyan had such a deep perception of the notion of the folklore, as well as nobody else applied it so purposefully in his works. Folklore greatly helped him to understand the psychology and mindset of his nation thus becoming one of the most important factors for the popularity of his works and his nationwide recognition. Tumanyan's message is as follows: The one who speaks to people is to be generous but not narrow-minded and passionate.

Key words: Folklore, the writer's works, basis, source, the nation's psychology and mindset.

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԱՐԺԵՔԸ**

ՄՅՈՒԶԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*«Նրա կախարդական գրիչը ուր որ դիպավ, կատարվեց
խսկական արվեստի հրաշքը՝ լինի առակ թե քառյակ, հեքիաթ
թե պատմվածք, հովվերգություն թե վիպագրություն:
Մեր թոհչքը Թումանյանի արվեստի գոհարակերտ
բարձրունքից այն կողմ չի անցել...»:*

Ավետիք Իսահակյան

Հովհաննես Թումանյանը հայ դասական մանկագրության անսպառ լուսատուն է, որ շարունակում է ջերմացնել ու ազնվացնել, դաստիարակել ու կրթել նորանոր սերունդների: Միանգամայն իրավացի է Ավ. Իսահակյանը՝ նկատելով, որ Թումանյանն այն հոյակապ բարձունքն է, որից այն կողմ չանցավ հայ մանկական գրականությունը:

Երեխայի կրթության ու դաստիարակության գործում անգնահատելի է մանկական գրականության դերն ու նշանակությունը: Ճիշտ ընտրված մանկական երկը մատաղ սերնդի ձևավորման առումով անգնահատելի է:

Ծանոթանալով Թումանյանի մանկական ստեղծագործություններին, երեխաներն ամբողջ հոգով զգում են դրանց կախարդական հմայքը, հիանում հեղինակի հզոր իմաստությամբ: Այդ բոլորն անջնջելի հետք են թողնում նրանց մտավոր ու բարոյական զարգացման վրա:

Թումանյանի մանկական երկերը բացառիկ դեր են խաղում երեխայի դաստիարակության ձևավորման գործում:

Նրանք իրենց արժեքով մանկավարժական մեծ նշանակություն ունեն:

Թումանյանը ժողովրդական ավանդապատումները անցկացնելով իր ստեղծագործության բովով, միշտ էլ հարազատ է մնացել երեխաների զարգացման առողջ մտածողությանը և ոճին: Նա ժողովրդական բանավոր արվեստի գանձարանից պեղում ու վերակերտում է մանուկների, պատանիների հուզաշխարհը թափանցող, պարզությամբ ու խորությամբ փայլող հանճարեղ գործեր: Այդ են վկայում նրա լեզենդները, պոեմները, հեքիաթներն ու գրույցները:

Ժողովրդական աղբյուրից էլ սնվում ու սկզբնավորվում են երեխայի առաջին պատկերացումներն աշխարհի մասին, ձևավորվում է նրա բարոյական նկարագիրը: Հնչում է իմաստուն գրողի պատգամը¹.

«Մի՛ լինի ուրազի պես, Միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ, Այլ եղի՛ր սղոցի պես, Մին դեպի քեզ, մին դեպի մեզ»:

Երեխայի համար աշխարհը հրաշքների հանդես է: Նա դժվար է տարանջատում երազն ու իրականությունը: Կարդալով կամ լսելով «Առաջին ձյունը», «Չարի վերջը», «Փիսիկի գանգատը», «Գառնիկ ախպեր», «Ուլունք» և այլ ստեղծագործություններ՝ երեխան սկսում է ճամփորդել արթուն մտքի ու երևակայության զուգորդումներով ստեղծված աշխարհում: Ձևավորվում է կիսաերևակայական, կիսաիրական մի վիճակ. նա առաջին անգամ անցնում է զգացմունքային փորձությունների միջով. կարդում է դեպքերի, մարդկանց, կենդանիների մասին և սկսում ինքնուրույն քայլեր կատարել: Թումանյանը երեխայի առջև աստիճանաբար բացում է կյանքի իրական

¹ Հ.Թումանյան Երկերի ժողովածու, հ. 4, էջ 328

պատկերը՝ ձգտելով ընդարձակել նրա աշխարհաճանաչողությունը, աննկատելիորեն մասնակցելով երեխայի եսի ձևավորմանը:

Ժողովրդայնության հետ մեկտեղ կարևոր է նկատել Թումանյանի ռեալիստական սկզբունքները: Մանկագրից իրականության խոր և բազմակողմանի ճանաչում պահանջող մեծ մանկավարժի Թումանյանի՝ դաստիարակիչ դերը համարում է անհնարին՝ առանց կյանքի ճշմարտացի և տիպական արտացոլման:

Թումանյանի մանկական ստեղծագործությունները կենդանի են, աշխույժ, քանի որ դա ժողովրդի լեզուն է: Կարդալու ընթացքում երեխան անցնում է իրադարձությունների յուրօրինակ շղթայով, որը լի է զարմանալի դեպքերով, հերոսներով, հաղթանակներով ու պարտություններով: Հոգեբանական փորձությունները, որոնց միջով անցնում է երեխան, հնարավորություն են տալիս վերագնահատելու շրջապատող ամեն ինչը և ամենքին. փոխվում են երեխայի արժեքային համակարգը և հոգեբանությունը, հարստանում է կենսափորձը: «Կիկոսի մահը», «Ծիտ», «Անհաղթ աքլորը», «Խելոքն ու հիմարը », «Տերն ու Ծառան», «Ուլիկը» և այլ գործերում երեխան աստիճանաբար բացահայտում է աշխարհի բարի ու չար, գեղեցիկ ու սգեղ կողմերը, վերագնահատում նախասիրություններն ու ցանկությունները, քայլերն ու արարքները՝ աստիճանաբար հասկանալով բարոյական բարձր արժեքների նշանակությունը մարդու կյանքում:

Թումանյանն ինքը կյանքում երեխաների դաստիարակության փայլուն օրինակ էր ցույց տալիս. լինելով բազմազավակ հայր, սիրով ու ամուր թելերով երեխաների հետ

կապված Թումանյանն անչափ մտահոգված էր նրանց կրթության ու դաստիարակության հարցերով²:

Թումանյանի մանկական գործերը նպաստում են նաև անհատի՝ իբրև սոցիալական անձի ձևավորմանն ու զարգացմանը: Նրա երկերում հանդես են գալիս բազմապիսի բնավորություններ, որոնք քայլ առ քայլ բացում են իրենց հոգեբանությունն ու ներաշխարհը՝ մանրագնի քննության ենթարկվելով երեխաների կողմից:

Թումանյանի ստեղծագործությունների միջոցով երեխաները ծանոթանում են նաև բնությանը, կենդանիներին: Բնագիտական հավաստիությամբ և գեղարվեստական փայլով հորինված այդ երկերը բնությունն ու կենդանական աշխարհը մանկան համար դարձնում են ճանաչելի ու սիրելի: Թումանյանը հաճախ անձնավորում է կենդանիներին, շնչավորում առարկաներն ու երևույթները՝ բացահայտելով մարդ-բնություն-կենդանական աշխարհի անտրոհելի կապը, սովորեցնելով երեխաներին սիրով և զգույշ մոտենալ բնաշխարհին ու նրա բնակիչներին: Ընթերցելով «Եղջերուն» պատմվածքը՝ երեխան գուցե առաջին անգամ բախվում է մարդկային դաժանությանը, և նրա փոքրիկ սիրտը սկսում է ցավել մարդու ձեռքով սպանված ձագի կորուստը ողբացող եղջերուի համար: Երեխայի համար բացահայտվում է մի նոր ճշմարտություն. կենդանիներն էլ, ինչպես մարդիկ, կարող են ունենալ եւ ունեն զգացմունքներ³:

Թումանյանի՝ կենդանիներին նվիրված ստեղծագործությունները ոչ միայն սեր էւ գորովանք են ներշնչում կենդանիների նկատմամբ, այլև ձևավորում են մի շարք

² Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1969

³ Նվարդ Թումանյան, Հուշեր և զրույցներ, Ե. 1969

հատկանիշներ՝ անվախություն, դժվարությունները հաղթահարելու հնարամտություն, անելանելի իրավիճակներում գորել կամք դրսևորելու կարողություն: Այսպես՝ «Արջաորս», «Գելը» պատմվածքներում հերոսներն անսպասելիորեն հայտնվում են արջին, գայլերին դեմ հանդիման, սակայն գործի դնելով հնարագետ միտքն ու անվեհեր կամքը, կարողանում են հաղթահարել ստեղծված խոչընդոտը:

Թումանյանը լավ էր գիտակցում, որ մանկական գրականության առանձնահատկություններն ամեն գրող չէ, որ կարող է հաշվի առնել և հաղթահարել մանկական լիարժեք գրվածքներ ստեղծելու հետ կապված դժվարությունները: Թումանյանը գտնում էր, որ «հեշտ ու հանաք բան չէ» մանկական գրվածք գրելը: Մանկական գիրքը պետք է մատչելի լինի տվյալ հասակին, հաշվի առնի երեխաների բազմաթիվ հետաքրքրությունները:

Ըստ Թումանյանի՝ մանկությունը մարդու կյանքի այն շրջանն է, երբ նա սնունդ է առնում ու զարգանում շարունակ, այդուհանդերձ նա պետք է շարունակի աճի ու զարգանա: Այդ տեսակետից կարևոր են մանկագրի հետևյալ կենսական տպավորությունները. «Ինչ վերաբերում է սնունդին, ամեն բան, ինչ որ շրջապատում է նրան, ինչ որ գոյություն ունի աշխարհքում, սնունդ է նրա համար»⁴:

Անվանի մանկագիրը գտավ «սնունդ տալու» իսկական եղանակը. դրա վկայություններն են մանուկների համար կերտած նրա անկրկնելի ստեղծագործությունները:

Թումանյանի՝ տարբեր ժանրերով գրած երկերը՝ իրենց բովանդակային և ոճային բազմազանությամբ, զարգացնում են երեխայի լեզվամտածողությունը, հարստացնում բառապաշարը: Դրանց միջոցով փոքրիկ ընթերցողը յուրացնում է

⁴ Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Ե., 1951, էջ 329:

մայրենի լեզուն ամբողջ շքեղությամբ, ժողովրդական հարուստ բառապաշարով, թևավոր արտահայտություններով: Բանաստեղծի պարզ ու վճիտ խոսքը ուղղակիորեն հասնում է երեխայի հոգուն և արձագանք գտնում այնտեղ:

Թումանյանի մանկական ստեղծագործություններում թվացյալ պարզության տակ թաքնված են մեծ իմաստներ: Նկատի առնենք մի քանի հեքիաթներ: ***Մեր անխելք մարդը, Կիկոսը և Քաջ Նազարը, որ եկան այլ աշխարհներից ու հաստատվեցին մեզանում:***

Քանի որ Անխելք մարդը, Կիկոսը և Քաջ Նազարը մեզնից չեն, հայ գենից չեն առաջացել, հայ մայրը չէ այդպիսիներին լույս աշխարհ բերել: Դրանք այլ աշխարհներից են՝ տարբեր ճանապարհներով: Բայց իրականում Անխելք մարդը, Կիկոսը եւ Քաջ Նազարը վաղուց են հայ իրականություն մտել: Այնպես որ, ստիպված ենք այդպիսիներին առայժմ մերը համարել՝ հուսալով, որ օրերից մի օր հայոց արարչադրոշմ ազգի, գենի ու հոգետիպի մաքրման դեպքում դրանցից ու դրանց հոգեգծերից կազատվենք: Մեր անգուգական հեքիաթագիր Հովհաննես Թումանյանը «Անխելք մարդը», «Կիկոսի մահը» և «Քաջ Նազարը» հեքիաթների նյութը վերցրել է միջնադարյան հեքիաթներից, զրույցներից, հրաշալիորեն մշակել է:

Անխելք մարդը

Այս հեքիաթի իմաստն այն է, որ մարդ իրական կյանքով պետք է ապրի: Հակառակ դեպքում՝ իրականությունից վերանալու, սնահավատությանն ու պատրանքների տրվելով վերացական բաների կեր կդառնա: Մեր մեծ գրողը բացասական վերաբերմունք է արտահայտում կրոնների նկատմամբ, որոնք իրենց ոչ իրական «աստված»-ներով ու

նրանց իբր ասածներով՝ մարդկանց անխելքության են հասցնում ու որպես մարդ վերացնում: Գրողը մերժողական վերաբերմունք է արտահայտում ամեն մի վերացական, կյանքից չբխող ու կյանքին չհանգող գաղափարի ու գաղափարախոսության նկատմամբ: Այսօր երկիրը նույնպես ողողված է սուտ գաղափարներով: Մեր գրողի հեքիաթը մեծ այժմեականություն է ձեռք բերում:

Կիկոսի Մահը

Այս հեքիաթում հոր կողմից ջրի ուղարկված աղջկա աչքին աղբյուրի գլխին բարձր ծառ է երևում և պատրանքների գիրկն է ընկնում՝ մոռանալով աղբյուր գալու նպատակը. «Հիմի որ ես մարդի գնամ...»: Պատրանքը վարակիչ է լինում «Կիկոսի» ողջ ընտանիքի համար: Ընտանիքի միակ «խելոք» հոր առաջարկով ունեցած միակ եզր մորթում, մի քթոց այլուրը հաց թխում, ժողովրդին կանչում, ժամ-պատարագ անում, «Կիկոսի քելեխն ուտեցնում», և այդպես նոր «հանգստանում» են: Հեքիաթի իմաստն այն է, որ հիմար, պատրանքային բաներով չպետք է ապրել, դա վարակիչ կարող է լինել շրջապատի համար ու մեծ վնասներ բերել: Այն մարդուն կարող է իրականությունից կտրել, նրան իրենով անել, գրկել գործնականությունից, ապրելու կամքից, նրան հիմար քայլերի դրդել, ծուլություն ներարկել և այլն: Հեքիաթից գալով մեր իրականություն՝ տեսնում ենք դրա ողբալի հետևանքները:

Քաջ Նազարը

Թումանյանի անմահ հեքիաթներից մյուսի՝ Քաջ Նազարի վերջին մասը մեջբերենք. «Ասում են՝ միջև էսօր էլ դեռ

ապրում ու թագավորում է Քաջ Նազարը: Ու երբ քաջությունից, խելքից, հանճարից, մոտը խոսք են գցում, ծիծաղում է, ասում է. Ի՛նչ քաջություն, ի՛նչ խելք, ի՛նչ հանճար. դատարկ բաներ են բոլորը: Բանը մարդուս բախտն է: Բախը ունե՞ս՝ քեֆ արա: Եվ ասում են՝ մինչև էսօր էլ քեֆ է անում Քաջ Նազարը ու ծիծաղում է աշխարհքի վրա»: Ասվածը չի՞ համապատասխանում թե՛ Թումանյանի և թե՛ մեր ապրած իրականության իշխող դրվածքին, դրանցում էլ քաջնազարները՝ անպիտանները, բախտախնդիրները, ծուլերը, բուն իրենց տանը արհամարհվածները, քաջության, խելքի, հանճարի վրա ծիծաղողները, հանկարծակի աղա դարձողները, որևէ դեր տանելու համար բնական հասունացում չապրողները, ուրիշների վաստակի մեջ մտնողները, հանկարծակի ձեռք բերած պաշտոնին լինելով՝ երկիրն ու երկրի բնակիչներին իրենց բռան մեջ պահողները չեն իշխում...

Հ. Թումանյանի ստեղծագործությունները նման են կախարդական քարտեզի, որի միջոցով երեխան ճանապարհորդում է հայրենի երկրով, ծանոթանում սոցիալական, քաղաքական, պատմական իրադարձություններին: Վաղ տարիքից երեխան ճանաչում է իր նախնիներին, ծանոթանում հերոսական կյանքին, գործած սխրանքներին ու փորձում նմանվել նրանց: Ջարմանալի չէ, որ երեխան անթաքույց հրճվանքով է կարդում Սասունցի Դավթի, Թաթուլ իշխանի, Խրիմյան Հայրիկի և այլ հերոսների մասին գրույցներն ու պատմությունները: Երեխայի մեջ ձևավորվում է ազգային արժանապատվության զգացումը, հայ լինելու ինքնագիտակցությունը, հոգևոր արժեքների ժառանգորդը լինելու հպարտությունը: Հայրենիքի նկատմամբ սիրո, արժեքների վերագնահատության հրաշալի օրինակ է «Ամենից լավ տունը» թարգմանված բանաստեղծությունը: Ձերձ մնալով սառը, կանոնակարգված քարոզներից եւ առաջնորդվելով

երեխաներին դաստիարակելու միայն իրեն հատուկ կախար-
դական մեթոդով՝ Հ. Թումանյանը շարունակում է հարստաց-
նել երեխաների ներաշխարհը, արժեքային համակարգը,
ներարկում բարություն, ազնվություն, աշխատասիրություն և
այլ հատկանիշներ:

Ի տարբերություն որոշ մանկագիրների, որոնք իրենց
գրվածքների լեզուն հարմարեցնում են երեխաների լեզվին,
Թումանյանը չի իջեցնում իր մանկական ստեղծագործու-
թյուններում լեզվի գրական-գեղարվեստական մակարդակը:
Յուրաքանչյուր մանկական երկ գրելիս բանաստեղծը հաշվի
է առնում փոքրիկի հետաքրքրությունները, նրան տանում
երփներանգ գույների ու հեքիաթների կախարդական աշ-
խարհը: Անվանի մանկավարժը գտնում էր, որ չպետք է
չարաշահել երևակայությունը, որ մանկական երկում ամեն
ինչ պետք է լինի մատչելի, պատկերավոր: Այս առումով
հազվագյուտ օրինակ է «Գետակը», որը երկխոսություն է
գետակի և մանկան միջև: Այստեղ մի կողմից ընթերցող
մանկան համար պարզվում է, թե ինչ մեծ դեր ունի ջուրը
բուսական ու կենդանական աշխարհի, հատկապես մարդու
համար, մյուս կողմից փառաբանվում է աշխատանքը⁵.

«-Ո՛ր ես վազում
Այդպես արագ,
Ա՛յ դու կայտառ,
Սիրուն գետակ.
Կանգ առ, խաղանք
Էս ծառի տակ:
Դե՛, տեսնո՞ւմ ես,
Մնա՛ս բարով,
Ճամփաս ցանած

⁵ Հ.Թումանյան Երկերի ժողովածու, հ. 2, 1959, էջ 220

Հազար գործով.
Դադար չունեն
Ես մինչև ծով»:

Հ. Թումանյանի մանկական երկերը՝ իբրև արժեքավոր նյութեր, կարող են ուսումնասիրվել և ուսուցանվել նաև առաջադեմ մանկավարժական մեթոդների կիրառման տեսանկյունից:

Ըստ Հ. Գարդների «Բազմակի զարգացումների տեսության»՝ ճիշտ ուսուցումը, այդ թվում նաև գրական երկի ուսուցումը երեխայի մեջ կարող է ձևավորել ու զարգացնել ուր հիմնական կարողություններ՝ լեզվական, տրամաբանական-մաթեմատիկական, տարածական, շարժողական, երաժշտական, միջանձնային, ներանձնային և բնության ու շրջակա միջավայրի ճանաչողության: Ուսումնասիրելով Թումանյանի մանկական երկերը՝ դժվար չէ համոզվել, որ դրանցից յուրաքանչյուրն այս կամ այն չափով զարգացնում է վերը նշված կարողությունները: Օրինակ՝ գրողի և նրա երեխաների կազմած ու հրատարակած խաղերը ոչ միայն ցույց են տալիս հոգևոր սնունդ տալու և ստանալու պատկերավոր և արդյունավետ ճանապարհը՝ ընդլայնելով երեխայի աշխարհաճանաչողությունը, այլև զարգացնում են միտքը, խոսքը, տրամաբանությունը, շարժողական կարողությունները և այլն:

Երեխաներին ճիշտ և համակողմանի դաստիարակելու նպատակով Թումանյանը մանկագիրներից պահանջում է, որ նրանք թարգմանեն համաշխարհային մանկական գրականության արժեքավոր նմուշները և դրանք դարձնեն հայեցի ու արտահայտիչ: Նա իր թարգմանական գործունեության ընթացքում տվեց կատարյալ թարգմանության օրինակներ, որոնք աչքի են ընկնում թեմայի ընտրության, ժանրային ու

ոճական առանձնահատկությունների գործում ցուցաբերած վերաբերմունքով:

Թումանյանի հեքիաթներն ունեն բուժիչ հոգեբանական և դաստիարակչական նշանակություն. օգնում են երեխային ոչ միայն ճանաչելու շրջապատն ու միջավայրը, այլև իրեն զգալու ավելի պաշտպանված ու ինքնավստահ՝ օգտագործելով իրենց սիրելի հերոսների փորձը, կիրառած հնարքները:

Թումանյանը գտնում է, որ հեղինակը պետք է ակտիվ վիճակում պահի երեխային, կապ հաստատվի նրա և պատմողի միջև, որով պետք է ջերմություն և անմիջականություն հաղորդի ստեղծագործությանը:

Մեծանուն բանաստեղծ-մանկավարժի գեղագիտական պահանջները գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում մանկական գրականության վերաբերյալ այսօր էլ պահպանում են իրենց նշանակությունը նյութական ու հոգևոր արժեքների մրցապայքարում:

Հովհաննես Թումանյանի՝ երեխաներին նվիրված ստեղծագործություններն ու թագմանություններն իրենց բացառիկ և անփոխարինելի նշանակությամբ եղել են և կման երեխաների դաստիարակության ճիշտ խորհրդատուն ու մեծ ջատագովր:

РЕЗЮМЕ

РОЛЬ И ПЕДАГОГИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ПРОИЗВЕДЕНИЯ ОВАНЕСА ТУМАНЯНА СЮЗАННА ОГАНЕСЯН

Ованес Туманян-неисчерпаемая иллюстрация армянской классической детской литературы, которая продолжает согревать и облагораживать, воспитывать и обучать новое поколение.

Произведения Туманяна похожи на волшебную карту, посредством которой ребенок путешествует по родной стране, знакомится с социальными, политическими, историческими событиями. С раннего возраста ребенок узнает своих предков, знакомится с героической жизнью, подвигами и пытается уподобиться им.

Произведения Ованеса Туманяна своим исключительным и незаменимым значением были верным советником, великим защитником и воспитателем детей.

Ключевые слова: Великий наставник, консультант, детская литература, воспитание, образование, народный, ранний возраст, психология, учебное пособие.

ABSTRACT

HOVHANNES TUMANYAN'S CREATIVES: PERSONAL VALUE: SYUZANNA HOVHANNISYAN

Hovhaness Tumanyan is an infinite luminous of Armenian classical childhood that keeps warming and upbringing, bringing up and educating new generations.

H Tumanyan's works are like a magic map, through which the child travels through his homeland and gets acquainted with social, political and historical events. From an early age, a child recognizes his ancestors, gets acquainted with heroic life, acts of deeds, and tries to imitate them.

Children dedicated to Hovhaness Tumanyans creativity and kings have been of exceptional and irreplaceable importance and are the right advisor and great advocate of upbringing children.

Key words: Great mentor, counselor, children's literature, education, upbringing, folk, early age, psychology, tutorial

ՎԱԼԵՐԻ ՄԻՐԶՈՅԱՆ

Կյանքի իմաստի, մահվան և անմահության, բնության, տիեզերքի և Աստծո մասին խորհրդածություններն առհասարակ բնորոշ են ամեն մի մտածող, առավել ևս ստեղծագործ մարդու: Թեպետ կյանքի միապաղաղ ընթացքը, առտնին հոգսերը, տեխնիկական և տեղեկատվական ժամանակակից միջավայրի բթացնող ազդեցությունը մեզ հաճախ զրկում են խորհրդածության հնարավորությունից, ուստի և խորհելու պահանջմունքից, մինևույն է՝ կյանքում պահեր են լինում, երբ արթնանում է իմաստի որոնման անհագ ծարավը, մղում է մեզ դեպի անվերջանալի մտածումների աշխարհի սկզբի, տիեզերքի բնույթի, բանական մարդու ծագման և գոյության առեղծվածի մասին: Առօրյայից վերացման այդ երանելի պահերին մեզ միասնական ենք զգում ամբողջ բնության հետ, մեր միտքն ու հոգին մի տեսակ սավառնում են դեպի տիեզերքի խորքերը, թվում է՝ սկսում ենք հասկանալ Արարչի իմաստությունը: Մտքի և հոգու պայծառացման այդ պահերին «փիլիսոփայում» ենք բառիս ստույգ իմաստով (իրական կյանքում «փիլիսոփայելու» իմաստը, ավա՞ղ, վարկաբեկված է): Եվ մեր հոգեհարազատ զրուցակիցն է դառնում հայոց հանճարը՝ բանաստեղծ փիլիսոփա Հովհաննես Թումանյանը: Որքա՞ն լավ է նա հասկացել և մեզ փոխանցել մարդ արարածին հասու այդ նվիրական պահը⁶.

Կուրծքս երբեմն եռ է գալիս և հուզվում.

⁶ **Հովհ. Թումանյան**, ԵԼԺ, հատ. առաջին, Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, էջ 78: Հետագա բոլոր հղումները սույն ժողովածուից են, ուստի հետայսու տրվելու են տեքստում՝ փակագծերի մեջ. նշվելու է հատորը, ապա էջը:

*Ես մնում եմ անշարժ, ինչպես լուռ արձան,
Միտքս թռչում դեպի երկինք և սուզվում
Տիեզերքի խորության մեջ անսահման...*

Հիրավի, գոյության հիմքի որոնումները, մարդ արարածի կյանքի իմաստավորման փորձերը, բնության խորախորհուրդ դրսևորումների շուրջ թումանյանական խոհերը համատիեզերական են, անհատի և հանրության կյանքի բազմաբնույթ խնդիրների վերաբերյալ իմաստասեր բանաստեղծի մտորումները ընդգրկում են անցյալը, ներկան և ապագան: Նա ինքն է արձանագրում մտքի այդ հզորագոր թռիչքը, հուզախոիվ այն պահը, երբ ամեն ինչ հասու է մարդկային ըմբռնմանը, և իմացության համար չկա սահման ու խոչընդոտ: Եվ անտարակույս, Հովհաննես Թումանյանն ապրել է այդ անգուգական պահերը, երբ մարդն ու իր աշխարհն այնքա՛ն ներդաշնակ են թվում, այնքա՛ն սքանչելի է մտքի երկնասլաց ճանապարհորդությունը, տիեզերքի զարմանահրաշ գեղեցկությամբ զմայլվելը, արարչագործության գաղտնիքների հաղորդակից դառնալը:

Բնավ պատահական չէ, որ հայոց մեծ բանաստեղծը իր կյանքի և գործունեության վերջին շրջանը ինքն է բնութագրել որպես «փիլիսոփայական»: Տիեզերքի և մարդու կյանքի առեղծվածի ճանաչման, մարդկանց համակեցության տարատեսակ դրսևորումների էության պարզաբանման, սեփական «եսի» հայեցողության ձգտումը Հովհաննես Թումանյանին դարձրել են բնության և հանրության կյանքի նրբին դիտարկուն, զգայուն վերլուծաբանը (1, 158):

*Ես հազար աչքով բաներ եմ տեսնում,
Որ թաքնված են լռության ետև,
Հազար ախանջով ձայներ եմ լսում,
Որ դեռ սրտերում շշուկ են թեթև:*

«Տիեզերքի ընթերցումը» բանաստեղծությամբ Հովհաննես Թումանյանը դիմում է տիեզերքին, շնորհակալություն է հայտնում իրեն տված դիտողունակության համար, նաև ունակության համար՝ «չափելու ասեղ բացերն անչափի», «անհունի հրճվանքի» կարողության համար.

*Վերանում է վեր հոգիս զըվարթուն –
Չըկա մոտ ու տար, չըկա վեր ու ցած,
Տիեզերքն ամբողջ հայրենիք ու տուն,
Ու էս մի ազատ անտարբեր աստված:*

Տիեզերքը՝ բանաստեղծի հայրենիք և տուն, նրա հոգին տիեզերքում է ճամփորդում (2, 161), «մինչև լուսեղեն ոլորտն անթախիծ» (1, 281), տիեզերքն է ողջ պատել, տիեզերքի տերն է (2, 25). սրանք բնավ պատահական ձևակերպումներ չեն, այլ Հովհաննես Թումանյանի կենսափիլիսոփայության արտահայտությունը: Անհատի և տիեզերքի կենսական կապի ըմբռնումը բանաստեղծը քանիցս շարադրում է նաև հրապարակախոսական հոդվածներում և նամակներում: «Կյանքն իր ամբողջության մեջ մեծ է, շատ է մեծ: Կյանքը տիեզերական կյանքն է, և մարդու կյանքի ամբողջ վեհությունն ու քաղցրությունն էլ հենց էն է, որ իր շրջապատի միջոցով ապրի էն մեծ կյանքով» (7, 7): Սա էլ ասիական փիլիսոփայելու հոգեամոքիչ դերի ըմբռնումն է՝ առտնին դժվարությունների հաղթահարումը աշխարհի և սեփական կեցության ամբողջական հայեցողության կերպով. «Հետաքրքրվելով տիեզերական մեծ հարցերով, բնությունով, մարդ կմոտենա տիեզերքին ու կյանքի մանր խնդիրները կփոքրանան, մարդ էլ չի հուսահատվի»⁷: Քանիցս հանդիպում ենք միևնույն մտքի փոքր-ինչ տարբեր ձևակերպումներին. «Մարդը գիտության, գրականության, գեղարվեստի աշխարհում ապրելով, կյանքը

⁷ Ն. Թումանյան, Հուշեր և զրույցներ, Եր.: Էդիթ Պրինտ, 2009, էջ 139:

վայելել պիտի իմանա»⁸, «ամենաբարձր բանը աստվածանալն է՝ բարձրանալ, խորանալ, ներշնչվել խոհերով ու զգացմունքներով և ստեղծագործել»⁹:

Կյանքը տիեզերական ընդգրկում ունի, բայց նման ընդգրկմամբ ապրելը, բուն այդկերպ ապրելու «վեհությունն ու քաղցրությունը» ամեն մեկիս հասու չէ: Բազում հանգամանքներ անխուսափելիորեն նեղացնում են ընտրության տիրույթը, և «տիեզերական կյանքը» աստիճանաբար նեղանում, հանգում է առտնին հոգսաշատ կեցությանը: Շատ հիմնավոր և տպավորիչ է Հովհաննես Թումանյանի բնութագրումը. «....Մարդը սովորաբար չի կարողանում ապրել էն մեծ կյանքով, ապրում է միայն նրա մի մասով-մարդկության կյանքով: Սակայն նույնիսկ դրանով-մարդկության կյանքով ապրելու էլ քչերն են ընդունակ: Չէ՞ որ կյանքն ինչպես անսահման մեծ է, էնպես էլ փոքր է անսահման: Եվ ահա ընդհանրապես ապրում են ավելի նեղ ու փոքրիկ կյանքերով: Կա ազգային կյանք, պետական կյանք, դասակարգային կյանք, կուսակցական կյանք, ավելի՛ նեղ թայֆայական կյանք, թշնամու բանակների պես կանգնած իրար դեմ մինչև էն պստիկ ես-ը... Էսպես էլ գնալով, գնալով էնքան է նեղանում ու նեղսրտում, մինչև կտրում է մարդ-արարածի ազատ շունչը....» (7, 7–8): Եվ հասկանալի է, որ այդօրինակ մասնատմանը հարկավոր է հակադրել ամբողջականության ընկալումը, եթե մարդը ձգտում է թեկուզ որոշ չափով ընդլայնել սեփական կյանքի ընդգրկումը, հետևապես նաև կյանքի իմաստավորման տիրույթը:

Անձամբ Հովհաննես Թումանյանի համար կյանքի իմաստավորման մնայուն հիմքերից մեկը հարազատ միջավայրն է,

⁸ Ն. Թումանյան, Հուշեր և զրույցներ, էջ 139:

⁹ Նույն տեղում, էջ 228:

հայրենիքը: Պատահական չէ, որ «տիեզերքի ճամփորդ» քանաստեղծը խոստովանում է իր և հայրենիքի նույնացումը, և «Անհայտի» հեռուներից և «Անհունի» որոնումներից նա մշտապես կարոտով վերադառնում է հայրենի եզերք, ապրում ազգակիցների ցավով և հավատով: Խորհող անհատի և նրա կենսական միջավայրի խորքային ապրումակցման, «եսի» գոյության իմաստը հավաքական «մենքի»՝ հայրենիքի բովանդակ կյանքի ներսում որոնման, թերևս, առավել բնորոշ օրինակը Հովհաննես Թումանյանի 1915 թ. «Հայրենիքիս հետ» նշանավոր քանաստեղծություն-խոստովանությունն է. «Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռվում // Ու իմ սիրտը իմ մըտքի հետ անհուններն է թափառում, // Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ՝ // Մըղկրտում է սիրտըս անվերջ քո թառանչից աղեկեզ»: Համազգային ցավը, անդառնալի կորուստն է ամեն մի հայ մարդու կյանքի իմաստավորման հիմքում, բայց և անսասան հավատն ու վստահությունը հայության կենսունակության, ամենահաղթ գործության, լուսավոր ապագայի հանդեպ: Մեփական կյանքը իմաստավորելով հայոց կյանքի արշալույսով՝ քանաստեղծը տեսնում է այն «մեծ խոսքը», որ հայությունն ասելու է մարդկությանը, այն երանելի երկիրը, որին ձգտում է ամեն մի հայ. «Հույսի՜ հայրենիք, // Լույսի՜ հայրենիք»:

Հայրենի եզերքը Հովհաննես Թումանյանի գրուցակիցն է. քանաստեղծը երկխոսության մեջ է բնության հետ՝ լեռներն ու ձորերն արձագանքում են, պատասխանում նրա հոգու կանչերին: Հայոց բնաշխարհը և հայությունն ինքը՝ հայ մարդու հոգին ու շունչը, նիստուկացր, ուրախությունն ու դառնությունը, անցյալի իմացությունն ու ապագայի հույսը քանաստեղծի կայացման հիմքն ու հենքն են, նրա «ես»-ի առանցքը. «հայոց լեռներում»-ը ոչ թե սոսկ բառակապակցություն է կամ աշխարհագրական չեզոք բնութագրում,

այլ բանաստեղծի ներաշխարհի՝ մտքի և հույզի արտա-
պատկերը: Հայոց բնաշխարհի նկարագրությունը Հովհաննես
Թումանյանի համար մե՛րթ բազմանվագ ու ներդաշնակ
համերգ է (1, 70), մե՛րթ գողտրիկ ու անպաճույճ մի պատկեր
(1, 131), մե՛րթ իր նվիրական իղձերի, հոգու «անթիվ տենչերի»
մարմնավորում: Իսկ «Տենչ» բանաստեղծությունը բնության
սհեղ ուժի յուրատեսակ ձոն է, տաքերքի անկասելի մոլեգնու-
թյան փառաբանում, բանաստեղծի անսահման զմայլանքը
ցնցող պատկերից: Բնությունը բանաստեղծին ոչ միայն հիաց-
մունք ու պաշտամունք է ներշնչում. բնությունը աստվածային
կերտվածք է, և խորհող մարդն ամենուր ակնածանքով հայում
է Արարչի իմաստությունը (1, 123).

Ամռան գիշերվա երկինքն աստղալի,

Յուր հսկայական վրբանի ներքո

Գրկած շարքերը բարձր լեռների,

Պատմում է երկրին մեծությունն աստծո:

Այս բանաստեղծության, ինչպես նաև մյուս շատերի, իսկ
առանձնապես քառյակների մեջ, ակնհայտ է (տողերիս հեղի-
նակի համար), որ Հովհաննես Թումանյանը խոսում է հատ-
կապես Աստծո մասին, բնավ չնույնացնելով Արարչին և
արարվածը, այդ թվում՝ բնությունը: Մինչդեռ գրականության
մեջ ընդունված տարածված տեսակետը Հովհ. Թումանյանին
ուղղակի «պանթեիստ» է համարում: Այդ տեսակետի
հետևողական հիմնավորումը հանդիպում է բազմավաստակ
թումանյանագետ ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանի երկե-
րում. «Թումանյանի ըմբռնմամբ՝ աստված և բնություն
փաստորեն նույնանում են իրար հետ: Աստված ինքը
բնությունն է, որի յուրաքանչյուր շարժման մեջ դրսևորվում է

մի բարձրագույն բանական սկզբունք.... Պանթեիզմը դարձավ նրա աշխարհայացքի կարևորագույն տարրերից մեկը»¹⁰:

Դժվար է համաձայնել մեծարգո հեղինակի հետ: Ինչպես հայտնի է, պանթեիզմը փիլիսոփայական ուսմունք է, ըստ որի Աստվածը անդեմ մի սկզբնապատճառ է՝ բնությանը լիովին նույնական, նրա մեջ լուծված: Մինչդեռ Հովհաննես Թումանյանի գեղարվեստական միտքը հաստատագրում է դիմավոր մի էակի՝ գերբնական, ամենագոր, ամենագետ, որին փառաբանում է և երախտագիտություն հայտնում, որի հետ ձգտում է հաղորդակցվել, պարզել իրեն հետաքրքրող առեղծվածները (2, 55): «Երկնադետ Մասիսի» բարձունքին բանաստեղծի հոգին գրուցում է Աստծո հետ՝ //Անհաս բանից, ըսկզբանից, երբ չըկան էլ դեռ չըկար, // Մինչև վախճանն անվախճանի քընընում է դարե դար (2, 54): «Պողոս-Պետրոս» բալլադի որբուկները՝ խորթ մորից հալածված, ճարը կտրած, փրկության են դիմում Աստծու օգնությանը և ստանում. «Հենց ասին-չասին անմեղ բերանով, // Աստված որոտաց իր գրթոտ ձայնով....»:

Վերստին՝ դժվար է համաձայնել տվյալ հատվածի հետևյալ մեկնաբանությանը. «Իսկ բալլադի վերջում հանդես եկող աստված, իհարկե, ոչ թե աստծու սովորական եկեղեցական ըմբռնման արտահայտությունն է, այլ հենց բնության այդ պանթեիստական ըմբռնման, որի համաձայն բնության մեջ ամենուր ներկա է այդ բարի, սիրառատ ուժը»¹¹:

¹⁰ **Էդ. Ջրբաշյան**, Թումանյան: Ստեղծագործության պրոբլեմներ, Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, էջ 161: Տե՛ս նաև էջ 286 – 308: Նույնը՝ **Էդ. Ջրբաշյան**, Թումանյանի բալլադները, Եր.: Հայաստան, 1969, էջ 74 – 82, **Էդ. Ջրբաշյան**, Թումանյանի պոեմները, 2-րդ, վերամշ. հրատ., Եր.: Երևանի համալս. հրատ., 1986, էջ 205 – 221:

¹¹ **Էդ. Ջրբաշյան**, Թումանյանի բալլադները, էջ 82:

Հովհաննես Թումանյանը Աստծուն է ապավինում՝ «Աստված, տանջանքից ուժերըս հատան, // Մի՞թե չհասավ ժամը փրկության» (1, 166), վիատված մարդուն ուղղորդում է դեպի շիտակ հավատ՝ «Հանգիստ եղիր, աղոթք արա, // Անհիշաչար եղիր միշտ....» (1, 104), Աստծո պատժով է սաստում չարագործներին՝ «Կըհասնի նա ձեզ, բարկությամբ արդար // Արժանի մահով պատուհասելու....» (1, 57), նույն Աստծուն էլ հենց բողոքներ է ներկայացնում, մեղադրում անգործունյա կեցվածքի համար՝ «Քո անվան հուսով // Կովեցի երկար, // Պարծեցա քեզնով, // Սակայն դու չեկար» (1, 86):

Այս շարքը կարող ենք շարունակել, բայց ասվածն էլ բավական է տեսնելու, որ Հովհաննես Թումանյանի համար Աստված նույնացած չէ բնության հետ, այսինքն՝ հիմք չկա նրան պանթեիստ համարելու: Բհարկե, լավ կլիներ, որ Հովհ. Թումանյանն ինքը որևէ կերպ արտահայտված լիներ այս մասին: Բայց մեծն ստեղծագործողը այնքան վեր է եղել ամեն տեսակի «իզմ»-ից, որ առհասարակ նման հարցերի չի անդրադարձել¹²:

¹² Ունենք միայն Նվարդ Թումանյանի հետևյալ հիշատակումը: 1922 թ. Հովհ. Թումանյանին «պանտապոն» դեղն էին տալիս, որ հանգիստ քնի: Եվ ահա մի անգամ նա բժշկին՝ Գրիշա Մաղյանին, կատակախառն ասում է. «Ա՛յ Գրիշա, մեր քննադատները ինձ պանթեիստ են ասում, բանից դուրս է գալիս պանթեիստ չեմ, այլ պանտապոնիստ» (Ն. Թումանյան, Հուշեր և զրույցներ, էջ 268): Այսինքն (ըստ իս)՝ ի՞նչ պանթեիստը, ի՞նչ պանտապոնիստը.... Այնպես, որ Հովհ. Թումանյանը, անտարակույս, բնապաշտ է, բայց նույնքան անտարակուսելի է, որ պանթեիստ չէ: Տողերիս հեղինակին առնվազն տարօրինակ է թվում ասվածը որպես Հովհաննես Թումանյանի՝ պանթեիստ լինելու մասին ինքնախոստովանություն մեկնաբանելը. «Անշուշտ, Թումանյանի կատակը չի խոսում քննադատների այդ կարծիքին բացասաբար վերաբերվելու մասին:

Հովհաննես Թումանյանի բնապաշտությունը հիմնված է բնական աշխարհի ոչ միայն հուզական, այլև իմացական ընկալման վրա: «Կենդանիներ ես շատ եմ սիրում.– դստեր վկայությամբ խոստովանել է բանաստեղծը,– մենք կենդանիներից շատ բան ունենք սովորելու,– մեկից նրա հայացքը, մյուսից քայլվածքը, երրորդից նազանքը»¹³: Եվ եթե «Օդրիդը», «Շունը» և «Գելը» պատմվածքներում բանաստեղծը մեզ զարմացնում է կենդանական աշխարհի բազմակողմանի իմացությամբ, ապա «Մայրը» պատմվածքը ծիծեռնակի մայրական սիրո, սիրող սրտի, նվիրվածության և ինքնագոհաբերության մասին մի գողտրիկ ասք է. պատահական չէ, կարծում եմ, որ Հովհաննես Թումանյանը պատմվածքն անվանել է հատկապես «Մայրը», այլ ոչ թե, ասենք, «Ծիծեռնակը»:

Միրտն ու սերը Հովհաննես Թումանյանի համար տիեզերքի կենտրոնն են, առանց սիրո դատարկ է ամեն ինչ, երջանկությունը խաբուսիկ է, կյանքը՝ զուրկ իմաստից: Այսպես է բանաստեղծը «Մի՛րտ» չքնադ քառատողով գովերգում մարդ արարածի ամենահզոր՝ հիրավի տիեզերական կարողությունը՝ սիրելու ունակությունը.

*Դու գիտես մենակ ճամփեն երկընքի,
Դու գիտես գաղտնիքն երջանիկ կյանքի,
Դու գիտես ամենն ամենից առաջ,
Քու խոսքն է օրենքն ամեն օրենքի:*

Գուցե ճիշտ հակառակը... (Էդ. Զրբաշյան, Թումանյան: Ստեղծագործության պրոբլեմներ, էջ 287)»:

¹³ Ն. Թումանյան, Հուշեր և զրույցներ, էջ 195:

«Առանց սեր կյանք չկա», ընկերոջը գրում է 21-ամյա Բանաստեղծը (9, 20): Եվ նրա բազում ստեղծագործությունները դրա ապացույցն են՝ սեր ամենալայն առումով, հիրավի տիեզերական սեր: **Ինչպես հայտնի է, Հովհաննես Թումանյանի** առաջին բանաստեղծությունը եղել է սիրո մասին (1, 24): Հետագայում նրա **քնարական ստեղծագործություններում** սիրո թեման հերոսի «ես»-ի, (նույնն ինքն է՝ Թումանյանի) ուղղակի ձևակերպմամբ գրեթե չի հանդիպում. բավական է սիրո խոստովանության կերպը համեմատել Ավետիք Իսահակյանի կամ Վահան Տերյանի գործերի հետ: Այդուհանդերձ, նրա համար անընդունելի է կյանքն առանց սիրո, ինչի վերաբերյալ մի գողտրիկ քառատող ենք հանդիպում (2, 19) .

*Ո՛վ իմանա՝ ո՛ւր ընկանք,
Քանի օրվա հյուր ընկանք,
Մերն ու սիրտն էլ երբ չըկա՝
Կըրա՞նք ընկանք, զո՞ւր ընկանք:*

Ըստ **Հովհաննես Թումանյանի՝** սերը մարդ արարածի ստացած հիրավի երկնառաք պարգևն է, որով իմաստավորվում է ամեն ինչի գոյությունը՝ փոքրիկ ծաղկից մինչև բովանդակ տիեզերք: Բանաստեղծի «սիրո փիլիսոփայության» արտացոլումներին հանդիպում ենք բոլոր ստեղծագործություններում՝ ամենալայն իմաստով՝ սերը դեպի մարդիկ առհասարակ, ընկերասիրություն, հյուրասիրություն, հայրենասիրություն, ազգասիրություն, ընթերցասիրություն, սեր դեպի բնությունը, հայրենի եզերքը, կենդանիները, սեր դեպի հայրենի լեզուն, գրականությունը, պատմությունը, վերջապես՝ սեր դեպի արարումը, արտաքին աշխարհի իրողությունը և սեփական հոգեկան ապրումները ստեղծագործաբար վերարտադրելը, սեր դեպի գեղեցիկը ու բարին: Հանուն սիրո մարդը պատրաստ է ամբողջ կյանքում սպասել, ամեն արգելք

հաղթահարել, դուրս գալ ամբողջ աշխարհի դեմ, ամեն ինչ զոհաբերել. ապացույցը՝ «Ախթամար» բալլադը և «Անուշ» պոեմը: Մեր-երազի, հավերժական սիրո, անշեջ հուր-սիրո մի նրբակերտ ձոն է «Փարվանա» պոեմը: Մերը ունակ է մարդուն վերափոխելու, դարձնելու բառացիորեն այլ մարդ. դա տեսնում ենք Հովհաննես Թումանյանի մշակած «Ոսկի քաղաքը» հնդկական հեքիաթի մեջ:

Այս պատմությունները՝ ողբերգական, թե երջանիկ ավարտով, մեզ պարզիպարզո հուշում են՝ «տիեզերքի տեր» բանաստեղծը հրաշալի հասկանում է, որ հատկապես սերն է տիեզերքի վիթխարի կառույցի շարժիչը: Եվ այդ արարչական զգացումը նա ոչ միայն հայտնաբերում է ամենուր, այլև կարծեք անձամբ իրեն պատասխանատու է զգում տիեզերքի ամեն մի օղակում սիրառատ կյանքի անխոչընդոտ գործառության համար: Պերճախոս մի խոստովանություն ենք հայտնաբերում Հովհաննես Թումանյանի նամակներից մեկում. «Վերջին ժամանակները, դեռ անցյալ տարի պատմել եմ Ձեզ, ինձ սաստիկ զբաղեցնում է կենդանիների ու բույսերի կյանքը. ես արդեն նրանց այնպես եմ նայում, որպես մարդուն՝ կենդանի ու բանական արարած: Եվ ի՞նչ լավ է, որ այդպես է» (10, 77): Եվ այդ «լավը», իհարկե, միշտ էլ եղել է, եղել անխուսափելիորեն, քանի որ բանաստեղծի միտքն ու հոգին մշտապես թափառել են տիեզերքում, ընդգրկել ամեն բան՝ թե՛ անսահման մեծ, թե՛ անսահման փոքր:

Իսկ վերջին տարիներին Հովհաննես Թումանյանի հայացքների մեջ որոշակի տեղաշարժ ենք տեսնում դեպի արևելյան տեսակի աշխարհայացքը, և «տիեզերքն» էլ ավելի որոշակի է դառնում: Ահավասիկ, այդ տեղաշարժի հեղինակային արձանագրումը. «Քառյակները շատ նուրբ, ազնիվ, խորը և գեղեցիկ բաներ են: Ես առաջ Պուշկինի, Լերմոնտովի ազդեցության տակ էի, հիմա Արևելքին եմ գալիս. գալիս եմ

դեպի մերը – ազատագրվում ենք»¹⁴։ Եվ զարմանալի չէ, ուրեմն, նաև այն, որ տիեզերքի տիրոջ զգացողությամբ հանդերձ, բանաստեղծը վտանգ է զգացել հայրենի եզերքի, ամբողջ Արևելքի անաղարտության համար.

*Արյունալի աղետներով, աղմուկներով ահարկու,
Արևմուտքի ըստրուկները մեքենայի և ոսկու՝
Իրենց հոգու անապատից խուսափում են խուռներով
Դեպ Արևելքն աստվածային – հայրենիքը իմ հոգու...*

Տարիների հետ, հատկապես քառյակների արարման «փիլիսոփայական», «տիեզերական խոհերի» շրջանում Հովհաննես Թումանյանն ակնհայտորեն ավելի է խորանում մարդու և տիեզերքի կապի, հոգու և մարմնի հարաբերակցության, հոգու անմահության առեղծվածների մեջ։ Դստեր վկայությամբ՝ սկսել էր ավելի շատ Արևելքի բանաստեղծների՝ կարդալ, խորամուխ էր լինում հնդկական փիլիսոփայության մեջ։ Քառյակներում նա մոտենում է արևելյան փիլիսոփայություններին բնորոշ՝ մարդկային հոգու մշտական վերադարձի գաղափարին.

*Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ, ի՛նչ կա որ.
Ես եղել եմ, կա՛մ, կըլինեմ հար ու հավետ, ի՛նչ կա որ,
Հազար էսպես ձևեր փոխեմ, ձևը խաղ է անցավոր,
Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ի՛նչ կա որ:*

Թե որքանով է հոգու անմահության գաղափարը հարազատ եղել Հովհաննես Թումանյանին, դժվար է ասել։ Ավելի կարևոր է այն հզոր լավատեսությունը, որ ճառագում է այս տողերից։ Թեկուզ երևութապես՝ մահկանացու մարդը հաղթահարում է սեփական վախճանականության ճնշող զգացումը և պատրաստ է իրեն սահմանված երկրային ժամանակն ապրել այնպես, ասես միշտ լինելու է տիեզերքի

¹⁴ Ն. Թումանյան, Հուշեր և զրույցներ, էջ 216:

մեծ հոգու հետ: Նման հավատի հիմքով և սեփական բանականության ուժով մարդկային արարածը բնավ էլ անխուսափելի մահվան դատապարտված վաղանցիկ էակ չէ, այլ ունակ է դառնալու ամբողջ տիեզերքի տերը, գիտակցելու իր պատասխանատվությունը արար աշխարհի անվախճան երթի համար:

Հավարտ՝ անդրադառնանք Հովհաննես Թումանյանի այն քառյակին, որի մի տողը սույն հրապարակման վերնագիրն է դարձել.

Հոգիս՝ տանը հաստատվել –

Տիեզերքն է ողջ պատել.

Տիեզերքի տերն եմ ես,

Ո՛վ է արդյոք նրկատել:

Ո՞ւմ է հասցեագրված վերջին տողը: Եթե ուղղակի իմաստով ընկալենք ասվածը, ապա այլ հարց է ծագում՝ ինչո՞ւ պետք է «տիեզերքի տիրոջն» առհասարակ հետաքրքրի, թե ինչ-որ մեկը դա նկատե՞լ է, թե՞ ոչ: Ըստ իս՝ խորագրաց փիլիսոփան, մարդասեր բանաստեղծը այդկերպ կոչ է անում հետևել իրեն, հորդորում է ամեն մեկիս դառնալ «տիեզերքի տեր», ապրել լիարժեք «տիեզերական կյանքով», վեհ արժեքներով ու ձգտումներով: Եվ հատկապես Հովհաննես Թումանյանն իրավունք ունի դա մեզ ասելու: Կենսական մեկնարկի անբարենպաստ պայմաններում, բազմանդամ ընտանիքի նյութական ապահովության մշտական հոգսի տակ, հանրային բազմազբաղ գործունեության պարագայում, առողջական խնդիրներից հյուսված՝ նա կարողացավ կերտել ինքն իրեն՝ դառնալ հայոց մշակույթի հիրավի անհաս գագաթներից մեկը: Նրա կյանքը գեղեցիկն ու բարին, ճշմարիտն ու արդարը խոսքով և գործով հաստատող մարդու, տիեզերքի գաղտնիքները պրպտող, նորին ու կատարյալին հավերժ

ձգտող մտածողի, այլոց հոգսերով մտահոգ քաղաքացու, ազգային վերազարթոնքի նվիրյալի կյանք է:

Անսպառելի է հայ մեծ մտածողի ձեռակերտ տիեզերքը: Եվ որքան մեզանից հեռանում է նրա ապրած ժամանակաշրջանը, այնքան ավելի խորն ենք գիտակցում գրողի կենսական սխրանքը և փիլիսոփայության էությունը, ավելի համարժեք ենք ըմբռնում «Թումանյան» երևույթի բացառիկ տեղը հայ մշակույթի շրջանակներում, համակարգաստեղծ առաքելությունը հայոց ազգային ինքնության ամրապնդման և զարգացման մեջ: Թումանյանը պիտի՝ ծնվեր, պիտի՝ արարեր, պիտի՝ մարմնավորեր հայ ազգի ընդոճին ոգեղենությունը և դարակուտակ իմաստնությունը, ցեղային անարատությունը և անկոտրում կամքը, երկնասլաց միտքը և փիլիսոփայող ոգին:

РЕЗЮМЕ

“ОВАНЕС ТУМАНЯН: Я – ВЛАСТЕЛИН ВСЕЛЕННОЙ” ВАЛЕРИЙ МИРЗОЯН

В статье обсуждаются некоторые актуальные вопросы туманяноведения. Интерпретируются представления великого армянского поэта о смысле человеческой жизни, о природе и вселенной, о родине и любви. В частности, на основе анализа некоторых стихов и рассуждений Ованеса Туманяна автор оспаривает распространённую в литературе точку зрения о том, что жизненная философия Туманяна является пантеистской. Жизнь – явление вселенское, и каждый должен стремиться жить полноценной жизнью. Это и есть великий завет армянского гения современникам и последующим поколениям.

Ключевые слова: Ованес Туманян, философия, Вселенная, пантеизм, Бог, любовь

ABSTRACT
**HOVHANNES TUMANIAN: “I AM THE LORD OF THE
UNIVERSE”**
VALERI MIRZOYAN

The article discusses some topical issues of Tumanian's studies. The ideas of the great Armenian poet about the meaning of human life, about nature and the universe, about homeland and love are interpreted. In particular, based on the analysis of some poems and Hovhannes Tumanian's reasoning, the author disputes the widespread point of view in literature that Tumanian's life philosophy is pantheistic. Life is a universal phenomenon, and everyone should strive to live a full life. This is the great covenant of the Armenian genius to contemporaries and the next generations.

Key words: Hovhannes Tumanian, philosophy, universe, pantheism, God, love.

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ՝ Կ. ՊՈԼԻՍ ԱՅՅԵԼՈՒԹՅԱՆ
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՊՈԼՍԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ
ԷԶԵՐՈՒՄ**

ՄԱՐԻԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հայ մեծանուն բանաստեղծ, անվանի ազգային-հասարակական գործիչ Հովհաննես Թումանյանը, հանգամանքներից ելնելով Թիֆլիսից տեղափոխվել էր Խորհրդային Հայաստան և ստանձնել էր Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ¹-ի)

¹Հայաստանի օգնության կոմիտեն (այսուհետև՝ ՀՕԿ) ստեղծվել էր 1921 թ. սեպտեմբերի 13-18-ին Երևանում (տե՛ս

նախագահի պաշտոնը²: Երկրի հեղհեղուկ քաղաքական վարկանիշը հայկական գաղթօջախներում ոչ միայն անհրաժեշտ էր վերականգնել և կապեր հաստատել համայնքային կառույցների հետ, այլև, դրան զուգահեռ, այդ կազմակերպության շնորհիվ գումար պետք է հայթայթվեր այլևս Մայր հայրենիքի կարգավիճակ ստացած Խորհրդային Հայաստանի կարիքավոր և անտանելի սոցիալ-տնտեսական վիճակում գտնվող ազգաբնակչության համար³: Այս տեսանկյունից կարևորվում էր մասնավորապես Կ.Պոլսի հայ համայնքը⁴: 1921 թ. այստեղ էին կուտակվել ցեղասպանությունը վերապրած բազմաթիվ հայեր, ովքեր այլևս անկարող էին վերադառնալ արևմտահայ գավառներ և իրենց վաղվա օրվա փնտրտուքով հնարավոր էր, որ, ի թիվս այլ երկրների,

http://www.armeniansgenocide.am/am/Encyclopedia_Of_armenian_genocide_HOK (Հայաստանի օգնության կոմիտե): Նիստերը կայացել էին 1921 թ.

սեպտեմբերի 13-20-ը (տե՛ս Հախվերդյան Լ., «Թումանյանը և իր ժամանակը», Ե., 1995, էջ 92), տե՛ս նաև՝ <http://publications.yysu.am/wp-content/uploads/2017/09/Edu.-Kesoian.pdf> («Հայաստանի օգնության կոմիտեի կրթամշակութային գործունեությունը Հայաստանում»):

²Անկախ այն հանգամանքից, թե իրականում ի՛նչ հեռահար նպատակներ էին հետապնդում խորհրդային իշխանությունները ՀՕԿ-ը հիմնելիս և դրա միջոցով սփյուռքյան կառույցների հետ կապեր հաստատելիս, Հովհ. Թումանյանը դրանց հետ որևէ կապ չէր ունեցել, այլ ստանձնել էր ՀՕԿ-ի նախագահի պաշտոնը՝ ցանկանալով օգնել առաջին հերթին բնօրրան-հայրենիքից, տուն ու տեղից զրկված հայ որբերին և գաղթականներին, թեև նախապես, առողջական վիճակից ելնելով, մերժել էր Խորհրդային Հայաստանի կառավարության ղեկավար Ալեքսանդր Մյասնիկյանի կողմից իրեն արված այդ առաջարկը (տե՛ս

<http://www.toumanian.am/tangaran/biography.php?clear=1&cont=6&lang=AM>):

³http://www.armeniansgenocide.am/am/Encyclopedia_Of_armenian_genocide_HOK (Հայաստանի օգնության կոմիտե):

⁴Նույն տեղում:

նրանք կարտագաղթեին նաև Խորհրդային Հայաստան կամ նյութապես կաջակցեին պատերազմներից ու սովից ձերբագատվող հայրենակիցներին:

ՀՕԿ-ի նախագահի և մի շարք հանրաճանաչ պետական և հասարակական գործիչների (Երվանդ Թադիանոսյան, Դանուշ Շահվերդյան, Արշակ Ադամյան, Արտաշես Կարինյան⁵) վրա էր դրվել Կ.Պոլսի հայ համայնքից սկսել ծրագրավորված երկարաժամկետ աշխատանքը⁶:

1921 թ. հոկտեմբերի վերջին Կ. Պոլիս հասնելուց հետո արդեն նոյեմբերի մեկին Հովհ. Թումանյանն ու «Գործ» ամսագրի տնօրեն Ե. Թադիանոսյանն սկսել էին իրենց հանդիպումները տեղի հայ մտավորականության ներկայացուցիչների հետ: Մտավոր ներուժի առաջամարտիկները կենտրոնացած էին հայկական մամուլի օրգանների խմբագրություններում և դրանց շուրջ: «Թումանյան իր առաջին այցելությունները հայ թերթերեն սկսավ: Այս կերպով ան բերդերը ուզեր էր առնել ներսեն: Արդարև, բոլոր հոսանքները զետեղված էին խմբագրությանց մեջ, այնտեղ կիսմորվեր ամեն տարակարծություն ու վեճ՝ թերթերու սյունակներեն պոռթկալու համար: Թերթերը սիրաշահիլ՝ կնշանակեր հանրային կարծիքը հետը ունենալ: Թումանյան դժվարություն չքաշեց: Գրկաբաց ընդունվեցավ բոլոր թերթերեն»⁷, - իր հուշերում հետագայում գրել էր «Ճակատամարտ» օրաթերթի խմբագիրներից Հակոբ Սիրունին:

⁵<http://www.libmindiasspora.am/wp-content/uploads/2011/10/SH-1982-N10-10.pdf> (Եզեկյան Ռ., «Մի լուսանկարի հետքերով»):

⁶Ահարոնեան Վ., «Յովհաննէս Թումանեան մարդը եւ բանաստեղծը», Ե., 2019, էջ 175:

⁷«Թումանյանը և հայոց պատմական ճակատագիրը», Ե., 2000, էջ 248 (Սիրունի Հ., «Բարի շունչը, զոր մեզ բերավ Թումանյան»):

Բնութագրական էր Հովհ. Թումանյանի և Ե. Թադևոսյանի այցը «Վերջին լուր»-ի խմբագրատուն, որի մասին հաղորդում կար օրաթերթի 1921 թ. նոյեմբերի 2-ի համարում⁸: «Ազգային լուրեր» բաժնում «Պ. Թումանյանի այցելությունը» վերնագրով թղթակցությունից իմանում ենք, որ նախօրեին պարբերականի խմբագրությունում հյուրընկալվել էին «ռուսահայ յայտնի բանաստեղծ» Հովհ. Թումանյանն ու Ե. Թադևոսյանը⁹: Ընթերցողներին տեղեկացվում էր, որ Հովհ. Թումանյանը «Երևանի մեջ կազմուած Հայաստանի Օգնութեան Կեդրոնական քովիթէին» նախագահն էր, իսկ Ե. Թադևոսյանն այդ նույն կազմակերպության անդամներից մեկն էր¹⁰: «Անոնք եկած են Պոլսոյ հայութեան ներկայացնելու Հայաստանի վիճակը և յայտնելու, թէ Հայաստանի համար ըլլայ ամենալայն օգնութիւն, քանի որ այս բանը ոչ միայն ֆիզիքական փրկութեան գործ մըն է սովահար հայոց համար, այլ նաև բարոյական ազդակ մը Հայաստանի քաղաքական զօրացման»¹¹, - կարդում ենք այդ հրապարակման մեջ:

Հովհ. Թումանյանը հանգամանորեն ներկայացրել էր Խորհրդային Հայաստանի «անմխիթար» վիճակը՝ նշելով, թե կառավարությունն «ոգի ի բոին» աշխատում էր երկիրն ավերակներից վերականգնելու համար¹²: Հայաստանի զարգացմանը կարող էր նպաստել կառավարության դիրքորոշումը, այն է՝ «բարւոք յարաբերութիւններ պահել միշտ իր դրացիներուն հետ»¹³: Այստեղ նյութն այնպես է շարադրված,

⁸Թումանյան Հովհ., «Երկերի լիակատր ժողովածու», հ. 7, Ե., 1995, էջ 692:

⁹«Վերջին լուր», օրաթերթ, Կ. Պոլիս, 1921, թիվ 2324 («Պ. Թումանյանի այցելությունը»):

¹⁰Նույն տեղում:

¹¹Նույն տեղում:

¹²Նույն տեղում:

¹³Նույն տեղում:

որ ընթերցողը չի կարող հասկանալ դա Թումանյանի՞, թե՞ թերթի մոտեցումն էր խորհրդային իշխանությունների արտաքին քաղաքականության և մասնավորապես Հայկական հարցի առնչությամբ: Խոսքը վերաբերում է թե՛ գովեստներին, թե՛ հետևյալ հատվածին. «Կարսի մեջ թուրքերու հետ իսկ համաձայնեցան, որպէս զի կարենան հայ ժողովուրդին խաղաղ զարգացումն ու վերականգնումը ապահովել: Հայաստանի արդի վարչապետ պ. Միասնիկեանի քաղաքական կարողութիւնները և հայրենասիրութիւնը մեծապէս կը գովեն, այնպէս որ, եթէ դժբախտ անակնկալներ չպատահին, մեծ յոյս կայ, որ Հայաստան պիտի կրնայ իր վերքերը դարմանել ու ինքն իր մեջ զարգանալ»¹⁴: Իհարկե, հասկանալի է միտումը. պոլսահայերի մեջ հավատ առաջացնել Խորհրդային Հայաստանի առաջիկա ճակատագրի ու կյանքի նկատմամբ՝ ձեռք բերելու համար նրանց նյութական ու ֆինանսական աջակցությունը երկրի կարոտյալների համար: Այդ նպատակին հասնելու ակնկալիքով էր Հայաստանի կառավարությունը կենսաթոշակ հատկացնելու ոչ միայն հայրենիքում ապրող անվանի գրողներին և արվեստագետներին, այլև «Վերջին լուր» օրաթերթի աշխատակիցներից Երվանդ Օտյանին: Այդ տեղեկությունը նրան էր հայտնել Թումանյանը՝ խմբագրություն կատարած հիշյալ այցի ժամանակ՝ ասելով, թե նրա «Փանջունին կարդացուեր և գնահատուեր է Երեւանի քովիսէրներուն կողմէ»¹⁵:

Նույն օրը Հովհաննես Թումանյանը, Երվանդ Թադևանյանը և Արշավիր Շահխաթունին գնացել էին Կ. Պոլսի «Դպրոցասեր տիկնանց» Գատրգյուղի հայկական որբանոց-վարժուհիանոց՝ մասնակցելու համար իրենց պատվին

¹⁴Նույն տեղում:

¹⁵Նույն տեղում:

այնտեղ կազմակերպված միջոցառմանը¹⁶: Մա նույնպես ՀՕԿ-ի բանագնացների համար մի առիթ էր՝ անդրադառնալու համար իրենց ուղևորության և առաքելության բուն նպատակին: Այս այցելության մասին լուր կար Կ. Պոլսում հրատարակված «Հայ կին» կիսամյա հանդեսի էջերում¹⁷: Հանդիպման ժամանակ իր ելույթում Հովհ. Թումանյանը մասնավորապես ասել էր հետևյալը. «Տղայ մը կրթելը մարդ մը կրթել է, բայց մայր մը պատրաստելը ընտանիք մը կրթել է: Դուք կանգուն կը պահեք ցեղին արժանիքը, ձեր պահպանումը ատելի հզոր է, քան բանակներու ոյժը, որովհետև սուրի ոյժը չէ ան, այլ բարոյական կորովի ոյժը»¹⁸: Ի պատասխան՝ այդ կրթօջախի խնամակալուհիներից և «Հայ կին» պարբերականի աշխատակցուհիներից Անայիսը (Եվփիմե Չոպանյան) «ազգին սիրելի քերթողին» փոխանցել էր ներկաների սրտի խոսքը, որի համաձայն, Թումանյանի երգերը «յուսավրէպներուն խրախոյս կու տան, դառնացածներուն՝ կորով, անժպիտներուն՝ ժպիտ, չսիրուածներուն՝ գգուանք»¹⁹: Անայիսը նաև ասել էր. «Ես կողջունեմ քեզ հոս, մեր մէջը, կողջունեմ ոչ թէ քաղաքացի մեծ մարդը, այլ հոգիներու սարսուռ տուող, մեր սրտերը քնքշօրէն սփոփող և զրկանքի արցունքները սրբող բանաստեղծը: Կողջունեմ Հայ քերթողը, որ երգած է Հայ սրտերուն յոյսերը, Հայ սրտերուն խռովքը, Հայ սրտերուն թրթռումները»²⁰: Այս միջոցառման ավարտին մեծանուն բանաստեղծը այցելուների տպավորությունների տեսրակի մեջ գրել էր, թե Կ. Պոլսում իր ստացած լավագույն

¹⁶Թումանյան Հովհ., նշվ. աշխ., էջ 693:

¹⁷«Հայ կին» կիսամյա հանդես, Կ. Պոլիս, 1921, թիվ 2, էջ 811

(«Արձագանք»):

¹⁸Նույն տեղում:

¹⁹Նույն տեղում:

²⁰Նույն տեղում:

հիշողություններից մեկն այցելությունն էր «Դպրոցասեր տիկնանց» Գատըզյուղի հայկական որբանոց-վարժուհիանոց: Ահա նրա գրառումը. «Մեր ցեղին մասին երբ վկայութիւն ուզէին, ես Դպրոց. Տիկնանց վարժարանը պիտի ցոյց տայի, որ տէսնէին հայ կինը և հայ որբուհին, և սա աւելի շատ պիտի պաշտպանէր մեր դատը, քան բոլոր դիւանագէտները միասին առած»²¹:

«Հայ կին» կիսամսյա հանդեսն անդրադարձել էր Հովհ. Թումանյանի, իբրեւ ՀՕԿ-ի նախագահ, կատարած ևս մեկ իրենց խմբագրություն այցին, որտեղ նա գնացել էր Անայիսի ուղեկցությամբ²²: «Պր. Թումանեան ֆէմինիսմի ջերմ ու հաւատացեալ պաշտպան մը, գնահատելով «Հայ կին»ի հիմնարկութիւնն ու նպատակը, իր հեղինակաւոր թելադրանքներով զօրացուց զմեզ: Հայրենաձայն այս սիրուած քերթողին մտերմիկ այցելութեան ժամերը անմոռանալի հրճուանքի յիշատակ մը պիտի մնան մեզի համար»²³, - կարդում ենք թղթակցության մեջ:

Հայրենիքի օգնության մարմնի (ՀՕՄ-ի²⁴) հրավերով 1921 թ. նոյեմբերի 9-ին Հովհ. Թումանյանը և ՀՕԿ-ի անդամ Ե.

²¹Նույն տեղում:

²²Նույն տեղում, («Պր. Հ. Թումանյանի այցելությունը «Հայ կին»-ին»):

²³Նույն տեղում:

²⁴Արևմտահայ հայտնի հասարակական-քաղաքական գործիչ, գրող և հրապարակախոս Հակոբ Սիրունին հուշերում կարծիք էր հայտնել, թե Հովհ. Թումանյանը հոգու խորքում չէր ցանկացել Կ. Պոլսում հիմնել ՀՕԿ-ի մասնաճյուղ, քանի որ այնտեղ դեռևս 1920 թ. հոկտեմբերի 24-ին հիմնվել էր նմանատիպ առաքելությամբ մեկ այլ կառույց՝ Հայրենիքի օգնության մարմինը կամ ՀՕՄ-ը: Այդ կապակցությամբ նա գրել էր հետևյալը. «Թող զարմանալի չթվի, եթե Թումանյան հարմար չդատեց ՀՕԿի մասնաճյուղ ստեղծել նաև Պոլսո մեջ: Իր ժամանած ատեն նման կազմակերպություն մը ան գտավ մեզ մոտ» (տե՛ս «Թումանյանը և հայոց պատմական ճակատագիրը», նշվ. աշխ., էջ 246-247):

Թաղիանոսյանը Գումգաբու թաղամասի «Միշըն-Հաուզի» մեջ հանդիպել էին պոլսահայ համայնքի ներկայացուցիչների հետ²⁵։ Թեև բանախոսները հրաժարվել էին խոսել քաղաքական հիմնախնդիրներից, բայց դա նրանց չէր հաջողվել։ Նրանք մի կողմից՝ ներկայացրել էին Խորհրդային Հայաստանի կացությունը, մյուս կողմից՝ պատասխանել էին իրենց ուղղված հարցերին։

Ըստ թերթի հրապարակման՝ ՀՕԿ-ի նախագահը տեղեկացրել էր, որ երկրի վերաշինության համար գործի էին դրվել բոլոր կարող ուժերը, և փոքրագություն էր ասելը, թե անկախություն չունի Հայաստանը, իսկ այնտեղ գտնվող ռուս զինվորները եկել էին հայ ժողովրդին օգնելու, այլ ոչ թե նվաճելու համար²⁶։ Հնարավոր է, որ պարբերականում խեղաթյուրված լինեն Թումանյանի մտքերը, քանի որ հաջորդ նախադասության մեջ նա նշել էր հետևյալը. «Եթէ այսօր Հայաստանի սահմանները մինչեւ Արաքս կը տարածուին, ատիկա չնշանակեր, թէ պիտի մնան հոն։ Հայաստանի կառավարութիւնը զուտ հայկական է, պետական լեզուն ամեն տեղ՝ հայերէն։ Վերջին ճիգ մը, և, շնորհիւ մեր շինարար աշխատանքին, մեր ճակատէն պիտի ջնջուի թշուառութեան նախատինքը»²⁷։ Թերթը փաստել էր, որ Հովի. Թումանյանի ելույթը և խոսքերը «խիստ լաւ տպաւորութիւն» էին գործել հասարակության վրա²⁸։

Նոյեմբերի 10-ին Ռամկավար-ազատական կուսակցությունը ՀՕԿ-ի նախագահի պատվին թեյասեղան էր

²⁵ «Երկիր» օրաթերթ, Կ. Պոլիս, 1921, թիվ 609 («Պ.պ. Հ. Թումանյանի և Ե. Թաղիանոսյանի զեկուցումները»)։

²⁶ Նույն տեղում։

²⁷ Նույն տեղում։

²⁸ Նույն տեղում։

կազմակերպել Թոքաթյան հյուրանոցում²⁹, որտեղ ապրում էր Թումանյանը³⁰: Միջոցառմանը մասնակցել էին պոլսահայ համայնքի տարբեր միությունների և խմբակների 50-100³¹ անդամներ, իսկ նախագահում էր արևմտահայ հայտնի մտավորական և քաղաքական գործիչ Վահան Թեքեյանը³²: Նրա կարծիքով՝ «պ. Թումանեան կրկնակի շնորհաւորութեան արժանի է իր ստանձնած առաքելութեան՝ Հայաստանի մէջ սովի և ցուրտի սպառնալիքին առարկայ եղող մեր «արեւելահայ» եղբայրներուն օգնութիւն կազմակերպելու պաշտօնը ստանձնած ըլլալուն համար»³³: Մասնակիցներն իրենց աջակցությունն էին խոստացել Հայաստանին: Հանդիպման ավարտին Թումանյանն իր խոսքում նշել էր, թե անհրաժեշտ էր ողջ հայության մասնակցությունը ավերված Հայաստանի վերաշինությանը³⁴: «Շատ ուրախ եմ, որ Հայաստանի օգնութեան գործին շուրջ գրեթէ տարակարծութիւններ չկան: Երբ մեր տան մէջ խօսք եղաւ, թէ Պոլսոյ մէջ միութիւններ եղած են Հայաստանին օգնելու հանար, երկու լոռեցիներէն մէկը

²⁹«Ճակատամարտ» օրաթերթ, Կ. Պոլիս, 1921, թիվ 910 («Թեյասեղանի ի պատիվ Հովհ. Թումանյանի»):

Թեյասեղանի շուրջ հանդիպման մասին տե՛ս նաև «Հայ կին» կիսամյա հանդես, Կ. Պոլիս, 1921, թիվ 2, էջ 811 («Թեյասեղան մը»), ինչպես նաև «Վերջին լուր», օրաթերթ, Կ. Պոլիս, 1921, թիվ 2332 («Երեկվան թեյասեղանը ի պատիվ պր. Հովհաննես Թումանյանի»)

³⁰Թումանյան Հովհ., նշվ. աշխ., նույն տեղում:

³¹«Ճակատամարտ» օրաթերթ, Կ. Պոլիս, 1921, թիվ 910 («Թեյասեղանի ի պատիվ Հովհ. Թումանյանի»):

«Վերջին լուր», օրաթերթ, Կ. Պոլիս, 1921, թիվ 2332 («Երեկվան թեյասեղանը ի պատիվ պր. Հովհաննես Թումանյանի»):

³²«Ճակատամարտ» օրաթերթ, Կ. Պոլիս, 1921, թիվ 910 («Թեյասեղանի ի պատիվ Հովհ. Թումանյանի»):

³³Նույն տեղում:

³⁴Նույն տեղում:

միւսին ըսաւ. «Ապա ինչ, դու կը կարծէիր, թէ մենք անտէ՞ր ենք»: Բոլոր օգնութիւններէն աւելի մենք պիտի տանինք այն լուրը, թէ երկրէն դուրս բոլորը համաձայն են ոչ թէ Հայաստանի ժողովուրդը դուրսէն տաքցնելու համար, այլ՝ վառելու ներսէն, անոնք բոցավառուած են մէկ հոգիով և մէկ կրակով: Ահա, թէ ի՛նչն է մեզի համար թանկագինը»³⁵, - այսպէս էր ելույթը եզրափակել ՀՕԿ-ի նախագահը:

Գրեթէ մեկուկէս ամիս³⁶ մնալով Կ.Պոլսում³⁷՝ Թումանյանը կյանքի էր կոչել իր այցելության բուն նպատակները, ինչին նպաստել էին հատկապէս նրա հանդիպումները պոլսահայության մտավորականության տարբեր շերտերի հետ: Բանաստեղծի աղջիկներից Նվարդ Թումանյանը այդ առիթով գրել էր. «Պոլսում ի պատիվ հայրիկի կազմակերպվել են բազմաթիվ երեկույթներ, ճաշկերույթներ, հանդիպումներ: Հայրիկն ամենուրեք հանդես է եկել ճառերով, կոչ անելով համախմբվելու նոր Հայաստանի՝ Խորհրդային Հայաստանի շուրջը, օգնել ժողովրդին շենացնելու իր նոր հայրենիքը»³⁸:

Կ. Պոլսի Թոքաթյան հյուրանոցում Հովհ. Թումանյանի նախաձեռնությամբ և Հայաստանի արվեստի տան («Հայարտան») նախագահության անունից էր մեկ այլ թեյասեղան կազմակերպվել³⁹ պոլսահայ գրական-մշակության շրջանակի հինգ տասնյակից ավելի ներկայացուցիչների համար⁴⁰:

³⁵Նույն տեղում:

³⁶Թումանյան Ն., «Հուշեր և զրույցներ», Ե., էջ 246:

³⁷Հովհ. Թումանյանը Կ. Պոլսում է եղել 1921 թ. հոկտեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի երկրորդ տասնօրյակը: Թիֆլիս է վերադարձել և տուն է հասել դեկտեմբերի 22-ին (տե՛ս Հովհաննիսյան Ս., «Պատմություններ Հովհ. Թումանյանի կյանքից», Ե., 2010, էջ 226, 228):

³⁸Թումանյան Ն., նշվ. աշխ., էջ 247:

³⁹Հովհաննիսյան Ս., նշվ. աշխ., էջ 227:

⁴⁰Թումանյան Հովհ., նշվ. աշխ., էջ 564:

Թումանյանը նրանց առաջարկել էր Կ. Պոլսում հիմնել Գեղարվեստի տուն, որը կարող էր նպաստել Հայաստանի գրական-գեղարվեստական կյանքի վերաշինությանը՝ իր հերթին ստանալով աջակցություն Հայաստանի կառավարության կողմից, ընդ որում՝ «առանց կուսակցական խտրության»⁴¹։ Հ. Սիրունին վկայել էր, որ թեև «տարի մը անգամ չտեսեց Հայ Արուեստի Տունը, բայց այդ կարճ շրջանն իսկ իր պատուոյ տեղը ունի Պոլսոյ տարեգրութեանց մէջ՝ շնորհիւ ոգևորութեան, որով խանդավառուած էին հայ մտքի և արուեստի մեր լաւագոյն դէմքերը, անգամ մը եւս ցիրուցան ըլլալէ առաջ»⁴²։ Ընդ որում, Սիրունին նշել էր նաև, որ Կ. Պոլսի «Հայարտան» ծրագիր-կանոնադրությունը հաստատվել էր արևմտահայոց վերջին պատրիարք Զավեն Եղիայանի կողմից 1922 թ. փետրվարի մեկին⁴³։

Ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ ՀՕԿ-ի նախագահ Հովհ. Թումանյանի գլխավորած պատվիրակության այցը Կ. Պոլսի հայ համայնք հաջողությամբ էր ավարտվել⁴⁴՝ երեք տեսանկյունից։ Նախ՝ այդ ուղևորությունից հետո տեղի հայությունը մեծ հանգանակություն էր սկսել և Հայաստան էր ուղարկել ինը վագոն հագուստեղեն ու դեղորայք⁴⁵։ Երկրորդ ձեռքբերումն այն էր, որ Կ. Պոլսում մասնավորապես Հովհաննես Թումանյանի ջանքերով բացվել էր Հայ արվեստի տան տեղական մասնաճյուղը, որն իր կարճատև գոյության ընթացքում փորձել էր միավորել պոլսահայ մտավորական ներուժին ու նպաստել ոչ միայն արևմտահայ մշակույթի

⁴¹Նույն տեղում։

⁴²Սիրունի Յ., «Ինքնակենսագրական նոթեր», Ե., 2006, էջ 214։

⁴³Նույն տեղում, էջ 319։

⁴⁴Տե՛ս Հախվերդյան Լ., նշվ. աշխ., էջ 95։

⁴⁵<http://www.libmindiaspora.am/wp-content/uploads/2011/10/SH-1982-N10-10.pdf> (Եզեկյան Ռ., «Մի լուսանկարի հետքերով»)։

պահպանմանն ու զարգացմանը, այլև առհասարակ հայա-պահպանությանն այդ համայնքում: Երրորդ դրական ազդակը այն էր, որ, բացի Մ. Պոլսից, հայկական բազմաթիվ գաղթօջախներում նույնպես, ոգևորվելով ՀՕԿ-ի պատվիրակության դրական արդյունքից, հիմնվել էին ՀՕԿ-ի մասնաճյուղեր⁴⁶:

РЕЗЮМЕ
ОСВЕЩЕНИЕ ПРЕБЫВАНИЯ ОВАНЕСА ТУМАНЯНА
В КОНСТАНТИНОПОЛЕ НА СТРАНИЦАХ
АРМЯНСКИХ МЕСТНЫХ ПЕРИОДИЧЕСКИХ
ИЗДАНИЙ
МАРИАМ ОВСЕПЯН

Переехав в 1921 году из Тифлиса в Армению, Ованнес Туманян в 1921 году возглавил Комитет помощи Армении. В том же году визит в Константинополь возглавляемой им делегации можно считать успешным в трёх аспектах. Прежде всего от местного армянства поступили большие пожертвования, и в Армению было направлено 9 железнодорожных вагонов с одеждой и лекарствами. Вторым достижением стало открытие в Константинополе при участии Туманяна местного филиала Дома армянского искусства. В-третьих, воодушевившись успешным результатом визита делегации Комитета помощи Армении, в Константинополе и других армянских общинах по всему миру.

⁴⁶Տե՛ս

http://www.armeniansgenocide.am/am/Encyclopedia_Of_armenian_genocide_HO_K (Հայաստանի օգնության կոմիտե):

Ключевые слова: Ованнес Туманян, Константинополь, Комитет помощи Армении, армянская пресса, армянская община, Ерванд Тахияносян, Аршавир Шахатуни.

ABSTRACT
COVERAGE OF HOVHANNES TUMANYAN'S VISIT TO
CONSTANTINOPLE BY LOCAL PAPERS
MARIAM HOVSEPYAN

After moving from Tiflis to Soviet Armenia in 1921, Hovhannes Tumanyan assumed the post of President of the Armenian Relief Committee (ARC). In 1921, the visit of a delegation led by him to the Armenian community of Constantinople was successful from three perspectives.

First, after the trip the local Armenians started a large fund-raising and sent nine carriages of medicines and clothes to Armenia. The second achievement was that a local branch of the Armenian House of Arts opened in Constantinople, largely thanks to Hovhannes Tumanyan's efforts. Third, inspired by the success of the ARC delegation in Constantinople, ARC branches were founded in a number of other Armenian communities.

Key words: Hovhannes Tumanyan, Constantinople, Armenian Relief Committee, Armenian community of Constantinople, Yervand Taghianosyan, Arshavir Shahkhatuni.

ԿՅԱՆՔԻ ԵՎ ՄԱՀՎԱՆ ԴԻԱԼԵԿՏԻԿԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՌՅԱԿՆԵՐՈՒՄ

ՎԱՐԴՈՒՀԻ ԴԱՎԹՅԱՆ

1800-ական թվականների վերջին և մասնավորապես կյանքի վերջին տարիներին (1916-22) Հովհաննես Թումանյանը գրեց բազմաթիվ քառյակներ, որոնց մեջ առանձնանում են այնպիսիները, որոնք ճշտում են կեցության և մահվան հիմնարար հանգրվանների թումանյանական քննության սահմանները: Սրանք ունեն զգայական և իմացական ուղղություններ, որոնք դրսևրում են փիլիսոփայական դարձդարձումներ՝ Բարձրին հասնելու խորհրդով:

Կյանքի և մահվան դիալեկտիկան այստեղ ձեռք է բերում խորքային ճանաչում: Բանաստեղծի անձնական ողբերգությունների հարընթաց շղթան կենսական հիմքեր է ստեղծում փիլիսոփայական մտորումների համար՝ հաճախ ողբերգական վիճակի վերապրմամբ: Բանաստեղծը լավ է ճանաչում կյանքի և մահվան անկյունադարձում բախման ցավը: Թոչնի թևով անցնող կյանքը Բանաստեղծի սիրտը հոշոտած անգութ ժամանակն է, որը սպանում է, փշրում հույսի ու երազի տիրական սպասումը:

Վերջացա՛վ...

Կայնքս մաշվեց, վերջացավ.

Ինչ հույս արի՛ փուչ եղավ,

Ինչ խնդություն՝ վերջը՝ ցա՛վ:¹ (8)

¹ Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 2, Եր., 1991: Բնագրային բոլոր մեջբերումները կատարված են նշված հատորից:

Բայց բանաստեղծը ինքնախաբեության թուլչությամբ տարված չէ, պարզապես հուսաբեկ ու անտենչանք ապրել, նշանակում է՝ փշրել այն նույն նվիրական երազը, որին պատրաստ ես ամեն վայրկյան ընդառաջ գնալ:

1915 թ. սեպտեմբերին սիրելի եղբոր՝ Ռոստոմի մահը և դրան հաջորդած Արտիկի կորուստը պետք է, անշուշտ, փոխեին և՛ տրամադրություն, և՛ կենսաձև՝ մղելով բանաստեղծին հաշվելու իր սիրտը կտրատող և սրտին կպած մահերն ու սիրտը ծանրացնող թափուր գահերը՝ զգայական փորձառությամբ ճշգրտելով մահկանացու լինելու անխուսափելիությունն ու իր մեջ մեծացող մահվան ահի անկորնչելի ներկայությունը:

Քանի՛ մահ կա իմ սրտում,
Թափուր գահ կա իմ սրտում.
Չէ՞ դու էլ ես մահացու.-

Մահի ահ կա իմ սրտում: (14)

Մահվան հանդեպ ունեցած ահի ծանրաբեկ ներկայությունը մղում է բանաստեղծին ավելի շատ սիրել կյանքը՝ միաժամանակ գիտակցելով, որ մահվան անխուսափելիությունը կեցության հավերժական շրջապտույտի խորհրդանիշն է:

Ավելի հաճախ ապրելու գայթակղությանը տուրք տվող, կյանքի վայելքներից հարբող անցավորի համար հեռացող օրերի հերթագայությունը մնում է աննկատ, մահվանն ընդառաջ վազելու հևասպառ ընթացքը՝ անշրջելի: Ու երբ իրար հանդիպեն մահի և մահկանացու մարդու հայացքները, ըստ բանաստեղծի, պետք չէ մահին հանցավոր բռնել, որովհետև ամեն ինչ բնության անկասելի որոշմամբ է: «Դու վազում ես դեպի մահ- Մահը բռնում հանցավոր», - հեզնախառը հնչում են բանաստեղծի խոսքերը:

Ետ չեկող, կորչող մոտիկները դառնում են «անկուշտ մահի», «սև հողի» գերիները, որոնց համար «լացի ձեն ածող» քանաստեղծի ճիգերն ապարդյուն են:

Թեև լավ գիտե, որ կյանքի և մահվան կազմակերպ ընթացքը մշտակա է ու անշրջելի, այնուամենայնիվ Հովհ. Թումանյանը չունի մահվան սպասում, նրա ներքին դյուրանքը ապրելու հերթափոխի գիտակցությունն է՝ օրերի հնասպառ շրջապտույտի մեջ՝ ակնկալելով դեպի լավը տանող ուղու հանգրվան:

Հին աշխարհը ամեն օր
Հազար մարդ է մտնում նոր,
Հազար տարվան փորձն ու գործ
Ըսկսվում է ամեն օր: (17)

Հովհ. Թումանյանի համար կարևոր են մարդն ու սիրո տարերքը, առավել համապարփակ Միրո ընկալությունը: Պոետի համար սրտի և սիրո ընտրանքը մարդուց դեպի աստվաած տանող անխոտոր ճանապարհն է: Այս աշխարհում անակնկալ հայտնվելու, ով իմանա, քանի օրով հյուր ընկնելու նախապատրաստում-զգուշացումը հենց սիրով ու սրտով ապրելու քանաստեղծի նախապատվությունն է, բայց դե՛

Սերն ու սիրտն էլ երբ չկա՝
Կրա՛կն ընկանք, զու՛ր ընկանք,-(19)

Եզրակացնում է Հովհ. Թումանյանը և հաջարդող մեկ այլ քառյակում փորձում ծանրակշռել եկող ու գնացողների ունեցածն ու տալիքը:

Մնացել է բերդը մեզ.
Հաղթանակի երթը մեզ.
Անց են կաացել՝ ով կային,
Հիմա կգա հերթը մեզ: (23)

Երբեմն Հովհ. Թումանյանն իր քառյակների սեղմ, սահմանափակ կառուցվածքում կատարում է էպիկական պատումի խաղարկումներ, ներկայացնում դրվագային կերպարներ՝ նրանց փորձառությամբ չափելով կյանքի և մահվան խորությունը՝ տարածի և թողածի գիտակցությամբ:

Երկու շիրիմ իրար կից,
Հավերժական լուռ դրկից,
Թախծում են պաղ ու խորհում,
Թե՛ ի՛նչ տարան աշխարհքից:(30)

Բանաստեղծը շարունակաբար ձգտում է հասկանալ անմեկնելի, հանելուկային մահվան սկիզբն ու վերջը: Իրար միախառնված երկու հակադրաբեռների՝ կյանքի և մահվան միջև ի սկզբանե չի եեղել բաժանարար: Մակայն այդ դեպքում ո՞ր կյանքն է մեզ ընտանի՝ այս աշխարհը, թե՛ հանդերձյալ «լուսոյն օթաղը», ինչպես պատկերավորել է միջնադարյան տաղերգուներից մեկը: Հովհ. Թումանյանը ձգտում է հասկանալ կեցության իմացական այս միջուկը, կանքի և մահվան առեղծվածը, «կորստական և անցավոր» կյանքի պատմությունը: «Մեռա՛ն, մեռա՛ն», - բանաստեղծի բացականչությունն իր մեջ ամփոփում է և՛ այդ կորուստների ցավը, և՛ նենգ ու դրուժան մահվան ընթացքի կասեցման իր անգորությունը:

Մեռա՛ն, մեռա՛ն... Եվ ահա,
Խառնվել են կյանք և մահ.
Չեմ հասկանում աշխարհի
«Կան ու չըկան» ես հիմա: (35)

Բանաստեղծի տարակուսանքը բխում է իր և աշխարհի խորաշերտ առնչությունից. որքան շատ ես փնտրում տառապանքի ճանապարհը, այնքան ավելի շատ ես խճճվում կեցության հարցերի թնջուկի մեջ: Իսկ ահա քառյակներից մեկի դիպալխաղի առանցքում ազահ և անգոհ մարդն է:

Կամենալով ճշգրտել կյանքի և մահվան հարաբերակցության փիլիսոփայական քննության սահմանը՝ Հովհ. Թումանյանը խորհրդածում է շուտափույթ սպառվող օրերի հեքի մեջ կուտակման մոլուցքով տառապող մարդու անբավական էության շուրջ:

Բերանն արնոտ մարդակերը էն անբան
Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան.
Ձեռքերն արնոտ գրնում է նա դեռ կամկար
Ու հեռու է մինչև մարդը իր ճամփան: (34)

Անկրակ ու դառնացած անցվորի մաքառումը արժեք չունի, երբ անցած ուղին վերաթևոթելու հնարավորությունը կորցրած, իրենից առաջ և իր առաջ անցածներից փորձառություն չառած մարդն անհաղորդ ու կույր է մնում կյանքի ճշմարիտ ավագանի բացահայտման հանդեպ: Երկու օրվա ճամփան խաղաղ անցնելու, ուրախ անցնելու թումանյանական պատգամ-խորհուրդը ևս մեկ անգամ փաստում է պոետի մարդակենտրոն որոնումները: Բայց կյանքի բոլոր հնարավորություններին կարծեք տիրապետող մահկանացու-մարդը շարունակում է տանջվել, տանջել ու որոնել՝ չդադարելով մնալ նույն դժբախտը:

Ընդհանրապես Հովհ. Թումանյանը դեգերում է կյանքի և երազի, էս թե էն աշխարհների բևեռների միջև:

Մենք բոլորս երազողներ ենք, իսկ երազը ծնվում է կորստից: Գրազը տանուլ տվածի հոգեբանությամբ ապրած օրերի կեսն անցկացրած մարդը ափսոսանքով է խոսում կորուսյալի մասին: Կյանքի հեքը կորցրած՝ քնարական հերոսը «վայելում է» խուսափուկ երազի անմատչելիությունը, որը դառնում է կեսքուն-կեսարթուն ապրածի խորհրդանիշը՝ կանգնեցնելով նրան դիլեմայի, ընտրանքի առջև:

Ո՞ր աշխարհում ունեմ շատ բան, միտք եմ անում՝ է՞ս,
թե՞ էն.

Մեջտեղ կանգնած՝ միտք եմ անում, չեմ իմանում՝ է՞ս,
թե՞ էն.

Աստված ինքն էլ տարակուսած, չի հասկանում ինչ
անի.

Տանի՛, թողնի՛, ո՞րն է բարին, ո՞ր սահմանում, է՞ս, թե՞
էն: (41)

1920 թ. Հովհ. Թումանյանը գրեց մի քառյակ, ուր երևաց
պոետի ներաշխարհի, հոգեբանական ներթափույց վարքագծի
մի հետաքրքիր դրսևորում՝ ցանկություն՝ ցույց տալու կյանքի
ներհակությունը՝ մահվան հանդեպ:

Լույսը լուսին քո ժպիտն է իմ երեսին ճառագում,
Երբ, ա՛խ, արդեն անբույժ զարկված դեպի մահն եմ ես
հակվում.

Էսպես էն վառ արեգակի շողերի տակ կենսածոր

Կայծակնահար կաղնին ոտքի չորանում է օրեցօր: (46)

Այստեղ իրապես մեծ է Հովհ. Թումանյանի հոգեկան
տառապանքը: Քառյակի քնարական տարածքում նա ցանկա-
նում է հավասարակշռել հոգեվիճակի զուգակշիռները:
Ինչպես միշտ, այս անգամ էլ մեր առջև կանգնած է զգայուն
հոգի ունեցող, աշխարհի և մարդու, կյանքի և մահվան միջև
դիպուկ չափումներ անող իմաստասեր պոետը: Մեզ
հիացնողը բանաստեղծական հրաշալի գյուտն է՝ «կայծակ-
նահար կաղնին»՝ բազմաձյուղ, խիտասաղարթ, կյանքի
շանթահարումներին դիմակայած, որը հիմա, սակայն,
օրեցօր ոտքի վրա չորացող, «անբույժ զարկված» և դեպի մահը
թեքվող պոետի պատկերային զուգահեռությունն է: Այստեղ
համեմատությունը նոր է, իսկ եզրահանգումը՝ պոետի
կենսափորձի պես հին: Կյանքը հավերժ չէ, և ոչ էլ մեկը կարող
է ասել, թե կյանքը տրված է իրեն հավերժաբար: Հնչեցրած այս
խոսքերը հուսահատության հետևանք չեն, այլ կյանքի և
մահվան փիլիսոփայական ընկալման տրամաբանություն:

1922թ. գրված քառյակներից մեկը այս նույն ընկալման շարունակությունն է.

Աղբյուրները հնչում են ու անց կենում,
Ծարավները տենչում են ու անց կենում,
Ու երջանիկ ակունքներին երագուն՝

Պոետները կանչում են ու անց կենում: (60)

Սա կյանքի իմացականության խորքերը բացահայտելու ևս մեկ օրինակ է: Հավատարիմ մնալով իր ոճին և գեղարվեստական սկզբունքներին՝ Հովհ. Թումանյանը մեկնում է «անցվորների» ճանապարհի փիլիսոփայությունը: Սակայն աշխարհի անցողիկության խաղարկումը հեռու է տազնապներից և վախից: Հավասարակշռողը պոետի խոսքն է, նրա կանչը՝ իմացականությանը հակված, մարդուն, աշխարհին առնչվող խորախոր շերտերը հիմնովին բացահայտող:

Կյանքում ոչինչ հավերժորեն չի տրվում. վայելի՛ր կյանքի հաճույքները, ապրի՛ր քեզ բաժին հասած կյանքը, բայց և մի՛ մոռացիր մահվան հետ սպասվելիք անբեկանելի հանդիպման մասին: Տիեզերքում զնգալով հոսում է կյանքը: «Մեկը ապրում է, մյուսը՝ սպասում»-բանաստեղծի զգուշացում-հիշեցումը դառնում է սթափություն, պատասխանատվություն՝ գոյության ընթացքի հանդեպ:

-Էս է, որ կա... Ճիշտ եմ ասում. թասըդ բե՛ր:

Էս էլ կերթա՝ հանց երագում, թասըդ բե՛ր:

Կյանքն հոսում է տիեզերքում զընգալեն,

Մեկն ապրում է, մյուսն ըսպասում. թասըդ բե՛ր:(63)

Կենաց համար բարձրացրած թասը ազդարարում է գեղեցկության և հրճվանքի հաղթանակը, որին զուգահեռ բացվում է նախապատրաստող ճանապարհը՝ դեպի մահ: Հովհ. Թումանյանի ասած տողերը հաղորդում են նոր

ազդակներ և լցվում կյանքի և մահվան փիլիսոփայության փնտրտուքով:

Հե՛յ ճամփան՛եր, ճամփանե՛ր,
Անդարձ ու հին ճամփաներ,
Ովքե՞ր անցան ձեզանով,
Ու ր՞ գնացին, ճամփաներ: (64)

Հովհ. Թումանյանը չունի մահվան դեմ առարկություն: Իմաստուն համակեցությամբ է պոետը գնահատում էն գլխից մարդու բռնած ճանապարհի խորհուրդը՝ ներքին երկխոսությամբ, զորացող ներապրումով փորձելով ճշգրտել մարդու հավերժական հաջորդափոխի հանգրվանը, կյանքի անխոտոր ճամփաների միակ ու կանխորոշված ելքը՝ ավելի հաճախ իր գիտցածի, հասկացածի չափով տալով կյանքի բովանդակության սեփական մեկնությունը:

Կյանքը ահա.-

Սընունդ, ծընունդ մինչև մահ.

Մնացածը ողջ նրանց

Կամ հաճույք են և կամ ահ: (74)

Քառյակների մեջ կյանքի և մահվան փիլիսոփայությունը ունի իմաստային այլաբանական և պատկերային համակարգի դաշնություն: Կրկին ու կրկին անցվորի հոգեբանությունը ճշգրտող պոետը չափուկշռում է, ներկայացնում իր մշտնջենական քննակերպը մահկանացու մարդու, արվեստագետ-պոետի հիմնարար ներքին տեսանկյունը աշխարհատեսության հարցի շուրջ:

Էնքան եկան, անցկացան,
Ընկան, հանգան, անցկացան
Երգ ու տաղս էլ ուր տարան
Չըկան, չըքվան, անցկացան: (77)

Ներքին պարտադիր հաշվետվությամբ է մոտենում բանաստեղծը իրենից տարածի նկատմամբ: Ուրիշին առավելագույնը տված պոետը փնտրում է գոհացումի բանաձևեր և գտնում դրանք բերկրության, սիրո ուրվագծումի մեջ՝ կարճ վերելքի անխոտոր ընթացքը գնահատելով բարոյական չափումներով:

Մեր կյանքը կարճ մի վերելք,
Անցնել հանգիստ ամեն տանջանք ու վայելք,
Ապրել անախտ, անցնել անհաղթ, հոգիանալ ու նորեն
Նյութից գատված, անմեկ աստված-վերադառնալ դեպ
իրեն: (81)

Աստված նախասկիզբ է, անմեկնեելի, ճշմարտության կշիռ, որից սկսում և որին վերջնահանգում է կեցության շրջապտույտը: Այն նյութականի և աննյութականի սահմանաբաժանն է, տիեզերական անվերջություն, բարձրագույն էություն, որին հասնելու պոետի անընդհատական մղումները քառյակից քառյակ ծավալվում են, տարածվում՝ դառնալով կայուն գեղագիտական նախասիրություն:

1922թ. գրած հանճարեղ քառյակներից մեկը մեծ խոհերի անհուն խորերից բարձրացած, տիեզերական աստվածային ոլորտներում թափառող ճամփորդի մտածումներն են, ստեղծագործող բանաստեղծի անկեղծացումը ստեղծող Աստծու առաջ:

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին.
Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդս է իմ
հոգին.

Հեռացել է ու վերացել մինչ աստղերը հեռավոր,
Վար մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին:
(61)

Միստիկ պատկերային ընկալմամբ, գեղարվեստական նշանառու համեմատությամբ Հովհ. Թումանյանը հիշեցնում է,

թե որտեղ է իր հայացքը, որ բարձրերում է թափառում իր հոգին, համամարդկային նյութի քննության որ ուղղությունն է բռնել: Ճշմարիտ արվեստագետը ունի հավերժության ճանապարհի տոմսակը. այսպես եղել է միշտ և այսպես էլ կշարունակվի. զարմանալին սա չէ: Որքան էլ հազարավոր ձևեր փոխվեն, ձևը անցավոր խաղ է, կարևորը բովանդակությունն է, երկու մեծ հոգիների՝ աստվածայինի և բանաստեղծականի ներդաշնությունը:

Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ, ի՛նչ կա
որ.

Ես եղել եմ, կա՛մ, կըլինեմ հար ու հավետ, ի՛նչ կա որ,

Հազար էսպես ձևեր փոխեն, ձևը խաղ է անցավոր,

Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ի՛նչ կա որ:

(51)

Ահա այսպես Հովի. Թումանյանը սիրում է կեցության փիլիսոփայական հարցերը քննել՝ աստվածային էությանը համեմատ, չափել և կշռել նրա ներկայության ծանրությունը:

Մարդն իր ապրած օրերում ունի աճյուն և անուն: Տիեզերական Մեծ Հոգու ճառագող ժպիտի առաջ անկայուն, դեղնուն են այդ աճյունն ու անունը, ոչինչ՝ աստվածային անհունության, անանունության և անեսության առջև: Միայն բանաստեղծն է կարողանում գտնել իր շարունակությունը՝ աստվածային էությանը համեմատ:

Անճառելի, անմեկնելի Մինը, որ ամենին միացնում է այս կյանքում, յուրաքանչյուրի մեջ անկեզ բորբոքում է ապրելու կիրքը, դառնում է հատկապես բանաստեղծին շարժման կոչող ուժը, և վերջինիս այլ բան չի մնում, քան ընդառաջ գնալ այդ ուժին, չափել իրեն՝ Ըստեղծողի սահմանած մակարդակում, փորձել գտնել «այն կողմ» անցնելու հնարավորությունները, վերերկրյա տարածքում մատչել աստվածային իսկությանը: «Աստվածային այցելուի»

խորին պատասխանատվությամբ նա դառնում է այն ամենատես, միակ, իմաստուն աչքը, որը պետք է «մտիկ անի ամեն մեկին ու կյանքին»՝ պահելով աստվածային ճշմարտության ատյանի արդարադատ, անաչառ կշիռը ու գծելով հաշվետվության սահմանաբաժանը:

Կյանքս արի հրապարակ, ոտքի կոխան ամենքի.

Խափան, խապան ու անպտուղ, անցավ առանց
արդյունքի:

Ինչքա՛ն ծաղիկ պիտի բուսներ, որ չբուսավ էս հողին...

Ի՛նչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ
տվողին...(57)

Բանաստեղծը շարունակաբար շնչում է աստվածային շունչը, լսում նրա կանչն ու հունչը, ընդունում մահահրավերը՝ տիեզերքի խոր մեղեդիով և մրմունջով վեհանալու պայմանով:

Հովհ. Թումանյանը երբեք մահին թիկնադարձ չի քայլում: Ավելի հաճախ մահվան սարսուռի հաղթահարումը բանաստեղծին հաջողվում է իր բնապաշտության շնորհիվ: Բնությունը բանաստեղծի մեջ է: Մարդը ծնվում է բնությունից և մահանալով՝ վերադառնում դեպի բնություն, ձուլվում նրան, դառնում հավերժական գոյության անբաժանելի մասը: Հովհ. Թումանյանը ստեղծում է ներքին հաղորդակցություն բնության մշտահոլով կեցության հետ, միանում նրան՝ բռնելով իսկական բանաստեղծի համար վերապահված անմահության վերագնա ուղին:

Մյուս կողմից՝ Հովհ. Թումանյանի քառյակներում չկա մահվան բաղձանք, ապրելու ցանկությանը ավելի հաճախ հանդիպադրվում է մահվան ներկայության, նրա անհետաձգելի այցելության սթափ գիտակցությունը: Երբեմն իշխում է «անմահացումի» ներքին պահանջը՝ շատ ներդաշնակ հետապնդած գեղագիտական իր շնչին: Ապրած օրերը

մաքրված են, գտված ու բյուրեղացած: Աստվածածնույլ բանաստեղծը այսպես լուծում է նաև ընթերցողին միանանալու, նրան մոտենալու ճանապարհի խնդիրը, այնպես որ ընդառաջ գնալ Աստծուն, նշանակում է՝ ընդառաջ գնալ ընթերցողին, մարդուն:

Հովհ. Թումանյանի քառյակներում մեծ նշանակություն ունի աստվածային ոլորտների, մահվան խորհրդի, կյանքի դարձդարձումների շուրջ անհանգիստ, մշտնջենական քննակերպը, որը տեղի է ունենում Աստված-ընթերցող-բանաստեղծ հանգուցային հարթության մեջ: Աստված դառնում է բանաստեղծի և ընթերցողի միջև ներքին հաշվեփակի սահմանաբաժանը: Բանաստեղծն անդադար մղում է ընթերցողին կշռաչափել իր ապրածի և արածի առավելագույնը Աստծու ճշմարտության ատյանի արդարադատ կշեռքով՝ վերջում տալով գոհացումի բանաձևեր կամ արտահայտելով անգոհության, անբավականության տագնապներ՝ կապված գայթող մարդու գահավեժ անկման անդառնալիության հետ: Ամեն դեպքում Հովհ. Թումանյանը կանգնած է մարդու կողքին, ինչպիսին էլ նա լինի, անդադար ճշտում նրա կեցության ուղին, խրատում ու խորհուրդ տալիս, սթափեցնում և հորդորում սրաբշավ անցնող օրերի մեջ պահպանել ուրախության և խաղաղության խորհուրդը:

РЕЗЮМЕ
ДИАЛЕКТИКА ЖИЗНИ И СМЕРТИ В
ЧЕТВЕРОСТИШИЯХ О. ТУМАНЯНА
ВАРДУИ ДАВТЯН

К концу 1800-ых годов и в последние годы жизни (1916-1922) О. Туманян написал множество четверостиший, среди которых выделяются такие, которые определяют границы

туманяновского восприятия жизни и смерти. Это работы философской направленности. Диалектика жизни и смерти приобретает здесь глубинное осмысление.

Для О. Туманяна важны человек и любовь. Восприняв символ любви, он выбирает путь, ведущий от человека к богу. В жизни ничего не вечно. Во вселенной течет жизнь. Один живет, другой – ожидает.

Ключевые слова: Ованнес Туманян, смерть, жизнь, четверостишие, диалектика жизни и смерти.

ABSTRACT
THE DIALECTICS OF LIFE AND DEATH IN H. TOUMANYAN'S
QUATRAINS
VARDUHI DAVTYAN

By the end of 1800th and during the last years of his life (1916-1922) H. Toumanyan wrote many quatrains among which stand out those which put a distinction between the phenomena of life and death. These are, of course, philosophical works. The dialectics of life and death acquires quite a deep notion here. The human being and the love are of great importance for Toumanyan.

Perceiving the symbolics of love, he tries to choose the way that leads to God. There is nothing eternal in life. Life continues in the universe. One lives, and the other one awaits.

Keywords: Hovhannes Toumanyan, death, life, quatrain, dialectics between Life and Death.

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ

ԱՇՈՏ ՇԱՀԻՆՅԱՆ

Մեծանուն գրող Հ. Թումանյանը թողել է հարուստ ժառանգություն: Բազմաժանր գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ, - նա խոր հետք է թողել հայ իրականության մեջ: Նրա ստեղծագործական պաթոսը, գեղարվեստական պատկերները, կենդանի շնչավորվածությամբ կերպարները, մասսայական տեսարանները, լեզվաարտահայտչական ինքնատիպ միջոցները, յուրօրինակ ժողովրդական բանահյուսությամբ սնված ասելիքը, թեմատիկ բազմազանությունը վերարտադրում են հարազատ երկիրն ու նրա մարդկանց, բնաշխարհն ու իրական պատմությունը: Նա անաչառ է այդ իրականության գեղարվեստական մարմնավորման գործում: Այն աստիճանի հարազատ, իրական, որ ընթերցողը՝ հայ, թե օտար, հեղինակի գեղարվեստական պատկերներում, կերպարներում տեսնում են այդ օրերի Հայաստանը՝ իր հոգսերով, դարդ ու ցավով, անափ տխրությամբ, լուռ չարչարանքով, խառը մտքերով, որը երբեմն ավարտվում է ըմբոստ եզրակացությամբ, լավ օրերի երազներով: Եվ, որ գլխավորն է՝ անսահման բարությունը, որն ամենուր է, և էությունն է հերոսների, շնչավորված հայրենի բնության, երազների, անգամ “նորանոր ցավերով” օրերի: Այլ կերպ ասած, Թումանյանի ստեղծագործություններում Հայաստանն է, իր ներկայով ու անցյալով, ապագային ուղղված հարցականներով, անգամ, ինչ-որ տեղ կասկածներով: Իհարկե, իր ստեղծագործական գործունեության ընթացքում Թումանյանն անցել է զարգացման փուլեր. ավելի լիարժեք ու գե-

դարվեստական նուրբ շունչ են ստացել պատկերները, ժողովրդական կյանքի նկարագրությունները, հոգեբանական խոր բնութագրերը: Սակայն գեղարվեստական պաթոսը, բովանդակությունը անփոփոխ է՝ ավստոսանք, հառաչանք, տխրություն, վիշտ...: Այսպես, ... Թռչում է հանկարծ մի ծանր հառարանք

Եվ սիրտս կարծես հանգստանում է...

Ի՞նչ է սա՝ դատապարտվածություն ... հնազանդության և ինքնաօտարման նոր դրսևորո՞ւմ:

Ո՛չ, - սա պարզապես Հայաստանն է՝

“...Աշխարհից, մարդուց հույսերը կտրած,

Գանգատվում է նա և ցավից տնքում:

Կյանքից զզված, սակայն դեռ չապրած,

Հանգիստ է խնդրում հեռու երկնքում”,

Երբեմն էլ այդ իրականությունը ծնում է այլ ընկալումներ ու իրողություններ՝

...իմ կարճ խելքով էնքանն եմ տեսնում -

Ապրիլ չի լինում էսպես ամեն օր...

Տրամաբանական է նաև հետևյալ ելքը՝ ... երեկ իրիկուն էդ կողքի սնից

Կախ էին արած երեք հրացան:

Քանի-քանի մարդ կորավ իր տնից,

Քանի-քանի մարդ դառավ մարդասպան...¹

Դաժան է իրականությունը, ուր ... ամենքս, իմացիր, տասը տեր ունենք...² Իրավիճակն էլ ավելի են ծանրացնում օրինականության բացակայությունը, ամենաթողությունը.

...Իրանցն ասում են ու քեզ չեն լսում,

Մինչև չտեսնես մեծին, պիսերին,

¹ Հ.Թումանյան, Երկեր, հ.3, Եր., 1989, էջ 77:

² Նույն տեղ, էջ 74:

Հիմի տես նրանք ինչքան են ուզում:

Գողն էլ մի կըռնից...

Աչքըդ թեքեցիր - բանիդ տերը չես

Քաշում են տանից, քաշում են դըռնից...³

Ճգնաժամային է ոչ միայն սոցիալ-տնտեսական կյանքը, այլև մշակութային-հոգևոր ոլորտը.

...Մեր հին աղաթից ընկել ենք, գրկվել,

Նորն էլ չգիտենք թե ինչ է եկել...⁴

Սակայն, գեղարվեստական հերոսները նախընտրում են ցավն ու տառապանքը տանել լուռ՝

...Ինչ անես, ախպեր, ումից խռովես,

Պետք է համբերել, թե լավ, թե օսալ...

որովհետև հավատացյալ գյուղացին գիտի՝

...Թե որքան ենք զուրկ, որքան ենք մենք խեղճ,

Էդ հաստատ գիտե ինքը---միայն տերը:⁵

Այդ հավատով ու վախով հաղերձ խեղճ ու կրակ գյուղացին նկատում է՝

...Ժամ ենք գնում ամեն օր,

Բայց միշտ ցավեր նորանոր,

Միշտ մի աղետ, մի վնաս

Գալիս են մեզ անպակաս...⁶

Սակայն, ամենաբնորոշը Թումանյանի համար մնում է բարությունը և մարդասիրությունը: Այլ կերպ չի կարելի պատկերացնել, նա ապրում է մարդկության կյանքով, ժողովրդի կյանքով, նրա ստեղծագործությունը ծառայում է տառապող մարդկանց առաջընթացի ուղիների որոնմանը:

Քանի ձեռքից եմ վառվել,

³ Նույն տեղ, էջ 73:

⁴ Նույն տեղ, էջ 70:

⁵ Նույն տեղ, էջ 70:

⁶ Նույն տեղ, էջ 9:

Վառվել ու հոր եմ դառել,
Հուր եմ դառել՝ լույս տրվել,
Լույս տալով եմ ըսպառվել:

Եվ այսպես էլ անցավ Թումանյանի կյանքը՝ այրվեց իր ժողովրդի ու հայրենիքի համար և անէացավ, լույս տալով: Անհուն տիեզերք, ծավալվող աշխարհ, ինքն էլ նրանց հետ գնում է երազանքների ակունքները:

Ու երջանիկ ակունքներին երազուն՝
Պոետները կանչում են ու անց կենում:

Թումանյանի երազների կիզակետը “հաշտ ու խաղաղ” մարդկությունն է, ուր մարդիկ կմտածեն կյանքի անցողիկության մասին, լիարժեք կզգան, կապրեն այդ իրական կյանքը:

...Է՞յ անխելք մարդ, երբ տի թողնես ապրողն ապրի
սըրտալի,

Երբ տի ապրես ու վայելես էս աշխարհը շեն ու լի...

Իր բազմաժանր ստեղծագործություններով Թումանյանն ամբողջացրեց հասարակական, խոհափիլիսոփայական, գեղագիտական ընկալումները ժամանակի հայ իրականության վերաբերյալ: Պատմվածքներում, քառյակներում, պոեմներում, բանաստեղծություններում և այլն, ժողովրդական բանահյուսության գոհարների անզուգական գեղարվեստական մեկնաբանություններում նա իր աշխարհն է ստեղծում, մի աշխարհ, որը բյուրեղացնում է հայրենի եզերքը որպես երկնային տիեզերքի արտացոլում, նրա անբաժանելի մաս: Այդ աշխարհը և իրականությունն է, և պատմություն, նրանց ընկալում-չափումները կանխորոշում են գալիք օրերը, ապագան: Թումանյանը բացահայտել է հայ ժողովրդի “ազգային ոգու” տեսակը: Այդ ոգին գալիս է դարերի խորքից, դա նրա կերպն է, ներաշխարհը, շաղախված հոգսերով, հակասական մտքերով, խոր հուզական ապրումներով: Այս

իրական իրողությունը հետագա գիտական որոնումներում
 որակվեց որպես ժողովրդի կամ ազգի ինքնություն:
 Թումանյանն այնքան խորն ու հարազատ է “բնութագրել” այդ
 իրողությունը, որ Ե. Չարենցի վկայմամբ, նա դարձել է “հայ
 ժողովրդի ետմիջնադարյան պատմության կենսագիրը”: Ըստ
 էության, նույն բնութագիրն է տվել նաև Վ. Բրյուսովը,
 գտնելով, որ “Թումանյանի պոեզիան Հայաստանն ինքն է՝
 հնադարյան և նոր, հարություն առած և բանաստեղծությամբ
 արտահայտված մեծ վարպետի ձեռքով”: Գեղարվեստական
 պատկերների ստեղծած աշխարհում մեր ժողովուրդը գտավ
 իրեն, ճանաչեց՝ արտացոլված, վերարտադրված արվեստի
 արտահայտչական ձևերով: Գեղարվեստական պատկերնե-
 րին, կերպարներին, մասսայական տեսարաններին լրացնում
 են ժողովրդական հույզերի ու մտքերի քուրայով անցած
 իմաստացած բառն ու բանը, դառնալով բնավորության,
 հոգեբանության անբաժանելի դրսևորումները: Այսպես,
 ազգային, ժողովրդական հոգեբանության, ապրումների,
 կեսաշխարհի յուրօրինակ գեղարվեստական մարմնա-
 վորումն են բառ-պատկերները, դարձվածքները՝ վայր եկել է
 տարել, երեսը պահել, մի կտոր չոր հաց, ամեն մեռնողի երանի
 տալի, ինչ ես կորցրել – ընչի ման գալի, մեր սև օրին ճար
 անենք, ուսիդ մատաղ, խոփիդ դուրբան, գիր ու կապ, աղոթք
 անել, գիրը գրած լինել, Աստված բաները աջողի, չար աչք,
 չարը խափանի, գարի գցել, մարդ դառնա և այլն: Իսկ առան-
 ձին բառեր ձեռք են բերում ազգագրական նշանակություն,
 դուրս գալով գեղարվեստական ենթատեքստից: Այսպես,
 նամարդ, նամուս, թասիբ և այլ մի շարք հասկացություններ,
 որոնք ժողովրդական աշխարհայացքային ինֆոմացիա են
 կրում և լրիվ ընկալելի են միայն տվյալ հասարակական-
 պատմական միջավայրում: Հետաքրքիր փաստ է, որ
 նա+մարդ բառի մի դրսևորում ունենք հայ-քրդական

հուշապատումներում կապված մուսուլմանություն ընդունած հայկական իշխանների մի մեծ հատվածի անվանման հետ՝ նրանց անվանել են նա+մարվ+ան/մարվ=մարդ, իսկ ան-ը հոգն. իմաստըն ունի/⁷ Այդ հատվածը կազմել է Արևմտյան Հայաստանի քրդախոս, “քրդական” կոչված իշխանապետությունների մի զգալի մասը: Անկասկած, ինքնատիպ մտածողություն, վառ, յուրօրինակ զգացմունքային աշխարհ, հոգեբանություն և խառնվածք, դիրքորոշումներ ու մղումներ: Նաև, վարքագիծ ու հակադիր մոտեցումներ, ցավալի և ողբերգական հետևանքներ: Սա Թումանյանի ժամանակաշրջանի, այդ դարաշրջանի, և ոչ միայն այդ դարաշրջանի, հայկականությունն է, հայոց ինքնությունը: Թումանյանի ստեղծագործական հայեցակարգը, գեղարվեստական մոտեցումները համապատասխանում էին իրականության ռեալիստական վերաբրտադրության պահանջներին: Արդյունքում, - իրականության համոզիչ, գեղարվեստական մարմնավորում: Աստվածատուր շնորհիքը մեծ գրողին հնարավորություն տվեց թափանցել հայոց քաղաքակրթության չբացահայտված ծալքերը, բացահայտել ողջախոհության մակարդակում անբացատրելին, իռացիոնալ երևույթ համարվող հայի համբերությունը, անափ բարությունը, երազների և իրականության զգացողության միասնությունը: Թումանյանի ապրած ժամանակաշրջանը՝ 19-20-րդ դարերի սահմանագիծը պատմական բարդ ժամանակաշրջան էր՝ ազգերի առճակատում և ողբերգություններ, հեղափոխություններ, Հայոց ցեղասպանություն, սպասումներ, հուսախաբություններ: Փուլ էր գալիս ավանդական, դասական արժեքային համակարգը: Հասարակական միտքը, գեղարվեստական ընկալումները,

⁷ Կ. Սասունի, Քուրդ ազգային շարժումները... 1969, Բեյրութ, էջ 43:

տեսական քննարկումները, բնականաբար, պետք է անդրադարձ կատարեին դեպի լայն ու խոր վերախմաստավորումներ, փորձեր գտնել կյանքի “նոր արժեքային” համակարգ, որը հենարան կդառնար, մեր դեպքում, ազգային-ընկերային վերածննդի համար: Իրողությունը լայն հասարակական հնչեղություն ձեռք բերեց:

Արժեքային-հոգևոր ճգնաժամ էր կամ այլ կերպ հասարակական-անհատական ինքնության ճգնաժամ: Դառնացած Թումանյանը գրում է, - “արդ, եթե ունենք ազգային իմաստություն, հոգու արիություն և առողջ բնագոյներ, անկարելի է աչքներս փակենք մեր էս ծանր հիվանդության առաջ և չզգանք, որ մեր հոգին շատ է դառնացած, մեր ներքին մարդը շատ է փչացած, - ապա ավելացնում, - դրա դեմ կռվելու, առողջանալու առաջին պայմանը էն է, որ մենք և մեր սրտերում, և աշխարհի առաջ անկեղծ խոստովանենք ու ճանաչենք մեր դժբախտությունը”; Այնուհետև շարունակում, - ամեն առաջադիմություն պայմանավորված է ինքնուրույն քայլեր անելու, ունեցած լավագույն ձիրքերը միշտ և լավագույն զգացմունքները զարգացնելու ազատության պայմանով”:⁸ Արժեքային-հոգևոր խոր հիասթափության կամ ինքնության ճգնաժամի ամփոփ եզրակացությունն է դառնում բանաստեղծի հետևյալ միտքը. “հայ ժողովուրդը չունի և չգիտի իր պատմությունը... չգիտի, թե ով է ինքը, որտեղից է գալիս և ուր է գնում: Հոգեկան ու մտավոր կուրության մեջ... միշտ ենթակա այս կամ այն պատին ու պատահարին զարկվելու փորձանքին”:⁹ Ըստ էության, հեղինակը իր ստեղծագործություններում լուծում է հասարակական-քաղաքակրթական մեծ հիմնահարց, որի արդիականությունը սուր է նաև մեր օրերում, այն է՝ հայոց

⁸ Հ. Թումանյան, “Երկերի ժողովածու” 1969, Երևան, հ. 4, էջ 229:

⁹ Նույն տեղ, էջ 182:

ազգային հավաքական ինքնության ընթացող ճգնաժամի բացահայտումը և նրա հաղթահարման ճանապարհների հստակեցումը: Չնայած այն իրողությանը, որ Թումանյանի ժամանակ դեռ ձևավորված չէր ինքնության հասարակագիտական տեսությունը, նա տալիս է նրա շատ հասկացությունների բովանդակային բացատրությունները: Դրանք են՝ ինքնություն, ինքնության ճգնաժամ, դրական և բացասական ինքնություն, դրանց հաղթահարման հնարավորությունները, անհատական և կոլեկտիվ պատասխանատվության խնդիրը և այլն: Ինքնության գիտական հարացույցը 20-րդ դարի արդյունք է և հատկապես առաջին և երկրորդ աշխարհամարտերի բերած հումանիտար ճգնաժամի: 1940-ական թթ. Է. Էրիկսոնը իր սոցիալ-հոգեբանական տեսություններում առաջադրեց “ինքնություն” և “ինքնության ճգնաժամ” հասկացությունները: Այդ հասկացությունները սկսեցին ակտիվ օգտագործվել բազմաթիվ հոգեբանական, սոցիոլոգիական, փիլիսոփայական, քաղաքագիտական տեսություններում՝ Ջեյմսի, Ֆրեյդի, Պիաժեի, Ֆրոմի, Էրիկսոնի, Մալլուի, Վիգոտսկու, Լոտմանի և մյուսների կողմից: Նեոհումանիզմի հարացույցը դարձավ ինքնության ասմունքի արժեքային-գաղափարական դաշտը, որի հիմնական գաղափարներն են մարդու պատասխանատվությունը մյուս մարդկանց ու աշխարհի, միջավայրի նկատմամբ, մարդու և հասարակության /նաև, էթնո-սոցիալական խմբերի/ երկատվածության վերացումը, գիտատեխնիկական, տեխնոլոգիական գործունեության հետևանքների հաղթահարումը և այլն:

Իրավամբ, կարող ենք պնդել, որ Հ.Թումանյանը իր մտքի խորաթափանցությամբ, գեղարվեստական պատկերների ու կերպարների կենդանի հոգեբանական տվյալներով գրեթե ամբողջացրել է ազգային ինքնության բովանդակությունը, կառուցվածքը, առաջնահերթությունները: Թվարկենք

դրանցից մի քանիսը՝ մարդու օտարվածությունը, ոչ միայն իր միջավայրում, այլև համընդհանուր կապակցություններում՝ Աստծո, Տիեզերքի, Բնության, վարքագծի ավանդական և նորմատիվային շեղումների իրական-գեղարվեստական ներկայացումը, ինքնամեկուսացում և հակադրում, կյանքի իմաստի կորուստ և նմանատիպ այլ երևույթներ: Այս երևույթների ժամանակային չափումները պատմական լայն ընդգրկումներ ունեն, նրանք քաղաքակրթական են բովանդակային առումով և հնչեղությունը հասարակական-քաղաքական, գիտական-մշակութային, սոցիալական և այլն կապակցություններով դեռևս սպասում են անաչառ հետազոտության:

РЕЗЮМЕ
ТУМАНЯНОВСКИЕ ВЫЯВЛЕНИЯ АРМЯНСКОЙ
ИДЕНТИЧНОСТИ
АШОТ ШАГИНЯН

В статье сделана попытка анализировать творческие работы известного писателя О. Туманяна в рамках понятий параметра социально-общественнозначительной идентичности. Сама, теория идентичности, будучи явлением 40-х годов 20-ого века, дает возможность для иллюстрации политических-духовных процессов других исторических эпох. В статье показаны выводы идентичности армянского народа, ее оценки, сделанные мыслителем Туманяном, с огромным пониманием своего времени.

Ключевые слова: Идентичность, кризис идентичности, преодоление кризиса идентичности, художественное воплощение, картина, образ, слово-картина, традиционные ценности, нормы.

ABSTRACT
TUMANYAN REVELATIONS OF ARMENIAN IDENTITY
ASHOT SHAHINYAN

In the paper it has been attempted to analyze the works of the famous writer H. Tumanyan in the framework of social scientific parameter – identity. Being a phenomenon of forty years of 20th century, the identity theory permits illustrating political-spiritual processes of the other historical periods. In the paper it was shown the identity revelations, evaluations of the Armenian nation, made by writer Tumanyan with great understanding of his time.

Keywords: Identity, identity crisis, overcoming of identity crisis, artistic incarnation, scene, character, word-scene, traditional values, norms.

ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՀԱՅՆ ՈՒ ՀԱՅԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ

ԱՆԱՀԻՏ ՄՈՒԿՈՒԶՅԱՆ

Թումանյանը հաճախ էր նշում, որ համաշխարհային գրականության պատմության մեջ հազիվ թե այնքան նշանավոր մի թվական լինի, ինչքան 1603 թ-ը, երբ Անգլիայում լույս տեսան Շեքսպիրի «Համլետ»-ը, Իսպանիայում՝ Սերվանտեսի «Դոն Կիխոտ»-ը: Երկուսն էլ թե՛ Համլետը, թե՛ Դոն Կիխոտը, գիտեն ու տեսնում են, որ աշխարհը դուրս է եկել իր շառավղից, և մարդը տառապում է, երկուսն էլ զգում են, որ իրենց է վիճակվել աշխարհը նորից ուղիղ ճանապարհի վրա դնելու մեծ գործը¹: Ինչքան կարևոր է համաշխարհային գրականության մեջ 1603թ-ը, նույնքան կարևոր է 1869 թ-ը հայոց պատմության մեջ, երբ ծնվեցին հանճարներ, որոնք հավերժական կապով կապեցին մասնատված հայության բոլոր հատվածները, արվեստագետին ու մարդուն, ազգայինն ու համամարդկայինը դրեցին ներդաշն միասնության մեջ, գնահատելով մերը՝ երբեք չարժեզրկեցին օտարին: Հենց նրանց էր վիճակված հայ մարդուն կանգնեցնել ճիշտ ճանապարհի վրա ու դառնալ յուրաքանչյուրիս կյանքի հավերժական ուղեկիցները:

Ամեն հայի գիտակից կյանք սկսվում ու ավարտվում է նրանցով՝ Թումանյանով ու Կոմիտասով: Թումանյանը հայի սիրտն է, Կոմիտասը՝ հոգին ու խիղճը: Մենք նրանց մասին չենք սովորում ո՛չ դպրոցում, ո՛չ բուհում. Նրանք մեր մեջ են՝ մեր գոյության ու ես-ի մեջ: Նրանց շնորհիվ մենք ճանաչեցինք

¹ Տե՛ս Թումանյան Հ., Շեքսպիր և Սերվանտես, 1916թ.,

https://hy.wikisource.org/wiki/%D5%87%D5%A5%D6%84%D5%BD%D5%BA%D5%AB%D6%80_%D6%87_%D5%8D%D5%A5%D6%80%D5%BE%D5%A1%D5%B6%D5%BF%D5%A5%D5%BD (հղվել է 10.05.2019):

մեզ: Նրանց ցույց տված ճանապարհը ինքնամաքման ճանապարհին է, առերեսումը մեր պատմության հետ, սխալների և արատների աչքերին բաց նայելը, զոջալը և առաջանալը: Նրանք ցույց են տալիս, որ հայրենիքը պիտի սիրենք ոչ թե կույր ազգասերի սիրով, այլ գիտակից, հասուն մարդու սիրով, որի սերն ազնիվ է, առողջ ու բովանդակալի: Նրանք դնում են ժողովրդի ու ամբոխի հստակ սահմանաքաժան. «Ժողովուրդն իմաստուն է, ամբոխը՝ թեթևամիտ, ժողովուրդը մեծահոգի է ու բարի, ամբոխը՝ դուրագրգիռ, վտանգավոր ու չար, ժողովուրդը աշխատանք է սիրում, ամբոխը՝ թալան»²: Այդ սերը ամփոփված է նրանց հանճարեղ, բայց և ողբերգական կերպարներում, որոնց ձայնով խոսում է ժողովուրդը:

Կոմիտասի դեպքում հայի համահավաք կերպարը խճանկարի պես բաժանված է նրա երաժշտության մեջ, դրա համար էլ հայը երբեք չի կարող շփոթել կոմիտասյան աղոթքը մեկ այլ ստեղծագործության հետ: Ցավոք, Եղեռնի տարիները խլեցին նաև կոմիտասյան հային. մինչև 1935 թվականը նա ապրում է տառապալից մի կյանք՝ պարուրելով շուրջը անխախտ լուրջամբ: Լռել է միայն կյանքի վերջին տարիներին: Լռությունն է դառնում նրան դեպի հավերժը ուղեկցող երաժշտությունը:

Այլ ուղի անցավ Թումանյանը, ում վրա, անշուշտ, մեծ ազդեցություն ունեցավ հայրենի Լոռին, որը շնորհիվ իր անմատչելի, ամուր դիրքի մինչև այսօր պահել է ժողովրդի դյուցազնական ոգին, և այդ ամենի ամենավառ կրողը Հովհաննես Թումանյանն է: Մեծ Լոռեցին ինքն ընտրեց իր ճանապարհը՝ ներաշխարհով, էությամբ կապվելով հարազատ ժողովրդի ճակատագրին, նրանից այլևս չբաժանվելու

² Գրիգորյան Ս., Ասույթներ, Երևան, 2009, էջ 17-18:

պայմանով: Նրա պարզ, անմիջական ստեղծագործությունները դարերով ապացուցված ճշմարտություններ են և թվում է՝ նա ամեն ինչ գիտի, կանխագգում ու կանխագուշակում է: Թումանյանի գրչով հայ ժողովրդի կուտակած իմաստությունն է խոսում: Թումանյանի մեծությունը ոչ միայն նրա ստեղծագործություններն են, այլև նրա քաղաքացիական ու մարդկային վեհ կերպարը, որը հատկապես ակներև դարձավ ազգային խնդիրներում ունեցած կարևոր մասնակցությամբ: Նա կտրված չէր կյանքից ու իրականությունից, բայց այդ բոլորի ու ամենքի գերին չէր, իր կործանված հայրենիքի հետ երբեք չդարձավ գերին ասելության: Նա փորձում էր հասկանալ հայության խնդիրները բոլոր հարթություններում՝ հատկապես մեծ ուշադրություն դարձնելով ինքնության խնդրին: Ո՞վ ենք, ի՞նչ ենք ստեղծել, ինչո՞ւմ ենք թերացել ու սխալվել: Բոլոր խնդիրների հիմքում Թումանյանը տեսնում էր սեփական պատմության, մշակույթի մասին անտեղյակությունը՝ մենք մեզանից անտեղյակ ենք. «Երկիր ունենք՝ չենք ճանաչում, պատմություն ունենք՝ չգիտենք, լեզու ունենք՝ դրանով չենք խոսում»³: Եվ այս խնդրի լուծումը տեսնում էր ինքնաճանաչման, ինքնահարգանքի, ինքնակատարելագործման միջոցով:

Թումանյանից լավ ոչ ոք չէր գիտակցում՝ ինչո՞ւ է հայը փոխվել. «Ուրիշ ընդհանուր հանգամանքների հետ զարհուրելի ծնող է եղել մեզ համար մեր պատմությունը: Նա երկար դարերով մեզ դրել է բարբարոս ժողովուրդների ոտների տակ: Իսկ ամեն կենդանի գոյություն, որ ոտնատակ է ընկնում,

³ Թումանյան Հ., «Մեծ ցավը»,

https://hy.wikisource.org/wiki/%D5%84%D5%A5%D5%AE_%D6%81%D5%A1%D5%BE%D5%A8, (հղվել է 10.05.2019):

եթե չի մեռնում, այլանդակվում է, դառնանում ու փչանում»⁴։ Այսպիսին է բնության օրենքը և այն գործեց նաև հայի դեմ։ Իսկ Թումանյանը հայի փրկության համար պատրաստ էր պայքարել թե՛ բնության, թե՛ ժամանակի, թե՛ անարժան հայրենակիցների դեմ։

Բայց Թումանյանի նպատակն հային ընկճելը, կոտրել չէր, այլ փորձում էր հավատ ու հպարտություն ներշնչել, հուսադրել ու ոտքի կանգնեցնել ծնկի իջած ժողովրդին։ Հենց սրա մեջ է Թումանյանի մեծությունը. մարդ, ով տեսել էր 1915 թվականի ողբերգությունները, բայց չէր կոտրվել, դրա իրավունքը չուներ։ Նա գիտեր, որ հոգեպես պետք է լինի որբերի կողքին, պիտի փորձի ֆիզիկապես ամուր լինել, որպեսզի կարողանա համակարգել բոլոր գործերը։ Կտրված չէր կյանքից, տեսնում էր վիշտը, փորձում էր օգնել։ Այդ նույն մղումով Էջմիածին եկավ և Մարտիրոս Սարյանը, սակայն չկարողացավ օգտակար լինել։ Տեսարանից ազդված՝ մեծ նկարիչը ուշագնաց եղավ։ Եթե Սարյանը չդիմացավ ընդամենը մի քանի ժամ, պատկերացնենք, թե ինչ էր կատարվում բանաստեղծի հետ, որն արդեն օրեր շարունակ այդ տեսարանների լուռ վկան էր⁵։ Բայց, չգիտես որտեղից, բանաստեղծի վրա հզոր ուժ էր իջել, և նա չէր ընկճվում։ Այդ շրջանն ու Թումանյանի տոկունությունը լավագույնս նկարագրում է Լեոն. «Հովհաննես Թումանյանն այդ դժոխքի մեջ է» : Իսկ Թումանյանը ասում էր. «Մ. Էջմիածինը հիշիր ոչ թե սուրբ Էջմիածին, այլ սոսկալի Էջմիածին»⁶, որովհետև այնտեղ էին

⁴ Թումանյան Հ., «Դառնացած ժողովուրդ», <http://armenianhouse.org/tumanyan/nonfiction-am/people.html>, (հղվել է 10.05.2019)։

⁵ Տե՛ս <https://www.mediamax.am/am/news/society/27235>, (հղվել է 10.05.2019)։

⁶ Թումանյան Հ., Երկեր, Երևան, 1951, էջ 524։

հավաքվել բազմահազար որբեր, փախստականներ, ցեղասպանությունից մազապուրծ հայեր՝ ընկնելով մի այլ դժոխք: Բայց նույնիսկ այդ սարսափի մեջ նա ուժ էր գտնում գրելու՝ «Իմ նոր հայրենիք, հզոր հայրենիք»: Թումանյանը դարձավ երկար խավարից հետո նշմարվող լույս՝ ապրող ու ապրեցնող:

Իրավամբ, անչափելի է Թումանյան մարդասերի մեծությունը, որովհետև նա չընտրեց հեշտ ուղին՝ չդարձավ մարդատյաց՝ տեսնելով մարդկային հրեշին: ՄԱՐԴՆ ԱՄԵՆ ԻՆՉ է⁷: Նա շարունակում էր այս մասին պնդել ու արարել: Թումանյանի խաղաղության կոչը մահմեդական հարևաններին⁸ լավագույնս ցույց է տալիս աշխարհին՝ մեր Թումանյանին: Տարիների հեռավորությունից նա մեզ սովորեցնում է, ու բացատրում, որ կյանքն ինչպես անսահման մեծ է, այնպես էլ փոքր է անսահման և յուրաքանչյուրս ապրում ենք ավելի նեղ ու փոքրիկ կյանքերով: Կա ազգային կյանք, պետական կյանք, ինչպես նաև՝ թշնամու բանակների պես իրար դեմ կանգնած փոքրիկ ես-երի կյանք: Նա սովորեցնում է ավելի լայն նայել մարդկանց ու աշխարհին⁹, անտեսելով ու ներելով՝ հասնել կատարյալ հային, ինչպես Գրիգոր Նարեկացին է ստեղծել կատարելության ձգտող մարդու իդեալ, որին հասնելու համար նա իրեն է վերագրում մեղքեր ու հանցանքներ, դատապարտում այն բոլոր բացասականը, ինչ դիտել է

⁷ Տե՛ս <https://www.mediamax.am/am/news/society/27235>, (հղվել է 09.05.2019)

⁸ Տե՛ս Թումանյան Հ., «Լոռեցիների կոչը», https://hy.wikisource.org/wiki/%D4%BC%D5%B8%D5%BC%D5%A5%D6%81%D5%AB%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB_%D5%AF%D5%B8%D5%B9%D5%A8, (հղվել է 08.05.2019):

⁹ Տե՛ս Թումանյան Հ., «Մի՞թե դժվար է», https://hy.wikisource.org/wiki/%D5%84%D5%AB%D5%9E%D5%A9%D5%A5_%D5%A4%D5%AA%D5%BE%D5%A1%D6%80_%D5%A7 (05.05.2019):

մարդկային կյանքում ու իրականության մեջ: Ինչպես Մեծն Նարեկացին է ստեղծում Աստծո նկատմամբ պանթեիստական պաշտամունք, այնպես էլ Թումանյանի համար է հայր պաշտամունք: Հայր Թումանյանի կրոնն ու հավատն էր: Նարեկացու կերտած մարդու կերպարը հենց թումանյանական հայն է, քանզի նրանք տեսնում էին, թե ինչպիսին է իրական հայր և գիտակցում, թե ինչո՞ւ ենք շեղվել մեր ես-ից: Հասկանալով պատճառները՝ երբեք ատելություն չեն քարոզում, այլ ցույց են տալիս ուղի՝ փրկության ու դիմագիծը վերագտնելու ուղի, որի համար անհրաժեշտ էր նախ խոստովանել սխալները և ուղղել:

Խնդիրներ կան, որոնցից փախչել չենք կարող, պիտի կանգնենք բաց ճակատով, նայենք ու փորձենք լուծել: Իսկ եթե չընդունենք ու խուսափենք, ապա դրանք կհաղթեն մեզ: Առանց հիվանդությունը բացահայտելու, հնարավոր չէ բուժել: Իսկ մեր մեծերը տվել են հայի բուժման դեղատոմսը և հավատացել, որ, ճիշտ է, երկար դարերի տառապանքից ու տանջանքից հետո, մեր ժողովրդից գրեթե ոսկորն է մնացել՝ ցրված աշխարհով մեկ, բայց մեր ոսկորն էլ «էն ոսկրիցն է», որ ընդունակ է կյանք ու շունչ առնելու ու վեր կենալու մարգարեական ձայնի վրա¹⁰: Այդ մարգարեական ձայն էլ հենց հայի Թումանյանինն էր, ով հավատում էր հայի ուժին:

¹⁰Տե՛ս Թումանյան Հ., «Ազգային վերածնության մեծ կոչը», https://hy.wikisource.org/wiki/%D4%B1%D5%A6%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%BE%D5%A5%D6%80%D5%A1%D5%AE%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6_%D5%B4%D5%A5%D5%AE_%D5%AF%D5%B8%D5%B9%D5%A8 (հղվել է 03.05.2019):

Ամեն մեծություն չի կարող խոստովանել այն, ինչն զգում է ու գիտակցում, իսկ Թումանյանը չէր խուսափում անկեղծությունից: Նա անկեղծությունն է պահանջում քաղաքականությունից, գրականությունից, կենցաղից, դպրոցից, բուհից և ամենակարևորը՝ մարդուց: Ցավոք, այս պնդումը հրամայական է նաև այսօր, ու կլինի դեռ այնքան, քանի դեռ մենք, փոքրիկ խնդիրների ետևից ընկած, մոռացել ենք պարզն ու մարդկայինը: Չենք գնահատում մարդուն՝ առանց ճոխությունների ու փառամոլության, առանց նախանձի ու չարակամության, առանց ազգի ու կրոնի, առանց սեռի ու տարիքի:

Պիտի առողջանա ու ամբողջանա հայ ժողովուրդը: Դա մեր պարտքն է Թումանյանի ու մեր այն հանճարների առաջ, ովքեր իրենց կյանքը նվիրաբերեցին մեզ: Ամենամեծ քննադատ ու ուսուցիչ ժամանակն ապացուցել է Մեծն Լոռեցու՝ Թումանյանի ճշմարտությունը՝ ապրելու, արարելու, կերտելու ու ապրեցնելու ճշմարտությունը: Ճշմարտություն, որին հետևելու դեպքում, ամեն անգամ ետ նայելով, կտեսնենք իրական՝ հայի Թումանյանին և կդառանանք նրան արժանի թումանայանական հայ:

РЕЗЮМЕ
ТУМАНЯНОВСКИЙ АРМЯНИН И ТУМАНЯН ДЛЯ
АРМЯНИНА
АНАИТ МУКУЧЯН

Туманяновский армянин везде: в его произведениях, в его жизни, в общественной деятельности. Он хорошо знал истинного армянина и, таким образом, сформировал культ армянина. Но он также видел существующие проблемы и пытался вернуть армянина к первоначальному образу. Образ Туманяновского армянина словно частицы мозаики разделён и присутствует во всех героях Туманяна. Никто не смог

объяснить основы наших проблем и трагедий лучше Великого Лорийца, и никто не дал, искаженное с исторической стороны, рецепт лечения армянина.

Мы до сих пор не знаем Туманяна для армянина в полной мере, так как мы еще не стали Туманяновскими армянами. Когда мы станем стремиться, выздоровим и достигнем этого, мы увидим настоящего Туманяна и оценим Великого Лорийца, его слово и его роль в нашей жизни.

Ключевые слова: всеармянский отец, космический армянин, гуманист, армянин: богослужение, Туманяновский армянин: рецепт спасения.

ABSTRACT
TUMANYAN'S ARMENIAN AND TUMANYAN FOR
ARMENIAN
ANAHIT MUKUCHYAN

Tumanyan's Armenian is everywhere in his works, in his life, in public activities. He knew the true Armenian well, and thus, formed the cult of the Armenian. But he also saw the existing of the problem and tried to return the Armenian to the original image. The image of Tumanyan's Armenian is like a divided mosaic particle and is presented in all Tumanyan's characters. No one but the Great Lorian explained better the basis of our problems and tragedy, and no one gave distorted from the historical side the recipe for treating of an Armenian.

We still do not know Tumanyan for Armenian fully, since we have not become the Tumanyan's Armenians. When we strive, recover and achieve this, we will see the true Tumanyan and will appreciate the Great Lorian, his word and his role in our life.

Key words: Pan-Armenian father, cosmic Armenian, humanist, Armenian: divine service, Tumanyan's Armenian: salvation recipe.

ՀԱՆՃԱՐԱՇԱՏ ՍԱՅԻԱԴ-ՆՈՎԱՆ ՄԵԾԱՆՈՒՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԳՐԵՐՈՒՄ

ԱՍԼԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ

Սկսած XIX դարի սկզբից մինչև մեր օրերը, Կովկասում եւ նրա բազմազգ ժողովուրդների մեջ լայնորեն թեւածել է այն ճշմարտությունը, որ XVIII դարում ապրել ու ստեղծագործել է **Արութին** անունով, **Սայիադ-Նովա** գրական մականվամբ մի անպարտելի գուսան-բանաստեղծ (ժամանակի լեզվով ասած մի աշուղ), որը հետագայում հարկադրաբար դարձել է կրոնավոր՝ **Տեր-Ստեփանոս** անվամբ:

Այդ բանաստեղծի՝ Սայիադ-Նովայի անձի եւ նրա ով լինելու մասին սայիադնովագիտության մեջ առաջինը եւ այն էլ պատահական անդրադարձել է վրաց աբեղա Իոնե Խելաշ-վիլին: Ահա թե ինչպես.

1800 թվականի աշնանը վրաց աբեղա Իոնե Խելաշվիլին սուրբ Էջմիածնից Թիֆլիս վերադառնալու ճանապարհին իջեւանում է Հադպատի վանքում: Եվ Սայիադ-Նովայի հետ ունեցած իր հանդիպումը նա ներկայացրել է այսպես.

«Երբ մտա ներս, վարդապետներից մեկն ինձ ողջունեց և ճանապարհորդությանս մասին հարց ու փորձ անելուց հետո ինձ հրավիրեց իր խուցը: Վարդապետն ինձ ճաշ հյուրասիրեց եւ հետն էլ շատ լավ գինի, եւ ինքն էլ լավ գինի էր խմում: Ուտել-խմելու ժամանակ և որոշ հարցումներ կատարելուց հետո վարդապետը տեղից վեր կացավ եւ պատից ցած բերեց կախված սազը եւ սկսեց նվագել ու երգել այս երգը.

«Իմ խիղճ գլուխ, քիզիդ էս ինչ պատահից»:

Վարդապետը իր երգը վերջացնելուց հետո աբեղա Իոնե Խելաշվիլին դիմելով վարդապետին ասում է. **«Վարդապետ դեպի ձախ ես գնում»:** Վարդապետը ժպտերես դեմքով պատասխանում է. **«Երբ քո հասակում էի, դեպի ձախ էլ էի գլորվում, դեպի աջ էլ»:** Աբեղան տեղից վեր է կենում եւ մոայլ դեմքով ասում. **«Ո՞վ եք դուք»:** Վարդապետը դարձյալ ժպտերես պատասխանում է. **«Ես դժբախտ Սայիադ-Նովան եմ. եթե լսել ես երբեւիցե»:**

Աբեղան տեղում քարանում է եւ պատասխանում. **«Այո, ինչպես չէ, լսել եմ. քո համբավը, որպես լավ սազանդարի ու խելոք մարդու, տարածված է ամեն տեղ»¹:**

Վրաց աբեղա Իոնե Խելաշվիլին (մանրամասնությունների մեջ չենք մտնում) գրի է առնում Տեր-Ստեփանոս վարդապետ Սայիադ-Նովայի հետ ունեցած իր զրույցները ու նրա երգած երգը եւ ուղարկում իր ընկերոջը, որը ապրում էր Սանկ Պետերբուրգում: Այդ ընկերը վրաց Հերակլ 2-րդ թագավորի թոռն էր՝ Գեորգի 13-րդի որդին՝ Թեյմուրազ արևքայազն:

Պարզվում է, որ սայիադնովագիտության մեջ Սայիադ-Նովայի անձի մասին առաջինը եւ այլն էլ

¹ Այս մասին տե՛ս 1932-ին հրատարակված Պողոս Մակինցյանի «Սայաթ-Նովա, Պետիրատ, Յերեվան» գրքի 33-34-րդ էջերում: Տե՛ս նաև 1963-ին հրատարակված Մորուս Հասարթյանի «Սայաթ-Նովա» գրքի VII-VIII էջերը:

Իսկ ավելի մանրամասն տե՛ս 2001-ին լույս տեսած Ասլան Ասլանյանի «ՄԱՅԻՄԴ-ՆՈՎԱ» գրքի 298-313-րդ էջերում:

պատահական ուշք է դարձրել վրաց աբեղա Իոնե Խելաշ-վիլին:

1801 թվականին, Վրաստանի պետականության անկումից հետո, Թեյմուրազ (1782-1846) արքայազնը տեղափոխվում է Սանկ Պետերբուրգ: Նա Ռուսաստանի ԳԱ-ի պատվավոր անդամ էր: Այնտեղ էլ նա շարադրում է իր նշանավոր «Կալմաստք»-ն, այսինքն՝ «Հանրագիտարանը», որը կազմված է երեք մեծածավալ հատորներից, որոնց երկրորդ հատորի մեջ ակադեմիկոս Թեյմուրազը ներկայացրել է Իոնե Խելաշվիլու ուղարկած նամակ-հոդվածը՝ «Հանդիպում վարդապետ Տեր-Ստեփանոս Սայիադ-Նովայի հետ», որը մինչև օրս պահպանվում է:

1823 թվականին Թեյմուրազ արքայազնը իր մոտ՝ Պետերբուրգ է հրավիրում Սայիադ-Նովայի որդուն՝ Օհանին եւ պահում իր մոտ: Այդտեղ էլ արքայազնի խնդրանքով Օհանը կազմում է իր հոր՝ Սայիադ-Նովայի խաղերից մի **Մատիան**՝ կազմված 26 հայերեն, 26 վրացերեն, 26 թրքերեն եւ երկլեզվյան ոչորս լեզվյան գրված երկու խաղ, այսինքն՝ թվով 80 խաղեր: Օհանի գրած ու կազմած այդ **Մատյանը** ակադեմիկոս Թեյմուրազ արքայազնը պահպանության է հանձնում Սանկ Պետերբուրգի ԳԱ արեւելագիտության ինստիտուտի բաժանմունքին՝ վրաց ձեռագրերի ֆոնդ. ձեռ. H-21, որը պահպանվում է մինչև օրս: Այդ ձեռագիր **Մատիանը** սայիադնովագիտության մեջ առաջինը դեռ 1889-ին ուսումնասիրել է Ակադեմիկոս Ն.Մառը²:

² Այս ամենի մասին եւ ավելի մանրամասն տե՛ս 2001-ին լույս տեսած Ասլան Աս-լանյանի «ՄԱՅԻՄԴ-ՆՈՎԱ» գրքի 21-30-րդ եւ 413-414 էջերում):

Շուրջ 27 տարի հետո այս աշուղ-բանաստեղի, այսինքն՝ Սայիադ-Նովի կենսագրության եւ գրական ժառանգության մասին՝ 1850-ական թվականից լրջորեն սկսում է զբաղվել (Յուրի Ախվերդովը) Գեորգ Ախվերդյանը:

Գեորգ Ախվերդյանը մասնագիտությամբ բժիշկ էր եւ ապրում էր Մոսկվայում: Լսելով Սայիադ-Նովայի մասին նա Մոսկվայից վերադառնում է Թիֆլիս եւ իր լսելի ականջը այս անգամ դնում է աշուղների, գուսանների «**ասած խաղերին**», եւ նրանցից գրի առնում բավականին խաղեր: Իսկ 1850 թվականի մայիսին Գ.Ախվերդյանի ընկերն ու մտերիմ բարեկամ բժիշկ Հովհաննես (Պոնդեյանցը) Պոնդեյանը Ախվերդյանին հայտնում է, որ մի քանի օրից իրեն կներկայացնի Սայիադ-Նովայի ձեռքով գրած ու կազմած («Դավթարը») **Մատիանը**³: Եվ մայիսյան մի պայծառ առավոտ Սայիադ-Նովայի թոռ Տեր-Մովսեսից Հ. Պոնդեյանը խնդրանքով այդ **Մատիանը** վերցնում եւ ներկայացնում է Ախվերդյանին⁴: Ախվերդյանը կլանված ուսումնասիրում է այդ **Մատիանը** եւ երկու տարի հետո՝ 1852-ին հրատարակում Սայիադ-Նովայի անվամբ՝ «Գուսանք Ա, Սայեաթ-Նովայ, լույս զգած աշխատասիրությունով, Գեորգեայ Ախվերդյան, Մոսկվա, 1852» առաջին գիրքը: Այդ գրքում Սայիադ-Նովայի կյանքի ու գործնեության եւ կենսագրության մասին Գ. Ախվերդյանը ինչ-որ ներկայացրել է, բոլորը կատարել է ենթադրաբար, թե իբր Սայիադ-Նովան «ծնվել է 1712-ին», թե իբր «կրոնավոր է դարձել իր

³ Սայիադ-Նովայի ձեռագիր **Մատիանը** ներկայումս գտնվում է Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի ինստիտուտի թանգարանում՝ «Սայաթ-Նովայի ֆոնդ, համար 1»:

⁴ Գեորգ Ախվերդյանը եղել է մասնագիտությամբ բժիշկ, կոչումով գեներալ: Նա ծնվել է Թիֆլիսում, բայց ապրում էր Մոսկվայում: Նա Ռուսաստանի ռազմական նախարարի՝ իշխան Չերնիշեւի անձնական բժիշկն էր: Ծնվել է Թիֆլիսում՝ 1818-ին, մահացել է 43 տարեկանում 1861-ին:

ցանկությամբ՝ 1771-ին», թե իբր «մահացել է 1795 ին» եւ այլն, եւ այլն⁵:

Գեւորգ Ախվերդյանից շուրջ 50 տարի հետո մեծանուն բանաստեղծ **Հովհաննես Թումանյանը** ոչ միայն շատ լուրջ ուսումնասիրություններ է կատարւում հանճարաշատ բանաստեղծ Սայիադ-Նովայի կյանքի ու գործնեության վերաբերյալ, այլև մարդկությանը ներկայացնելով նա վերակենդանացնում է հանճարեղ բանաստեղծին՝ Սայիադ-Նովային: Իր՝ Հովհ. Թումանյանի բառերով ասած.

«Մի ամբողջ ժողովուրդի պարծանք է Սայաթ-Նովան, անմաշ ու անմահ: Ով նրան մին լսեց, մյուս անգամ ավելի սիրով կը լսի, ով նրան մին սիրեց, էլ չի դադարիլ սիրելուց»⁶:

Հովհ. Թումանյանը իր հոգվածներում անչափ սիրելով ու մեծարելով Սայիադ-Նովային ներկայացնում է նաեւ այսպէս.

«Մեր հոյակապ Սայաթ-Նովան, մեր վիրթիսարի Սայաթ-Նովան, մեր արքայական Սայաթ-Նովան» կամ ուղղակի ասում էր «իմ սիրած Սայաթ-Նովան»⁷:

Հովհ. Թումանյանը ոչ միայն անչափ սիրում էր Սայիադ-Նովային, այլև քարոզմունք էր տանում ժողովուրդի մեջ, թե նա ինչպիսի մեծություն է և անգուգական բանաստեղծ ասելով.

⁵ Այս ամենի մասին մանրամասն ու մանրագնինն տե՛ս Ասլան Ասլանյանի «**ՄՍՅԻԱԴ-ՆՈՎԱ**» գրք համապատասխան էջերում:
«Հովհ. Թումանյան, Սայաթ-Նովա, հայպետհրատ», 1945, 16-րդ էջը:

⁶ Տե՛ս «Հովհ. Թումանյան, Սայաթ-Նովա, Հայպետհրատ», 1945, էջ 16:
Տե՛ս նաեւ «Հովհ. Թումանյան, Սայաթ-Նովա», Երեւան, 1963, էջ 30:

⁷ Ավելի մանրամասն տե՛ս Հովհ. Թումանյանի նույն գրքերի 65 և 78-րդ էջերում:

«Ո՛չ, նա (այսինքն՝ Սայաթ-Նովան) մի նորօրինակ ձև չի, մոդա չի, որ ժամանակի ընթացքում ձանձրացնի ու փոխվի, նրան մին լսողը երկրորդ անգամ լսելիս ավելի պիտի սիրի, և մին հասկանալուց ու սիրելուց հետո երբեք չպիտի մոռանա: Գեղեցիկ ձևի մեջ մի վշտավառ հուր հոգի է նա, մի ազնիվ ու լիքը սիրտ, մի հարազատ հզոր շունչ, որ մեր աշխարհքի հարազատ շնչի նման միշտ խաղալու է Կովկասի ժողովուրդների վրա, և՛ հայի, և՛ վրացու, և՛ թուրքի վրա, որովհետև հավասար ուժով երգել է և՛ հայերեն, և՛ վրացերեն, և՛ թուրքերեն»⁸:

Ռուս բանաստեղծ Յակով Պոլոնսկին եղել է Գեորգ Ախվերդյանի մտերիմ ընկերնը ու բարեկամը: Եվ նա՝ Յ. Պոլոնսկին «Кавказ» թերթի էջերում Սայաթ-Նովայի անվամբ մի քանի հիացական հոդվածներ է տպագրում: Եվ Հովհ. Թումանյանը ուսումնասիրելով այդ հոդվածները հպարտորեն գրում է.

«Ռուս բանաստեղծներից մեկը, եթե չեմ սխալվում, առաջինը Յակով Պոլոնսկին է եղել (գրում է Թումանյանը), որ ուշք է դարձրել Սայաթ-Նովայի վրա ու հիյացել: Պոլոնսկին հանգուցյալ Գեորգ Ախվերդյանի մտերիմ ընկերն էր ու բարեկամը: Պոլոնսկին Ախվերդյանի մոտ է տեսել Սայաթ-Նովայի երգերի տետրակը և, ծանոթանալով, 1851 թվականին «Кавказ» թերթի համ. 1-ում եւ 2-րդում մի ոգևորված հոդված է գրել, բնութագրել, գնահատել երգերից էլ մի քանիսը թարգմանել»⁹:

Յակով Պոլոնսկու հրատարակած ու ոգևորված հոդվածներից հետո Թումանյանը գրում է նաեւ, որ. «Խոսքիս ամենա-

⁸ Տե՛ս Հովհ. Թումանյանի վերընշված «Սայաթ-Նովա» գրքերի 11-րդ և 26-րդ էջը:

Այս ամենի մասին և ավելի մանրամասն տե՛ս նաև 2001-ին լույս տեսած Ասլան Ասլանյանի «ՄԱՅԻՄԴ-ՆՈՎԱ» գրքի 65-րդ էջում:

⁹ Տե՛ս Հովհ. Թումանյանի վերընշված գրքերի 24-25-րդ և 41-42 էջերը:

պերճախոս ապացույցը հենց ռուս ամսագրի էս համարն է, որի մեջ ռուս բանաստեղծը հրճվանքով է նկարագրում, որ մեր երգիչներն էլ են սավառնում մեր «եթերային բարձունքներում», ուր Հաֆիզն է սավառնում: Իսկ «եթերային բարձունքը» (շարունակում է Թումանյանը), էն երջանիկ աշխարհքն է, որ բոլոր հայրենիքներն ու կրոները միացնում է գեղեցկության, ճշմարտության ու արդարության մեջ, ուր այլևս խտրություն չկա և ամենքից հավասար սիրվում է ամեն մեկը, ով էնտեղ կհասնի:

Վերջապես ժամանակն է (շարունակում է Թումանյանը) թող իմանան մեր ռուս եղբայրները, էնպես էլ ավելի հեռուները թող իմանան, որ «եթերային բարձունքները» երբեք խորթ ու անմատչելի չեն եղած հայի հոգուն, որ հայի հանճարն էլ է միշտ սավառնացել էն վսեմ, էն սուրբ ու նուրբ ոլորաններում, թեև նա ինքը՝ հայը միշտ լողացել է արյան ծովի մեջ, ահա ճիշտ էնպես, ինչպես մի Սայաթ-Նովա»¹⁰:

Այնուհետև մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը զգալով մեր ազգի դարերով եկած անհաշտ ու անհեռատես հոգեբանությունը գրում է նաև, որ.

«Մենք ունեցել ենք եղբարձր վկայականը, բայց եղ վկայականը մնացել է մեր գրպանում, կարդացող չի եղել, դրա համար էլ չունենք էն մեծ փոխադարձ շաղկապը ուրիշ ժողովուրդների հետ: Մենք ենք միայն օտարների հանճարները ճանաչել, սիրել ու սրտով կապվել նրանց հետ, իսկ մեր ցեղի հանճարը ոչ ոք չի ճանաչել, դրա համար էլ մեզ ոչ ոք չի գնհատել, չի սիրել ու հոգեպես չի կապվել մեզ հետ»¹¹:

¹⁰ Տե՛ս Հովհ. Թումանյանի վերընշված «Սայաթ-Նովա» գրքերի 25-րդ և 41-րդ էջը:

¹¹ Տե՛ս Հովհ. Թումանյանի վերընշված «Սայաթ-Նովա» գրքերի 25-րդ և 41-րդ էջը:

Հանճարաշատ Սայիադ-Նովան իր անգուգական խաղերից մեկի՝ «*Ինչ կոնիմ հեքիմն, ինչ կոնիմ ջարեն*» խաղի 18-րդ տողի մեջ ասել է. «*Յիս բլբուլ իմ վարթս մնաց խարումն*»¹²: Այս տողի վերջին՝ «*խար*» բառի, այսինքն՝ այս օտար լեզվի պատկանող բառի իմացության մասին անդրադարձել են շատ ու շատ անվանի եւ տարբեր մասնագիտության տեր ուսումնասիրողներ եւ սայաթնովագետներ: Այդ բառի թարգմանությանն է անդրադարձել նաեւ Պ. Մակինցյանը¹²: Մակինցյանը քննարկվող բառը մեկնաբանել է այսպես. «*Խարումն*» բառը պետք է կարդալ խարուն, որը կնշանակի իշին, այսինքն՝ վարդըս մնաց իշին»¹³:

Հովհաննես Թումանյանը ուսումնասիրելով վերը նշված տողը իրավացիորեն հասկացել է, որ տողի մեջ ասված «*Խար*» բառը արաբերեն նշանակում է փուշ (նաեւ միջատ, ստոր եւ այլն): Այնուհետեւ Թումանյանը ուսումնասիրելով Պ.Մակինցյանի մեկնաբանությունը (եւ իր հոգեբանության մեջ հավանաբար ծիծաղելով եւ իմանալով, որ Մակինցյանը «Հայաստանի լուսավորության ժողկոմն է»¹⁴, ուստի համեստորեն քննադատելով) գրել է այսպես.

«Ես ամենայն քաղաքավարությամբ խնդրում եմ պ. Մակինցյանին, որ իր էջը դուրս տանի Սայաթ-Նովայի վարդերի միջից, որովհետև հատկապես էստեղ (շարունակում է

¹² Այս տողը իր բնագրի ու խաղի եւ խաղի մեջ օգտագործված անհասկանալի բառերի մեկնաբանությունների միասին եւ ավելի մանրամասն տե՛ս 2011-ին լույս տեսած Ասլան Ասլանյանի «ՄԱՅԻԱԴ-ՆՈՎԱ» գրքի 214-238-րդ էջերում:

¹³ Պողոս Մակինցյանի մեկնաբանությունը տե՛ս Հովհ. Թումանյանի վերընշված գրքերի 29-րդ էջում:

¹⁴ Պողոս Մկրտչի Մակինցյանը զբաղվել է նաեւ սայաթնովագիտությամբ: Եվ 1921-1922-ին նա եղել է Հայաստանի լուսավորության ժողկոմ (այս մասին եւ ավելի մանրա-մասն տե՛ս նաև «ՀՄՀ», 1987, 7-րդ հատ., էջ 179):

Թումանյանը), խարը կնշանակի փուշ, և բանաստեղծն ասում է՝ վարդս մնաց փշերի մեջ: Պ. Մակինցյանի էջը դուրս հանելուց հետո (շարունակում է Թումանյանը), այժմ իմ վարդի բողբոջը կամ որդը տեղավորեմ»: Եվ, որպեսզի «ժողկոմը», այսինքն՝ Մակինցյանը չվիրավորվի, ուստի իր գրքի 30-րդ էջում Թումանյանը դարձյալ շատ նուրբ կայնելով Մակինցյանին՝ գրում է նայել այսպես. «Էս բոլորից հետո թող պ. Մակինցյանը չվախենա, թե եթե ես իմ սիրած Սայաթ-Նովան թարգմանեմ՝ կարող եմ էս տեսակ անհեթեթ բաներ անել, ինչ որ ենթակա է իր հողվածում շատ անտեղի»:

Սայիադնովագիտության մեջ եւ մինչեւ օրս ասվում ու խոսվում է նաեւ այն մասին, թե իբր Սայիադ-Նովայի ճակատագրական յար Աննան եղել է վրաց Թեյմուրազ թագավորի դուստրը: Այս խնդրո հարցի շուրջ եւ իրավացիորեն անդրադարձել է նաեւ Թումանյանը: Նույն իր վերը նշված գրքի 36-րդ էջում գրում է.

«Զգիտեմ ո՞վ է տեղեկություն տվել պ. Բրյուսովին, թե Սայաթ-Նովեն սիրահարված է եղել վրաց թագավորի աղջկա վրա, որ էդ միևնույն բանը նա հայտնում է և {իր} գրքի հառաչաբանում, էջ 61, Սայաթ-Նովայի կենսագրության մեջ:

Ճիշտ է (շարունակում է Թումանյանը), ժամանակի բանաստեղծներից մինը եղել է, որ սիրահարվել է վրաց թագավորի աղջկա վրա, բայց դա եղել է ոչ թե Սայաթ-Նովեն, այլ նրա ժամանակակից Բեսիկին (Բեսարիոն Գաբաշվիլին), որ և էդ սիրո պատճառով ենթարկվել է հալածանքի ու բանտարկության»¹⁵:

Հովհ. Թումանյանը, լինելով Թիֆլիսի «Հայ Գրողների Ընկերության» նախագահը կայացնում է որոշում, որ պետք է Սայիադ-Նովայի գերեզմանի վրա կանգնեցնի շիրիմաքար: Եվ

¹⁵ Տե՛ս Հովհ.Թումանյանի վերընշված գրքերի 36-37րդ և 55-րդ էջերում:

որպեսզի իր խոսքը (Սայիադ-Նովայի շիրիմին մահարձան կանգնեցնելու հարցում) որոշ մարդկանց շրջանում ավելորդ խոսակցության առարկա չդառնա, խնդրում է նկարիչ Գեորգ Բաշինջադյանին, որ այդ մասին հանդես գա հողվածով: Եվ 1912 թվա-կանի նոյեմբերի 11-ին «Մշակ» թերթի 252-րդ համարում «Սայաթ-Նովայի շիրիմը» հողվածով Բաշինջադյանը կոչ է անում նախ հայ ժողովրդին եւ ապա նշում, որ այն «... պետք է կանգնեցվի Թիֆլիսի սուրբ Աստվածածին Կաթողիկե (ս.Գեորգ) եկեղեցու գլխավոր մուտքի աջ կողմում», այսինքն՝ այնտեղ, որտեղ ենթադրել է Գեորգ Ախվերդյանը:

Սայիադ-Նովայի կենսագրություն որոշ տեղեկություններ մեզ հայտնի է դեռ 1852 թվականից երջանկահիշատակ Գևորգ Ախվերդյանից: Նա ենթադրաբար գրել է նաեւ, որ երբ 1795-ին Թիֆլիսի վրա հարձակվել է Աղա-Մահմեդ-Խանը, ապա Թիֆլիսի պաշտպանության ժամանակ հավանաբար շատերի հետ մեկտեղ զոհվել է նաեւ Սայիադ-Նովան, իր՝ Ախվերդյանի բառերով ասած. «Մէ քանի օրից՝ Պարսից Թիֆլիզեն դուս գնալուց յետոյ վեր են առնում նրա մարմինն ու թաղում են մեծ Բերդի եկեղեցու հյուսիսային փոքր դրան առաջին: Թէպէտ Սայեաթ-Նովու գերեզմանն չունի քար գցած, բայց էսպես պատմում են նրա թաղման պատահողներն»¹⁶:

Եվ Հովհ.Թումանյանը, Գ.Ախվերդյանի ենթադրությունը ճշտելու նպատակով, ուսումնասիրում է այդ եկեղեցու այն տարածքը, որտեղ իբր հուղարկավորված է Սայիադ-Նովան եւ ոչինչ չգտնելով՝ գրում է. «Չնայելով էս վկայությանը՝ շատերը պնդում էին, թե Սայաթ-Նովայի գլխավերելը եկեղեցու պատի մեջ մարմարի քարի վրա մի արձանագրություն է եղել: Եվ ահա վերջին օրերս, երբ գնացինք Սայաթ-Նովայի արձանի հիմքը դնելու, քանդել տվինք նրա գերեզմանի կողքի պատի երեսի գաճը: Ոչ մի արձանագրություն չգտանք: Հետո հայտնվեց, որ հիրավի, էդ պատի վրա մի երկու արձանագրություն են եղել, բայց վերջին

¹⁶ Տե՛ս 1852-ին Մոսկվայում հրատարակած Գևորգ Ախվերդյանի «Գուսանք» գրքի **Ժբ** և **Ժդ** էջերը:

տարիներս եկեղեցին վերանորոգելիս պատից հանել են տարել պահել խորանում: Դրանից մեկն աշխարհականի էր, տապանագիրը վրացերեն ու ռուսերեն, մյուսը հոգեւորականի էր, ճակատին եպիսկոպոսական գավազան, գավազանի երկու կողմը երկու տառ՝ **Ջ** եւ **Վ**¹⁷: Արձանագրությունը կարդացինք առանձին-առանձին թե՛ Թիֆլիզի սրբազան առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը, թե՛ ես, եւ կարողացանք կարդալ միայն առաջին երեք տողը, որ հետեւյալն է.

**«Մարմնով տքնի ի տապանի
Եվ ակն ունող դատաստանի,
Առաջնորդ Թիֆլիզ քաղաքի...»:**

Էս ամենը զուր անցնելուց հետո (շարունակում է Թումանյանը) ես մտածեցի Հաղպատի միաբանության մեջ որոնել կրոնավոր Սայաթ-Նովային, որ անշուշտ անունը փոխած պիտի լիներ»:

Եվ բավականին մտածելուց հետո, Հովհ. Թումանյանը գտնում է, որ կարետորը այն չէ, որ Սայիադ-Նովայի գերեզմանը չկա, այլ կարետորն այն է, որ Սայիադ-Նովան մահարձան ունի¹⁸:

Եվ, ահա Կովկասի ողջ ազգաբնակչությանը հայտնի դարձավ, որ **1914 թվականի մայիսի 15-ին**, Թիֆլիսի Ս.Գևորգ եկեղեցու մուտքի աջ մասում Մեծանուն բանաստեղծ **Հովհան-նես Թումանյանը** Սայիադ-Նովայի անվամբ կանգնեցրել է մահարձան, եւ այդ օրը հայտարարվել որպես **«Վարդատուն»**, որը մինչեւ օրս նշվում է ամեն տարի: Ահա այդ մահարձանը.

¹⁷ Հովհ. Թումանյանի մատնանշած այդ երկու **«Ջ»** եւ **«Վ»** տառերը մեր խորին համոզմամբ եղել է **Զաքարիա վարդապետի** (1720-1799) անունն ու կոչումը -Աս. Ասլանյան:

¹⁸ Այս ամենի մասին եւ ավելի մանրամասն տե՛ս 2011-ին լույս տեսած Ասլան Ասլանյանի **«ՄԱՅԻՍԴ-ՆՈՎԱ»** գրքի 297-314-րդ էջերում:



Ահա Սայիադ-Նովայի անվան, Հովհ. Թումանյանի նախաձեռնած և Գևորգ Բաշինջաղյանի նախագծած հուշաքարը Թիֆլիսի Ս. Գևորգ եկեղեցու բակում:

Ինչպես տեսնում ենք, որ այս հուշաքարի վրա չի նշված Սայիադ-Նովայի ծննդյան տարեթիվը, որովհետև Հովհ. Թումանյանը իրավացիորեն համամիտ չէր Գևորգ Ախվերդյանի ենթադրաբար ասված «1712» թվականի հետ, բայց ենթադրում էր, որ Սայիադ-Նովան հավանաբար նահատակվել է 1795 թվականին Թիֆլիսի վրա հարձակված Աղա-Մահմեդ-Խանի արշավանքի ժամանակ: Իսկ հուշաքարի վրա Հովհ. Թումանյանը ներկայացրել է իր հավերժ ու պատմական

եւ անգուգական տողերը նվիրված հանճարեղ բանաստեղծին:
Գրելով.

«Խաղով եկավ.
Ախով գնաց Սայաթ-Նովան,
Երգով եկավ.
Վերքով գնաց Սայաթ-Նովան,
Միրով եկավ.
Սրով գնաց Սայաթ-Նովան,
Միրով մնաց Սայաթ-Նովան
Հովհ. Թումանյան»:

Մեծ է Հովհ. Թումանյանի տքնաջան աշխատանքը թե՛ Սայիադ-Նովայի կենսագրական տեղեկությունների, որոնումների հարցում, եւ թե՛ նրա խաղերի (բանաստեղծությունների) որոշ բառերի ստուգաբանության հարցում:

Սայիադնովագիտության մեջ Հովհ. Թումանյանը ոչ միայն շատ մեծ գործեր է կատարել, այլեւ նա հայտնաբերեց Սայիադ-Նովայի անմահ **Մատիանը**: Ահա թե ինչպես.

Հովհ. Թումանյանը իր հոգու խորքում զգում էր, որ Սայիադ-Նովան անկասկած պետք է, որ իր խաղերի ժողովածուն ունենար, որովհետս նա այն մեծությունը չէր, որ չունենար իր ստեղծագործությունների որեւէ մի տետր մի ձեռագիր գիրք: Եվ, ահա իր որոնումները ցույց տվեցին, որ այդ ձեռագիրը կա եւ պահպանվում է Սայիադ-Նովայի ժառանգության մոտ:

1885-ին Սայիադ-Նովայի թոռան որդի մասնագիտությամբ իրավաբան Բագրատը (մանրամասնությունների մեջ չենք մտնում) իր եղբայրների հետ որոշում է կայացնում, որ իրենց պա-պեպապի՝ Սայիադ-Նովայի ձեռագիր **Մատիանը** իրար մեջ հավասարաչափ կիսեն: Բագրատի դուստրը՝ ռուսերեն լեզվի ուսուցչուհի **Վարյան**, խիստ վիրավորվում է հոր

առաջարկից (որ «**Մատիանը** հավասարաչափ պետք է կիսել եւ բաժանել իրար մեջ») եւ **Մատիանի** խնամքը ու պահպանման հոգսը վերցնում իր վրա եւ այն պահպանում մինչեւ 1913 թվականը:

1913-ին Սայիաթ-Նովայի թոռներո՞ւ եւ Թիֆլիսի դպրոցներից մեկի՝ ռուսերեն լեզվի ուցուցչուհի Վարյան իր հոր՝ Բագրատի մասնակցությամբ եւ երջանկահիշատակ գեղանկարիչ **Գետրգ Բաշինջադյանի** միջամտությամբ իրենց պապական եւ անգուգական **Մատիանը** հանձնում է Թիֆլիսի «Հայ Գրչի Մշակների Միության նախագահ»՝ երջանկահիշատակ եւ **Մեծանուն քանաստեղծ Հովհաննես Թումանյանին**:

Հովհ.Թումանյանը անչափ ուրախանում է այդ **Մատիանի** հայտնության համար եւ այն իր մոտ է պահում մինչեւ 1921 թվականի հոկտեմբերի 19-ը:

Իսկ 1921 թվականի հոկտեմբերի 17-ին Հովհ. Թումանյանը որոշում է կայացնում, որ «Սայաթ-Նովայի Դավթարը (**Մատիանը**) պետք է ուղարկվի Հայաստան»: Ահա այդ պաշտոնական գրության բովանդակությունը.¹⁹

«Հայաստանի Խորհրդային Հանրապետության Ընկեր. Լուսժողկոմին

Իր ժամանակին Հայ Գրողների Ընկերությունը Թիֆլիսում Սայաթ-Նովայի ժառանգներից ձեռք եր բերել Սայաթ-Նովայի ձեռագիր տետրակը: Եղ տետրակը վարչության վորոշմամբ պահվում եր ինձ մոտ: Հայ Գրողների ընկերության անունը փոխվեց եւ տարվանից Հայ Գրչի Մշակների Միություն: Այժմ Հ.Գ.Մ. Միության վարչության համաձայնությամբ հիշյալ տետրակն ուղարկում եմք ձեզ, դնելու Հայաստանի թանգարանում:

Տետրակը բաղկացած ե 140 եջից յեվ թվագրված ե հետագայում իմ ձեռքով:

¹⁹ «Դավթար»-ը թրքերեն բառ է, որը նշանակում է **Մատիան**:

Հայերեն յերգերը գրված են վրացական տառերով, բուրբերեն յերգերը՝ հայկական տառերով:

Հայ Գրչի Մշակների Միության նախագահ՝

19 / X -1921 թ.

ՀՈՎ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Թիֆլիս»:²⁰

Սրանք են Սայիադ-Նովայի պատմական, անգուգական եւ անմահ **Մատիանի** անցած ճանապարհի մասին եղած տեղեկությունները²¹: Սի դժվարին ճանապարհ, որով անցավ **Մատիանը** եւ վերջապես Մեծանուն բանաստեղծ **Հովհաննես Թումանյանի** գլխավորությամբ գտավ իր կայուն եւ հիմնական տեղը՝ դառնալով հայ ժողովրդի անձեռնմխելի սեփականությունը²²:

Ահա այդ **Սուրբ Մատիանը**.



²⁰ Այս գրության մասին և ավելի մանրամասն տե՛ս 2011-ին լույս տեսած Ասլան Ասլանյանի «**ՄԱՅԻԱԴ-ՆՈՎԱ**» գրքի 297-314-րդ էջերում:

²¹ Սայիադ-Նովայի անմահ **Մատիանի** կենսագրության և անցած դժվարին ուղու մասին մենք ներկայացրինք անչափ հակիրճ: Ավելի մանրամասն ու մանրագննին տե՛ս 2001-ին լույս տեսած Ասլան Ասլանյանի «**ՄԱՅԻԱԴ-ՆՈՎԱ**» գրքի 320-327-րդ էջերում:

²² Այս ամենի մասին եւ ավելի մանրամասն ու հերթականությամբ տե՛ս վերընշված Ասլան Ասլանյանի «**ՄԱՅԻԱԴ-ՆՈՎԱ**» գրքի համապատասխան էջերում:

ԱՍՓՈՓՈՒՄ
ՀԱՆՃԱՐԱՇԱՏ ՍԱՅԻԱԴ-ՆՈՎԱՆ ՄԵԾԱՆՈՒՆ
ԲԱՆԱՍՏԵՂԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԳՐԵՐՈՒՄ
ԱՍԼԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ

Սայիադնովագիտությունը ունի շուրջ 300 տարվա պատմություն: Եվ մարդկության տարբեր երկրների շատ ու շատ երեւելի մեծություններ են անդրադարձել նրա՝ հանճարեղ բանաստեղծ Սայիադ-Նովայի տարբեր՝ հայերեն, թրքերեն եւ վրացերեն լեզուներով գրված գրերի (իր՝ Սայիադ-Նովայի լեզվով ասած *«Խաղերի»*) ստուգաբանությանը եւ սրեր են խաչել, թե ինչու է նա՝ **հայ հանճարեղ բանաստեղծ Սայիադ-Նովան** ասել, գրել ու պատգամել, որ. *«Ամեն մարթ չի՛ կանա իսի իս՝ ջուրն ուրիշ ջրեն է»* եւ *«Ամեն մարթ չի՛ կանա կարթա իս՝ գիրն ուրիշ գրեն է»*: Այդ նույն գրերին ու նրա վերլուծությանն է անդրադարձել նաեւ **հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը**: Սայիադնովագիտության մեջ Հովհ. Թումանյանը անգուգական եւ մեծ ներդրում ունի: Եվ եթե ուրիշ ոչինչ չասենք, ապա առաջինը (Գեորգ Ախվերդյանից հետո) նա՝ Թումանյանը կորուստից հայտնաբերեց Սայիադ-Նովայի ձեռքով գրած ու կազմած անգուգական *«Դավթարը»*, այսինքն՝ **Մատիանը** եւ Թիֆլիսից պաշտոնական գրությունով՝ *«1921 թվականի հոկտեմբերի 19-ին»* հանձնեց *«Հայաստանի Խորհրդային Հանրապետության Լուսժողկոմին»*: Այնուհետեւ իր տարբեր ելույթներում, հոդվածներում ու գրերում Հովհ. Թումանյանը ոչ միայն ճշգրտորեն վերլուծեց Սայիադ-Նովայի գրերում եղած բազում ասելիքները, այլեւ ներկայացրել է, թե իրականում ով եղել եւ ինչպիսի մտածելակերպի, տաղանդի ու բանաստեղծությունների հեղինակ է եղել մեծ փիլիսոփա ու գիտնական եւ իր՝ Հովհ. Թումանյանի բառերով ասած. *«Մեր հոյակապ Սայաթ-*

Նովան, մեր վիթխարի Սայաթ-Նովան, մեր արքայական Սայաթ-Նովան» կամ ուղակի ասում էր «իմ սիրած Սայաթ-Նովան»:

Բանալի բառեր. Սայիադ-Նովա, Թումանյան, Ախվերդյան, բանաստեղծ, Մատյան, դավթար, Թիֆլիս, հայերեն, վրացերեն, թրքերեն:

ABSTRACT

GENIUS SAYAT-NOVA IN THE WORKS OF THE GREAT POET HOVHANNES TUMANYAN

ASLAN ASLANYAN

Sayat-Nova studies have about 300 years' history. And many prominent figures in various countries have touched upon the etymology of genius poet Sayat-Nova's various works written in Armenian, Turkish and Georgian, (said in Sayat-Nova's language "Games") and many were curious why the great Armenian poet Sayat-Nova said and wrote: "Not every man can drink from my fulminating spring: it is of a special taste!" and "Not every man can esteem my scriptures: they are of special sense!"

These same writings and their analysis were touched upon also by the Armenian famous poet Hovhannes Tumanyan. Hovhannes Tumanyan has an incomparable and great contribution in the Sayat-Nova studies. And even if we say nothing, Tumanyan was the first (after Gevorg Akhverdyan) to discover the incomparable "Daftar" written and composed by Sayat-Nova, e.i. the "Register", which with an official note "October 19, 1921" handed over from Tiflis to People's Committee of Enlightenment of the Soviet Republic of Armenia.

Then in his various reports, articles and works Hovhannes Tumanyan not only accurately analyzed the implications in Sayat-

Nova's works, but also presented him as talented and gifted author of poetry, great philosopher and scientist and presented in his own words: "Our magnificent Sayat-Nova, our giant Sayat-Nova, our noble Sayat-Nova" or just said "My beloved Sayat-Nova".

Here are some adjustments below: then some excerpts from Tumanyan's great and incomparable contributions to Sayat-Nova studies.

Key words: Sayat Nova, Tumanyan, Akhverdyan, poet, Book, Tiflis (Tbilisi), Armenian, Georgian, Turkish.

ՀԱԿԱՂՈՒՅԹԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՌՅԱԿՆԵՐՈՒՄ

ԱՆԱՀԻՏ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

«Մի քննադատ կա, որ վերջնական որոշում է ապրող և մեռնող գործերը. դա ժամանակն է»:

Հովհաննես Թումանյան

Հովհաննես Թումանյանը հայ գրականության այն բացառիկներից է, որի խոսքարվեստը աչքի է ընկնում թեմատիկ բազմազանությամբ, ոճական հնարքներ կերտելու մեծ վարպետությամբ: «Թումանյանի ստեղծագործությունը մի կատարյալ հեղաշրջում էր հայ գրականության մեջ: Նա բանաստեղծական խոսքը մոտեցրեց ժողովրդին, դարձավ նրա հոգսերի ու վշտերի, հույզերի և հույսերի թարգմանը»¹:

¹ Արտ. Հակոբջանյան, *Դասական ավանդներին հավատարիմ*, Ե., 2012, էջ 106:

Հովհաննես Թումանյանի արվեստի գաղտնիքներից մեկն էլ այն է, որ մեծ բանաստեղծը կարողացել է օգտվել ժողովրդական լեզվի անսպառ գանձարանից, *«մեծ իրավունք տվել բարբառներին, նրանց բառերին, ոճերին և ձևերին»*²:

Գրողի կողմից ժողովրդական բառ ու բանի անսպառ գանձարանից օգտվելու վկայությունը նրա երկերի բառապաշարն է:

Բառապաշարի ոճական դրսևորումներից է հականիշությունը, որը լայնորեն գործածվում է ժողովրդական բանահյուսության, ինչպես նաև գեղարվեստական գրականության և հրապարակախոսության մեջ՝ ավելի դիպուկ ու արտահայտիչ բնութագրելու այս կամ այն առարկան կամ երևույթը: Գեղարվեստական գրականությունը լայն հնարավորություններ է ստեղծում այս ոճական հնարքի տեղին և իմաստալից գործածության համար: Մեծ է հականիշության դերը հատկապես չափածո խոսքում:

Հայտնի է, որ հականիշ բառերը առարկայի նույն՝ որակի, չափի, տարածական, ժամանակային և այլ հատկանիշների հակադիր դրսևորումներն են: *«Հականիշությունը արտացոլում է արտաքին աշխարհի առարկաների իրողությունների, եղելությունների միջև գոյություն ունեցող հակադրական կապերն ու հարաբերությունները՝ ցուցաբերելով միաժամանակ վերացարկումներ կատարելու բացառիկ այն մեծ ուժը, որը հանդես է բերում մարդկային մտածողությունը»*³: Այս բառերի իմաստաբանական հիմքը հակադրությունն է:

² Հովհ. Թումանյան, ԵԺ, հ. 4, Ե., 1969, էջ 84:

³ Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու. բառագիտություն, Ե., 1993, էջ 98:

Որպես կանոն՝ հականիշ բառերի իմաստային հակադրությունը հասկացվում է նաև խոսքից դուրս: Դրանք կոչվում են **լեզվական հականիշներ**:

Կան դեպքեր էլ, երբ բառերը խոսքից դուրս միմյանց հականիշ չեն, հակադիր իմաստ չեն արտահայտում: Հականիշությունը դրսևորվում է լոկ խոսքային միջավայրում⁴: Սրանք կոչվում են **խոսքային/հեղինակային հականիշներ**: «Դրանք խոսքից դուրս իրենց իմաստով հակադիր չեն, ուրեմն և դրանք լեզվում հականիշ չեն, բայց խոսքի մեջ հակադիր են իրար և ունենում են հականիշային գործածություն»⁵: Իսկ այստեղ մենք գործ ենք ունենում հեղինակի անսահման երևակայության դրսևորման հետ. նա կյանքում, բնության մեջ տեսնում և իրար կողքի է բերում առաջին հայացքից անհնար համարվող առարկաներ ու հատկանիշներ: «Հեղինակը հակադրվող հարաբերությունների մեջ տեսնում է նոր հարաբերություններ, առնչություններ, դրանք հակադրում միմյանց»⁶:

Նախ քննենք լեզվական հականիշները: Հայտնի է, որ իրենց բառակազմական, ձևաբանական և իմաստաբանական առանձնահատկություններով լեզվական հականիշները լինում են երկու տեսակ՝ **նույնարմատ** և **տարարմատ**: Նույնարմատ հականիշները լեզվաբանական գրականության մեջ կոչվում են նաև ժխտական հականիշներ, քանի որ այս գույգերից մեկով լիովին ժխտվում, հակասվում է մյուսի նույն հատկանիշի գոյությունը:

⁴ Նույն տեղը, էջ 115:

⁵ Ս. Աբրահամյան, *Հայոց լեզու. բառ և խոսք*, Ե., 1978, էջ 124:

⁶ Դ. Գյուրջինյան, *Հայոց լեզու. խոսքարվեստի դասագիրք*, Ս. Էջմ., 2015, էջ 196:

Այլ է տարաբնույտ հականիշության պարագայում, երբ հականիշային զույգերով պարզապես հակառակ՝ հակադիր իմաստներ են արտահայտվում: Մրանք ավելի հարուստ իմաստաբանական կազմ ունեն: «Հակադրությունների գեղարվեստական արտահայտչականությունը պայմանավորվում է տրամաբանական-դատողական և հոգեբանական-զգացական գործոններով: Հայտնի է, որ մեծի համեմատությամբ փոքրը ավելի փոքր է երևում, երկարի կողքին կարճը՝ ավելի կարճ, ստվերը գոյություն կունենա միայն լուսի առկայությամբ, կամ խաղաղության արժեքն ավելի լավ է զգացվում պատերազմի հակադրությամբ և այլն»⁷:

Ամեն դեպքում, հականիշների գործածության վրա է հիմնված **հակադրություն** (հուն.-antithesis-**հակադրում**) կոչվող ոճական բանադարձումը⁸ կամ **հակադրությո՞ւն**⁹: Մեր նպատակն է քննել **հակադրության** դրսևորումները Հովհաննես Թումանյանի քառյակներում:

Քառյակները մեծ պոետի ստեղծագործության գագաթնակետն են՝ գրված կյանքի վերջին տարիներին: Գրականագիտության մեջ վաղուց ընդունված է Թումանյանի քառյակները համարել քնարական շարք: Ինքը՝ Թումանյանն էլ 250 տող կազմող բանաստեղծական այդ մտորումները ներկայացրել է մեկ վերնագրի տակ՝ «Քառյակներ»: Դրանք միավորում են բանաստեղծի խոհափիլիսոփայական դատողությունները մեկ գաղափարի և տրամադրության՝ տիեզերքի շուրջ:

Աշխարհը լայն է ու ընդարձակ, գեղեցիկն ու բարին՝ այնքան տարածված, բայց, այնուամենայնիվ, կյանքը չար է ու

⁷ **Հ. Հարությունյան**, Գրողի լեզվի և ոճի հարցեր, Ե. , 1979, էջ 118:

⁸ Տե՛ս **Ֆ. Խլղաթյան**, Ժամանակակից հայոց լեզու, մաս Ա, Ե. , 2009, էջ 170.:

⁹ Տե՛ս **Ս. Աբրահամյան**, Հայոց լեզու, բառ և խոսք, էջ 127:

դժվար, և բանաստեղծի քնարը բախտ է որոնում տիեզերքում:
Իսկ բանաստեղծի սիրտը մեծ է, բաց, և այդ ցավերը լցվում են
նրա սիրտը:

Կյանքը բազում հարվածներ է հասցրել բանաստեղծի
հոգուն, մինչդեռ լավատեսությունը երբեք չի լքել նրան:
Բանաստեղծը ահարկու ճամփաներ անցնելով է հասնում
լուսավոր ուղի և ցանկանում մարդկությանը տանել իր ետևից:

Ինչքա՛ն ցավ եմ տեսել ես,
Նենգ ու դավ եմ տեսել ես,
Տարել, ներել ու սիրել,-
Վատը՝ լավ եմ տեսել ես¹⁰:

«Վատը լավ տեսնող», իր հոգու անսպառ գանձերը բոլորին
բաժանող բանաստեղծը կորցնում է իր մտերիմներին.

Կորցրել եմ, ու՞ր գրտնեմ,
Տեղըդ իմաց տուր՝ գրտնեմ,
Ման եմ գալի էս մըթնում
Քեզ մոտ գալու դուռ գրտնեմ:

Մինչդեռ «մոտիկները» միշտ լքում են պոետին.

Ու՞ր կորա՛ն...
Մոտիկներըս ու՞ր կորա՛ն.
Ինչքան լացի, **ձեն ածի՝**
Ձեն չի տվին, լու՛ռ կորան:

Ե՛տ չեկա՛վ...
Գնա ց, գնա ց, ետ չեկավ,
Անկուշտ մահին, սև հողին
Գերի մնաց, ե տ չեկավ:

¹⁰ Հնդվածում բերված այս և մյուս քառյակները տե՛ս՝ **Հ. Թումանյան**,
Երկերի ժողովածու, հ. 2, էջ 257-275:

Բանաստեղծը երկար է խորհել կյանքի անցողիկության, լավ գործի անմահության շուրջ և եկել այն եզրակացության, որ չարությունն ու ազահությունը թշնամի են ամեն լավի ու գեղեցիկի:

Մեռա՛ն, մեռա՛ն ... Եվ, ահա,
Խառնվել են **կյանք** ու **մահ**.
Չեմ հասկանում աշխարհքի
«Կան ու չկան» ես հիմա:

Տիեզերքի անսահմանության մեջ բանաստեղծը մարդկային կյանքը համարում է ընդամենը «երկու օրվա ճամփա», որը պետք է խաղաղ և ուրախ անցնել: Սա հիշեցում է նաև աշխարհի տերերին՝ մարդակերներին ու մարդասպաններին, որոնք լծված են ազահության, չարության կառքին:

Հե՛յ ազահ մարդ, հե՛յ անհոգ մարդ, միտքդ **երկար**, կյանքըդ **կարճ**,

Քանի՛ -քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ.

Ի՛նչ են տարել նրանք կյանքից, թե ի՛նչ տանես դու քեզ հետ,
Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեդ:

Ազահությունն ու անհոգությունը մարդկային կյանքում դրսևորվող մեծագույն չարիքներից են և ծնում են բազմաթիվ անդառնալի կորուստներ, մարդկային կյանքը վերածում անտանելի գեհենի:

Քառյակներում առկա գաղափարները՝ կյանքում եղող հակադրությունները, Թումանյանին մտահոգել են ողջ ստեղծագործական կյանքի ընթացքում: «Դեպի անհունը» պոեմում կարդում ենք.

Թե և՛ **կյանք**, և՛ **մահ**-անցվոր, ունայն,
Մի մեծ հավերժի ձևերն են միայն¹¹:

¹¹ **Հ. Թումանյան**, ԵԺ, հ. 1, Ե. , 1969, էջ 108

Մարդկային կյանքի անցողիկությամբ Թումանյանը հաստատում է տիեզերքի անմահությունը, իսկ իրեն էլ համարում նրա անբաժան մասնիկը.

Հազար տարով, հազար դարով **առաջ** թե **ետ**,
ի՞նչ կա որ,
Ես եղել եմ, կա՛մ, կլինեմ հար ու հավետ, ի՞նչ
կա որ,
Հազար էսպես ձևեր փոխեմ, ձևը խաղ է
անցավոր,
Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ի՞նչ
կա որ...

Կյանքն ու մահը ընկալելով որպես միևնույն հավերժի երկու տարբեր ձևեր՝ Թումանյանը հանգում է փիլիսոփայական խոր ընդհանրացման. Այո՛, կյանքն անցողիկ է, անցողիկ են գանձն ու փառքը, շահն ու տերը, ազահությունն ու չարությունը.

Ո՞ր աշխարքում ունեմ շատ բան, միտք եմ անում՝ **է՛ս, թե էն**.
Մեջտեղ կանգնած միտք եմ անում, չեմ իմանում՝ **է՛ս, թե էն**.
Աստված ինքն էլ, տարակուսած, չի հասկանում ինչ անի.
Տանի՛, թողնի՛, - ո՞րն է բարին, ո՞ր սահմանում՝ **է՛ս, թե էն**:

Նկատելի է, որ քառյակների մեծ մասում հակադրության արտահայտվել է տարարմատ հականիշությամբ, ինչը, ինչպես արդեն նշել ենք վերը, ավելի մեծ արտահայտչականությամբ է օժտված:

Քառյակներում տեղ են գտել նաև **խոսքային/հեղինակային** հակադրություններ: Ոճական այս հնարքը ևս խորթ չէր Թումանյանի գրչին: Հիշենք հայտնի «Թագավորն ու չարչին» բալլադի հետևյալ հատվածը.

Սուտ էր: Ու միշտ, քանի դեռ կան

Շահ ու գերի, ըստրուկ ու տեր¹²...

Բնականաբար, շահն ու գերին, ստրուկն ու տերը խոսքից դուրս իրար հականիշներ չեն: Սակայն խոսքում առկա է հակադրույթ, որով ներկայացվում են հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչները՝ իշխողն ու շահագործվողը:

Ժամանակները փոխվում են, բայց կյանքում ամեն ինչ կարծես մնում է նույնը:

Երկու դարի արանքում,

Երկու քարի արանքում,

Հոգնել եմ **նոր ընկերի**

Ու **հին ցարի** արանքում:

Հին ցարը ռուսական ցարն է՝ իր վարած գաղութային քաղաքականությամբ, իսկ **նոր ընկերը**՝ բոլշևիկը, որը եկավ կարմիր տեռորով: Եվ երկու դարի, երկու քարի արանքում գտնվող բանաստեղծը հոգնել է: Այդ է պատճառը, որ բանաստեղծը գրում է.

Քանի՜ ձեռքից եմ վառվել,

Վառվել ու հուր եմ դառել,

Հուր եմ դառել՝ **լույս տվել**,

Լույս տալով եմ **սպառվել**:

Նրա երգերն այլևս ուրախ չեն, այլ լի հառաչանքներով.

Գալիս եմ, բայց ոչ ուրախ **երգերով**

Քո ծաղիկներին ծաղիկ ավելցնեմ.

Այլ դառն հեծության **հառաչանքներով**

Էդ անդնդախոր ձորերդ լցնեմ:

Որովհետև՝

Նա մի **առյուծ**, ես մի **գառ**

¹² Նույն տեղը, էջ 310:

Իմ սրտի հետ խելագար,
Անհավասար կռվի մեջ
Քարշ եմ գալի ես տկար:

Հաճախ է բանաստեղծին համակում թախիծը, իրակա-
նությունից հեռանալու ցանկությունը: Այսպիսի պահերին նա
մտովի ապաստան է փնտրում եղեմական Արևելքում, որտեղ
հեքիաթական պալատներում թնածում է իր հոգին:

Արևելքի եղեմներին իջավ պայծառ իրիկուն,
Հեքիաթական **պալատներում** ըսպասում են իմ հոգուն.

Ի՛նչ եմ շինում ես **ցեխերում**, աղմուկի մեջ վայրենի...

Ա՛խ, թե նորից գտնեմ ճամփան, դեպի էնտեղ, դեպի տուն...

Արևելքը ներկայացնելով իբրև իր հոգու տուն՝ բանաստեղծը
կրկին անդրադառնում է մարդկային մեղքերին,

Արյունալի աղետներով, աղմուկներով
ահարկու,

Արևմուտքի ստրուկները մեքենայի և ոսկու՝
Իրենց հոգու անապատից խուսափում են
խուռներամ

Դեպ **Արևելքն** աստվածային՝ հայրենիքը իմ
հոգու:

Մակայն բանաստեղծի հոգում հուսահատությունը երկար
տեղ չի գտնում.

Չուր եմ **փախչում**, ինձ խաբում,

Հազար կապ է ինձ **կապում**.

Ամենքի հետ **ապրում եմ**,

Ամենքի չափ **տառապում**:

Թումանյանին հարկավոր էին տասնյակ տարիներ՝ բացա-
հայտելու տիեզերքի գաղտնիքները: Եվ ահա այդ բարձունքին
հասնելուց հետո նրան ամեն ինչ թվում է պարզ և ըմբռնելի: Եվ
բանաստեղծը դառնում է **Ընթերցող**՝ կարդալու տիեզերքի

գիրքը: Ինքն այն բախտավոր Ընթերցողներից է, որին հասու է Բանաստեղծի լուսավոր երգը.

Դու մի անհայտ **Բանաստեղծ** ես, չըտեսնված մինչ էսօր.
Առանց խոսքի երգ ես թափում հայացքներով լուսավոր:
Ես էլ, ասենք, զարմանալի **Ընթերցող** եմ բախտավոր,
Որ կարդում եմ եդ երգերը էսքան **հեշտ** ու էսքան **խոր**:

Իրեն տրված անթիվ շնորհներից բանաստեղծը ինքն էլ է շոայլորեն տալիս մարդկանց: Սակայն չիրականացված մտահղացումների համար խոր վշտով և իր վաստակի գնահատման հարցում գերագույն համեստությամբ է արտահայտվել բանաստեղծը¹³: Նա անհանգստանում է, որ չի կարող իրականացնել իր բոլոր մտադրությունները.

Կյանքս արի հրապարակ, ոտքի կոխան ամենքի.
Խափան, խոպան ու անպտուղ, անցավ առանց
արդյունքի:

Ի՛նչքան ծաղիկ **պիտի բուսներ**, որ **չբուսավ** էս
հողին...

Ի՛նչ **պատասխան** պիտի էս տամ հող ու ծաղիկ
տվողին

Հականիշներով կազմվում է նաև մեկ այլ բանադարձում՝ **օքսիմորոն** (հուն.՝ սրամտորեն հիմարություն)¹⁴: Սա այն բանադարձումն է, որը կազմվում է տրամագծորեն հակադիր և անհամատեղելի հատկանիշներով¹⁵: Իրականում դրանք անտրամաբանական չեն, այլ խոր իմաստ են արտահայտում:

Ե տ չեկավ...

Գնա ց գնա ց, ետ չեկավ,

¹³ Տե՛ս **Արտ. Հակոբջանյան**, Դասական ավանդներին հավատարիմ, էջ 108:

¹⁴ **Մ. Աբրահամյան**, նշ. աշխ., էջ 127:

¹⁵ Տե՛ս նույն տեղը:

Անկուշտ մահին, սև հողին

Գերի մնաց, ետ չեկավ:

Մահը խլում տանում է բոլորին, մահն անխուսափելի է:
Բայց **անկուշտ** որակումով Թումանյանը ցանկացել է ընդգծել
անժամանակ մահերը:

Մեկ այլ քառյակում նա գրում է.

Իմ **զայրույթը** լիքն է **սիրով**,

Իմ գիշերը՝ լիքն՝ աստղերով:

Մերն ու զայրույթը հականիշներ են: Բայց հաճախ են
մարդիկ զայրանում սիրուց, սրտացավությունից դրդված:

Բարձր է հնոց աշխարհքն Հայոց ու Մասիսը
երկնադետ,

Իմ խոր հոգին էն բարձունքին խոսք է բացել
Նրա հետ-

Անհաս բանից, սկզբանից, երբ **չկան էլ դեռ չկար**,

Մինչև **վախճանն անվախճանի** քննում է դարե
դար:

Բանաստեղծի հոգին խոսք է բացել Աստծո հետ մեկ առ մեկ,
դար առ դար, երբ **չկան էլ դեռ չկար**, մինչև **վախճանն
անվախճանի**: Բայց ինչպե՞ս կարող է անվախճանը վախճան
ունենալ, կամ **չկան լինել, անհասը հասանելի**, իսկ **անչափը
չափելի** դառնալ: «Սրանք «անհիշելի վերհուշերի» տարբե-
րակներն են՝ սահմանված առավել սուր դարձնելու աշխարհի
ըմբռնման անհրաժեշտության զգացողությունը, մտքի զիգ-
զագներով գտնելու իսկության ուղին: Դրանք մտքի հազարան
բլբուլներ են, որ հրաշքով պետք է լուծեն գոյության
առեղծվածը»¹⁶:

¹⁶ Խ. Մարգարյան, *Թումանյանի քառյակները*, «Պատմա-բանասիրական
հանդես», հ. 4, Ե. , 1959, էջ 69-85:

Այսպիսով՝ «Քառյակների» լեզվական քննությունը ցույց է տալիս, որ Հովհաննես Թումանյանը լայնորեն գործածել է հակադրույթի թե՛ լեզվական, թե՛ խոսքային և թե՛ օբյեկտորեն տարբերակները՝ բանաստեղծական խոսքն ու ապրումը հասցնելով գեղարվեստական կատարելության: Դրանք ոճական բանադարձումներ են, որոնց միջոցով Թումանյանը փայլուն ներկայացնում է իր վերաբերմունքը աշխարհի լավ ու վատ, չար ու բարի, գեղեցիկ և սգեղ, անցողիկ և հավերժական երևույթների մասին:

РЕЗЮМЕ ПРОЯВЛЕНИЕ ПРОТИВОПОСТАВЛЕНИЯ (КОНТРАСТНОСТИ) В ЧЕТВЕРОСТИШИЯХ ТУМАНЯНА АНАИТ АКОПДЖАНЫ

Лингвистическое исследование «Четверостиший» показывает, что Ованес Туманян широко использовал и оксюмороны, и лингвистические, и словесные варианты, доводя поэтическую речь и переживание до художественного совершенства. Это стилистические обороты, с помощью которых Туманян блестяще представляет свое отношение о таких явлениях мира как: хорошее и плохое, зло и добро, прекрасное и безобразное, преходящее и вечное.

Ключевые слова: поэт надежды и эмоции, тревоги и печали, лингвистические, речевое и оксиморон антитеза, контраст с реальностью и мечтой.

ABSTRACT
CONTRADICTION AS A MANIFESTATION IN THE QUARTETS
OF TUMANYAN
ANAHIT HAKOBJANYAN

Linguistic analysis of “Qaryak” (four-liners) shows, that Hovhannes Tumanyan widely used linguistic, speech and oxymoron ways of antonyms, bringing poetic existence to artistic perfection. Those are stylish conversions, by which Tumanyan brilliantly represents his attitude towards good and bad, evil and kind, beautiful and ugly, ephemeral and eternal phenomenon of the world.

Key words: poet of hopes and emotions, anxieties and sorrows, antonym words, linguistic, speech and oxymoron antonyms, contrast to reality and dream.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՀԱՅ ԱՐՎԵՍՏՈՒՄ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՀԱՅ ԿԵՐՊԱՐՎԵՍՏՈՒՄ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՔԱՄԱԼՅԱՆ

Հովհաննես Թումանյանի վառ, անկրկնելի և լուսավոր կերպարը և հարուստ ժառանգությունը մշտապես հուզել են մարդկանց սրտերը և դարձել են ուսումնասիրության առարկա ու ներշնչման աղբյուր: 1969 թվականին Թումանյանի տուն-թանգարանում կազմակերպվեց բանաստեղծի ծննդյան հոբելյանին նվիրված գեղանկարչության, գրաֆիկայի, քանդակագործության և կիրառական արվեստի ստեղծագործությունների ցուցահանդես, որի նպատակն էր «ցույց տալ, թե ինչպիսի զգալի տեղ է գրավում հայ կերպարվեստում բանաստեղծի կերպարը, նրա հանճարեղ ստեղծագործությունները, Լոռու բնաշխարհի նրա սիրած վայրերը»¹: Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել բանաստեղծի կերպարը հայ կերպարվեստագետների աչքերով: «Թումանյանը բացառիկ հմայքի տեր անձնավորություն էր, և բոլորն էլ ձգտում էին դեպի նա: Օր չէր անցնում, որ նրա տանը չհավաքվեին գրողներ, նկարիչներ, երաժիշտներ, դերասաններ, ճարտարապետներ, հնագետներ», - գրում է հայ մեծանուն նկարիչ, ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ և ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը²: Հայտնի են բանաստեղծի՝ բնորդի դերում հանդես գալու մի քանի դեպք: 1912-ի մարտին

¹ Հովհաննես Թումանյանը կերպարվեստում: Ցուցահանդեսի կատալոգ, Երևան, 1958, էջ 6:

² *Մարյան Մ.*, Անմահ Թումանյանը // Թումանյան արվեստի մասին, Երևան, 1969, էջ 5:

Պետերբուրգից Թումանյանը գրել է դատերը՝ Նվարդին. «Ծանոթացա ռուս նկարիչների և մի երկու բանաստեղծների հետ: Նկարեցին Աշխենին ու ինձ: Ութ նկարիչ նստած նկարում էին Աշխենին»³: Աշխեն Թումանյանի վկայությամբ, նրանց մեջ էր նաև Մյունխենի Գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ, տաղանդաշատ նկարիչ Վարդգես Սուրենյանցը, ում ստեղծագործությունը, սակայն, չի պահպանվել: Մեկ այլ դեպք հիշատակում է Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայի սան Տարագրոսը. «Մի անգամ Հայարտանը Թումանյանի երեկոն սարքեցինք: Խնդրեցինք, որ գա մի երկու ժամ նստի, որպեսզի նկարիչները նրանից կրոկիներ անեն: Նստեցրինք նրան աթոռի վրա, և ամեն մեկս սկսեց իր ալբոմում նկարել նրան: Ես հարմար տեղ չունենալու պատճառով՝ չկարողացա նկարել, բայց մի երկու ուրվագիծ արի: Թումանյանը տեսնելով, որ ես շուտ վերջացրի, տեղից վեր կացավ և դիմեց ինձ: Այ տղա, դու ձիավոր ես, դրանք փիադա, հլա մի քո նկարածն էլ տեսնեմ: Ես ցույց տվի: Էլ ես նկարը դու չես տեսնի, ասաց նա ու վերցրեց»⁴:

Այլոց թվում Թումանյանի հանդեպ մեծ համակրանք ուներ Փարիզի Ժյուլյեն ակադեմիայում ուսումնառությունն անցած ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ Ժողովրդական նկարիչ Փանոս Թերլեմեզյանը, ով բանաստեղծին բնականից նկարել է երկու անգամ և մեծ սիրով հիշատակել իր հուշերում: 1905 թվականին Դսեղի անտառներում որսի գնալիս նկարիչը գույներով մի ճեպանկար էր արել, որը հիմք էր հանդիսացել «Թումանյանը որսի ժամանակ» կտավի

³ Տեւ. *Ղազարյան Մ.*, Ներշնչող կերպարներ // Պատմաբանասիրական հանդես, Երևան, 1969, N 3, էջ 52:

⁴ *Տարագրոս*, Հուշեր Հովհ. Թումանյանի մասին // Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 2009, էջ 787-788:

համար⁵: Նրանք նորից հանդիպեցին 1921-ի վերջերին Պոլսում, որտեղ Թումանյանը եկել էր իբրև ՀՕԿ-ի պատվիրակ: «Ես Պոլսում Հովհաննեսից մի փոքրիկ պորտրե նկարեցի պաստելով և անակնկալ կերպով իրեն նվիրեցի. նա ուրախացավ», - հիշում է նկարիչը⁶: Թերլեմեզյանական հյուծված և հոգնատանջ Թումանյանի դիմանկարին լակոնիկ և զուսպ լեզվով, կոմպոզիցիոն, հոգեբանական և հուզական բնութագրով մոտ են նույն՝ 1921-ին ստեղծված Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայում շուրջ երկու տարի ուսանած Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանի, Թիֆլիսի նկարչության և քանդակագործության դպրոցի շրջանավարտ Սարգիս Կիրակոսյանի և Թավրիզի գեղարվեստական դպրոցն ավարտած նկարիչ Մկրտիչ (Մակո) Մարգարյանի՝ ԳԱԹ-ում պահվող մատիտանկարները: Արտահայտչականությամբ և ներքին լարվածությամբ է աչքի ընկնում Մյունխենի Գեղարվեստի ակադեմիայի սան Հմայակ Հակոբյանի՝ 1919 թվականին ածուխով թղթի վրա գլխահակ, խոնարհ, մտազբաղ Թումանյանի պատկերը: Փարիզի Ժյուլիենի Գեղարվեստի ակադեմիայում կրթված, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Գրիգոր (Գիգո) Շարբաբյանին 1922-ին հաջողվել է համոզել բանաս-

⁵ Որոշ անհամապատասխանություն կա տարբերվերի մեջ: Ինչպես ճշմարտացի նկատել է արվեստաբան Մերի Կիրակոսյանն իր հոդվածում. «Թերլեմեզյանը և Թումանյանը ուղևորվել են Դսեղ 1906-ին, սակայն վերջինիս արդյունքում ստեղծված աշխատանքները թվագրվում են 1905 թվականով» (տես. *Կիրակոսյան Մ., Հ. Թումանյանի և Ավ. Իսահակյանի տուն-թանգարաններում պահվող Փանոս Թերլեմեզյանի ստեղծագործությունների մասին* // Երիտասարդ արվեստաբանների գիտական վեցերորդ նստաշրջանի նյութեր, Երևան, 2012, էջ 28):

⁶ *Թերլեմեզյան Փ.*, Հուշեր Հովհ. Թումանյանի մասին // Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 568:

տեղծին հանդես գալ բնորդի դերում: Առարկայական ճշմարտացի անտուրաժի վերաբրտադրումով՝ բանաստեղծի աշխատասենյակում, իր սիրելի բազկաթոռին պատկերված է հիվանդությունից հյուծված և արտաքնապես խիստ փոխված բանաստեղծը, խորքում աչքի է ընկնում պատերազմում նրա զոհված որդու նկարը: Եթե այս դիմանկարներում Թումանյանը պատկերվում է հոգնատանջ, մռայլ, մտազբաղ, ներքին մտավոր լարման ժամանակ, շեշտադրվում է նրա դեմքի հիվանդագին հյուծվածությունը, ապա Մարտիրոս Սարյանի, Լենինգրադի Գեղարվեստի ակադեմիայի սան Արարատ Ղարիբյանի (1936), Թբիլիսիի Գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ, ՀՍՍՀ վաստակավոր գործիչ Հրաչյա Ռուկկյանի (1937) և Մոսկվայի ՎԽՈՒՏԵՄԱՍ-ում ուսանած Տաճատ Խաչվանքյանի՝ կոմպոզիցիոն լուծումներով և ընդհանուր տրամադրությամբ իրար նմանվող գրաֆիկական պատկերներում «Ժպտուն աչքերով» (գորավար Անդրանիկ), սրամիտ, կենսուրախ երիտասարդ Թումանյանն է: Մասնավորապես, Մարտիրոս Սարյանը մեծ ոգևորությամբ է գրել Թումանյանի մասին. «Ես բախտավոր եմ, որ տեսել եմ նրան՝ հայ ժողովրդի հանճարեղ բանաստեղծին, զրուցել նրա հետ մեր ժողովրդի ճակատագրի, նրա անցյալի և ներկայի մասին: Իմ հանդիպումները Թումանյանի հետ կազմում են իմ կյանքի անմոռանալի էջերը»⁷: Սակայն Թիֆլիսում եղած ժամանակ, հակառակ իր առաջարկներին, նկարչին չհաջողվեց նկարել Թումանյանին՝ վերջինիս զբաղվածության պատճառով: Սանգինայով արված փոքրադիր անթվակիր սարյանական ճեպանկարը փոխանցում է Թումանյանի մարդկային հմայքը և խորունկ հայացքը:

⁷ *Սարյան Մ.*, Հոփ. Թումանյանի մասին // Թումանյան արվեստի մասին, էջ 6:

Մոսկվայի նկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանի սան, Վրաստանի գեղարվեստների ակադեմիայի պրոֆեսոր, Հայ նկարիչների միության առաջին նախագահ, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Եղիշե Թադևոսյանի և Թումանյանի բարեկամությունն սկսվել էր դեռ դարասկզբից: «Ես անչափ ցավում եմ, որ բախտ չունեցա բնականից նկարելու Հովհաննեսին, շարունակ հետաձգելով վաղուցվա այդ ցանկությունս», - 1935-ին գրի առած իր հուշերում նշում է նկարիչը՝ նկատելով, որ տանը պատահաբար գտած Թումանյանի աղոտ, անհաջող մի լուսանկարը նյութ ծառայեց բանաստեղծի պորտրետի համար⁸: 1933-ին իրականացված յուղանկար դիմանկարը պահվում է ԳԱԹ-ում, իսկ 1931-ին և 1933-ին յուղաներկով ու պաստելով արված դիմապատկերները՝ Թումանյանի թանգարանում: Այդ աշխատանքի ընթացքում Թադևոսյանը հայտնաբերեց, որ «բաց լայն ճակատը, ճակատն ակոսող ծալքերը, խոհուն աչքերի խորությունը և թավ հոնքերի կամարաձև բարձրությունը կազմում էին հարմոնիկ ամբողջություն, հրաշալի մի գիրք...» և ակամա հիշեցնում Հոմերոսի ճակատը. «որչափ խաղաղություն, անհուն բարություն ուներ շնչման կենտրոնացած անդորրություն»⁹: Թվում է՝ նկարչին թեթև և աշխույժ վրձնահարվածներով հաջողվել է ստեղծել լույսով ողողված, կենսախնդությամբ համակված ու ներշնչված պոետական կերպար՝ Լոռվա հայրենի բնաշխարհի ֆոնին:

1960-ականներին կերտած դիմանկարների մեջ իրենց գեղարվեստական մակարդակով ու մտահղացումով

⁸ Տեւ. *Թադևոսյան Ե.*, Անմոռանալի Թումանյանը // Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 563-564:

⁹ Նույն տեղում:

առանձնանում են Մոսկվայի բարձրագույն գեղարվեստական-տեխնիկական արվեստանոցներում կատարելագործված վրացահայ նկարիչներ Հովսեփ Կարալովի (Կարալյան) և ՀՍՍՀ վաստակավոր նկարիչ Գևորգ Գրիգորյանի (Ջոտտո) դիմանկարները: Վերջինս աչքի է ընկնում ուրվագծի լակոնիզմով, համաչափությունների երկարաձգվածությամբ, հոգևոր տարրի շեշտադրումով:

Ուշագրավ են Թումանյանին պատկերող միաֆիգուր, երկֆիգուր և բազմաֆիգուր դիմանկարները, պորտրետային հիմք ունեցող սյուժետային-կոմպոզիցիոն պատկերները: Հաջողված է ՀՍՍՀ վաստակավոր նկարիչ Ալեքսանդր Գրիգորյանի նկարը (1969): Ազատ վրձնահարվածներով, միմյանց հակադիր վառ գույների աշխույժ համադրությամբ Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի սանը սինթեզել է հայրենի բնության, ժողովրդի, ազգային ճարտարապետության և մեծ ազգասերի, բանաստեղծի և բանասերի մտախոհ, ներամիտփ կերպարները: Հայտնի է, որ Կոմիտասին և Թումանյանին մերձեցրել են ոչ միայն ջերմ հարաբերությունները, այլև սերը ժողովրդական արվեստի հանդեպ: Ասես անտեսանելի կապը կերպավորել է Ալ. Գրիգորյանից մեկ տարի անց՝ 1954-ին, Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտն ավարտած Հենրիկ Սիրավյանը (1969): Թումանյանի և զորավար Անդրանիկի ազգանվեր գործունեությունը, ժողովրդի համար ճակատագրական պահերին անձնվիրությունը մասամբ ներկայացրել է ՀՍՍՀ վաստակավոր գործիչ Եփրեմ Սավայանը (1969)՝ քարքարոտ բնապատկերի մետաֆորիկ լեզվով: ՀՍՍՀ վաստակավոր նկարիչ Սիմոն Գալստյանը (1969) հերոսներին պատկերել է բանաստեղծի աշատասենյակում: Մոսկվայի Տրետյակովյան թանգարանում է պահվում Թիֆլիսի գեղարվեստական ակադեմիայում կրթված, ՍՍՀՄ գեղարվեստների ակադեմիայի իսկական անդամ,

ՌՍՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Դմիտրի Նալբանդյանի՝ ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի ոսկե մեդալի արժանացած Վերնատուն կտավը (1976), որում նկարիչը մեծ արտահայտչականությամբ պատկերել է Թումանյանի բնակարանում Կոմիտասի նվագի շուրջ համախմբված հայ մեծերին՝ Հ. Թումանյանին, Ալեքսանդր Սպենդիարովին, Ավետիք Իսահակյանին, Վահան Տերյանին, նկարիչներ Մարտիրոս Սարյանին, Եղիշե Թադևոսյանին, Վարդգես Սուրենյանցին, Գևորգ Բաշինջաղյանին և այլոց: Ուշագրավ է Թբիլիսիի գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ, ՀՍՍՀ վաստակավոր նկարիչ Մկրտիչ Քամալյանի ստեղծագործությունը (1969), որտեղ Թումանյանը և Ավետիք Իսահակյանը ներկայացված են Անիում՝ հազար ու մի եկեղեցիների հրաշագեղ այդ քաղաքում: Ստեղծագործության մասշտաբային հարաբերակցությունների և գունային լուծման շնորհիվ այն դառնում է ազգային ճարտարապետության, մշակույթի անբաժանելի մասնիկը: Թումանյանի անգնահատելի սրտացավ օգնությունը հայ գաղթականների հանդեպ գաղտնիք չէ: «Հովհաննես Թումանյանին ես տեսա 1915թ., Էջմիածնում, հուսալքված կանանց ու երեխաների մեջ, որտեղ նա իր դուստր Նվարդի հետ որք երեխաներին հավաքում էր Գևորգյան ճեմարանի շենքը, որպեսզի նրանց ազատի ցրտից ու քաղցից: Եռանդով լի պարթևակազմ բանաստեղծը, վշտոտ հայացքով, վիատությամբ էր լցվել՝ տեսնելով այդ ցնցող պատկերը՝ քաղցի ու սովի կոտորածը», - գրում է Մ. Սարյանը¹⁰: Նրա գործունեության այդ ասպեկտն է ներկայացնում Թումանյանի տուն-թանգարանում պահվող նկարիչ Ֆրենկ Գասպարյանի վրձնած կտավը (1969): Հավանաբար լուսանկարից

¹⁰ *Մարյան Մ.*, Հովհ. Թումանյանի մասին // Թումանյան արվեստի մասին, էջ 219:

արված այս պատկերը մռայլ է, արտացոլում է բանաստեղծի ճնշված հոգեվիճակը: Այս թեման իր արտացոլումն է գտել նաև Գեղարվեստաթատերական ինստիտուտի սաներ Ռոբերտ Ավետիսյանի և Ալբերտ Պարսամյանի 1969 թվականի ստեղծագործություններում:

Եվրոպայում ուսանած անվանի հայ քանդակագործ, բեմանկարիչ, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՍՍՀ և ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ Արա Սարգսյանը հայ ազգի սիրելի բանաստեղծի կերպարը անմահացրել է բրոնզում՝ բարձր պատվանդանի վրա ժայռաբեկորին բազմած դիրքում (ճարտարապետ՝ Գ. Աղաբաբյան): 1957-ին Երևանում՝ Օպերայի և բալետի թատրոնի առջև տեղադրված այս հուշարձանը իր դասական ձևերի և ընտրված նյութի շնորհիվ համահունչ է Թումանյանի ճարտարապետական կոթողի և Ա. Սպենդիարյանի քանդակի հետ: Դսեղի տուն-թանգարանի բակում է կանգնեցվել ՀՍՍՀ վաստակավոր գործիչ, ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ, Բաքվի բարձրագույն գեղարվեստական արվեստանոցն ավարտած Այծեմիկ Ուրարտուի (Տեր-Խաչատրյան)՝ Թումանյանի կիսանդրին (1953), որում քանդակագործին հաջողվել է կերտել մոնումենտալ հնչեղությամբ օժտված գուսպ և խրոխտ հայ մտավորականի կերպար: Դեռևս 1930-ական թթ. Ուրարտուն ձեռնամուխ էր եղել Թումանյանի մեկ այլ հուշարձանի ստեղծմանը, որը սակայն այդպես էլ չիրականացվեց: Մտահղացումը, սակայն, հետաքրքրական էր. «Ժպտադեմ, պայծառատես, սրտաբաց, ջերմ և բարի, մարդամոտ հատկություններով»¹¹ օժտված մեծ բանաստեղծի արձանը բազմելու էր բազալտյա ժայռի տեսքով պատվանդանի վրա, որը զարդարելու էին թումանյանական հերոսները՝ Սասունցի Դավիթը, Մսրա Մելիքը, Ալմաստը,

¹¹ *Մարտիկյան Ե.*, Այծեմիկ Ուրարտու, Երևան, 1962, էջ 16:

Անուշը... ««Ալմաստի» դիմագծերում տպավորված է պատվամոլ, հպարտ, ինքնասեր կնոջ փոթորկոտ, կրքոտ բնավորությունը, ապա Անուշի վշտահար դեմքը խոսում է նրա անխարդախ հոգու մաքրության մասին», - գրում է արվեստաբան Արարատ Աղասյանը¹²: Թումանյանի քանդակի էսքիզը ցւցադրվել է 1939 թվականի օգոստոսի 1-ին՝ բանաստեղծի ծննդյան 70-ամյակին նվիրված ցուցահանդեսին Երևանի քաղաքային թանգարանում¹³:

1969-ին՝ մեծ լոռեցու ծննդյան 100-ամյա հոբելյանի կապակցությամբ Դսեղում հանգրվանեց ՀՍՍՀ վաստակավոր նկարիչ, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ Ղուկաս Զուբարյանի կերտած Թումանյանի բրոնզե հուշարձանը, որն աչքի էր ընկնում կամերային մեկնաբանմամբ: Հետաքրքիր է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի սան Գրիգոր Գևորգյանի՝ մի պահ հանգստի պահին մտքերի մեջ խորասուզված Թումանյանը (1969, բրոնզ, փայտ): Թումանյանի կերպարը քանդակում հավերժացրել են նաև Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտն ավարտած արվեստագետներ Գրիգոր Բադալյանը (1952, գուն. գիպս) և Ֆրիդ Սողոյանը (1969, գիպս), ինչպես նաև Լենինգրադի գեղարվեստի ակադեմիայում կրթված Վահագն Թերզիբաշյանը (1969, սպ. մարմար) և այլք:

Թումանյանը «Թիֆլիսի մտավոր կյանքի շունչն ու ոգին էր, գրականության և գեղարվեստի շուրջ մեր ինտելիգենտներին համախմբող և իրար հետ կապող ոսկե օղակը», - գրել է

¹² **Աղասյան Ա.**, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, 2009, էջ 122:

¹³ Տես. **Ղազարյան Մ.**, Ներշնչող կերպարներ, էջ 54:

Ե. Թադևոսյանը¹⁴: Պատահական չէ, որ նրա եռանդուն մասնակցությամբ՝ Վ. Սուրենյանցի, Փ. Թերլեմեզյանի, Ե. Թադևոսյանի և մյուսների կողքին, 1916-ին հիմնադրվել է «Հայ արվեստագետների միությունը»: Լայնախոհ, խելամիտ մտավորականը սիրել է արվեստը, ինչն արտահայտվել է հայ արվեստին, այդ թվում և կերպարվեստին և դրան առնչվող արդի խնդիրներին նվիրված նրա հոդվածներում, հրապարակումներում¹⁵ և բանաստեղծություններում: Ներշնչվելով Հովհաննես Այվազովսկու ստեղծագործություններից՝ Թումանյանը՝ նկարչին նվիրված բանաստեղծություններ է ձևակերպել («Այվազովսկու նկարի առջև», 1893; «Մի հառաչանք», 1894): «Նկարիչ Գ. Բաշինջաղյանի «Ձորագետը գիշերով» նկարի առջև» բանաստեղծությունը Թումանյանի ձևերգն էր Գևորգ Բաշինջաղյանի արվեստին: 1910-ին Փարիզում լույս տեսած Արշակ Չոպանյանի «Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը» գրքույկի լույսընծայման առիթով Թումանյանը գրել է հոդվածաշար¹⁶: Նա ողջունել է նաև Գարեգին Հովսեփյանի «Մանրանկարչության արվեստը հայոց մեջ» աշխատության հրատարակումը¹⁷ և այլն: Թումանյանի գործուն օգնությամբ է կերտվել Փարիզում Խաչատուր Աբովյանի հուշարձանը և 1933-ին տեղափոխվել Երևան (հեղինակ՝ Անդրեաս Տեր-Մարության):

Բանաստեղծի գիտական պարտաճանաչության և լայնախոհության, մարդկային լուսավոր և բարձր որակների և

¹⁴ **Թադևոսյան Ե.**, Անմոռանալի Թումանյանը // Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 561:

¹⁵ Տես. Թումանյան արվեստի մասին, էջ 139-156 («Գեղարվեստը հայրենիք ունի», «Պետք է խրախուսել» և այլն):

¹⁶ Տես. **Ղազարյան Մ.**, Ներշնչող կերպարներ, էջ 51:

¹⁷ Տես. **Թումանյան Հ.**, Արևելքից Արևմուտք // Թումանյան արվեստի մասին, էջ 148-152:

աստվածաշնորհ տաղանդի շնորհիվ նա անմոռանալի հետք թողեց կերպարվեստագետների սրտերում և ստեղծագործություններում: Ու թեև մեծ է բանաստեղծի դիմանկարների պատկերաշարը, սակայն հուսով ենք, որ նրա էությունը, միտքն ու հոգին լավագույնս արտացոլող պատկերը դեռ առջևում են:

РЕЗЮМЕ

ОВАНЕС ТУМАНЯН В АРМЯНСКОЙ ЖИВОПИСИ МАРГАРИТА КАМАЛЯН

В статье рассматриваются графические, живописные и скульптурные портреты и сюжетно-композиционные изображения известного армянского поэта Ованнеса Туманяна.

Ключевые слова: Ованес Туманян, портрет, живопись, графика, скульптура.

ABSTRACT

HOVHANNES TUMANYAN IN ARMENIAN FINE ARTS MARGARITA KAMALYAN

The article studies the portraits of renowned Armenian poet Hovhannes Tumanyan in painting, graphics and sculpture.

Key words: Hovhannes Tumanyan, portrait, painting, graphics, sculpture.

**ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ՊՈԵՄՈՎ ՆԵՐՇՆՉՎԱԾ
ԿԱՄ «ԱԼՄԱՍՏ» ՕՊԵՐԱՅԻ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ
ԱՌԵՂԾՎԱԾԸ**

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Ճշմարիտ արվեստի չխամրող հմայքն անշուշտ իր գաղտնիքն ունի: Մեծարժեք երկն իր ստեղծումից տասնամյակներ, նույնիսկ հարյուրամյակներ անց էլ շարունակում է հուզել մարդկանց, անցնելով ժամանակների միջով՝ մնում է արդիական ու պահանջված, պահպանում իր թարմությունը, գրավչությունն ու գեղեցկությունը: Ինչո՞ւ է այդպես: Այս հարցին պատասխանելն անհնար է թվում, քանզի անմեկնելի է արվեստագետի օժտվածության ու տաղանդի զորության, արարելու ունակության խորհուրդը: Այդ առումով, թե՛ Հովհաննես Թումանյանի, թե՛ Ալեքսանդր Սպենդիարյանի ստեղծած անանց արժեքներն անգնահատելի են մեր բազմադարյա մշակույթի պատմության մեջ: Նրանց երկերն ամենքին էլ սիրելի են ու հոգեհարազատ, քանզի դրանց էությունը մարդն է ու մարդկայնորեն գեղեցիկը, դրանցում կյանքի ու մահվան, չարի ու բարու հավերժական հակասության իմաստն է արժևորված: Թերևս դա է նաև պատճառը, որ Թումանյանի գրական երկերն իրենց հանճարեղությամբ վաղուց մնայուն տեղ են գտել ոչ միայն հայ, այլև համաշխարհային գրականության գանձարանում: Այդ երկերը մշտապես հուզել և հուզելու են ընթերցողին, ոգևորել ու ներշնչանքի աղբյուր են դարձել բազում արվեստագետների համար: Հենց այդպես են ծնվել կերպարվեստի՝ թումանյանական արձակի թեմաներով կոթողներն ու արժեքավոր ֆիլմերը, բանաստեղծությունների, բալլադների, պոեմների հիման վրա հյուսված քնարական երգերն ու

ռոմանսները, հիասքանչ օպերաները: Հենց այդպես՝ հմայված նրա «Թմկաբերդի առումը» պոեմով, կոմպոզիտոր Սպենդիարյանն իր «Ալմաստը» գրեց, որը մեր ազգային օպերային արվեստի գոհարներից և համաշխարհային երաժշտադրամատիկական բարձրարժեք ստեղծագործություններից մեկն է: Այն փաստորեն մեր երկու մեծերի նույնանման գաղափարների, գեղագիտական նույն սկզբունքների, նույն պատկերացումների միահյուսումն է, որ բխում է նաև համայն հայության ու համայն մարդկության վեհ ու ազնիվ հույզերից: 1902-ին գրված «Թմկաբերդի առումը» խոհափիլիսոփայական մի պոեմ է, որտեղ Ամենայն հայոց բանաստեղծն իր մտորումներն է արտահայտել հայրենասիրության ու հայրենադավության, ամուսնական սիրո ու դավաճանության, փառասիրության, շահամոլության, լավ ու վատ արարքների և այդ ամենի մասին թեկուզ իբրև ավանդազրույց հարատևող մարդկային հիշողության վերաբերյալ: Մարդը մահկանացու է, բայց նրա գործն անմահ է, ու չպետք է այնպես ապրես, որ հավերժորեն անեծքով հիշվես:

«Չարն էլ է միշտ ապրում անմեռ, // Անեծք նրա չար գործին...»¹, - հիմնավորում է բանաստեղծն ու հորդորում հեռումնալ չար գործերից: Պոեմի հիմքում ժողովրդական մի ավանդազրույց է ընկած, որի համար թեև նյութ են հանդիսացել իրական-պատմական իրադարձություններ, բայց այն սոսկ բանահյուսական գեղարվեստական երկ է և հեռու է փաստավավերագրական ճշմարտացիությունից: Կերպարներն էլ մեր ժողովրդի ու նրա դարավոր թշնամիների հավաքական-պայմանական գրական մարմնավորումներ են, որոնք հաճախ նույնացվել, ընդհանրացվել են որևէ իրական

¹Պոեմից բոլոր մեջբերումները տե՛ս Հովհ. Թումանյան, երկեր 2 հատորով, Երևան, 1958, էջ134:

պատմական անձի կերպարում (Նադիր շահը, օրինակ, պատմական անձ է): Ավանդազրույցն ըստ էության մեր ժողովրդի ազգային-ազատագրական դարավոր պայքարի դրվագներից մեկի գեղարվեստական արտապատկերումն է: Դարեր շարունակ հայ ժողովուրդը տառապել է օտարի լծի տակ, պայքարել իր անկախության համար: Երկրի շատ վայրերում առանձին ապստամբ հերոսների երբեմն հաջողվել է ժամանակավորապես ինքնիշխան դառնալ, ինքնապաշտպանություն կազմակերպել և համառ դիմադրություն ցույց տալ թշնամուն: Թմուկ բերդի տիրակալ Թաթուլ իշխանն էլ, ամրանալով բերդում, շրջակա տարածքների արդյունավետ պաշտպանություն էր իրականացնում: Բայց պարսից շահ Նադիրը դա չէր կարող հանդուրժել ու դրա համար. «Նադիր շահը զորք հավաքեց, // Ջորք հավաքեց անհամար, // Եկավ Թըմկա բերդը պատեց // Ինչպես գիշերն էն խավար»:

Հայրենասեր Թաթուլ իշխանի հերոսական կերպարն անշուշտ ոգևորել է Թումանյանին: Բայց իբրև փիլիսոփա-բանաստեղծ ու իմաստուն վերլուծաբան՝ նա պոեմում իրատեսություն վերլուծում, մեկնաբանում է իրադարձությունները, բացահայտում հերոսի ֆիզիկական պարտության և բարոյական հաղթանակի պատճառները: Վկայակոչելով միջնադարյան պարսիկ մեծանուն քնարերգուի՝ Ֆիրդուսու խորիմաստ միտքն այն մասին, թե «ի՛նչը կհաղթի կյանքում հերոսին, // Թե չը լինին // Կինն ու գինին...» բանաստեղծն այն ճշմարիտ համոզմանն է հանգում, որ հավերժական այս իրողությունն անկասկած հայտնի պիտի լիներ նաև Նադիր շահի նենգամիտ խորհրդատուներին: Եվ առհասարակ հայրենասիրության, հերոսության, վեհանձնության, ազնիվ սիրո ու հավատարմության կողքին կան ու միշտ էլ կլինեն փառամոլությունն ու շահամոլությունը, խարդախությունն ու դավաճանությունը, չարամիտ դավերը: Կյանքն է այդպիսին,

ու ոչինչ փոխել չի լինի: Մարդկային հիշողությունն էլ, թեև դարերով պահպանում է չար ու բարի, լավ ու վատ գործերի մասին վկայություններ, թեև ամենքին է հայտնի այն ճշմարտությունը, թե անագնիվ ճանապարհով ձեռք գցածը կորստական է, սակայն հեշտությամբ փառքի ու գանձի տիրանալու գայթակղությունը ևս զորեղ է: Հենց այս հավերժական իրողության վերահաստատման մեջ է նաև Թումանյան բանաստեղծ-փիլիսոփայի ստեղծագործության մնայուն, բոլոր ժամանակների համար արդիական, սիրված ու ընդունված լինելու գաղտնիքը: Սակայն Թումանյանը սոսկ ժողովրդական դարավոր իմաստությունը խորապես ընկալող ու մեկնաբանող փիլիսոփա չէ: Նրա նպատակը միայն հավերժական հակասությունների պատճառները բացահայտելն ու փաստելը չէ: Նա բանաստեղծ է և իր գործն այդ փաստերի վերաբերյալ ընդհանրացումներ անելն է, այդ կերպ ընթերցողին հոգեպես, բարոյապես դաստիարակելը, չար գործերի գայթակղությունից հեռու պահելը: Դրա համար նա իր փիլիսոփայական խոհերին համահունչ թեմա ու արտահայտման գրավիչ ձև պիտի ընտրեր: Այդ թեման նա որոնեց ու գտավ ժողովրդական բանահյուսության մեջ և այն ներկայացրեց պոետական մեծագույն վարպետությամբ: Հենց դրանում է նրա տաղանդի գորությունը: Պոեմում ողջ ավանդազրույցն աշուղն է պատմում՝ արևելյան լեզվա-
նճական շքեղ արտահայտչամիջոցներով, ճոխ ու գունեղ լեզվով: Բանաստեղծին իրոք հաջողվել է իր փիլիսոփայական խոհերն արտահայտելու հարմար թեմա ու ոճ գտնել: Եվ այդ թեման՝ իբրև ավանդազրույց, աշուղի լեզվով պատմել-
շարադրելու կերպն էլ հենց հմայեց, խանդավառեց Սպենդիարյանին: «Ինձ ձանձրացրել էին ճշմարտությունից զուրկ, պայմանական, բուտաֆորական, էկզոտիկ սյուժեները, ես երագում էի գտնել մի այնպիսի շնորհակալ թեմա, ինչպես

«Իվան Սուսանինը», «Իշխան Իգորը» կամ «Կիտեժը», միայն թե կապված Հայաստանի պատմության, իմ ժողովրդի կյանքի և հերոսական պայքարի հետ», - մի առիթով իր ավագ ընկերոջը՝ կոմպոզիտոր Ն. Տիգրանյանին խոստովանել է նա²: Սպենդիարյանի այդ երազանքն իրականացավ 1916 թվականին, երբ Թիֆլիսում ծանոթացավ Հովհ. Թումանյանի հետ ու հմայվեց նրա ստեղծագործություններով: Այդ ստեղծագործությունների մեջ էլ նա գտավ այն թեման, որը երկար էր փնտրել: Հայկական թեմաներով օպերա գրելու ցանկություն Սպենդիարյանը վաղուց ուներ: Դեռ 1908-09 թթ. Յալթայում, ներշնչված իր մտերիմներից մեկի՝ գեղանկարիչ Վարդգես Սուրենյանցի «Շամիրամն Արայի դիակի մոտ» կտավից, նա վճռել էր օպերայի նյութ դարձնել հայոց «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելը: Նույնիսկ լիբրետո էր պատվիրել, գրել օպերայի առանձին դրվագներ («Շամիրամն Իշտար աստվածուհու տաճարում»)³: Այդ մասին տեղեկանում ենք թերթերին տված նրա հարցազրույցներից (տե՛ս «Феодосийский справочник» թերթի 26.07.1909-ի համարում տպագրված հարցազրույցը, «Русская малва» թերթի 14.08.1913 N241-ում տպագրված՝ Վ. Գերմանի «Беседа с композитором Спендиаровым» հարցազրույցը և ումն Ն. Խվոստովի նամակից՝ ուղղված կոմպոզիտորի կնոջ մորը՝ Ելիզավետա Մազիրովային)⁴: Նամակագիրը տեղեկություններ է հաղորդում բանաստեղծ, մշակութաբան-ասորագետ Ալ. Կոնդրատևի

²Դ. Կոնդրատև, *Армянский музыкальный театр*, том 1, Ереван, 1956, стр. 283.

³Տե՛ս Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի ֆոնդ (ԱՍՏԹ.) ՄՄ.N289, Սպենդիարյան Ա., խոսք Տեֆֆիի, «Շամիրամն Իշտար աստվածուհու զոհասեղանի մոտ» (հատված անավարտ օպերայից):

⁴Լ. Խվոստովի նամակն ուղղված Ե. Մազիրովային, տե՛ս Երևանի Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), երաժշտական բաժին, Սպենդիարյանի ֆոնդ, N64:

մասին՝ խնդրելով այդ տեղեկությունները փոխանցել Սպենդիարյանին: Ուշագրավ է այն հանգամանքը, որ թե՛ «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելի, թե՛ «Թմկաբերդի առումը» պոեմի սյուժեներում որոշ ընդհանրություններ կան: Երկուսի թեման էլ հայրենասիրությունն է և հայրենասեր հերոսի մահը կնոջ դավադրության հետևանքով: Խաբեությանը երկրի իշխանությունն ամուսնուց ժամանակավորապես խլած Շամիրամ թագուհին սպանում է նրան, ապա «բարեկամություն» հաստատելու առաջարկությամբ, սուրհանդակներ ուղարկում հայոց Արա Գեղեցիկ թագավորի մոտ: Բայց դավադրաբար իր ամուսնուն սպանած թագուհու «սերն ու բարեկամությունը» հայոց արքային հարկավոր չէին, նա չէր հավատում նենգամիտ թագուհու խոստումներին, չէր կամենում դավաճանել «իր Նուարդին»: Արայի մերժումից զայրացած՝ Շամիրամը պատերազմ է հայտարարում Հայաստանի դեմ: Արան զոհվում է հայրենիքը պաշտպանելիս, Բայց իր հայրենասիրության, խիզախության ու պատվախնդրության համար հերոսացվում, որպես հերոս՝ մնում ժողովրդի հիշողության մեջ: Նույն կերպ հերոսացվում է նաև իր կնոջ դավադրության զոհ դարձած Թաթուլ իշխանը՝ Թումանյանի պոեմի հերոսը: Իսկ դավաճան-դավադիր կանայք չեն ներվում, ստանում են իրենց արժանի պատիժը: Թե ինչո՞ւ էր հենց այսպիսի սյուժե փնտրում Սպենդիարյանը, դժվար է ասել: Բայց որ «Թմկաբերդի առումը» պոեմն այն էր, ինչ նրան հարկավոր էր, պարզ էր հենց սկզբից: Ինչպես բանաստեղծի դուստր, գրականագետ Նվարդ Թումանյանն է հիշում. «Սպենդիարյանը շատ հավանեց ողջ պոեմը և տեղից վեր թռչելով՝ սասաց.

-Այ սա ուրիշ բան է, իսկն իմ ուզածն է: -Ու ոգևորված սկսեց սենյակում ման գալ: Նա խնդրեց Թումանյանին պոեմը

տող առ տող թարգմանել իր համար: Առանձնապես հավանել էր նախաբանի աշուղական ձևը»⁵:

Այո՛, ձյունապատ Աբուլ լեռան փեշերին մինչ այսօր էլ կանգնած Թմկաբերդի ավերակների մասին հին զրույցն իր հերոսականությամբ, խոհականությամբ ու անգուգական հմայքով թովեց մեծանուն կոմպոզիտորին, որի սիմֆոնիկ երկերն իրենց ինքնատիպ արևելյան գունագեղությամբ արդեն հիացրել էին նաև եվրոպական համերգասրահների բարձրաճաշակ ունկնդիրներին: Խանդավառված էր նաև Թումանյանը: Նա հավատում էր մեծ կոմպոզիտորի տաղանդի ուժին, համոզված էր, որ սպենդիարյանական թավջա մեղեդիներով պարուրված, օպերա դարձած իր պոեմն աշխարհով մեկ կշռջի՝ ամենուր պատմելով մեր ժողովրդի ազատատենչ ոգու և դարավոր իմաստության մասին: Սպենդիարյանի՝ «Հայոց երաժշտական ընկերության» նախաձեռնությամբ կազմակերպված թիֆլիսյան առաջին հեղինակային համերգի առիթով տրված բանկետի ժամանակ հանդես գալով ողջույնի խոսքով՝ բանաստեղծը նշեց. «...Ահա էսօր գալիս է եվրոպական երաժշտական աշխարհում անուն հանած հայ երաժշտագետը՝ Ալեքսանդր Սպենդիարյանը, օտար երկրից դեպի հայրենի մշակույթը, արևմտյան երաժշտությունից դեպի արևելյան երաժշտությունը, մեծ ու գեղեցիկ ծրագրերով, որոնց գործ դառնալուն առհավատյա են իր խոշոր տաղանդն ու փայլուն պատրաստությունը և էն հանգամանքը, որ իր շարժվելու հնարավորություններով կապված ու կախված չի մեր դժբախտ իրականությունից: Առաջին անգամն է մեր տաղանդավոր հայրենակիցը հայտնվում մեր մեջ, առաջին

⁵Նվարդ Թումանյան, Թումանյանն ու Սպենդիարյանը, հուլ, «Սովետական արվեստ» հանդես, 1958, N8, էջ 67-70:

անգամն է դուրս գալիս մեր հասարակության առջև, և առաջին անգամից ողջունում ենք հրճվանքով ու ծափերով»⁶:

Շենց այսպիսի ջերմ մթնոլորտում սկիզբ առան հայկական լավագույն օպերաներից մեկի ստեղծման աշխատանքները: Թումանյանն ինքը, ըստ իր պոեմի, օպերայի սցենար պիտի կազմեր, գրեր լիբրետոն: Սակայն զբաղված լինելով այլ գործերով՝ նա չհասցրեց այդ անել և 1916 թ. հոկտեմբերի 20-ին Ղրիմից նրան գրած իր նամակում տեղեկացնելով, որ կրկին Թիֆլիս է գալու, Սպենդիարյանը նաև նշում է. «...Եթե Դուք դեռևս ժամանակ չեք ունեցել զբաղվելու «Թմկաբերդի առումը» պոեմի մշակումով, ապա այդ Ձեզ թող բնավ չանհանգստացնի: Թիֆլիսում իմ գտնված ժամանակամիջոցում, համենայն դեպս Ձեզ հետ, վերջնականապես կմշակենք սցենարը և, բացի դրանից, ինչպես արդեն գրել եմ, ես կզբաղվեմ երաժշտական նյութ հավաքելով, որի համար և իմ Թիֆլիս գալը զուր չի լինի...»⁷: Այդ նամակից մեկ ամիս անց կոմպոզիտորն արդեն Թիֆլիսում էր և Թումանյանի հետ դրվագ առ դրվագ քննարկում էր օպերայի առանձին գործողությունների ուրվագրերը: Երկար խորհում էին գլխավոր հերոսուհու անվան շուրջ: Բանաստեղծը Գոհար անունն էր առաջարկում, բայց ի վերջո նախապատվությունն Ալմաստին տրվեց: Սպենդիարյանն ուսումնասիրում էր կովկասյան մեղեդիները, ծանոթանում աշուղական արվեստին: Կոմպոզիտորի դուստրը՝ երաժիշտ, գրող-հրապարակախոս Մարինա Սպենդիարովան, հորը նվիրված իր «Սպենդիարով» գրքում պատմում է, թե ինչպես էր նա հմայվել

⁶Տե՛ս նույն տեղը:

⁷Տե՛ս նույն տեղը: Նամակի ռուսերեն բնագիրը պահպանվում է Երևանի Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (ԳԱԹ), Հովհ. Թումանյանի ֆոնդ, N916:

աշուղական մեղեդիներով, ջանում էր խորությամբ ընկալել դրանց էությունը⁸։ Իսկ գրող Վազգեն Տալանը՝ աշուղ Շերամի որդին, հիշում է, թե ինչպես է կոմպոզիտորը ուրախացել, երբ իմացել է, որ անվանի աշուղն այդ ժամանակ Թիֆլիսում է։ Աշուղի մյուս որդուն՝ կոմպոզիտոր Վարդգես Տալանին, խնդրել է իրեն անպայման ծանոթացնել Շերամի հետ, լսել է նրա երգերը հեղինակի կատարմամբ, ապա վերցրել ու երկար զննել է թառը՝ արևելյան այդ պարզ, բայց անչափ սիրված նվագարանը⁹։

Այո՛, Սպենդիարյանն իրոք գտել էր այն թեման, որը լիովին համապատասխանում էր իր գեղագիտական սկզբունքներին։ Սակայն 1918 թ. նրա առաջարկությամբ մոսկվացի Բանաստեղծուհի Սոֆյա Պարնոկի գրած լիբրետոն այնքան էլ հաջողված չենք համարում։ Համեմատելով այն պոեմի հետ՝ նկատում ենք, որ ռուս բանաստեղծուհին նեղացրել է այնտեղ արտահայտված կյանքի հակասությունների հավերժականության, ազնիվ ու անազնիվ արարքների շուրջ թումանյանական խոր ընդհանրացումների իմաստը։ Նա չի կարողացել լիովին բացահայտել ինչ-որ պահի փառասիրությունից կուրացած, սիրած տղամարդուն դավաճանելու և հայրենադավության համար գոջացող կնոջ հոգեկան ողբերգությունը։ Նա պարզապես պոեմը դիտել է որպես պատմական իրադարձությունների շուրջ հյուսված մի ավանդազրույց, որտեղ խոսվում է հայրենասիրության և դավաճանության մասին, քննադատվում դավաճանությունը։ Իբրև բանաստեղ-

⁸Սպենդիարովա Մ. , Սպենդիարով, Երևան, 1966, էջ 116-121։

⁹Տե՛ս Տալան Վազգեն, Ամենուրեք տաղարան է աստղերի, «Հուշեր» ժողովածու (Նվիրված Ա. Սպենդիարյանի ծննդյան 140-ամյակին), Երևան, 2012, էջ 99-106։

ծուհի՝ Ս. Պարնոկը ռուսական հեղափոխական մտավորականության հույզերն արտահայտող արվեստագետ էր։ Արևելքը նրան հոգեհարազատ չէր, ու չէր կարող ընկալել արևելքցի մարդու հուզական ներաշխարհը, սիրո, գինու, կենսական վայելքների և հնամենի ավանդույթների պարտադրող զսպվածության հակասությունները։ Բայց այն, ինչը խորթ էր ռուս բանաստեղծուհու հոգուն, սիրելի ու ընկալելի էր դրիմյան բազմաշերտ մշակույթի միջավայրում ապրած ու մեծացած, այդ մշակույթն իր մեջ կրող կոմպոզիտորին։ Իր հիասքանչ «Ղրիմյան էսքիզներ» սիմֆոնիկ շարքով նա ունկնդրի համար արդեն բացահայտել էր «երազային Արևելքի» մեղեդիների ինքնատիպ հմայքը։ Ու հիմա հեքիաթային մեղեդիների այդ թովիչ վարպետն ուզում էր իր հայրենի երաժշտության միջոցով պատմել աշխարհին իր ժողովրդի հերոսական անցյալի, ազատատենչ ոգու ու պայծառ հույզերի մասին։ Այն, ինչը չէր իմաստավորվել Պարնոկի լիբրետոյի մեջ, իր իմաստավորումն ու լիարժեք դրսևորումը գտավ սպենդիարյանական մեղեդիների միջոցով։ Նա հիրավի կենդանություն, կյանք ու ոգի տվեց կերպարներին։ Մեր մշակույթի պատմության մեջ իրենց հավերժական տեղը գտան հայրենասեր ու խիզախ Թաթուլ իշխանը, արևելյան պոետ-աշուղն իր հոգեբան-հոգեհանի, սաղրիչ-գայթակղիչ երգ ու բառով, Նադիր շահը՝ իբրև ահեղ մի տիրակալ, նենգամիտ ու փառասեր մի բռնակալ, որ նպատակին հասնելու համար կարող է դիմել անգամ ստոր միջոցների, և իհարկե իշխանուհի Ալմաստն իր փառամոլությամբ, որը, գանձ ու գահի սին երազներով տարված, գործում է մեղքերից չարագույնը՝ դավաճանություն։ Նա զոջում է հետո, բայց ուշ է արդեն...

Սպենդիարյանն այդ ամենին հասել է երաժշտական թեմաների յուրօրինակ զուգորդման, ձայնատոնային ճիշտ

դերաբաշխման, ժողովրդական մեղեդիներից հյուսված երաժշտական ճշգրիտ-իրատեսական պատկերների ստեղծման միջոցով (հիշենք «Աշուղի երգը», Թաթուլ իշխանի հաղթական քայլերգը, «Պարսկական քայլերգը» և հատկապես Ալմաստի պարը, որտեղ արտահայտված է հակասական մտքերից տանջվող-տատանվող կնոջ հոգեվիճակը): Ուստի կարծում ենք՝ թերևս իրավացի է կոմպոզիտոր, երաժշտագետ Ս. Վասիլենկոն, երբ գրում է. «Օրիգինալ, թարմ երաժշտությունը, հետաքրքիր սյուժեն, հիանալի հնչող նվագախումբը անմիջապես ստեղծեցին այդ օպերայի հսկայական հաջողությունն ու համբավը: «Ալմաստը» վերջնականապես ամրացրեց Սպենդիարյանի դիրքը՝ որպես առաջնակարգ կոմպոզիտորի: Բացի այդ օպերան ցույց տվեց, թե ինչպիսի գանձեր է թաքցնում իր մեջ ժողովրդական երաժշտությունը, այն էլ այնպիսի երկրի, ինչպիսին Հայաստանն է, և թե ինչպես է նա փայլում իսկական վարպետի գրչի տակ»¹⁰:

«Ալմաստը» հիրավի սքանչելի օպերա է, և հեշտ չի եղել արվեստի այդ մոնումենտալ կոթողն Ստեղծելը: Շուրջ տասը տարի (1918-1928թթ.)՝ մինչև իր կյանքի վերջը, Սպենդիարյանն աշխատել է այդ ստեղծագործության վրա՝ առանձին հատվածներում ուղղակի գեղարվեստական կատարելության հասնելով:

Շատ բան կարելի է ասել Թումանյանի հոյակապ քնարերգության և Սպենդիարյանի չքնաղ մեղեդիների մասին: Բայց մեր խոսքն ավարտենք՝ նշելով, որ հավատարիմ մնալով Թումանյանի արտահայտած վեհ գաղափարներին, հետևելով

¹⁰Сергей Василенко, Страницы воспоминаний, Музгиз., Л., 1948, стр. 128.

օպերային արվեստի դասական մեթոդներին՝ Սպենդիարյանին հաջողվել է խորապես ազգային մի երկ ստեղծել: Այն մշտապես կմնա մեր ժողովրդի սիրելի օպերաներից մեկը:

РЕЗЮМЕ

ВДОХЛОВЛЕННЫЙ УНИКАЛЬНОЙ ПОЭМОЙ ТУМАНЯНА ИЛИ СЕКРЕТ ВЕЧНОСТИ ОПЕРЫ «АЛМАСТ»

ТИГРАН САРКИСЯН

Неугасаемое обаяние истинного искусства безусловно имеет свою тайну. Ценное творение хранит свою свежесть десятилетиями, даже веками, остается современным, продолжая интересовать людей. По той же причине, произведения, созданные и Туманяном, и Спендиаровым, являются бесценными в истории нашей многовековой культуры. Поэма Туманяна «Тмкаберди арумн» («Взятие Тмкаберда»), написанная в 1902 г., своими философскими мыслями, своим своеобразным стилем очаровала, воодушевила Спендиарова, стала источником вдохновения для него. Поэт всех армян (Туманян) в своей поэме выразил свои думы и мысли о патриотизме и предательстве, о супружеской любви и измене, о хороших, добрых делах и зле. А Спендиаров давно имел желание написать армянскую оперу.

Опера «Алмаст», написанная Спендиаровым по темам поэмы Туманяна, действительно прекрасное произведение. Но создание такого монументального музыкально-драматического произведения было не легким. Композитор над ним проработал 10-лет (с 1918-1928 г.), до конца своей жизни.

Ключевые слова: поэма; опера, «Алмаст», «Взятие Тмкаберда», О. Туманян, Ал. Спендиаров, музыкально-драматическое произведение, князь Татул, Надир шах.

ABSTRACT
INSPIRED BY TUMANYAN'S UNIQUE POEM OR THE
ETERNAL MYSTERY OF OPERA "ALMAST"
TIGRAN SARGSYAN

Inextinguishable charm of true art doubtlessly has its secret. Valuable creation keeps exciting people even after decades and centuries, after passing through times still stays modern and demanded, maintaining its originality. In this sense, values created both by Hovh. Tumanian and Al. Spendaryan are priceless in the history of our centuries-old culture. The poem "Tmbkaberdiarn" ("The Capture of Fort Tmuk" or "The Capture of Tmbkaberdi") written by Tumanyan in 1902, fascinated and inspired Spendaryan by its philosophical thoughts. In the poem, the national poet of Armenia expressed his thoughts about patriotism and treason, conjugal love and betrayal, good and bad deeds. For a long time, Spendaryan desired to write an opera on Armenian themes. His opera "Almast" written on the themes of Tumanyan's poem is truly an amazing work. Yet it was not easy to create such monumental composition of music and drama art. The composer worked on it almost ten years (1918-1928) until the end of his life.

Key words: Opera, poem, „Almas,, “The Capture of Tmbkaberdi”, Hovh. Tumanyan, Al. Spendaryan, composition of music-opera, Tatul, shah Nadir.

ЭКРАНИЗАЦИЯ РАССКАЗА ОВАНЕСА ТУМАНЯНА “ТИКОР” АМАСИЕМ МАРТИРОСЯНОМ (КИНОВЕДЧЕСКИЙ АНАЛИЗ НА ОСНОВЕ ТЕОРИИ АРГУМЕНТАЦИИ)

АРСЕН АМБАРЦУМОВ

Ованес Туманян - один из наиболее экранизируемых армянских писателей. На основе произведений автора, снято более десяти как художественных, так и мультипликационных фильмов. К творчеству Туманяна обращались такие режиссеры, как А. Мартиросян, С. Израелян, Л. Атаманов, В. Подпомогов, Р. Саакянц и др. Рассказы, повести мастера колоритны и содержательны, в них присутствует высокая культура письма. Произведения Туманяна кинематографичны, они образно воспроизводят жизненную ситуацию, представляя окружающую действительность во всей красе и полноте оттенков. В нашей статье мы обратимся к последнему армянскому немому фильму “Тикор”(1934), снятому на основе одноименного рассказа Ов. Туманяна. Но прежде скажем несколько слов о теории аргументации, ее месте и значении как в художественном произведении, так и в его оценке.

Аргументировать что-либо – это значит убедить в правоте своей позиции окружающих. А это обозначает, что в содержании информации, которая будет представлена вниманию слушателя или зрителя, должен присутствовать смысл. Смысловая составляющая, в том числе и художественной информации, дает возможность поверить и воспринять увиденное и услышанное с экрана. Смысл не возникает в тексте, так сказать, невзначай, его создает автор из тех многочисленных компонентов, которые присущи конкретной ситуации, конкретному времени и месту. Этот процесс не что иное, как рассуждение в содержании художественного текста. Наверное, не случайно для Г. Брутяна

“аргументация – это способ рассуждения”¹. Именно рассуждение дает нам возможность осмыслить подход автора, выявить в нем как главные, так и второстепенные компоненты, а также кульминации и спады в развитии творческой идеи. В содержании любого текста, и текст кинематографический здесь не исключение, существуют опорные точки, которые являются связующим звеном, играя роль каркаса. Между этими точками существуют линии взаимодействия событий, которые по большому счету, и определяют вектор развития художественного произведения, выявляя тем самым богатство языка, сочность красок, глубину мысли и т.д. Эти компоненты являются основополагающими в художественном тексте, а также и в его оценке.

Прежде чем мы обратимся к фильму А. Мартиросяна, скажем несколько слов о потрясающем рассказе Туманяна “Гикор”. Это небольшое, но очень колоритное произведение.

С первых же строк мы узнаем, что крестьянин Амбо решил отвезти своего сына в город, чтобы тот обучился какому-нибудь ремеслу. Мать Гикора против. Уже в начале рассказа создается основа для конфликта, в содержании которого свое неотъемлемое место занимает чувственный, эмоциональный фактор.

“Жена не соглашалась.

- Ох, не пушу, - плакала она, - пожалей мое малое дитя, не бери в тот проклятый мир, не бери, - убивалась она, ...- не надо”².

Конфликтная ситуация усугубляется:

“Сестренка Зани плакала, Гело, самый младший, рвался из рук матери, кричал вслед: “Гикор, ты куда уходишь, э-э-эй Гикор... Ты куда идешь...”³

¹ Брутян Г., Аргументация, Изд.-во АН Армянской ССР, Ереван, 1984, стр. 28.

² Туманян О., Гикор, Издательство “Советакан грох”, Ереван, 1984, стр.3

³ Там же, стр. 4.

Сочетание лирического компонента и последовательности в развитии действия составляют одну из особенностей литературного стиля “Гикора”.

Вторая часть рассказа происходит в доме купца. Начинается она с конфликта, происшедшего между женой базаз Артема и Гикором. Если в первой части автором были созданы некие предпосылки для конфликта, то здесь возникшее столкновение особенно обостряется за счет того, что Туманян вводит ситуации, определяющие отношение купца к Гикору: жалость сменяется ненавистью и пренебрежением к слуге.

Следствием этого является уход Гикора на работу в лавку, где тот должен, стоя на улице, зазывать покупателей. Автор вписывает своего героя в ситуации, где тому приходится голодать и получать побои. При этом развитие действия до мельчайших подробностей обосновывает поступки Гикора - юноши, нуждающегося в обучении. Углубляя социальную подоплеку своего произведения, Туманян приводит героя к смерти. Полуголодный мальчик, стоя на улице, заболевает и умирает в больнице. На этом можно было бы и закончить рассказ. Но Туманян ставит акцент на развитие эмоционального плана. В конце Амбо возвращается домой по тому же пути, по которому они шли вместе с Гикором. При этом о смерти мальчика знает только отец. Всех остальных членов семьи автор собирает вместе на встречу с Гикором, которого больше нет в живых.

“Через несколько дней Амбо возвращался в село. Он нес под мышкой одежду Гикора, чтобы мать могла поплакать над ней...”

У околицы стояли, Гикора поджидали из города – мать Зани, Микич, Моси. Маленький Гало вырывался из рук матери: – Э –эй, Гикор... – кричал он, - скорее иди, э-э-эй, Гикор...”⁴.

“Гикор” емкое и выразительное произведение. Причина – целостность и аргументированность всех компонентов его содержания.

⁴ Там же, стр. 29.

Обращаясь к фильму А. Мартиросяна, хочется отметить, что он, будучи самостоятельной работой режиссера, в полной мере передает также дух литературного первоисточника. Это выражено прежде всего в выдвигании на первый план эмоционального, чувственного компонента. Говоря о фильме “Гикор”, Гр. Чахирьян пишет: “Сюжет этой картины удачно передает весь образный строй литературного первоисточника и в наши дни может служить образцом бережной экранизации литературного произведения”⁵.

После пейзажных кадров мы видим две сцены, которые являются опорными точками начального эпизода. Это сцена со школьниками во дворе учебного заведения, которые после перемены спешат на урок, и сцена с Гикором, который в школу больше не пойдет, так как ему нечем платить за обучение. Этим режиссерским ходом Мартиросян обосновывает дальнейший ход событий - отправку Гикора в город, чтобы он получил специальность и, так сказать, “стал человеком”.

Особенность фильма “Гикор” – это дробление с помощью кинематографических средств выражения конкретного события на несколько взаимосвязанных частей. Режиссер аргументирует каждый поступок своего героя, достигая простоты и реалистичности в развитии действия. После того, как Амбо (Гр. Нерсисян) отказывают дать в долг, на экране заглавными буквами высвечивается надпись: “Возьму в город”. Эта часть фильма является завязкой действия, и она имеет свое продолжение. Используя диалоги, режиссер подчеркивает нежелание матери, братьев и сестер отпускать Гикора в город. С помощью такого хода событий, зритель проникается сочувствием к главному герою, а фильм, тем самым, переполняется лирическим компонентом. Зритель понимает, что это последняя встреча Гикора с семьей. В дополнение к этой идее, мы видим крупный план лица Гикора, наивного юноши, который исходя из

⁵ Чахирьян Гр., Большой экран Армении, Москва, Союз композиторов СССР, 1971, стр.39.

тяжелого социального положения, отправляется на услужение, к городским богатым и мещанам.

Функциональная зависимость всех компонентов фильма является важнейшей составляющей как внутри сцен, так и в их монтажном сочетании.

Следовать правилам художественной аргументации – значит обосновать каждый поступок героя в соответствии с той ситуацией, в которой он находится, используя при этом не только взаимодействие героя со своим окружением, но также и их противостояние.

Необходимо также сделать несколько замечаний об игре актеров. Амбо в исполнении Нерсисяна предстает добродушным крестьянином, который готов на многое ради сына. Во взгляде и жестах актера чувствуется боль, а впоследствии - горечь утраты. “Нерсисян мастерски передавал смену настроений своего героя, его переживания, его отцовское горе”⁶, - пишет об этом К. Калантар.

Гикор, в исполнении А. Погосяна, правдив и убедителен. Юному актеру удалось создать на экране образ наивного, деревенского юноши, вынужденного батрачить на богатеев.

Роль Базаз-Артема исполняет А. Аветисян, который в 1935 году стал известен зрителю благодаря роли Зимзимова в фильме “Пепо” А. Бек – Назаова. Здесь же мимика актера, его поведение в кадре и, тем более, в общении с юношей, создают образ человека, готового на все ради денег и наживы. Выразительна и Асмик, которая создала в фильме образ матери.

Развитие действия в фильме идет по нарастающей. Потрясающий текст Ов. Туманяна и в этой части фильма получает выразительное звучание. Приехав в город, Гикор поступает прислуживать в дом Базазова. Но прежде, чем представить конфликт в этой части фильма, режиссер в реалистических тонах и красках воссоздает мещанскую

⁶ Калантар К., Очерки истории армянского кино, том первый, Ереван, Наири, 2004, стр. 103.

атмосферу этого дома. Сюда вписан и образ Нато (М. Джерпетян), жены Базаз-Артема, и разговор между супругами, во время которого Базазов подчеркивает, что юноша будет работать пять лет бесплатно, и нежелание купить вишню, так как она дорого стоит и т.д. В этой части фильма присутствуют крупные и средние планы (оператор Г. Бек-Назаров), а межкадровый монтаж еще больше сужает пространство, делая его замкнутым в этой условности. И только лишь во сне (сон использован здесь как внефабульный компонент), когда юноша видит родное село, оператор сочетает крупные и общие планы. Здесь много света и тепла, всего того, чего так не хватает юноше. Гикор противопоставлен своему окружению, - не только Базаз-Артему и его жене, но и работникам, которые смеются и издеваются над ним. Кульминация и развязка фильма – это болезнь и смерть Гикора. И его смерть – это вызов мещанству, стяжательству и личной наживе, которыми окутаны Базазов и ему подобные.

Фильм А. Мартиросяна являлся потрясающим примером реалистического киноискусства, что было свойственно армянскому кинематографу этого периода.

Представляя на экране небольшое произведение, режиссер сумел в его кадрах и сценах связать воедино поэтичность воспроизведения событий и прозу жизни - с ее драмой и трагическим финалом.

В конце нашей статьи мы приходим к следующему выводу: аргументацией поступков своих героев, а также использованием вещей и предметов в кадре, А. Мартиросян достигает логической взаимосвязи в сюжетном развитии, что ведет к правдивому и художественно-выразительному воспроизведению событий.

ԱՄՓՈՓՈՒՄ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԳԻՔՈՐ» ՊԱՏՄՎԱԾՔԻ
ԱՄԱՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԷԿՐԱՆԱՎՈՐՈՒՄԸ
(ԿԻՆՈԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՓԱՍՏԱՐԿՄԱՆ
ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ)
ԱՐՄԵՆ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՈՎ

Հոդվածը նվիրված է Ա. Մարտիրոսյանի «Գիքոր» (1934) ֆիլմին, որը նկարահանվել է Հ. Թումանյանի համանուն պատմվածքի հիման վրա: Ֆիլմի վերլուծությունը կատարվում է փաստարկման տեսության հիման վրա, ինչի պատճառով հիմնավորվում է ֆիլմի վերլուծության մեջ այդ տեսության անհրաժեշտությունը: Զուգահեռ է անցկացվում Հ. Թումանյանի պատմվածքի հետ: Ֆիլմի վերլուծության ժամանակ ընդգծվում է կապը սկզբնաղբյուրի հետ և հաջորդականությունը դեպքերի զարգացման մեջ: Խոսվում է նաև իմաստի կոնտեքստի, իր տեղի ու նշանակության մասին:

Բանալի բառեր. Հովհաննես Թումանյան, Գիքոր, Ամասի Մարտիրոսյան, փաստարկում, ֆիլմ, իմաստ:

ABSTRACT
ADAPTATION OF HOVHANNES TUMANYAN'S STORY
“GIQOR” BY AMASI MARTIROSYAN
(FILM ANALYSIS BASED ON ARGUMENTATION THEORY)
ARSEN AMBARDZUMOV

Our article is dedicated to A. Martirosyan's film “Giqor” (1934) shot on the basis of H. Tumanyan's homonymous piece of work. The analysis of the film is performed based on the argumentation theory in regard with which the implementation necessity of this theory in film analysis is justified. Parallel is drawn with H. Tumanyan's homonymous story as well. Upon film analysis

the connection to primary source and succession of occurrence is highlighted. The article also covers the notional context, its role and significance in the film.

Key words: Hovhannes Tumanyan, Gigor, Amasi Martirosyan, argumentation, film, significance.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆԻԿՈԼ ԳԱԼԱՆԴԵՐՅԱՆԻ ՈԳԵՇՆՉՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ

ԼԻԼԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ

*Բանաստեղծը միայն մարմին է
տալիս իր մտքերին ու զգացմունքներին
և իր ոգևորություններով կենդանության
շունչ է շնչում նրան, որ նա ապրի
մշտապես, բայց որ նա թռչի, դրա
համար նրան թներ են հարկավոր, իսկ
թներ առնել նա կարող է միմիայն էն
կախարդական աշխարհում, որ կոչվում
է երաժշտություն:*

Հովհաննես Թումանյան

Հայ երաժշտության պատմության մեջ բազմաթիվ են այն կոմպոզիտորները, ովքեր իրենց ստեղծագործական արվեստում անդրադարձել են Թումանյանի հանճարեղ կերտվածքներին: Մեծն բանաստեղծի պոեզիան երաժշտականացնելու և դրանով իսկ նրա ժողովրդականացմանը նպաստելու գործում իր համեստ ներդրումն ունի նաև իրանահայ կոմպոզիտոր, մանկավարժ և երաժշտական հասարակական գործիչ Նիկոլ Գալանդերյանը (1881-1944):

Իր երեսունամյա ստեղծագործական գործունեության ընթացքում կոմպոզիտորի երաժշտական ստեղծագործության նյութ են դարձել հայ պոեզիայի լավագույն էջերը: Նա երաժշտություն է գրել Ավետիք Իսահակյանի, Վահան Տերյանի, Եղիշե Չարենցի, Միսաք Մեծարենցի, Ռուբեն Սևակի, Վահան Թեքեյանի, Դևի, Արա Տեր-Հովհաննիսյանի, Շուշանիկ Կուրդիյանի և այլոց բանաստեղծությունների հիման վրա: Այս շարքում իր բացառիկ տեղն ունի Հովհաննես Թումանյանն իր ստեղծած գոհարներով:

1911 թվականի մայիսի 11-ին կոմպոզիտորը հորինում է իր առաջն երգը՝ Ավ.Իսահակյանի «Ա իս, աչերդ արև ու մութ» ոտանավորի հիմանը վրա, եզր դառնում է նրա հավատարիմ ուղեկիցը: «Նա ամեն տեղ, ամեն ժամ ու վայրկեան երգ էր զգում ու լսում. երգը նրա հոգին էր, նրա ոգևորութեան աղբիւրն ու կորով ներշնչողը...»¹:

Հետագա 30-ամյա գործունեության ընթացքում Գալանդերյանը հետևողականորեն իրականացնելու էր իր վեհ նպատակը՝ ժողովրդականացնել հայկական պոեզիայի լավագույն էջերը: Կոմպոզիտորը երգեր ու ռոմանսներ է հորինել թե՛ արևմտահայ և թե՛ արևելահայ 105 բանաստեղծների 519 քերթվածների հիման վրա՝ նախապատվությունը տալով Ավետիք Իսահակյանին (49) և Վահան Տերյանին (40): Նրա երգերում հնչում են Շուշանիկ Կուրդիյանի (9) բանաստեղծությունները, Եղիշե Չարենցի քնարը (4): Առանձնահատուկ տեղ են գրավում իրանահայ բանաստեղծ ու նկարիչ Մարգար Ղարաբեգյանի (Դև) ոտանավորները (12): Հատուկ էջեր է հատկացրել երգահանը Միսաք Մեծարենցի, Ռուբեն Զարդարյանի, Ռուբեն

¹ Երեմեան Արամ, Երգահան Նիկոլ Գալանդերեան, Թեհրան, 1947, էջ 52:

Սևակի, Վահան Թեքեյանի, Դերենիկ Դեմիրճյանի, Ղազարոս Աղայանի (մանկական) և այլոց բանաստեղծություններին²:

Ն. Գալանդեթյանի երգերում հնչում են նաև Հովհաննես Թումանյանի քնարական մոտիվները: Նրա ստեղծագործությունները հիմք են հանդիսացել կոմպոզիտորի ոչ միայն երգերի, այլև խոշոր կտավի ստեղծագործությունների համար: Ընդհանուր առմամբ, ըստ Թումանյանի կոմպոզիտորը գրել է տասնինը ստեղծագործություն: Այդ թվում՝ 1 օպերա, 5 մանկական օպերա (պահպանվել են միայն չորսը³), որոնք հանդիսանում են Գալանդեթյանի ստեղծագործական ժառանգության զարդը, «Նախերգանք Անուշի» խմբերգը, 13 տարբեր բնույթի երգեր (սիրերգեր, հայրենասիրական երգեր, մանկական երգեր, խմբերգեր): Դրանք են՝ «Ժպտուն աչքեր» (օր. 162), Իմ սերը (օր. 196), «Բազմած լուսնի» (օր. 669), «Էյ աստղեր» (օր. 8), «Հարի, հարի, խնոցի» (օր. 369), «Ուլունք» (օր. 374), «Ծիտի օրորքը» (օր. 368)⁴, «Կաքավի ողբը» (օր. 21), «Անիծած հարսը» (օր. 195), «Ափսոս Անուշ» (օր. 88), «Մեր ճամբեն» (նշված չէ), «Կանցնեն օրերն, Անուշ ջան», «Նախերգանք Անուշի» (օր. 669):

1927 թվականին, ոգևորված իր առաջին՝ «Լավարի որսը», օպերայի հաջողությամբ, կոմպոզիտորը գրում է իր

² Տե՛ս **Ասատրյան Աննա**, Նիկոլ Գալանդեթյան, Նշանավոր ձեմարանականներ, պրակ Բ., Ս.Էջմիածին, 2009, էջ 71:

³ Նիկոլ Գալանդեթյանի «Մանկական ստեղծագործություններ» վերնագրով Ե հատորում նշված է, որ նա գրել է 8 մանկական օպերա, սակայն նրա կենսագիրը խոսում է նաև «Երեք արջեր» մանկական օպերայի մասին, որը գրված է ըստ Թումանյանի թարգմանության:

⁴ Նիկոլ Գալանդեթյանի «Մանկական ստեղծագործություններ» վերնագրով Ե հատորում խոսքերի հեղինակը նշված է որպես անհայտ:

երկրորդ՝ «Փարվանա» օպերան: Օպերայի հիմքում ընկած է Հովհաննես Թումանյանի պոեզիայի մարգարիտներից մեկը՝ «Փարվանա» բալլադը, որտեղ պոետն օգտագործելով հեքիաթային սյուժե, վեր է հանում կատարելության հասնելու մարդու հավերժ ձգտումը, ինքնամոռաց սիրո գաղափարը: Այստեղ, ինչպես իր մյուս երկու օպերաներում, ստեղծագործության գործողությունը կենտրոնացած է առավելապես գլխավոր հերոսների հույզերի, ապրումների, քան բուն կոնֆլիկտի բացահայտման վրա:

Կոմպոզիտորն իր օպերան մեծ բանաստեղծի օրինակով անվանել է «Լեզենդա»: Ակունքը ժողովրդական է: Թումանյանն առաջին անգամ լսել է Ներսիսյան դպրոցի իր նախկին դասընկեր, հետագայում մանկավարժ և լեզվաբան Գրիգոր Վանցյանից: Ընկերոջ պատմածը լսելուց հետո Թումանյանն այցելել է Փարվանա լիճը, նրա մոտակա գյուղերը և այստեղ, հավանորեն, նույն ավանդությունը լսել նաև ուրիշներից: Գրել է 1902-ին Աբասումանում:

Տարիներ հետո՝ 1931-1932 թվականներին, Գալանդերյանը ստեղծում է իր «Փարվանա» օպերան երկու գործողությամբ՝ բալետային տեսարաններով: Կոմպոզիտորի կենսագիր Արամ Երեմյանը գրում է. «Լիբրետոն կազմելիս նա հիմնականում փոփոխության է ենթարկում աւանդության էական կառուցվածքը: Բեմադրությունը կազմելիս մտնում է պատմության խորքերը՝ նախաքրիստոնեական շրջանը և պատկերում հեթանոսական դարաշրջանում ապրող հայ ժողովրդի կենցաղը՝ մասնավորապես նաւասարդեան տոները: Նշենք և այն, որ երաժշտությունը մշակում է գլխաւորապես խառն մեծ երգչախմբի (13 կտոր) և սիմֆոնիկ նւագախմբի (14 կտոր)

համար»⁵: Ցավոք, կոմպոզիտորի արխիվում, որը պահվում է Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, չկա օպերայի պարտիտուրը՝ գրված սիմֆոնիկ նվագախմբի, երգչախմբի և մենակատարների համար: Չկա նաև հեղինակի նշած 1934 թվականի ամբողջական խմբագրությունը: Պահպանվել է միայն «Փարվանա» երաժշտական լեգենդի սևագիր կլավիրի երկու տարբերակը, որոնք երկուսն էլ թվագրված են 1927թ.:

Որպես օպերային ներկայացում օպերան երբեք չի բեմադրվել: Ինչպես կոմպոզիտորն է նշում իր ինքնակենսագրության մեջ, դա կապված է եղել մեծ ծախսերի հետ և բացի այդ, եղել են բազմաթիվ արգելադրություններ: Սակայն եղել են համերգային կատարումներ:

Ինչպես հայտնի է՝ Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմը գրավել է կոմպոզիտորներից շատերին, այդ թվում՝ Նիկոլ Գալանդերյանին: Նա նախաձեռնել էր ստեղծել խոշոր կտավի վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործություն, բայց, ցավոք, ավարտել է միայն կլավիրը՝ սիմֆոնիկ նվագախմբի գործիքների մասին որոշ նշումներով⁶: Այն վերնագրված է «Նախերգանք Անուշի», քանի որ ստեղծագործության մեջ օգտագործված է պոեմի նախերգանքի տեքստը: Այս բավական ծավալուն խմբերգը, որը հնչում է դաշնամուրի նվագակցությամբ, ոչ մի կապ չունի նախերգանք (ouverture) ժանրի հետ, և որպեսզի շփոթմունք տեղի չունենա, այն հրատարակվել է «Անուշ» (օր. 669) վերնագրով: Խմբերգի

⁵ **Երեմեան Արամ**, Երգահան Նիկոլ Գալանդերեան, Թեհրան, 1947, էջ 18:

⁶ Ստեղծագործության վերջնական տարբերակը տպագրվել է Գալանդերյանի «Զուգերգեր և անսամբլներ» վերնագրով Հ հատորում, որտեղ դաշնամուրի նվագակցությունից բացի կա նաև թավջութակի ձայնաբաժին: Այն նույնպես վերնագրված է «Նախերգանք Անուշի» (օր. 724):

առանձին հատվածները, որպես ինքնուրույն խմբերգ կամ մեներգ, տպագրվել են Գալանդերյանի ստեղծագործություններն ընդգրկող տարբեր հատորներում («Բազմած լուսնի», «Ափսոս Անո՛ւշ»): Այս խմբերգը մեծ ճանաչում գտավ և հատկանշական եղավ այն, որ կոմպոզիտորին գերեզման իջեցրին Գալանդերյան երգչախմբի կատարմամբ հնչող հենց այս քառաձայն խմբերգի ուղեկցությամբ՝ «Վու 2, վու 2, Անու 2»...

«Նիկոլ Գալանդերեանի արխիւում պահպանող ստեղծագործութիւնները սևագրեր են և ոչ բոլորն են լիարժէք նոտագրւած: Խմբերգերի երաժշտական տեքստերը վերծանւել են՝ հաշւի առնելով բոլոր ոճական առանձնայատկութիւնները, առաւելագոյնս հարազատ մնալով հեղինակային ոճին: Անտեղի խաչաձևումներից ազատւելու, ձայնաձաւալային ամենաբարենպաստ պայմանը գտնելու նպատակով ճշտւել են առանձին ձայնային խմբերի պարտիաները: Խմբերգերի կատարման տեմպը նշած է ոչ բոլոր դէպքերում, հազւադէպ են նաև դինամիկ նշանները: Խմբերգերը տպագրութեան պատրաստելիս այս հարցում ցուցաբերւել է խիստ պահպանողականութիւն՝ ապագա կատարողներին սուբյեկտիւ մօտեցումներ չպարտադրելու նպատակով»⁷:

Նրանք, ովքեր ծանոթ են երաժշտական արվեստի էությանը, վստահաբար կհավաստեն, որ մանուկների համար ստեղծագործելն ամենաբարդ ու պատասխանատու գործերից է, և ամեն մեկը չէ, որ պատրաստ է ստանձնել այդ պատասխանատվությունը: Սա շատ կարևոր և մանրակրկիտ աշխատանք է, քանզի գործ ունենք երեխաների նուրբ, դեռևս չձևավորված երգչային

⁷ Գալանդերյան, Խմբերգեր, հատոր Դ, Երևան, 2001, էջ 6:

ապարատի հետ, և ցանկացած սխալ կարող է մեծ վնաս հասցնել նրանց: Այս առումով կոմպոզիտորը հիանալի է լուծել իր առջև դրված խնդիրը: Երկար տարիների դասավանդումը, շփումը երեխաների հետ և նրանց բնությանը ծանոթ լինելը թույլ է տալիս նրան ճիշտ ճանապարհով գնալ: Հայտնի հեքիաթներից վերցված հետաքրքրաշարժ պլոթների, գործող անձանց սահմանափակ թվի, մանուկների կատարման համար նախատեսված վոկալ դերերգերի պարզության և հստակության շնորհիվ մանկական օպերաները մանկապարտեզների և դպրոցների հայ մանուկների ուժերով բազմիցս բեմադրվել են Թեհրանում, մեծ հաջողություն ունեցել և հրճվանք պատճառել փոքրիկ հանդիսատեսին: Կոմպոզիտորի դուստրը՝ կոմպոզիտոր Սեզալն իր հուշերում գրում է. «Հայրս Հայկազեան դպրոցում ուսուցիչ էր: Նա Տարեվերջի հանդեսի համար ձայնագրել էր ու պատրաստել «Ծաղիկների համերգը» մանկական օպերետը: Յիշում եմ, փոքր երեխաները ծաղիկների հագուստներով բեմի վրայ, իսկ արևը բեմի յետևում աթոռի վրայ կանգնած աւելի բարձր դիրքով, և դեմքը բեմից արևի դեքորի միջից հանել էր և երգում էր: Իսկ ծաղիկները բեմի վրայ իբր թե քնած, կամաց-կամաց արթնանում էին և վերջում միասին երգում: Ինձ համար դա մի հրաշալի և անմոռանալի յիշողութիւն է»⁸:

Գալանդերյանն ըստ Թումանյանի ստեղծագործությունների և թարգմանությունների գրել է 5 մանկական օպերա, ոչ թե 4-ը (ինչպես նշվում է Նիկոլ Գալանդերյանի «Մանկական ստեղծագործություններ» վերնագրով ե հատորում): Դրանք են՝ «Ծաղիկների երգը», «Չարի վերջը» (օր. 13), «Պողոս-Պետրոս» (օր. 387), «Ուլիկը» (օր. 612) և

⁸ ՄԵԳԱԼ (Սեդա Գալանդերեան), Յուշեր, Թեհրան, 2002, էջ 17:

«Երեք արջերը»: Վերջինս գրված է անգլիացի բանաստեղծ Ռոբերտ Սաութիի ստեղծագործության հիման վրա: Ռուսերենում մեծ տարածում է ստացել Լև Տոլստոյի վերապատմումը, որից էլ հայերեն թարգմանել է Հովհաննես Թումանյանը: Պահպանվել են միայն երեքը՝ «Չարի վերջը», «Պողոս-Պետրոսը» և «Ուլիկը»:

Ստեղծելով երաժշտական-դրամատիկական այս փոքրածավալ երկերը, որոնք կոմպոզիտորն անվանում էր «մանկական օպերաներ» Գալանդերյանը նպատակ էր դրել երաժշտական մարմնավորում տալ մանուկների կողմից սիրված գրական ստեղծագործություններին: Հետևաբար, չի կարելի այս օպերաները վերլուծել դասական օպերային առաջադրվող պահանջների դիտանկյունից: Մեզ հասած բնագրերում, ցավոք, նոտագրված են միայն վոկալ դերերգերը՝ առանց նվագակցության:

Գալանդերյանի մանկական օպերաներն իրենց տևողությամբ կարճ են: Սա, կարծում ենք, կանխավ մտածված է կոմպոզիտորի կողմից՝ երեխաների երգչային ապարատի համար մեծ ծանրաբեռնվածություն չառաջացնելու նպատակով: Նախերգանք, որպես այդպիսին, օպերաները չունեն, միանգամից սկսվում է գործողությունը, բայց քանի որ պատմողական հատվածներ կան, դրանք հանձնարարվում են երեխաների խմբին, որը տվյալ դեպքում երգչախմբի դեր է կատարում: Սա նաև հիանալի հնարավորություն է նրանց անսամբլային կարողություններն ու հմտությունները զարգացնելու համար: Գործող անձինք սակավաթիվ են, ինչը հեշտացնում է այն բեմադրելու խնդիրը: Բացի այդ, կոմպոզիտորը նրբանկատորեն է մոտենում երեխաների ձայնածավալին վերաբերող խնդիրներին: Բացակայում են բարդ ինտերվալային թռիչքները, դերերգերը ստեղծված են յուրահատուկ պարզությամբ և

հատկությամբ, ինչը մատչելի է դարձնում դրանց յուրացումը երեխաների կողմից:

Ցավոք, Նիկոլ Գալանդերյանի այս արժեքավոր ստեղծագործությունները այսօր մոռացության են մատնված: Ժամանակ առ ժամանակ հնչում են միայն որոշ երգեր՝ տարբեր մեկնաբանություններով, որոնք հաճախ հեռու են բնագրից:

Ամփոփելով մեր անդրադարձը Գալանդերյանի ստեղծագործություններին, որոնք գրված են Թումանյանի ստեղծագործությունների հիման վրա, կարծում ենք, որ նշված բոլոր ստեղծագործությունները իրավունք ունեն երկրորդ կյանք ստանալու և իրենց հատուկ տեղը գրավելու հայ երաժշտական աշխարհի բազմերանգ գունապնակում:

РЕЗЮМЕ

ТВОРЧЕСТВО ОВАНЕСА ТУМАНЯНА КАК ИСТОЧНИК ВДОХНОВЕНИЯ КОМПОЗИТОРА НИКОЛА

ГАЛАНДЕРЯНА

ЛИЛИТ АКОПЯН

В статье говорится о 19 произведениях иранского композитора армянского происхождения, педагога, музыкального и общественного деятеля Никола Галантерьяна (1881-1944), в основу которых легли произведения Ованеса Туманяна. В частности, обсуждаются произведения крупной формы – опера “Парвана”, детские оперы, хоровое произведение “Увертюра к Ануш”.

Ключевые слова: Никол Галантерян, Ованес Туманян, опера “Парвана”, “Увертюра к Ануш”, детские оперы.

ABSTRACT
THE WORK OF HOVHANNES TUMANYAN AS A SOURCE
OF INSPIRATION FOR COMPOSER NIKOL
GALANDERYAN
LILIT HAKOBYAN

The article considers 19 compositions by the Iranian composer of Armenian origin, teacher, musician and public figure Nikol Galanteryan (1881-1944). These compositions are based on poet Hovhannes Tumanyan's works. In particular, the article discusses the monumental works, such as the opera "Parvana", children's operas, choral work and "Overture to Anush."

Key words: Nikol Galanteryan, Hovhannes Tumanyan, opera "Parvana", "Overture to Anush", children's operas.

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՍԵՄԱԿՈՒԹԱՅԻՆ
ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**HOVHANNES TUMANYAN AND ADAM MICKIEWICZ -
PROPHETS OF NATIONS FREE IN SPIRIT**

KRZYSZTOF WESOŁOWSKI

A foreigner, when he becomes familiar with the biography and work of Hovhannes Tumanyan (1869-1923) and the reception of his works among Armenians, asks himself which of the poets of his nation could be compared to this great Armenian creator. The first association that comes to mind for a Pole is Adam Mickiewicz. Although he lived in a different era (1798-1855), just like Hovhannes Tumanyan for Armenians, Mickiewicz for Poles is not only a great poet, but above all a bard, a prophet of better times¹. He is not only a prophet for Poles, but also for Lithuanians, Belarusians and other nations, which until 1795, the year of the so-called third partition of Poland, together with Poles formed one of the largest European countries - Crown of the Kingdom of Poland

¹ In the Polish language Mickiewicz is referred to as "wieszcz". Basically, it is untranslatable into other languages. The term "bard" used in this essay does not fully reflect the essence of the matter. The specificity of the term "wieszcz" results from the position of the poet in the 19th century, when the Polish nation was deprived of its statehood and politically completely subordinated to the occupants. The only sphere which to some extent was beyond the control of the occupant was art, which became the last bastion of freedom for Poles, a source of consolation and hope for regaining the beloved homeland. It seems that such a meaning can also be attributed to Tumanyan in Armenian culture.

and the Grand Duchy of Lithuania. Although Mickiewicz wrote his works in Polish, he was born and raised in Lithuania. That is why his greatest poem "Pan Tadeusz" (full title in English: "Sir Thaddeus, or the Last Lithuanian Foray: A Nobleman's Tale from the Years of 1811 and 1812 in Twelve Books of Verse"), written in 1834, when he emigrated to Paris, began with the words of the invocation "Lithuania, my motherland!

You are like health;
How much you must be valued, will only discover
The one who has lost you".

Armenia and Poland have had many talented poets and writers, both before and after Tumanyan and Mickiewicz, who are also known abroad. The works of some of them are more sophisticated and perhaps even intellectually more interesting. However, the indication of the greatest one for almost every Armenian and every Pole is beyond doubt. Tumanyan is "the poet of all Armenians", "pan-Armenian poet", "the heart of his nation." Similarly with Mickiewicz - the specific combination of religion, romantic patriotism and social radicalism causes that he is referred to by people with different, sometimes extreme views.

This raises the question why Tumanyan and Mickiewicz are considered the greatest bards in the opinion of their compatriots. The attempt to answer this question is the subject of this essay. It seems that this can be achieved by indicating common points of reference for Tumanyan and Mickiewicz concerning the circumstances of their lives, as well as their works.

The first thing that both bards have in common is that they both lived and worked at times when their nations were not independent. They witnessed wars, uprisings and revolutions, acts of terror and, in the case of Tumanyan, acts of genocide against the Armenian people. During Tumanian's lifetime, Armenian territory

was divided between Russia and Turkey. The Armenians were particularly painfully affected by the regime of the Ottoman Empire. They suffered massacres and murders there. These events, which were genocidal in nature, could have caused the death of approximately 2 millions of victims. Although Tumanyan lived to see the restoration of the Armenian state, it was not peacetime for the Armenian people.

In turn, the Polish state lost its independence 3 years before Adam Mickiewicz was born, as a result of the so-called third partition of Poland by Russia, Prussia and Austria (1795). The Lithuanian lands where the Polish poet was born and lived in the first period of his life were under Russian rule. The persecution of Poles took on particularly drastic forms here.

Both Tumanyan and Mickiewicz spent a significant part of their lives abroad, outside their native lands. Tumanyan, who was born and raised in Dsegh, one of the villages of the Lori region, a beautiful mountainous land in northern Armenia, lived almost all his life (from 1883) away from Lori in the city of Tiflis.

In turn, Mickiewicz was arrested during his studies at Vilnius University and then sent into the depths of Russia for his patriotic activity (1823). He never returned to the land of his childhood and youth. In 1824-1827 he stayed in Russia (Petersburg, Odessa, Moscow, Crimea), then travelled to Western Europe (Germany, Italy, Switzerland) and finally (1832) settled in Paris, where he spent over 20 years of his life (with a break in 1839 for a stay in Lausanne, where he taught Latin literature, and in Rome in 1848, where he created the Polish Legion in the service of the fighting Lombardy). The longing for the lost land of childhood and youth is expressed in many works by both poets.

Both also died quite unexpectedly, at a similar age, far from their homes - Hovhannes Tumanyan in Moscow and Adam

Mickiewicz in Constantinople, where he tried to form Polish Legions to fight against Russia after the accession of France to the Crimean War.

This death "on the run" resulted from a different characteristic of both bards - their social and political involvement. Both were actively reacting to events in their communities. They did not limit themselves to desk work, typical of artists. Hovhannes Tumanyan was primarily interested in good relations between the peoples of the Caucasus - Armenians, Georgians and Azerbaijanis. He called for friendship and a peaceful life. In 1899, Tumanyan founded the first Armenian writers' association, known as "Vernatun", and then the Caucasian Society, which was guided by Tumanyan's motto "To serve the purposes of literature and education - the brotherhood of nations, eternal love between nations, life in peace and honest work". Despite the cruelty suffered by the Armenian people in the late nineteenth and early twentieth centuries, he did not call for battle or retaliation. He not only made pacifist appeals, but at the risk of his life he visited regions where massacres and pogroms took place. During the First World War he carried out humanitarian missions, dealing with the problem of resettlement of thousands of refugees and orphans. He pointed out that the principles of reason and justice should be the means of resolving conflicts between nations. He also referred to these principles in 1918 during the Armenian-Georgian clashes and in 1921 during the time of the Sovietization of Armenia. In 1921, Tumanyan went to Constantinople with a humanitarian mission to help Armenian refugees. He overpaid for this expedition with his health.

Adam Mickiewicz, on the other hand, was engaged in independence activities already during his studies at the University of Vilnius. He was one of the founders and an active member of the

secret patriotic Society of Philomaths, for which he was arrested and imprisoned in Vilnius (1823-1824), and then sentenced to exile to the depths of Russia for the position of a teacher with the right to choose his place of residence. He continued his political activity at a mature age during his emigration to Paris. He founded the magazine "La Tribune des Peuples", which propagated the ideas of the Spring of Nations. He was also involved in the activities of an organization created by the Polish philosopher and religious leader Andrzej Towiański and propagating the ideas he proclaimed. They combined mysticism with specific political postulates, referring directly to the situation in Europe. They expressed their conviction that a period of suffering and chaos would be followed by a Great Transformation, based on the Savior's repeated coming, and that it would bring Christian principles into social and political life. Towianism proclaimed the need to imitate Christ, to see one's fellow man even in a political enemy. The last mission of the Polish poet was an attempt to form Polish Legions to fight Russia after France joined the Crimean War. To this end, he went to Istanbul in 1855, where he unexpectedly died.

Many common features can also be found in the works of both bards. They both left a huge and varied literary legacy, including both poetry and prose (in various forms), such as dramas, poems, ballads, lectures, critical writings, journalism and correspondence. Some of the works have not been completed.

The work of both bards has had a huge impact on the lives of Armenian and Polish nations. It forms national consciousness, literature and art. It is a permanent element of literary and patriotic education. It influences language and imagination and is reflected in colloquial speech. This influence has not only a purely intellectual or emotional dimension. It shapes social behaviours in a real way. A clear example of this is the performance of

Mickiewicz's "Dziady" ("Forefathers' Eve") at the National Theatre in Warsaw in 1967. The communist authorities, worried about its social reception and anti-Soviet character, banned further performances. This decision initiated the events of March 1968 - one of the a few social protests that led two decades later to political changes in Poland and other countries of Central and Eastern Europe.

At first glance, it may seem risky to compare the work of Hovhannes Tumanyan and Adam Mickiewicz. Both of them lived in different epochs. Mickiewicz's life comes at a time when the literary epoch called Romanticism flourishes in Poland. In Tumanyan's works, in turn, elements of realism dominate. On the other hand, such a contraposition of these two trends in relation to individual authors is often purely academic in character. In fact, in the works of both of these poets one can see both romantic and realistic motifs.

No wonder. Both artists were perfectly familiar with world literature of various literary trends - they knew it, translated it into their native languages and creatively paraphrased it. Tumanyan, although he was essentially self-taught, he knew the work of Shakespeare, as well as prose and poetry of such writers as Schiller, Goethe, Byron, Pushkin and Lermontov. He translated them into Armenian. He also translated other authors (including Turgenev, Gorky, Blok, Heine). It was similar with Mickiewicz. He translated and paraphrased works by many European artists belonging to various literary movements (Voltaire, Schiller, de La Fontaine, Byron, Goethe, Moore, Dante Alighieri, Shakespeare).

During his stay in Moscow, he made friends with Pushkin, then he polemicised with him about the November Uprising of 1830, which erupted in Poland against Russian bondage. Realistic motifs are clearly visible in Mickiewicz's best-known work, "Pan

Tadeusz", published in 1834. In this poem, the poet presented in a realistic way the colourful world of the Polish-Lithuanian nobility, which was already passing into history. It was meant to comfort Poles in exile after the fall of the November Uprising and to maintain hope for a better future.

Both Tumanyan and Mickiewicz wrote in simple language, understandable to everyone. The readers of their works are people of all ages - from children (fairy tales) to the elderly. However, we must admit that the clarity of expression characteristic of the whole of Tumanyan's work, in Mickiewicz's case, is subject to a certain breakdown over time and the poet's experiences. His later works, with their mystical nature and a multitude of references to events from the real world as well as to culture in general, make his literature more difficult to perceive.

Both artists referred extensively to the folklore of their nations. They used folk themes and motifs in an artistic way, introducing them into literature. However, they did this by transforming them in their own original way, creating new, separate works of art. The heroes of the works of both artists are ordinary people, inhabitants of Armenian and Polish (Lithuanian) villages. Both showed the wisdom of their nations, the depth and richness of their feelings. The fate of the heroes created by both poets is often tragic. They evoke empathy in the reader, make him find the truth and beauty of human fate.

An example of this trend in Tumanian's work is the poems "David of Sasun", based on several versions of the Armenian epic, "The Capture of the Fort Thmuk" - a poem based on a folk legend, in which the poet shows the way from excessive ambition to betrayal, or the story "Nazar the Brave" in which Tumanian used about 20 versions of the same story. The legend was also the basis for the ballad „Parvana”, expressing the idea of eternal human

aspiration for perfection, or „A Drop of honey”, a legend based on the medieval Armenian fairy tale. Examples can be multiplied.

It is similar in the works of Adam Mickiewicz. Already in his first volume of Poetry, published in 1822, he formulated a new programme of literature based on folk beliefs and ideas, the world of feelings, sensitivity to nature and the presence of supernatural forces, and the affirmation of simple folk moral principles. In this poetry, forms characteristic of folk art were used (particular attention should be paid to "Romanticism", "Świtez", "Świtezianka", "Parys"). The folk motif can also be seen in the series of dramas "Dziady". In parts II and IV of this drama, the poet refers to the pagan ritual of evoking the spirits of the dead. It presents folk faith in the unity of the visible and invisible world and the possibility of their mutual influence. In part IV of "Dziady", we also find one of the versions of the romantic hero - the unhappy lover (Gustaw). The folk legends are also referred to in "Grażyna. Lithuanian Novel". It is an epic story about a Lithuanian princess who, dressed as a man, leads the fight against the Teutonic Order. This work creates a romantic concept of patriotism and homeland as a local community. The continuation of this trend is "Konrad Wallenrod. A historical novel from Lithuanian and Prussian history". It is a story set in the 14th century about the Grand Master of the Teutonic Order who, after discovering his Lithuanian roots, guided by patriotic motives, leads to the failure of the Order. This leads to a conflict with the rules of knight's honour (a metaphor for the moral conflict experienced by the participants of patriotic conspiracies at that time).

The literature of Hovhannes Tumanyan and Adam Mickiewicz marked the direction of modern patriotism. The motif of love for the homeland is characteristic of many works by both authors. Only by way of an example we can mention "In the

Armenian mountains", "Armenian Grief" and "With my Motherland" by Tumanyan. Particularly noteworthy is "Armenian Grief" in which the suffering of the Armenian nation was compared to the endless sea. The poet wholeheartedly feels grief for the fate of his nation.

Care for the fate of the nation is also evident in Mickiewicz's works, especially those written after the fall of the November Uprising (1930-1931). At that time, the following works were created, among others, "Reduta Ordona" ("Ordon's Redoubt"), "Nocleg" ("Night Bivouac") and "Śmierć pułkownika" ("Death of the Colonel"). In the third part of "Dziady", the unhappy lover Gustaw transforms himself into Konrad - a patriot and rebel - who, for the good of his homeland, is ready to argue with God. The longing for a lost homeland is evident in Mickiewicz's last great work, "Pan Tadeusz". Messianic motifs, already present in the third part of "Dziady", Mickiewicz developed in the work "Księga narodu i pielgrzymstwa polskiego" ("The Book of the Polish Nation and Pilgrimage") (1832). Using religious arguments to justify a progressive social programme (e.g. enfranchisement of peasants, universal civil rights, including those of women and Jews), the poet formulated here a belief in the special leadership role of Poland in the struggle of peoples against tyranny. He pointed out its particular religious and political obligations in the history of humanity (Poland as the "Christ of nations").

As the years go by, the affirmation of life gives way to a reflection on time, eternity and passing. Both poets dealt with the problems of life and death, looked for the purpose of human life, showed the relationship between man and nature. Sometimes despair can be heard. It was also then that the philosophical views of both bards crystallized.

In Tumanyan's work we find this current of reflection in the poem "The Infinity" and in quatrains written in the last years of Tumanyan's life. They include personal and artistic experience. He built a philosophical system, putting the affirmation of nature and man in the first place. In art, Tumanyan saw a force that helps people to reach perfection and leads them towards a high sense of altruism and fraternity.

As far as the mature period of Mickiewicz's legacy is concerned, it is worth mentioning the so-called Lausanne poems written in the years 1839-40 - a series of short and concise poems indicating the poet's extremely strong sense of unity with nature, containing a reflection on time, eternity and passing. Referring to the words of another great Polish poet Czesław Miłosz, they are "untranslatable masterpieces of metaphysical meditation". Noteworthy are also the later texts of the poet's life and lectures from the Collège de France, published on the basis of listeners' notes as "Cours de la littérature slave". (1849). In these texts he presented his own vision of philosophical and religious life, not only of Poles, but of all Slavs. In contrast to Western European peoples dominated by narrow rationalism, they preserve, according to the poet, "living truths" and are capable of leading humanity to a moral rebirth. These ideas were important for the formation of national consciousness in the countries of Central and Eastern Europe, deprived of their own statehood.

Coming back to the question formulated at the beginning of this essay, one can say that the phenomenon of the national bard is a result not only of the great talent, the acquired knowledge, but also of the specific period of the life of the creator, which is difficult for his nation as a rule, and of his total identification with the fate of this nation, confirmed not only by his creation, but also by his own life.

Bibliography

Krzyżanowski J. „Romantyzm Polski” [in :] „Dzieje Literatury Polskiej”, Warszawa 1972.

"Literatura polska. Przewodnik encyklopedyczny", Warszawa 1984 (collective work).

Miłosz Cz. “The History of Polish Literature”. University of California Press., 1983.

Pigoń S.: „Wstęp” [in:] Adam Mickiewicz: „Pan Tadeusz” Wrocław, 1980.

Szymański A. „Wstęp” [in:] „Poezja armeńska Antologia” , Łódź, 1984.

Ważyk A. : „Cudowny kantorek”, Warszawa, 1979.

Witkowska A. , R. Przybylski R., "Romantyzm", Warszawa, 1997.

Witkowska A., „Romantyzm”, Warszawa, 2003.

[Wyka K.](#), "Mickiewicz, Adam Bernard" [in:] „[Polski Słownik Biograficzny](#)”, vol. XX, Warszawa, 1975.

Websites

<https://en.unesco.org/courier/2019-1/hovhannes-tumanyan-passion-storytelling>

<https://culture.pl/pl/tworca/adam-mickiewicz>

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԵՎ ԱՂԱՍ ՄԻՑԿԵՎԻՉ. ՈԳՈՎ
ԱԶԱՏ ԱԶԳԵՐԻ ՄԱՐԳԱՐԵՆԵՐԸ
ՔՐԻՍՏՈՖ ՎԵՍՈՂՈՎՍԿԻ

Սույն հոդվածում ընդգծվում է Թումանյանի և Միցկևիչի միջև եղած տեսական և գեղագիտական կապերը՝ օգտագործելով համեմատության մեթոդը:

Զուգադրվում է երկու գրողների կյանքն ու ստեղծագործությունը, հանգելով այն գաղափարին, որ ոչ միայն մեծ տաղանդը և ձեռք բերված գիտելիքները, այլև ազգի որոշակի և հատկապես դժվար ժամանակաշրջանն է, որ ծնում է ազգային բանաստեղծ երևույթը:

Թումանյանը և Միգկևիչը անգնահատելի են Հայաստանի և Լեհաստանի պատմության և գրականության համար, ոչ միայն իրենց գրական, այլև հայրենասիրական, սոցիալական և մարդասիրական գործունեության շնորհիվ:

Բանալի բաներ. Թումանյան, Միգկևիչ, հայրենիք, կարոտ, բանաստեղծ, պարզ լեզու, ֆոլկլոր;

РЕЗЮМЕ

ОВАННЕС ТУМАНЯН И АДАМ МИЦКЕВИЧ - ПРОРОКИ СВОБОДНЫХ В ДУХЕ НАРОДОВ КРИСТОФ ВЕСОЛОВСКИЙ

Автор статьи подчеркивает теоретические и эстетические связи, которые существовали между Туманяном и Мицкевичем, используя метод сравнения. Он противопоставляет жизнь и творчество обоих писателей, что приводит к тому, что не только великий талант и приобретенные знания, но также определенный и особенно тяжелый период нации пробуждает феномена национального поэта.

Туманян и Мицкевич бесценны в истории и литературе Армении и Польши не только благодаря своей литературной, но и патриотической, социальной и гуманитарной деятельности.

Ключевые слова: Туманян, Мицкевич, родина, тоска, поэт, простой язык, фольклор.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՎՐԱՍՏԱՆԸ

ԼԵՎԱՆ ՑԱԼՈՒՂԵԼԱՇՎԻԼԻ

Անգնահատելի է գեղարվեստական խոսքի մեծ վարպետ և հասարակական գործիչ Հովհաննես Թումանյանի ահռելի վաստակը հայ պոեզիայի և արձակի զարգացման գործում: Նրա բազմաթիվ ստեղծագործությունները հայ գրականության գլուխգործոցն են համարվում: Անչափ նշանակալից է նրա դերը մայրենի գրականության պատմության մեջ, ինչպես նաև սեփական ժողովրդի հոգևոր կյանքում:

«Արվեստը պետք է լինի հասկանալի ու թափանցիկ, ինչպես աչքը, միևնույն ժամանակ բարդ, ինչպես աչքը», - ասում էր Մեծն Լոռեցին և, իրոք, նրա ասածը, թումանյանական պատմածը բնական է, կենդանի և պատկերավոր: Վրաց հայտնի բանաստեղծ Իոսեբ Գրիշաշվիլիի գնահատմամբ. «Նրա լեզուն փափուկ է, ինչպես թավիշը, և ջլուտ, ինչպես մարմարը...»: Հովհ. Թումանյանին դեռևս կենդանության օրոք կոչում էին «Ամենայն Հայոց բանաստեղծ»: Հատկապես նրա ազնվաբարո լինելը և վրաց գրողների ու բանաստեղծների հետ տպավորիչ և մեծ ընկերությունն ու բարեկամությունը հնարավոր դարձրին նրա բազմաթիվ ստեղծագործություններ վրացերեն թարգմանելու համար: Իսկ նրա մի շարք գործերի հիման վրա Վրաստանում դաստիարակվում և հասակ էին առնում սերունդներ, նրանցից մեկը է՛ս էմ: Դեռևս մանուկ հասակից է գալիս «Գիքորի» նկատմամբ իմ վերաբերմունքը և Հովհ. Թումանյանի նկատմամբ իմ հարգանքը:

Հովհ. Թումանյանը ծնվել է 1869 թ. փետրվարի 19-ին, Հայաստանի հյուսիսում գտնվող Լոռվա մարզի Դսեղ գյուղում, քահանայի ընտանիքում: Հայրը՝ Տեր Թադևոսը,

քահանա էր, ծնողները ցանկանում էին, որ նրանց զավակն էլ դառնար քահանա: Սկզբնական կրթությունը ստացել է գյուղի սարկավագի մոտ, որը Թումանյանի պատմածով, ավելի շատ մտրակով էր սովորեցնում, քան խոսքով: Դսեղ գյուղում նա անց է կացրել իր մանկությունը, մոտիկից ծանոթացել գյուղացու կյանքի դժվարությունների հետ, ժողովրդական ավանդույթների և զրույցների հետ: Տարրական կրթությունը ստացել է Ստեփանավանում, այն ժամանակ Ջալալօղլիի դպրոցում:

Չոր մասին Թումանյանը գրում է. «Ամենայն լավը ու թանկագինը, որ գոյություն ուներ իմ կյանքում, հայրս էր: Նա հալալ, արդար և ազնվաբարո անձնավորություն էր, մարդասեր, անկեղծ, բանական, անմիջական և ուրախ... Սակայն ինչ-որ կերպ լրջությունը մշտապես պահպանում էր...»:

Չովի. Թումանյանը մեծ երախտագիտությամբ է հիշում նաև մորը՝ Սոնային, որին երբեիցե չի դավաճանել մայրական բնագղը, նա ժրաջանորեն աշխատում էր և հոգում իր ընտանիքի համար:

1883 թվականին ուսումը շարունակում է Թիֆլիսում, Ներսիսյան վարժարանում (այսօր Կովկասյան համալսարանն է-Լ.Ց.), սակայն նյութական սուղ պայմանների պատճառով ուսումը չի կարողանում շարունակել և դուրս է գալիս դպրոցից: 1887 թվականին ստիպված սկսում է աշխատել Թիֆլիսի Հայկական ժողովրդական դատարանում (կոնսիստորիայում), ավելի ուշ, 1893 թվականին սկսում է աշխատել հրատարակչությունում: Ահա այստեղ է, որ Չովի. Թումանյանը ծանոթանում է համաշխարհային գրականության գլուխգործոցների հետ՝ Գյոթե, Հայնե, Պուշկին, Լերմոնտով, Շեքսպիր, Բայրոն...

Ամուսնացավ 19 տարեկան հասակում, 1888 թվականի դեկտեմբերի 1-ին, Օլգա Մաճկալյանի հետ: Պսակադրությունը տեղի ունեցավ Թիֆլիսում, Սուրբ Գևորգ եկեղեցում: Ունեցան 10 երեխա՝ 4 արու զավակ և 6 դուստր: Տիկին Օլգա Մաճկալյանը, որպես անձնավորություն և Հովհ. Թումանյանի կնոջ կերպար, առանձին պատմության առարկա է, և արտակարգ լավ նկարագրված է Մեծն Լոռեցու թոռնուհու՝ տիկին Իրմա Սաֆրազբեկյանի գրքերում. «Թումանյանի ընտանիքի կյանքի էջերը» (Երևան, 2010, Էդիթ-Պրինտ), «Օլգա Թումանյան» (Երևան, 2010, Էդիթ-Պրինտ): Այս գրքերից ես իմացա այս պատվարժան և ազնվաբարո կնոջ քնքուշ վերաբերմունքը ամուսնու նկատմամբ, որը երևում է թեկուզ այն բանից, թե ինչպես էր տիկին Օլգան օգնում իր ամուսնուն աշխատել և հանգստանալ խաղաղ մթնոլորտում:

Հովհ. Թումանյանը շատ էր գնահատում Վրաստանի հանգստավայրերը: Հատկանշական է, որ տարբեր ժամանակներում նա հյուրնկալվում էր Մանգլիսիի, Աբասթումանիի, Բորժոմիի, Ծաղվերիի, Թեթրիձորայոյի հանգստավայրերում: Վերը նշված «Թումանյանի ընտանիքի կյանքի էջերը» գրքում նկարագրված է մի դեպք. Մանգլիսիում հանգստանալու ժամանակ Հովհ. Թումանյանը պատվիրում է մեծ քանակությամբ մորիի մուրաբա, քանի որ գիտեր, թե որքան օգտակար է այդ մուրաբան երեխաների համար: Հայտնի է, որ Մանգլիսիից Հովհ. Թումանյանը մեծ քանակությամբ նամականիշեր է ուղարկում Թիֆլիս, որպեսզի ընտանիքի անդամները նրան հաճախ գրեն նամակներ:

1890-ական թվականներին Հովհ. Թումանյանը թողնում է իր աշխատանքը և ամբողջությամբ զբաղվում գրականությամբ և ստեղծագործական գործունեությամբ: Գրել նա սկսել է դեռևս 1880-ական թվականներին: Նրա ստեղծագործությունները տպագրվում էր հայկական տարբեր թերթերում

և ամսագրերում: 1892 թվականին հրատարակված բանաստեղծությունների ժողովածուից հետո նրա ստեղծագործության հետ հանրությունը ավելի շատ ծանոթացավ:

Իր գործերում Հովհ. Թումանյանը ցույց է տալիս հայ գյուղացու դժվար կյանքը: Այդ տեսակետից հատկանշական է «Մարոն» (1892), «Լոռեցի Սաքոն» (1890), «Անուշ» (1892) և այլ պոեմները: Ոչ քիչ թվով ստեղծագործություններ Մեծն Լոռեցին նվիրել է հայկական բանահյուսությանը: Նրա մի շարք պոեմների հիմքն է հանդիսացել ժողովրդական բառ ու բանը: Դրանցից են «Ախթամար», «Թմկաբերդի առումը», «Փարվանա», «Մասունցի Դավիթ» բալլադները, ինչպես նաև հեքիաթներից՝ «Մի կաթիլ մեղրը», «Քաջ Նազար», «Կկուն», «Տերն ու ծառան», «Շունն ու կատուն»: Իսկ «Գիքոր» պատմվածքը, գրված 1895 թվականին, լույս տեսավ 1907 թվականին:

Նրա գրական ժառանգությունը բազմակողմանի է. պոեզիա, արձակ, քնարերգություն, էպոս, պոեմներ, բալլադներ, հեքիաթներ, առակներ, թերևս նրա ստեղծագործական հիմնական ոգեշնչող առարկան էպոսն է:

Հովհ. Թումանյանը հարստացրել է հայ գրականությունը բազմաթիվ թարգմանություններով՝ Պուշկինից, Լերմոնտովից, Նեկրասովից, ինչպես նաև եվրոպական տարբեր գրողների՝ Գյոթեի, Շիլլերի, Բայրոնի, Հայնեի և այլոց գործերից:

1900-ական թվականներին Հայոց Մեծ բանաստեղծը ակտիվորեն զբաղվում է մանկական գրականությամբ: Համագործակցում էր մանկական «Հասկեր» ամսագրի հետ: 1899 թվականի դեկտեմբեր ամսին Թիֆլիսում հիմնադրեց «Վերնատուն» գրական միությունը, որի անդամները և հաճախակի մասնակիցներն էին հայ, վրացի, ինչպես նաև տարբեր ազգերի հայտնի գրողներ, նկարիչներ, կոմպոզիտորներ:

Հատկանշական է այդ տարիներին նրա ընկերությունը հայ հայտնի կոմպոզիտոր, խմբավար Կոմիտասի հետ, ով Թումանյանի ընտանիքի թիֆլիսյան տան հաճախակի հյուրն էր: Պատահական չէ, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն 2019 թվականը հայտարարել է Թումանյանի և Կոմիտասի տարի:

Գրական ստեղծագործական գործունեությանը զուգահեռ Հովհ. Թումանյանը ակտիվորեն մասնակցում էր հասարակական կյանքին: 20-րդ դարի սկզբին նա ակտիվորեն ելույթ էր ունենում ազգամիջյան առճակատման դեմ:

1912-21 թվականներին Հովհ. Թումանյանը Հայ գրողների Կովկասյան ընկերության ղեկավարն էր: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ բազմիցս մեկնել է ռազմաճակատ և հոգացել փախստականների և որբ երեխաների բնակեցման հարցերով: 1915 թվականին Հայոց ցեղասպանության օրերին օգնում էր Արևմտյան Հայաստանից մազապուրծ եղած փախստականներին և որբերին:

Հայոց մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանը անմիջական մասնակցություն է ունեցել Թբիլիսիի պետական համալսարանի հիմնադրման գործում: «1917 թվականի փետրվարյան հեղեափոխությունից հետո Իվանե Ջավախիշվիլին լայն կազմակերպչական գործունեություն ծավալեց Թբիլիսիի վրացական համալսարանի հիմնադրման համար: Շովինիստական հովերով տարված ժամանակավոր կառավարությունը դրան դեմ դուրս եկավ: 1917 թվականի հոկտեմբերի 25-ին Հովհ. Թումանյանը վրացական նորաստեղծ համալսարանին նվիրաբերեց 100 ռուբլի (ոսկով) և համալսարանի հասարակության ակտիվ անդամ Գ. Դիասամիձեի անունով ուղարկեց մի ջերմ նամակ, «Հարգարժան պարոն Գ. Դիասամիձե, միայն գիտությունը, գրականությունը և արվեստը կարող են լրացնել այն խոր անդունդը, որը բաժանում է ժողովուրդներին, և միայն դրանք կարող են

ստեղծել ապագայի լավագույն կյանքը և իսկական մարդուն: Այդ իսկ պատճառով ձեզ համար հասկանալի է իմ ուրախությունը, երբ իմացա վրացական համալսարանի բացման մասին: Ես պատկերացնում եմ ուրախ և ազնվաբարո վրացուն, որը մայրենի լեզվով կստանա բարձրագույն կրթություն, և երբ կգա այն օրը, երբ կովկասյան այլ ժողովուրդների համար կբացվեն բարձրագույն կրթական հաստատություններ, որպեսզի գիտության և արվեստի վրա հենված հանդիպենք իրար և հաստատենք փոխհասկացողություն և հարգանք: Խնդրում եմ, Դուք, թանկագին Գ. Դիասամիձե, ստանաք և ում որ հարկն է փոխանցեք իմ բոռն շնորհավորանքները համալսարանի բացման կապակցությամբ, ինչպես նաև իմ փոքր օգնությունը, որը կյարոդ է դառնալ այն մի աղյուսը վրաց մշակույթի շինարարության ճանապարհին: Խորին հարգանքներով ձեր Հովի. Թումանյան» (Մերգո Ջորբենաձեի «Հովի. Թումանյանը և վրաց համալսարանը» հոդվածից):

1918 թվականին Անդրկովկասում հրահրված պատերազմի ժամանակ Հովի. Թումանյանը հանդես է գալիս հաշտեցման կոչով: Նույն թվականի դեկտեմբերի սկզբին Վանի ճակատամարտի ժամանակ զոհվում է Հովի. Թումանյանի տղան՝ Արտավազդը, Կովկասյան ճակատամարտում թուրքերի հարձակման ժամանակ: Որդու մահվան բոթը հայրը ստանում է «Հորիզոն» թերթից, Արտավազդը ընդամենը 24 տարեկան էր և սիրած աղջկա հետ նույնիսկ չհասցրեց ամուսնանալ. . . Որդու մահը, անշուշտ, շատ ուժեղ ազդեց մեծն պոետի հոգեկան վիճակի և առողջության վրա, սակայն նա հնարավորի սահմանում շարունակում էր իր գործունեությունը ի օգուտ հանրությանը: Հովի. Թումանյանը չէր հավատում տղայի մահը և նա մինչև իր կյանքնքի վերջը սպասում էր գավակին:

Ալեքսանդր Շիրվանզադեն իր հուշերում գրում է, որ 1919 թվականին առավոտ վաղ նա գնում է Թումանյանի մոտ՝ 50-ամյակը նշելու առիթով. . . Հովհ. Թումանյանը արտասված աչքերով փարվում է իր ընկերոջը և ասում. «Այո, պոետ եմ ես և այս տոնը իմ գործունեության գանահատանքն է, սակայն այսօր ես կայրեի ամեն ինչ, ինչ գրել եմ, միայն թե որևէ մեկը վերադարձնի իմ կորած զավակին¹»:

1921-22 թվականներին Հայոց մեծ բանաստեղծը դեկավարում էր Հայաստանի օգնության կոմիտեն և մասնակցում էր նոր մշակույթի շինարարությանը, բազմաթիվ իր հոդվածներում արծարծում էր հասարակական կյանքի և գրականության կարևոր խնդիրներ:

Հայաստանի և Վրաստանի համար մեծ ողբերգություն էր Հովհ. Թումանյանի մահը Մոսկվայում, 1923 թվականի մարտի 23-ին, 54 տարեկան հասակում: Նրա աճյունը հանգչում է Թբիլիսիում, Խոջիվանքի հայ գրողների և հասարակական գործիչների պանթեոնում: Իոսեփ Գրիշաշվիլիի պատմածով, Հովհ. Թումանյանի երազանքն էր թարգմանել Շոթա Ռուսթավելիի, Հոմերոսի և Ֆիրդուսիի ստեղծագործությունները: «Առողջանալուն պես, անպայման կթարգմանեմ այդ գործերը»- ասում էր Հովհ. Թումանյանը: Արդեն իսկ այս խոսքերից հասկանալի է նրա վերաբերմունքը վրաց դասական գրականության նկատմամբ և ցանկությունը հայ ընթերցողին ծանոթացնել Շոթա Ռուսթավելիի «Ընձենավորի» հետ, այնպես ինչպես ժամանակին Բալմոնտը թարգմանեց այն ռուսերեն: Մեծն Լոռեցին վրաց բանաստեղծների հիշողության մեջ թողել է անջնջելի հետք: Օրինակ, Տիգրան Տաթևեի հիշողության մեջ նա մնացել է որպես «մարդ, որին

¹ Իոմա Սաֆրազբեկյանի «Թումանյանի ընտանիքի կյանքի էջերը» գրքից, Երևան, 2010, Էդիթ-Պրինտ, էջ 83:

ամենից շատ մտատանջում էր հայ և վրաց ժողովուրդների բարեկամության գաղափարը: Այսօրվա իրականության մեջ Հովհ. Թումանյանը մնում է հիասքանչ անձնավորություն: Եւ ով անձամբ չէր ճանաչում Թումանյանին, նրան չափազանցություն կթվա հայ բանաստեղծի մասին ցանկացած խոսք»- գրում է Տիցիան Տաբիձեն:

Նա այն ահնատն էր, որը իր լուսավոր մարդկային կերպարով մշտական ընկեր էր դարձնում բոլորին, ում հետ խոսեր կամ տեսներ: Ամառ էր, 1917 թվականը: Թիֆլիս էի եկել Մոսկվայից: Ինձ հետ միասին ժամանել էր Կոնստանդին Բալմոնտը... Ուրախության և հեղափոխության ժամանակաշրջանն էր... Վրաց բանաստեղծ Սանդրո Ղանչելիի հետ վրացական ակումբի այգում էինք հավաքվել ճաշկերույթի, որը նվիրված էր Կ. Բալմոնտին: Այդտեղ առաջին անգամ տեսա Հովհ. Թումանյանին: Նա անմիջական էր և անկաշկանդ, այնպես որ նույնիսկ ռուսերեն էքսպրոմտով խոսում էր Բալմոնտի հետ: Եւ մեկ ամիս անց «Ռուսսկոյե սլովո» թերթում տպագրվեց Կ. Բալմոնտի բանաստեղծությունը «Тебе, Ованес Туманян»:

Մեկ անգամ ևս ասենք, որ հայ մեծ բանաստեղծի մտատանջության առարկան հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունն էր: Եւ նրա անկեղծությանը այդ հարցում հավատում էին բոլորը Վրաստանում: Այդ է վկայում Հովհ. Թումանյանի 25-ամյակը Թիֆլիսում: Մեծն Լոռեցու հայրենասիրությունն ու ազգասիրությունը չէր խանգարում որպեսզի Հովհ. Թումանյանը լիներ կողմնորոշված վրացիների նկատմամբ: Հայտնի փաստ է, որ Օսմանյան Թուրքիայի հետ պատերազմի ժամանակ, երբ գոհվեց նրա տղան՝ Արտիկը, Հովհ. Թումանյանը իր դուստրերին ուղարկեց որպես գթության քույրեր: Եւ երբ սկսվեց վրաց-հայկական պատերազմը և նրա որդիներից ոմանք հայտնվեցին Երևանում, Հովհ

.Թումանյանը խնդրեց չմասնակցել պատերազմական գործողություններին: Դա մեծ սիրո դրսևորում էր: Այստեղ նշենք նաև, որ Հովհ.Թումանյանը ուներ հին նահապետի ազդեցությունը հայ ազգի վրա: Նրան լսում էր ոչ միայն հայ ժողովուրդը, այլև ազգի ղեկավարները, ովքեր գրեթե մշտապես հավատացած էին իրենց մեծ սիրո մեջ: Հովհ. Թումանյանի նման ազդեցությունը հայ ժողովրդի վրա ինձ հիշեցնում է վրաց մեծ բանաստեղծ Իլիա Զավճավաձեի հեղինակությունը, որին մեր սերունդը հավատում է պատմաձով: Եզակի իրողություն էր նաև Մեծն Լոռեցու վերաբերմունքը վրաց պոետների նկատմամբ: Չկար որևէ իրադարձություն, որ Հովհ.Թումանյանը չլիներ վրաց ժողովրդի կողքին և չասեր իր սեփական խոսքը: Ես հիշում եմ, ստեղծագործական իմ երեկոյին, 1919 թվականի ապրիլի 2-ին նա կարդաց մի պոեմ, որն ամբողջությամբ նվիրված էր Վրաստանին և վրաց պոետներին: Եթե լիներ որևէ մի վրաց գրողի հորեյանը, ապա Հովհ.Թումանյանը առաջինն էր գալիս և իր հետ բերում մագաղաթի վրա գրված իր ստեղծագործությունը,- գրում է Իոսեփ Գրիշաշվիլին:

1920 թվականին Վրաստանի գրողների միությունը որոշեց մայիսի 9-ին նշել պոեզիայի օրը: Նախանշված էր այդ օրվան տալ տոնախմբության բնույթ: Ես հիշում եմ, այն օրերին Թումանյանը ամեն օր մեզ հետ էր: Կարողում էր բոլոր մանրամասները և պարզվեց, որ հայ մեծ բանաստեղծը ավելի շատ բան էր արել այդ գործի համար, քան վրաց բոլոր գրողները միասին: Համբարներն էին գալու այդ օրը՝ պարզած իրենց դրոշները, հայկական գիմնազիաների աշակերտներն էին հավաքվելու Ալեքսանդրովյան այգում, ինչպես նաև պետք է գային հայ գրողներն ու դերասանները: Սակայն, ցավոք ուժգին անձրևը խանգարեց և այդ գեղեցիկ միջոցառումը չկայացավ: Այն ժամանակվա «Պոեզիայի օրեր» թերթում

տպագրվեց Հովհ.Թումանյանի նամակը Վրաստանին, որը համարձակորեն կարող ենք համարել Վրաստանի նկատմամբ սիրո և հարգանքի հավաստի փաստաթուղթ: Իսկ մինչ այդ, Հովհ.Թումանյանը «Ռուսակոյե սլովո» թերթում տպագրել էր մի նամակ Կովկասի մասին, որտեղ Վրաստանը անվանել է Կովկասյան Ֆրանսիա, իսկ ժողովրդին՝ ազնվաբարո պոետներ և հեղափոխականներ: Այս նամակը կարող ենք համարել պատմական: Եւ եթե այսպիսն էր Հովհաննեսը պաշտոնական իր ելույթներում, ապա նրա հետ, նրա ընտանիքում մտերմությունը անսահման էր: Նրա մեծ բնակարանը Ամաղեբա փողոցի 18 համարում, ինչպես նաև տան մեծ բուխարին և արևելյան հոտավետ բուրմունքը ստեղծում էր մի ջերմ մթնոլորտ և դառնում պոեզիայի անվերջանալի իմպրովիզացիա: Յուրաքանչյուր մեր այցի ժամանակ Թումանյանի տանը մենք հանդիպում էինք հավաքված հայ բազմաթիվ մտավորականների:

Առանձնահատուկ կերպով հիշում եմ Հովհ.Թումանյանի հոբելյանը «Տարտոի» դահլիճում... Լեփ-լեցուն էր թատրոնը: Խոսքով հանդես եկավ Պաոլո Իաշվիլին: Ելույթն այնպիսի պաթոսով էր ասված, որ թատրոնը ցնցվում էր ծափողջույններից: Հոբելյարի օթյակից Պաոլո Իաշվիլին դիմեց այն ժամանակվա Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդի նախագահը: Շնորհակալական խոսքերը հուզիչ էին այն առումով, որ Հովհ.Թումանյանի և վրաց պոետների միջև գոյություն ունեւ նման բարեկամություն: Հոբելյական միջոցառումից հետո տրվեց ճոխ ճաշկերույթ, որին հետևեց հրավառությունը՝ ի նշան հիացմունքի, սիրո և պոեզիայի:

Հայ մեծ բանաստեղծի ցանկությունն էր, որ բարեկամ երկու ժողովուրդների միջև լինեւ հոգևոր անքակտելի կապ: Խորհրդանշական էր, որ Վրաստանի գրողների պահանջով

Հովհ. Թումանյանին նշանակվեց թոշակ, որը անձամբ հայ մեծ բանաստեղծի համար ուներ միայն և միայն բարոյական նշանակություն: Այդ առիթով Հովհ. Թումանյանը իր տանը կազմակերպեց մեծ ճաշկերույթ, որին ներկա էին հայ և վրաց գրողները: Միշտ կհիշվի այս երեկոն, հատկապես Վասիլ Բառնովի, Շիր Արագվիսպիրելու, Կոտե Մաղաշվիլու, Վալերիան Գափրիինդաշվիլու և Պաուլո Իաշվիլու ելույթները: Իրոք, դա մի «խորհրդավոր ընթրիք» էր, որին Հովհաննեսը վերջին անգամ հանդես եկավ հանրության առաջ: Ես չեմ կարող պատկերացնել Հովհաննեսի կյանքի վերջին րոպեները: Հավատում եմ, որ բարձրահասակ, ալեհեր ու լուսավոր հայացքով մարդը, ով իր ամբողջ կյանքում սեր քարոզեց, իր վերջին խոսքը կասեր արցունքոտ ու աստավածային խոսքով, սիրալիր ու հավաստի բառերով, ինչպես Հովհան Աստվածաբանը, որին վերջին անգամ աշակերտները դուրս բերեցին ժողովրդի առաջ ելույթ ունենալու և ասելու. «Միրեցե ք միմյանց»: Ես ոչինչ չեմ ասի Հովհաննեսի մասին որպես բանաստեղծի, ոչ էլ այն հանդիպումների, որոնք ես ունեցել եմ նրա հետ: Դա կլինի հիշելու այն առարկան, երբ մահը ավելի է զգացնել տալիս, որ Թումանյանը այլևս չկա, և երբ կհեռանամ նրա դագաղի մոտից,- գրում է Իոսեֆ Գրիշաշվիլին:

Առանձնապես նշանակալից է հայոց մեծ բանաստեղծի ընկերությունը վրաց հայտնի բանաստեղծ Իոսեֆ Գրիշաշվիլիի հետ: Այդ ընկերությունը այնքան նշանակալից էր, որ Իոսեֆ Գրիշաշվիլին բազմիցս նշել է իր ջերմ եղբայրական վերաբերմունքը և սերը Հովհ. Թումանյանի նկատմամբ, առավել ևս նրա մահից հետո: Բարեկամության մեծ դրսևորում է այն փաստը, որ բանաստեղծը բանաստեղծին խոստանում է և լավագույն ձևով թարգմանում Հովհ.

Թումանյանի ստեղծագործությունները, որոնք հրատարակվում են Հովհ. Թումանյանի մահից հետո, 1924 թվականին:

Ամենայն հայոց բանաստեղծը հայտնի է ինչպես Վրաստանում, այնպես և Արևմտյան Հայաստանում, գրում է Իոսեֆ Գրիշաշվիլին: Հովհ. Թումանյանը իր ժողովրդի համար հեղինակություն էր և բոլորը նրա նկատմամբ, ինչպես նաև նրա կարծիքի հետ հարգանքով էին վերաբերվում: Նա հարևան ազգերի միջև համարվում էր համերաշխության սուրբ առաքյալը, սակայն միևնույն ժամանակ անհունորեն սիրում էր հայոց ազգը: Մի առիթով Թումանյանը իր գրական երեկոյին ասել է. «Չկա ոչ մի այնպիսի ազգ, փոքր կամ մեծ, բարձր կուլտուրայի կամ առանց կուլտուրայի տեր, որին ես վերաբերվում եմ բացասաբար, սակայն իմ ծնող ազգին ես դասում եմ ամենից վեր, քանի որ նրանում ես գտնում եմ հավաքված ստեղծագործական մեծ ուժը և բարոյական արժեքները:

Հովհ. Թումանյանը ոչ պակաս սիրահարված էր Վրաստանին և նրա մայրաքաղաք Թիֆլիսին: Նա Գաբրիել Սունդուկյանի նման համարձակորեն կարող էր ասել. «Մենք՝ Վրաստանի որդեգիր հայերս, վրացական հողից ենք սնվել»: Հովհ. Թումանյանը Վրաստանի մշակույթի ազնիվ բարեկամն էր, ազնվաբարո ասպետը: «Մի ճանապարհ ենք անցել անցյալում, նույն մշակույթն է ծաղկել մեր միջև, մեր ապագան էլ նույնը կլինի»- ասում էր հաճախ. . . Մի առիթով գրել է. «Հին Թիֆլիսը, չնայած Արևելքի ժողովուրդների կյանքի ու հոգևոր հզոր ուժի համադրությունն է, բայց մեծապես կրում է վրացական ոգին: Պոետական ձիրքը այնքան խորն է վրացում, որ ես ամեն վրացու մեջ տեսնում եմ բանաստեղծի: Դա վրացուն դարձնում է ավելի գրավիչ, նույնիսկ թշնամիների դեպքում»:

Նրա աղջիկը պատմում է մի հետաքրքիր դեպք. երբ լուսահոգի պոետը գնում է Մոսկվա բուժվելու, իջևանում է մի փողոցում, որի անունը «Գրուզինսկի պերեուլոկ» էր: «Հայրիկի հիացմունքը սահմաններ չունեի, որ Ռուսաստանում էլ Վրաստանի փողոցում էր ապրում»-պատմում է բանաստեղծի դուստրը՝ Նվարդը:

Ինձ և Թումանյանին բարեկամացրեց Սայաթ-Նովան, և դա պատահականություն չէր: Երկու մեծ բանաստեղծների զմայլեց մեծն աշուղի նուրբ խառնվածքը, հոգեհմա պոեզիան: Ինչ արժե միայն այն, որ Հովհ. Թումանյանը որպես Հայ գրողների Կովկասյան ընկերության նախագահ իր վրա վերցրեց Սայաթ-Նովայի շիրմաքարի տեղադրումը Սուրբ Գևորգ եկեղեցու բակում: 1914 թվականին (շիրմաքարի նվիրաբերման գումարի հավաքման գործում անմիջականորեն մասնակցում էին բանաստեղծի զավակները,- գրում է Իոմա Սաֆրազբեկյանը իր «Թումանյանի ընտանիքի կյանքի էջերը» գրքում) տոնական այդ օրը, որպես Հին Թիֆլիսի՝ մեռածներից հառնելու հարության նշան, երևի այսօր էլ հիշում են շատերը:

Մեկ անգամ Հովհ. Թումանյանը վատառողջ էր, սպասում էր բժշկին և այդ ժամանակ էս մտա. «Ինչ կոնիմ հեքիմն, ինչ կոնիմ ճարեն, քու տվածն ուրիշ դիդ է, ուրիշ դիդ»- երգեց Սայաթ նովայի հայտնի երգից հատված և իրեն հատուկ ժպիտով ինձ հրավիրեց նստելու... Ես այդ ժպիտը երբեք չեմ մոռանա:

Ամենայն Հայոց բանաստեղծի ստեղծագործությունների վրաց լեզվով թարգմանելու հետ կապված Իոսեբ Գրիշաշվիլին գրում է. «Ընդհանրապես պետք է ասել, որ հայերեն ստեղծագործությունները վրացերեն թարգմանել ավելի ինքնատիպ և դիպուկ է ստացվում, քան ուրիշ լեզուներով: Ըստ երևույթին դա մեր լեզուների առանձնահատ-

կության արդյունքն է: Հեղինակի որոշ տողեր թարգմանության ժամանակ ինքնաբերաբար շարվում էին, թերևս որոշ բառեր կամակոր երեխայի նման պահանջում էին գուրգուրանք: Աշխատում էինք թարգմանության ժամանակ ամբողջությամբ թողնել բնագրի շունչը: Խստիվ պահպանում էինք բանաստղծության կառուցվածքը, ուժեր, ոճը և տեսակը:

Իմ նպատակն էր մահացած Թումանյանի հիշատակի առջև պարզերեսորեն կատարել իմ խոստումը (մեկ անգամ գրույցի ժամանակ ես և Թումանյանը իրար խոստացանք մեր ստեղծագործությունները թարգմանել երկուստեք), և ցանկանում էի Վրաստանի ճշմարիտ բարեկամին՝ Հովհ. Թումանյանին, վրաց ժողովրդի առջև ներկայացնել իր իսկական դեմքով: Ես սիրում էի Հովհ. Թումանյանին որպես բանաստեղծը բանաստեղծին, սիրում էի անմիջական վերաբերմունքով, զգալով նրա խորը հոգեվիճակը: Նրա անիմաստ մահը այդ զգացումը ավելի խորացրեց. . . Վախճանվեց մեծ զգացումների տեր մարդը, որի նմանը ծնվում է մի քանի դարերի ընթացքում:

РЕЗЮМЕ

ОВАНЕС ТУМАНЯН И СОВРЕМЕННАЯ ГРУЗИЯ ЛЕВАН ЦАЛУТЕЛАШВИЛИ

Статья посвящена рассмотрению наиболее значимых страниц жизни и деятельности Ованеса Туманяна, исследованию его творческого наследия, анализу наиболее ярких проявлений дружбы и творческого сотрудничества с грузинскими поэтами.

Ключевые слова: Ованес Туманян, Грузия, армяне, грузинские писатели, Иосиф Гришашвили, дружба народов, духовное наследие, поэзия, творческое сотрудничество поэтов.

ABSTRACT
HOVHANNES TUMANYAN AND CONTEMPORARY
GEORGIA
LEVAN CALUGHESHVILI

The article dwells on highlighting the most remarkable pages of Hovhannes Tumanyan's life and work, study of his literary heritage, analysis of the most significant episodes of his friendship and creative collaboration with Georgian poets.

Key words: Hovhannes Tumanyan, Georgia, Georgian poets, Joseb Grishashvili, friendship of peoples, spiritual heritage, poetry, creative collaboration of poets.

ТВОРЧЕСКОЕ НАСЛЕДИЕ ОВАНЕСА ТУМАНЯНА И
ВЛИЯНИЕ РУССКОЙ ЛИТЕРАТУРЫ НА ТВОРЧЕСТВО
ПОЭТА. МЕЖЛИТЕРАТУРНЫЕ СВЯЗИ

ЛИЛИТ ГРИГОРЯН

*«Поэт прежде всего должен быть сердцем своего
народа!».*

Ованес Туманян

Сердцем своего народа был и есть великий поэт и философ Ованес Туманян - «поэт всех армян», в благородном образе которого воплощена армянская история, мысль и душа армянская! Его творчество развивалось на фоне горькой реальности, отягощённой предрассудками, народными “ада-тами” и бесправием маленького человека. Пристрастия поэта к постоянным поискам различных жанров и их вариаций способствовало его стремлению к нахождению правды и

социальной справедливости. Человеческий, благородный образ Туманяна, соединившись с образом великолепного поэта, в корне изменил мировосприятие целой нации, этим определив развитие армянской национальной словесности и национального сознания. Туманян воплощал в себе образы гражданина – патриота своей страны, национального поэта, гуманиста, а также яростного борца за духовную свободу, эмпатию к человеку независимо от его социального статуса, а также дружбу народов. Интернациональная ценность его творческого наследия особо привлекала внимание всего литературоведения в целом. Будучи убеждённым сторонником русской ориентации, Туманян, насквозь был пропитан заветным свобододлюбивым чувством патриотизма, идеологией о свободе духа и благополучии своего народа. Армянский поэт своим многогранным творчеством мостил новую дорогу родной армянской литературе, искренне веря, что благодаря достойным переовдам, она сможет выйти в мировую литературу. Туманян многократно аориентировался на русскую поэтику и литературу в целом, что отражается не только в его творчестве, но и в переводческой деятельности, письмах и статьях.

Русская литература сыграла необъятную роль в развитии творчества великого армянского поэта – легенды, его поэтического мировоззрения и мирозерцания. “Мы шли и идем к Великой России”, – отмечал Туманян, кто был тесно связан с русской поэтикой, особым образом освещали его творческий путь великие гиганты русской литературы – Пушкин и Лермонтов. Своеобразное эстетическое мировосприятие у Туманяна формировалось под влиянием Белинского, которого часто цитировал в своих письмах и статьях армянский поэт. Одной из неповторимых особенностей туманянской души является своеобразное тонкое чувство всех цветовых гамм и

политр человеческих взаимоотношений как в социальном, так и в духовном аспекте, их мастерское сочетание в тех или иных персонажах, а также глубокое понимание и созерцание окружающей действительности, детерминированной человеческими поступками. Именно подобным созерцательным началом своего творчества Туманян считал себя обязанным русскому поэтическому искусству. Выражаясь языком Белинского, Туманян умел своеобразно “извлечь дивную поэму, наполовину фантастическую, наполовину фактически-положительную, и в обоих случаях удивительно верную поэтической действительности” [7, с.196]. Блинский часто сравнивал поэзию любого великого национального поэта с морем, в котором соединяются, становятся одним целым и воплощаются разные реки, разнообразные речные потоки литаратуры. Данные слова, согласно Белинскому, были особым образом характерны для Пушкина, однако, мы можем их примнить также к великому Туманяну, в поэзии которого слились воедино не только все самые отборные и разнообразные традиции армянской литературы / культуры, но также нашли свое место отклики русской народной литаратуры, которую так ценил и исследовал великий армянский поэт. Туманян, как и Пушкин, смог воплотить в своем творчестве все течения народной литаратуры; ее различные виды, жанры; все особенности и тонкости национального характера; психологию всех социальных слоев общества, выражающейся в речи героев, а также различо суные стороны морали и человеческого существования в целом. Туманян и Пушкин являются вечно неугасаемыми гигантами в художественной литературе, которые писали обо всем и для всех. Поэмы, легенды, сказки, повести, рассказы и стихотворения, народные сказания, песни, детские стишки, басни, романы, романы в стихах, оды отчизне,

лирические поэмы и другие произведения (принизанные философскими размышлениями, пылким чувством патриотизма, глубоким человеколюбием, духовным величием, сочувствием, а также гуманизмом) в творчестве обоих авторов сделали ими созданную идеологию универсальным для каждого читателя. Патриотические и демократические традиции прошлого оставили сильный след в душе Туманяна, кто прежде всего являлся достойным преемником идей Абовяна - основоположника революционного развития армянской общественной мысли и всенародного освободительного движения, что послужило стартовым этапом становления новой армянской литературы. Будучи объединяющим народ патриотом, Туманян многократно цитировал слова Абовяна: “Да будет благословен тот час, когда русские благословенной своей стопой вступили на армянскую светлую землю!”.

Имя молодого Туманяна стало известно широкой публике читателей благодаря первым двум сборникам поэм и стихотворений, опубликованным 1890 году в Москве при поддержке близких друзей. О красоте и величии творчества армянского поэта было известно не только в родных краях, но и за пределами страны, как в России, так и в Украине и т.д. Например Павло Тычина особым образом был заинтересован творчеством Туманяна и в своей статье “Ованес Туманян” он справедливо подчеркивал схожие мотивы и сравнивал стихи Туманяна с гневными песнями Шевченко и Некрасова. Тычина отмечал: «В патриотических стихах Туманяна не просто стоны, а энергичные протесты!». Тычина прояснял, что во многих ранних произведениях красочным образом представлены и своеобразно отражены народное суеверие, рабское подчинение адатам (строгим традициям, носящим догматический

характер), жестокость, а также различные неясные скрытые стороны жизни патриархальной армянской деревни.

Советскими авторами многократно были исследованы такие произведения как «Маро» и «Сако Лорийский», ставшие краеугольным камнем для ранней прозы Туманяна. Не оставляет читателя равнодушным рассказ «Гикор», который неприменно оставляет своеобразное горькое послевкусие и душевные переживания у читателя любой национальности, носителя любой иной культуры, нравов, обычаев и т.д. Благодаря высокому мастерству Туманяна-художника в простом языке воплотились тонкая наблюдательность автора, свойственное лишь ему, а также умение даже в самых незначительных мелочах подметить главное, на котором базируется весь характер персонажа. В его произведениях сочетаются общественные реалии с жизненной идеологией автора, читая которые каждый невольно начинает задумываться о смысле жизни.

В 1901г. поэт прибыл в горную местность Джавахк, которая славится своими рассказчиками, печцами, мудрецами и сказителями. Именно данное место воодушевило автора взяться за написание поэмы «Парвана», основой которой послужило народное предание, передаваемое с уст в уста. В данном произведении Туманян словно душу свою вкладывает, с особым трепетом, теплотой и любовью рисуя образ юной девы-героини, непохожей на надменную красавицу или на царскую дочь. В данном персонаже воплощается вся нежность, красота, скромность и высочайшее чувство справедливости, характерные для образа армянской женщины. Девушка из Парваны в виду своих качеств не желает и не может склоняться перед грубой физической силой, ища в жизни истинное нравственное совершенство, душевную красоту, неугасимое

чувство веры, свободы и любви. «„Парвана“ Туманяна, — говорил поэт Ваан Терьян, — понятна и прекрасна для всех народов, так же как „Золотая рыбка“ Пушкина». Многие персонажи Туманяна сравнивались с персонажами русских поэтов, в особенности Пушкина, так как сам Туманян представляет для своего народа ту ценность, что Пушкин для русских. Глубоко заинтересованный в русской литературе, в особенности поэтикой Пушкина, Туманян искал особую форму, особый новый микс похожий на пушкинский роман в стихах, что смогло бы внести в армянскую поэзию новое содержание. Данное новое содержание, адаптированное Туманяном, определялось двумя основными творческими принципами: народностью и реализмом — главными чертами, более всего привлекавшими его и в поэмах Пушкина и Лермонтова. Благодаря Туманяну в армянской литературе впервые сформировались и дошли до идеального уровня эпические и лироэпические поэмы. В этом его учителями выступали Пушкин и Лермонтов, «Именно эти две величайших русских поэты — Пушкин и Лермонтов способствовали моему восхождению на пик, — писал Туманян, — это они мне “дали” ту форму поэмы, которой пишу я, так как в нашей литературе отсутствовала такая форма поэмы, в которой воспевались бы наша природа, обычаи и традиции народа» [6. С 144]. Далее, по тому же принципу, Туманян создает разновидности баллад и легенд, которых также ранее не было в армянской поэзии.

Лирическая поэма «Ануш» воплощала в себе именно вышеуказанную литературную новую форму, которой представлена трагедия любви на фоне быта армянской патриархальной деревни, чем обуславливается ценность произведения и глубокое познавательное значение. Говоря об

«Ануш» необходимо отметить про высказывания В. Брюсова: «Наибольшей силы поэзия Туманяна достигает в лирических поэмах, где сказывается всестороннее знание народной жизни и живое проникновение в глубь народного духа. Для читателей другого народа знакомство с поэмами Туманяна (например, с его „Ануш“) дает больше в познании современной Армении и ее жизни, чем могут дать толстые томы специальных исследований» [5, с. 23]. Многие советские литературоведы и критики отмечали, что в туманянской разработке образов и штрихов характера персонажей великий армянский поэт часто достигает той типизации и глубины описания психологического портрета, благодаря чему иностранный читатель может получить многогранные знания об армянской действительности. Отражение народного духа в творчестве также актуально у Пушкина, что не могло ускользнуть с глаз Туманяна. Помимо Пушкина и Лермонтова его часто сравнивают также с Гоголем, так как и Туманян, и Гоголь в порыве эмоционального напряжения и глубоких душевных переживаний сожгли второй том своих великих поэм. Многие другие поэмы Туманяна многократно переводились на русский язык, как например безупречный перевод поэмы «Ахтамар», выполненный К. Бальмонтом. Данная поэма благодаря Бельмонту ещё раз отворил двери в неописуемо прекрасный мир армянской лирики перед русским читателем. К тому времени армянский поэт уже был известен широкой русской публике и был в лучах славы благодаря ранее опубликованным в России двумя томами своих писаний. Внимание русских поэтов к Туманяну особо возросло в исторические дни революции 1905 г, когда произошло предпологаемо спровоцированное царскими властями армяно-азербайджанское столкновение. Оно произвело глубочайшее и

крайне тяжелое впечатление на М. Горького. [«Бывая на Кавказе, — писал он, — я всюду видел, как дружно и мирно работали рядом грузин с татаринном и армянином, как детски весело и просто они шутили, пели и смеялись, и как трудно было поверить, что эти простые славные люди ныне тупо и бессмысленно избивают друг друга, подчиняясь подстрекающей их злой и темной силе»]. Не хотел поверить этому и Туманян, борясь с национальной враждой. Он объезжал азербайджанские и армянские деревни, убеждая крестьян не поддаваться провокации, сохранить добрососедские, мирные отношения между собою. Туманян давал реалистические оценки происходящему в своих статьях, которые с неимоверной силой печатались в Москве. Описывая кавказские события 1905 г, в статьях писал он с горькой досадой: «Занятые этой низкой и постыдной войной, мы оказались в стороне от освободительного движения в России». Вопреки всему творящемуся, поэт гордился тем, что ему удалось своеобразным путем утихомирить восставшие стороны, заставив их «вложить мечи в ножны», спасая многие жизни. После обыска, посаженный в крепость Туманян пишет сказку в стихах «Капля меда», которая, на первый взгляд является сказкой для детей. Сказки особо привлекли внимание украинского поэта П. Г. Тычины, кто трепетно и с любовью перевел их на украинский язык. Тычина восхищался особым умением Туманяна ясным и доступным языком обращаться к детской аудитории: «А как он умел беседовать с детьми! — пишет Тычина о Туманяне. — Его стихи для детей, его сказки, рассказы — это настоящие жемчужины мировой поэзии» [3, с.271-273].

Армянского поэта также привлекали имена великих гуманистов Шекспира и Сервантеса, в творчестве которых он видел победу разума над предрассудками и невежеством средневековья. Эти имена в особенности в условиях первой мировой войны стали для Туманяна знаменем в борьбе за мир и дружбу народов. «Этот день спешит навстречу страдающему человечеству как символ международного единения, — писал Туманян в 1916 году к 300-летию со дня смерти Шекспира и Сервантеса, — как свидетельство того, что народы шлют друг другу не только разрушающие снаряды, но и все самое возвышенное, о чем может мечтать человек; что есть у народов священные связи, крепкие и нерушимые даже тогда, когда рвутся и попираются договоры, скрепленные королевскими печатями». Туманяну особо дорожил мыслью о «нерушимой, крепкой, священной» связи между народами. Шекспир, Сервантес, Пушкини и подобные им гиганты художественной литературы, согласно Туманяну, [Скрепляют, делают прочной эту «священную связь», общность высоких духовных интересов и конечных целей, помогая всем передовым силам человечества объединиться в борьбе за мир и счастье народов]. Кроме высказываний на тему национального освободительного движения и патриотизма Туманян проводил широкую исследовательскую деятельность в сфере вопросов о языке и его чистоте, что имело для него крайне практическое значение. Он противился тем, кто ревностно защищал «чистоту» книжного языка, а также тем, кто с пренебрежением относился к народной речи. «Нашим могучим и живым литературным языком, — говорил Туманян, — будет слияние народных наречий, „грабара“ (языка древнеармянской литературы) и существующего ныне литературного языка». Ваан Терьян, определив позицию Туманяна в развитии языка и армянской

литературы, отмечал: «Туманян сейчас довел свой язык до такой степени кристаллизации и ясности, — говорил Терьян в 1914 году, — что приблизил его к языку Пушкина. Это и следует считать одной из величайших заслуг Туманяна». Армянский поэт в те годы активно занимался вопросами языка, что длилось до 1917г., так как в Закавказье снова выступали буржуазно-националистические партии. Туманян указывал на единственно правильный путь — «Солидарность народов Кавказа с новой Россией в великой освободительной войне». В грядущих завоеваниях Великого Октября Туманян видел осуществление вековых чаяний армянского народа, связанные с Россией. [Идет власть, — говорил он в 1921 году, — которая должна навсегда покончить с кровью и разорением, создать вечный мир для народов]. Осознавая историческое значение революции, он горячо приветствовал Советскую Россию, которая, на его взгляд, сможет покончить с рабством и угнетением. «Малые страны, — писал поэт в 1920 году, обращаясь в Революционный Комитет Армении, — это источник наживы для алчных, бесстыдных и могучих империалистических держав. Новая Россия выводит эти страны из рабского состояния, открывает новую эру в истории человечества... Я призываю всех народов крепко, в меру своих сил, помогать только что вставшему на ноги русскому богатырю» [2, с 105].

Еще предчувствуя приближение революции в 1915 году он пишет:

*В одеждах пламенных придет заря грядущих дней,
И будут сонмы светлых душ — как блеск ее лучей.
И жизни радостной лучи улыбкой озарят
Верхи до неба вставших гор, священный Арарат..!*

Туманян многократно отмечал в своих статьях про свою деушевную радость, что «Наконец стал свидетелем тех дней, когда освобожденный русский народ протянул Армении братскую руку помощи и она стала Советской Социалистической Республикой».

Туманян в своей переписке с литературоведом Ю. Веселовским многократно ссылался на поэмы Пушкина и Лермонтова, признаваясь: «Как уроженец Кавказа и горный житель, я полюбил эти песни и поэмы. Хотя любовь к горам и тоска по горной жизни и без того была свойственна мне, но они несомненно подсказали мне самую форму поэмы, в которую облечены мои произведения, ибо в нашей литературе не было таких поэм, которые воспевали бы природу, обычаи и предания народа».

Творчество Туманяна развивалось не только на фоне его глубокой заинтересованности во всемирной и русской литературе, но рос он также на переводах. Благодаря ему достоянием армянской литературы стали лучшие образцы мировой лирики, которые в своей неопишуемой превосходности равноправны оригиналу, а в некоторых случаях и намного больше впечатляют своими тонкими чарующими слух и глаз словами. Превосходны туманянские переводы произведений Гёте и Пушкина, Шиллера и Мицкевича, Чавчавадзе и Шевченко. В русской литературе многие критики отмечают, что невозможно переводить Пушкина в виду того, что его стихотворения имеют особый слог и пропитаны исконно русским концептуальным колоритом, однако, переводить такого литературного гиганта как Пушкин мог только такой другой гигант своей эпохи как Ованес Туманян. Пушкин, Лермонтов и Горький, Байрон и

Лонгфелло, Некрасов и Блок, Жуковский и Тургенев – это те поэты, чье свободомыслие, гуманизм и пропаганда человеколюбия стали стержнем творчества армянского поэта [4, с 358].

Один из известных переводчиков Туманяна Сергей Городецкий, а также его личный друг, после кончины поэта написал:

*[Не знаю, кто придумал эсперанто,
Чтоб языки связать в один венец,
Но знаю я другого: Туманян-то,
Он эсперанто избрёл сердце].*

Перевод стихотворений и детских сказок Туманяна осуществляла также русская известная поэтесса Ахмадулина, которые вошли в книгу армянского поэта в переводе, под заголовком “Стихотворения. Легенды и баллады. Поэмы”, 1969г. В эту книгу были включены лучшие произведения в переводах В. Брюсова, М. Петровых, А. Якобсона, В. Иванова, В. Звягинцевой, В. Державина. Н. Гребнева, В. Ходасевича, А. Тарковского и др. [1, с. 47-50].

“Каждый поэт должен быть прежде всего сердцем своего народа”, - писал Туманян и величие этой мысли он доказал своим личным примером, творчеством, став легендой армянской нации. Армянский народ с трепетом и с любовью относится к имени любимого родного поэта, мудрость которого сохраняется веками и освещает путь не только армян, но и представителей других наций. Творчество Ованеса Туманяна божественный дар, благодаря которому армянская история прославилась в мире еще одной великой личностью - поэтом, который был в душе убежденным сединой мудрейшим стариком и одновременно наивным ребенком. С каждым

своим читателем, независимо от национальной принадлежности, поэт делится неисчерпаемым богатством своей души и вековой мудрости. В этом - его истинное бессмертие!

Список литературы

1. Айрян З. Г. Поэзия Ованеса Туманяна в переводческом наследии Беллы Ахмадулиной / Филологические науки в России и за рубежом: материалы Междунар. науч. конф. (г. Санкт-Петербург, февраль 2012 г.). — СПб.: Реноме, 2012. — С. 47-50.
2. Аветисян З.В. Некоторые вопросы художественного мышления Туманяна: Автореф. дис.канд.фил.наук.- Ереван, 1969. – с. 20.
3. В. Брюсов, Об Ованесе Туманяне. В кн.: В.Брюсов. Собр.соч. в 7-ми т., т.7, с.271-273.
4. В. Брюсов.-Ереван: Айастан, Поэзия Армении с древнейших времен до наших дней. /Редакция, вступительный очерк и примечания Туманян О. Избранное. /Ред. С.Шервинского, предисл. Л.Инджикяна. Ереван: Армгиз, 1941. – с. 358.
5. В. Брюсов В.Я. Поэзия Армении и ее единство на протяжении веков, Историко-литературный очерк. В кн.: Поэзия Армении с древнейших времен до наших дней. М., 1916, с.23-90.
6. Г. С Тамразян Армянская литература 9 класс. Издательство “Просвещение” 1983г., стр 111.
7. Письмо В.Брюсова к О.Туманяну. В кн.: В.Брюсов. Об Армении и армянской культуре. - Ереван:АН Арм.ССР, 1963, с.196.

ԱՍՓՈՓՈՒՄ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ
ՆՐԱ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ.
ՄԻՋԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ
ԼԻԼԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հոդվածում քննարկվում է Հովհաննես Թումանյանի ստեղծագործական ժառանգությանը և ռուս գրականության դերը նրա ստեղծագործական գործունեության զարգացման հարցում: Հոդվածում տեղ է գտել պոետի կյանքի որոշ ժամանակաշրջանների դիտարկումը, երբ ռուս գրականության և ռուս ստեղծագործողների ազդեցությունն առավել նկատելի է եղել: Առանձին ներկայացված են հայտնի ռուս գրողների, քննադատների և բանաստեղծների մտքեր, հղումներ, որոնք ուղղված են եղել մեծն հայ պոետին:

Բանալի բառեր. Հովհաննես Թումանյան, ռուս գրականություն, ռուս գրականության ազդեցություն, միջգրական կապեր:

ABSTRACT
POETIC HERITAGE OF HOVHANNES TUMANYAN
AND THE ROLE OF THE RUSSIAN LITERATURE IN
THE POETIC ACTIVITY OF HIS:
INTERLITERARY CONNECTIONS
LILIT GRIGORYAN

The article is dedicated to the poetic heritage of Hovhannes Tumanyan and role of Russian literature in development of Tumanyan's poetics. The article discussed some main periods of Tumanyan's poetic activity, when influence of Russian literature and Russian poets on Armenian one was quite noticeable. There are

also represented thoughts and sayings of different Russian poets about greatest Armenian poet.

Key words: Hovhannes Tumanyan, Russian literature, influence of Russian poetics, interliterary connections.

ԱՐԵՎԵԼՔԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ԼԻԼԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Թումանյանի ստեղծագործության արևելյան մոտիվների մասին շատ է խոսվել հայ գրականագիտության մեջ ինչպես անցյալում, այնպես էլ մեր օրերում: Հարցը սովորաբար թեքվում է այն կողմը, թե բանաստեղծը, դժգոհ լինելով արևմտյան հաշվենկատ բարքերից, «անարատ» մարդու և մաքուր բարոյականի իր իդեալը որոնում է Արևելքի նախնական կացութաձևում: Այդ պահը, իհարկե, կա, և դա, ինչպես կտեսնենք ստորև, ունի իր օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները: Սակայն նույնիսկ այդ դեպքում Արևմուտք-Արևելք թումանյանական հարցադրումը միանշանակ այս կամ այն կողմի խնդիր չի դնում, այլ ավելի շուտ պատմական-մշակութաբանական լայն տարածության վրա փորձում է գտնել հավասարակշռության եզրը:

Թումանյանն ունի «Արևելքի նոր դարագլուխը» խորագրով մի հոդված՝ գրված 1916 թվականին, այն օրերին, երբ ուսական բանակը հաղթականորեն առաջ էր գնում, և բանաստեղծը հավատում էր Օսմանյան կայսրության մոտալուտ փլուզմանը, արևելքի ու արևմուտքի քաղաքակիրթ ժողովուրդների ազատագրությանը խավար բռնատիրությունից: Հոդվածը հակաթուրքական-քաղաքական ուղղվածություն

ունի, բայց կարևոր մտքեր է պարունակում նաև մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ: «Ասիան ու Եվրոպան կամ, ուրիշ խոսքով, Արևելքն ու Արևմուտքը,- գրում է բանաստեղծը,- լոկ աշխարհագրական տերմիններ չեն, այլ տարբեր քաղաքակրթություններ ու աշխարհայացքներ: Հազարավոր տարիների ընթացքում էդ աշխարհներից ամեն մինը հանդես է բերել իր էս կամ էն գերազանց ուժը իբրև իրեն ներկայացուցչությունը մյուսի հանդեսը»:¹ Եվ կողմերից ամեն մեկը ձգտել է մյուսի «հեգեմոնիայի» դեմ հանդես բերել քաղաքական նոր նվաճումներ, և այդպիսով ստեղծվել է «հավասարակշռություն», քանի դեռ որևէ խանգարող ուժ չի հայտնվել դրա ճանապարհին: Եվ հետագայում, բացատրում է Թումանյանը, մինչդեռ դարեր շարունակ քրիստոնյա Եվրոպան ձգտում էր քաղաքակրթական նոր հավասարակշռության՝ «պարսիկ, արաբ կամ հնդիկ հանճարներին» հանդիպադրելով իր «Ռաբլեին ու Տաստյին, Շեքսպիրին ու Մերվանտեսին, Ռուբենսին ու Ռաֆայելին, Կոպեռնիկոսին ու Գալիլեյին, Կոլումբոսին ու Գուտենբերգին», պատմության ասպարեզում հանկարծակի հայտնված քոչվոր թուրքերը, «իսլամ ընդհանուր անվան տակ» ծպտված, քաղաքակրթություններ էին կործանում: Օսմանյան կայսրության փլուզման հեռանկարը, որ այդ օրերին դեռ ոգևորում էր բանաստեղծին, հոգվածի վերջում լուսավոր լավատեսության է մղում նրան. «Պատմական ի՛նչ հոյակապ ավետիս: Բացվում են Արևելքի ոսկի դռները՝ ազատ ժողովուրդների, լուսավորության ու քաղաքակրթության համար և սկսվում է մի նոր դարագլուխ Արևելքի պատմության մեջ»:²

¹ Հովհ.Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ.7, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Ե., 1995, էջ 272-273:

² Նույն տեղում, էջ 275:

Եթե մի կողմ թողնենք հողվածի քաղաքական ուղղվածությունը, ընդհանուր տրամաբանությունից հեշտ է եզրակացնել, որ արևելյան և արևմտյան քաղաքակրթությունների մասին թումանյանական մտորումները, իրոք, հակադրության, առավել ևս փոխադարձ մերժումի որևէ երանգ չունենին. բանաստեղծի ընդվզումը համամարդկային քաղաքակրթության այդ երկու գոյավիճակների բնական հաղորդակցությունն ու փոխադարձ հարստացումը խոչընդոտող երևույթների դեմ է: Այս իմաստով պետք է հասկանալ նաև նոր ժամանակներում արևմտյան հասարակական բարքերի մեջ արմատավորված հաշվենկատ եսապաշտությունից բանաստեղծի դժգոհությունը, որ տարիներ անց՝ 1921 թ., դասական արտահայտություն պիտի ստանար հայտնի քառյակում.

Արյունալի աղետներով, աղմուկներով ահարկու,

Արևմուտքի ստրուկները մեքենայի և ոսկու՝

Իրենց հոգու անապատից խուսափում են խուռներամ

Դեպ Արևելքն աստվածային – հայրենիքը իմ հոգու:³

Այս քառյակը Թումանյանի այն ստեղծագործություններից է, որոնց մասին բանաստեղծն ասում էր, թե դրանց «...մեկնաբանությունը իրենցից շատ ու շատ է երկար, որոնք կենսագրություն ունեն, պատմություն ունեն իրենց ետևը: Այսպիսի ոտանավորների տողերում է, որ թաքնված է լինում բանաստեղծի հոգին»:⁴ Իրոք, շատ երկար, տխուր էջերով լի պատմություն կար այս չորս տողերի հետևում: Ավարտվել էր Առաջին աշխարհամարտը՝ հայ ժողովրդի համար ծանր հետևանքներով: Պատերազմի սկզբում բանաստեղծին համակած ոգևորությունը փոխվել էր խոր հիասթափության: Ռուսաստանի և քաղաքակիրթ Եվրոպայի հետ կապված

³ Նույն տեղում, հ.2, էջ 49:

⁴ Նույն տեղում, հ.9, էջ 438:

հույսերը ի դերն էին ելել: Ամենայն հայոց բանաստեղծը հոգեմաշ ապրումների մեջ էր իր բզկտված հայրենիքի, բնաջնջված ժողովրդի, բարոյական նկարագիրը կորցրած քաղաքակիրթ աշխարհի, գազանացած մարդ արարածի համար: Այդ հոգեվիճակում նա փորձում է հանգստության հանգրվան գտնել հայեցողական խոհերի մեջ՝ հավերժական ճշմարտությունների, բարոյական անմեռ արժեքների մասին: Արևելքը, որ արևմտյան մտքի համար էկզոտիկական ժամանց էր միայն, հայ բանաստեղծի համար դառնում է «հոգու հայրենիք»: Ստեղծագործական հոգեբանության այս շրջվածքն առհասարակ բնորոշ էր 20-րդ դարի առաջին տասնամյակների հայոց բանաստեղծությանը:

Արևելքի գրականությանը Թումանյանն, իհարկե, ռուսական աղբյուրների միջոցով ծանոթ էր դեռևս երիտասարդության տարիներից: Բայց ծրագրված ստեղծագործական հետաքրքրությունը արևելյան քաղաքակրթության ու մշակույթի հանդեպ սկսվել է համեմատաբար ուշ: Այս տեսակետից ուշագրավ վկայություն կա Լեոյի՝ 1911 թ. հուլիսի 24-ի նամակում՝ հասցեագրված Թումանյանին. «Այս թոնրի մեջ⁵ Ֆիրդուսի եմ կարդում ու դրանով մխիթարվում, մոռանում ամեն ինչ, - գրում է Լեոն: - Ա՛խ, Հովհաննես ջան, կատարյալ քո աշխարհն է, քո տաղանդի տեղն է... ինչ ահագին զրկանք է քեզ համար այդ նյութին անծանոթ լինելը»:⁶ Լեոն հիմք ունե՞ր կարծելու, թե Թումանյանն անծանոթ է Ֆիրդուսու հանրահռչակ վիպերգին, թե՞ ոչ, այս դեպքում այնքան էլ էական չէ:

⁵ Նկատի ունի Թիֆլիսի ամառային շոգը: Այդ օրերին Թումանյանը հանգստանում էր Մանգլիսի ամառանոցում:

⁶ Թումանյանի, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, Ե., 1998, էջ 357:

Բայց եթե բանաստեղծն այդ օրերին հատուկ նպատակով արդեն սկսած լիներ հետաքրքրվել արևելյան մշակույթով, Լեոնդրան անպայման տեղյակ կլիներ: Թումանյանի ստեղծագործական զարգացման բուն տրամաբանությունն էլ ցույց է տալիս, որ արևելյան քաղաքակրթությունն ու մշակույթը հայ բանաստեղծի նպատակային հետաքրքրությունների շրջանակում հայտնվում են հիմնականում 1910-ական թվականներին՝ քառյակների շրջանում:

Արևելյան մշակութային աշխարհի հետ Թումանյանի ստեղծագործական շփումները դրսևորվել են գլխավորապես թարգմանությունների և փոխադրությունների ձևով, որոնց բնօրինակների մեջ հայ բանաստեղծը ոչ միայն գտել է իրեն հոգեհարազատ իմացական ու բարոյական արժեքներ, այլև տեսել ու ճանաչել է ինքն իրեն:

Թումանյանն այն ստեղծագործողներից է, որոնց ամենատես հայացքից չի վրիպում մարդկային կեցության ոչ մի բնագավառ: Սակայն նա, ներկայացնելով դրանց իրական պատկերը, դա բովանդակավորում ու իմաստավորում է հազարամյակների փորձով հաստատված ճշմարտությունների ու բարոյական չափանիշների դիտակետից: Դա թումանյանական գեղագիտության կարևոր հատկանիշներից է, որով պայմանավորված է նաև նրա մշտական հետաքրքրվածությունը ժողովրդական հեքիաթներով:

Արևելյան հեքիաթային մշակույթի հետ նա կապվում է հատկապես արաբական, ճապոնական, հնդկական բանահյուսական ավանդույթների միջոցով:

Ճապոնականից փոխադրել է «Լեզուն կտրած ծիտիկը»՝ ձեռքի տակ ունենալով ռուսերեն տարբեր թարգմանություններ և ճապոներեն բնօրինակի ճոխ նկարագրողումները, որոնք օգտագործվել են հայերեն հրատարակության մեջ: Հետաքրքիր է, որ հրատարակության հովանավոր իշխանուհի

Մարիամ Թումանյանը հեքիաթը այնքան էլ հարմար չի համարում մանուկ ընթերցողների համար՝ ասելով, թե չար պառավի կողմից ծտի լեզուն կտրելը նրանց վրա ճնշող տպավորություն կարող է թողնել: Մինչդեռ Թումանյանը հեքիաթի հրատարակչին գրում է. «Դա մանկական ամենալավ հեքիաթներից մեկն է, իսկ նկարագարողումները կարծեմ իրենց նմանը դեռ չեն ունեցել հայոց մանկական գրականության մեջ»: Եվ իրոք, չարի և ազահության պատժվելը, դրան հակառակ՝ բարու և անշահասիրության հատուցումը արժանի շնորհակալությամբ, որ մշտապես հոլովվում է Թումանյանի դավանած բարոյական արժեքների շարքում, շատ ավելի դրական հույզեր կարող են առաջ բերել մանկական ներաշխարհում, քան պառավական չարությունը՝ ճնշող տպավորություն:

Արաբական հեքիաթների ոռուսերեն թարգմանություններից Թումանյանն ընտրել է «Անգին քարը»՝ մարդկային իմաստնության, բարության ու խղճի մասին ուսանելի մի գրույց, որի հանդեպ մշտապես տեղի են տալիս դրանց հավիտեական ուղեկից չարությունն ու նախանձը: Թարգմանությունը բավական ազատ է. Թումանյանը հեքիաթային անցուդարձերին ուղղություն է տալիս բարոյական խորհուրդներով, որ ծանոթ արտահայտություններով գործառում են նրա ողջ ստեղծագործության մեջ: Ահա, օրինակ, թագավորական խնջույքի հրավիրվածներց մեկի՝ «հեքիաթախոսի» գրույցից մի հատված. «Աշխարհքում շատ գանձեր կան, բայց ամենաթանկ գանձը լավ անունն է: Լավ անունով մարդը միաժամանակ ապրում է հազար ու մի տեղ, հազար ու մի մարդու սրտում: Լավ անունով մարդը էնպես տեղեր է հասնում, որ չի կարող հասնել ո՛չ ձիով, ո՛չ ոտով, և ո՛չ ուրիշ միջոցով: Լավ անունով մարդը չի մեռնում: Նա մահից հետո

էլ անտեսանելի ապրում է մեր միջում, ինչպես ոգի»⁷: Դժվար չէ նկատել, որ սա «Թմկաբերդի առումը» պոեմի հիմքում գործող ամենքիս ծանոթ բարոյական պատվիրանն է: Ուշագրավ է նաև, որ ռուսերեն բնագրի «Драгоценный камень» խորգիրը բառացի չի թարգմանել՝ «Թանկարժեք քարը», այլ նախընտրել է հայ ժողովրդական հեքիաթներում ընդունված «Անգին քարը»:

Թումանյանական «հոգու հայրենիքի» կատարելատիպ պատկերը լիովին հստակվում է հնդկական «Ոսկի քաղաքը» հեքիաթի փոխադրության մեջ: Եթե նկատի ունենանք, որ փոխադրությունը կատարված է ռուսերեն թարգմանությունից,⁸ որ իր հերթին կարող էր հնդկական բնագրում փոփոխություններ կատարած լինի, ինչպես բնորոշ է ռուսերեն թարգմանություններին առհասարակ, ապա կարելի է ասել, որ հայերեն փոխադրությունը պատմելաոճի շատ ընտիր հայկականությամբ, մանավանդ երկխոսությունների թումանյանականությամբ, ինքնուրույն ստեղծագործության արժեք է ստանում: Իսկ չափածո հատվածները ամբողջությամբ անկասկած թարգմանչի հավելումներն են: Ուշագրավ է հատկապես դրանցից մեկը.

Գոհ աշխարհքից, գոհ իր կյանքից,
Միմուրդ հավքի գմրուխտ թևին.
Երջանկության հայրենիքից
Գնում է նա, գնում կրկին:
Գնում է նա վերածնված
Մաքուր սիրով, բարի սրտով.
Դեպի երկիրն իր նախահարց,
Ցավերի տուն, արցունքի ծով:

⁷ Նույն տեղում, հ. 5, էջ 323:

⁸ Նույն տեղում, հ. 5, Ե., 1994, էջ 221:

Տանում է նա ուժը ոգու,
Անվերջ սերերը, անհատ բարին.
Երջանկություն ամեն մարդու,
Խաղաղություն ողջ աշխարհին:⁹

Կասկած չկա, որ այս տողերը գրելիս հայ բանաստեղծը աչքի առաջ է ունեցել իր «ցավերի ծով» հայրենիքը: Հնդկական հեքիաթում նա իրականացած է տեսնում երջանկության աշխարհի մասին իր նվիրական երազանքը, որ զանազան դրսևորումներով ուղեկցել է նրան ողջ ստեղծագործական կյանքում, ինչպես, օրինակ, «Քոշաքարում ես վազել եմ...» հայտնի բանաստեղծության մեջ, որ Թումանյանը գրել է դստեր՝ Անուշի ալբոմում հեքիաթի թարգմանությունից տարիներ անց՝ 1917-ին.

Իմ մուրազը շատ էր շրթեղ,
Դըրախտ պիտեր քաղաք ու գեղ.
Երգը հոսեր հառաչքի տես,
Մերն ու բարին՝ Արագ, Անուշ:

Ակնհայտ է նմանությունը երջանկության այն աշխարհի հետ, որ արևելյան ճոխ երևակայությամբ ստեղծել է հնդիկ ժողովուրդը «Ոսկի քաղաքը» հեքիաթում:

Արևելքի տեսիլը Թումանյանի բանաստեղծական գիտակցության մեջ սաղմնավորվել է դեռևս վաղ պատանեկության տարիներից: Արևելյան սիրավեպերի երգախառն պատմությունները ընտանի էին նրա հայրական հարկի տակ: Քահանա հայրը, ավագ եղբայրը սիրում էին պատմել կեսիրապատում, կեսիրաշապատում այդ հրապուրիչ հեքիաթները, մանավանդ հայրը չոնգուրի նվագակցությամբ

⁹ Ռուսերեն թարգմանությանը Թումանյանը ծանոթացել է Ա. Նևելովայի կազմած «Сто сказок разных стран и народов» ժողովածուից (նույն տեղում, հ. 5, էջ 792):

հաճախ էր երգում այդ պատմություններին ուղեկցող հուզա-
ռատ սիրերգերից: Դրանցից մեկը՝ «Քյարամի հրաժեշտը»,
1910-ականների վերջերին թուրքերենից թարգմանել է Թու-
մանյանը: Թուրք երիտասարդը, սիրահարված հայ քահանայի
դստերը, հրաժեշտ է տալիս աշխարհում ամեն ինչին և գնում
է փնտրելու նրան՝ իր սիրահարված սրտի բարի մաղթանք-
ները թողնելով աշխարհին:

Եղ ու մեղր հոսեն դաշտ ու հանդերով,
Խոր ձորերը կտրեն անուշ կաթի ծով,
Բար ու պտուղ՝ ծըմակներով, սարերով,-
Գարուն բացվի ձմռանը պաղ աշխարհի:¹⁰

Այս մաղթանքները շատ նման են բանաստեղծի՝ վերո-
բերյալ «շքեղ մուրազին», և դա ունի երկու բացատրություն.
նախ՝ այդ երազը ուղեկցել է Արևելքի բոլոր ժողովուրդներին
բոլոր ժամանակներում, և ապա՝ միայն սերն է այդ «մուրազի»
իրականացման արդար ճանապարհը: Սերը և բարին, որոնց
ձևաչափով է կերտված Թումանյանի ստեղծագործական
աշխարհը, Արևելքի հայեցողական կենսափիլիսոփայության
հիմնային արժեքներից են: «Իմ երգը» ծրագրային բանաստեղ-
ծությունը անվերապահորեն հաստատում է հայ բանաստեղծի
հավատարմությունը այդ արժեքներին:

Կյանքի վերջին տարիներին՝ հատկապես քառյակների
շրջանում, Թումանյանին խորապես հետաքրքրել է նաև
Արևելքի ինչպես հնագույն, այնպես էլ նոր ժամանակների
դասական պոեզիան: Առաջին գործնական անդրարձներից
մեկը հնդիկ բանաստեղծ Թերուվալլովայի «Պարիայի երգը»
բանաստեղծության թարգմանությունն է ռուսերենից, որ
տպագրվել է «Հորիզոն» թերթում թարգմանչի հետևյալ ծանո-

¹⁰ Նույն տեղում, հ. 5, էջ 328:

թագրությամբ. «Պարիսիաների դասը, քառասուն միլիոն մի բազմություն, ամեն ինչքից ու իրավունքից զուրկ, հասարակությունից մերժված մի դաս է Հնդկաստանում: Բրամինների սահմանած օրենքով (Ավադանա սաստրա) նրանց արգելվում է մարդաբնակ շենքեր մտնել, աման գործածել, գնացական ջուր խմել, լվացում կատարել, թաղումն անել, աստծուն պաշտել, ընտանիք ունենալ և այլն: Անգլիական կառավարությունը չկարողացավ միանգամից ջնջել հին օրենքն ու աղաթը և ազատել պարիսիաներին իրենց դաժան վիճկից: Պարիսիաները մի բանաստեղծ ունեն թերուվալլովա անունով, որ միակ պարիա բանաստեղծն է ամբողջ Հնդկաստանում. թեև պարիան համարվում է ավելի գարշելի, քան ամենապիղծ կենդանին, այնուամենայնիվ, հենց իրենք բրամինները թերուվալլովային անվանում են աստվածային պարիա: Թերուվալլովայի էս ոտանավորը թարգմանված է ռուսերենից»:¹¹ Պարիա բանաստեղծը, լի աշխարհի բարիքներից անմասն, իր տրորված ժողովրդի տրտունջն է բարձրաձայնում երկնքի ու երկրի դիմաց հույս էլ չունենալով, որ արդարության ձայնը կհասնի աստվածների խուլ ականջին.

Իզուր մերժեցի էս մահը դաժան
Եվ անտառների խորքերումը խուլ
Սրբազան հեղումն արի լիասիրտ,
Որ աստվածների սրտերը մեղմեմ,
Ո՛հ, նրանք փախան իմ մոտենալիս:
Երկի նք ու երկիր, մե՛զ մըտիկ արեք
Ի՛նչ ենք մենք...¹²

¹¹ Նույն տեղում, հ.2, էջ 604: Թարգմանի ձեռքի տակ եղել է Լ.Ժակոլիոյի «Париви истории человечества», Москва, 1898 գիրքը:

¹² Նույն տեղում, էջ 273:

Այսպես մեծ մարդասեր հայ բանաստեղծն էր իզուր արդարություն ակնկալում «խտրող ու դաժան» երկնային սրբերից ու աստվածներից «Բարձրից»՝ իր «գարկված ու զրկված» հայրենիքի («Հայրենիքիս հետ»), տառապող մարդկության արհամարհված դատի համար:

Թումանյանի թղթերում պահպանվել է Ռ. Թագորի «Գիտանջալի»-ից մի հատվածի թարգմանության նախնական ձեռագիրը: Թվում է՝ այդ թարգմանությունը հեռավոր կապ պետք է ունենա «Պարիայի երգի» թարգմանության հետ, քանի որ Թագորը այն հնդիկ մտավորականներից էր, որոնք հետևողականորեն պայքարում էին հասարակության մեջ կաստայական խտրականության դեմ: Թարգմանված հատվածը՝ «Լո՛ւյս, ո՛վ լույս, աշխարհքը լցնող լույս...» սկսվածքով, լույսի փառաբանություն է, որ նաև հայ բանաստեղծի մարդասիրական իդեալի խորհրդանիշն է նրա գեղագիտության համակարգում:

Նույն 1910-ական թվականներին Թումանյանը թարգմանության փորձեր է արել նաև հնդկական վեդաներից: Ընտրված հատվածները բնորոշ են այն առումով, որ լիովին համահունչ են քառյակներում և այդ շրջանի մի քանի խոհաքնարական երգերում բանաստեղծին հուզող փիլիսոփայական մտորումների հետ: Մտքով իմաստուն և հոգով խաղաղված բանաստեղծը «Վայրէջք»-ում որոնում է տիեզերքի, գոյության սկիզբների սկիզբը, ինչպես վեդայական հիմների հեղինակները:

Ո՛ր տեղից է ծագել արդյոք կազմը էս երկրի,

Ստեղծա՞ծ է բնությունը, թե չէ:

Իր պահապանը գիտի միակն երկնքում,

Կամ, թերևս, նա ինքն անգամ չըգիտի:¹³

¹³ Նույն տեղում, էջ 321:

1910-ականների երկրորդ կեսին Թումանյանը չինական պոեզիայից թարգմանել է երեք նմուշ՝ Կոնֆուցիուսի (մ.թ.ա. VI-V դդ.) «Մարդու ճակատագիրը», Լի-Թայ-Պոյի (մ.թ. VIII դ.) «Կարմիր վարդը» և Մա-Խուանդ-Թունգի (մ.թ. XIX դ.) «Մերժվածը» բանաստեղծությունները: Առաջինում խոսքը տիեզերական կյանքի հավիտենական նորոգումի և մարդու վաղանցիկության դրամայի մասին է, որ շարունակ հուզել է աշխարհի բոլոր բանաստեղծներին բոլոր ժամանակներում, երկրորդում արծարծվում է պատերազմի դաշտում կռվող սիրած ամուսնուն սպասող կնոջ կարոտի թեման, որ նույնպես ծանոթ է ու կրկնվող, երրորդը քնարական տրամադրությամբ ավելի մոտ է մեր ժամանակներին. արտահայտում է սիրահարված և մերժված երիտասարդի հոգեկան տվայտանքները:

Թումանյանի ձեռքի տակ եղել է «Свирель Китая» (СПБ 1914) ժողովածուն, և թվում է՝ թարգմանության համար հատկապես այս բանաստեղծությունների ընտրությունը պատահական չէ: Դրանք թարգմանվել են գրեթե միաժամանակ և միասնաբար, մեկը մյուսին լրացնելով, հավերժականի և ակնթարթայինի մարդկային դրաման լուծում են «կյանքը շարունակվում է» պարզ կենսափիլիսոփայությամբ, որ բանաստեղծներն արտահայտում են հազար ու մի ձևերով: Օրինակ՝ Թումանյանի մոտ այսպես.

Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ, ի՛նչ կա որ.
Ես եղել եմ, կա՛մ, կըլինեմ հար ու հավետ, ի՛նչ կա որ,
Հազար էսպես ձևեր փոխեմ, ձևը խաղ է անցավոր,
Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ի՛նչ կա որ:¹⁴
Իսահակյանի մոտ.

Բայց ամեն մի նոր ծնվածի համար նորից է պատմվում
հեքիաթն այս շքեղ,

¹⁴ Նույն տեղում, էջ 51:

Նորից սկսվում և ավարտվում է ամեն մի մարդու կյանքի
հետ մեկտեղ:

«Աբու-Լալա Մահարի»

Եվ այսպես շարունակ...

Իրանի միջնադարյան պոեզիայից Թումանյանը թարգ-
մանել է միայն XII դարի նշանավոր բանաստեղծ Խաքանիի
վեց քառյակները, որոնք բովանդակությամբ մոտ են իր
բանաստեղծական կենսափիլիսոփայությանը: Պարսիկ բա-
նաստեղծին ևս հանգիստ չի տալիս մարդու կյանքի վաղան-
ցիկության ցավը.

Հոգուդ հավքը հանկարծ թըռավ՝ ի՞նչ ես դու.

Ճամփիդ կիսում ձիդ որ կորավ՝ ի՞նչ ես դու.

Եթե մարդ ես – կյանքը փոխ է տըված քեզ,

Փոխտըվողը որ ետ տարավ՝ ի՞նչ ես դու:

Ցավն առավել է խորանում այն գիտակցությունից, որ
այդ կարճատև կյանքն էլ լի է զրկզնքներով ու դառնություն-
ներով.

Ե՛կ, Խաքանի ու հեռացիր էս չարության զնդանից,

Շեն ու շենսիրտ, անցի՛ր, գնա ցավ ու հոգսի էս տանից.

Կյանք ես առել երկընքիցը, դա շրդթա է դառել քեզ,

Ետ տուր իրեն տըված կյանքը, թըռիր ազատ ամենից:

Եվ իզուր են մարդիկ փորձում իրենց մխիթարել փրկչի
գալստյան հույսով.

Ասում են՝ թե հազար տարին մի անգամ

Մի փրկիչ է աշխարհ գալիս – մի անգամ.

Մին, երբ եկավ, ծնված չէինք մենք մորից,

Մին էլ, երբ գա, մեռած կըլնենք ցավերից:¹⁵

¹⁵ Նույն տեղում, էջ 285:

Թումանյանն, իհարկե, ռուսերեն թարգմանությունների միջոցով քաջածանոթ էր միջնադարի մյուս պարսիկ բանաստեղծներին, թեև նրանցից թարգմանություններ չի կատարել այդ մասին են վկայում, օրինակ, Ֆիրդուսուն դիմելը «Թմկաբերդի առումը» պոեմում, կամ Խայամին՝ հայտնի քառյակում.

Խայամն ասավ իր սիրուհուն.- Ուրդ ըզգույշ դիր հողին,
Ո՛վ իմանա՝ որ սիրունի բիբն ես կոխում դու հիմի...

Հե՛յ, ջա՛ն, մենք էլ ըզգույշ անցնենք, ո՛վ իմանա, թե հիմի
Էն սիրունի բի բն ենք կոխում, թե հուր լեզուն Խայամի:¹⁶
Պարզված է,¹⁷ որ այս քառյակի հղացումը բանաստեղծին հուշել է Խայամի հետևյալ քառյակը.

Երբ՝ Նովբուզին ամպը ցողով լալաների դեմքը դադի
Ելի՛ր մենք էլ գինու գավով դաշտերն ելնենք՝ խաղ ու
տադի,

Այս մարգերը, որտեղ այսօր մենք ենք շրջում երազելով
Գալ գարունքին, ո՛վ իմանա, գուցե բուսնեն հենց մեր
հողին:

Ինչպես իր ժամանակին, այնպես էլ հետագայում՝ խորհրդային տարիներին, Թումանյանին երբեմն քննադատել են, թե նա, մտնելով հավերժական հարցերի այս հայեցողական ոլորտը, հեռանում է կյանքի հրատապ խնդիրներից: Իրականությունն այն է, սակայն, որ բանաստեղծը այդ խնդիրներին մոտենում է այլ կերպ՝ դրանք մեկնաբանելով բարոյական բարձրագույն արժեքների դիտակետից: Եթե նա այդքան սրտի մոտ է ընդունում հայ գյուղացու անվերջանալի զրկանքներն ու առօրյա հոգսերը, ինչպես, ասենք, «Գութանի երգում»

¹⁶ Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով (Վերախմբագրված հրատարակություն), Ե., 2018, էջ 46:

¹⁷ Նույն տեղում, էջ 540-541:

կամ «Հին օրհնության» մեջ, եթե այդքան ցավագին է վերապրում մայր ժողովրդի դարավոր վիշտը, ինչպես «Հայոց վիշտը» կամ «Նախերգանք» բանաստեղծություններում, եթե ոչ պակաս դառնությամբ է արձանագրում, որ «մարդակեր գազան մարդը դեռ երկար էսպես կմնա» («Հոգեհանգիստ»), որ «դեռ հեռու է մինչև Մարդը իր ճամփան» («Բերանն արնոտ մարդակերը են անբան...»),- ապա դրանք որքան սոցիալական կամ քաղաքական, նույնքան և ավելի բարոյափիլիսոփայական խնդիրներ են նրա գեղագիտության ներդաշնակ համակարգում: Այդ համակագի տրամաբանությամբ է հայ բանաստեղծը իր հայացքը ուղղում դեպի Արևելք:

Թումանյանը և Արևելքը թեման ավելի լայն ու բազմակողմանի քննություն է ենթադրում բանաստեղծի ստեղծագործության ամբողջական համատեքստում: Այս հաղորդման մեջ փորձ արվեց անդրադառնալ ծավալուն հարցադրման միայն մի քանի էական կողմերի:

РЕЗЮМЕ

ТЕМА ВОСТОКА В ТВОРЧЕСКОМ МИРЕ ТУМАНЯНА ЛИЛИТ ГЕВОРКЯН

В рамках статьи предметом изучения стали восточные мотивы и темы, используемые в произведениях Туманяна. Статья посвящена восточной культуре и творческим связям Туманяна, которые в основном проявляются в переводах. Данная тема также развита в сказках и особенно в четверостишиях. В статье предпринята попытка охватить лишь некоторые существенные стороны восточных мотивов творческого мира Туманяна.

Ключевые слова: Восток, творчество, поэт, поэзия, культура, переводы, стихотворный, статья, творческая жизнь, сказка, четверостишие, стихотворение.

ABSTRACT
THE TOPIC OF THE EAST IN TUMANYAN'S CREATIVE
WORLD
LILIT GEVORGYAN

Eastern motives and topics used in Tumanyan's works has become the subject of study in the scope of the article. The article dwells on the Eastern culture and Tumanyan's creative relations which come forth mainly in translations. This topic is also developed in fairy tales and especially in quartets. In the article an effort has been made to cover only some essential sides of the Eastern motives of Tumanyan's creative world.

Key words: the East, work, poet, poetry, culture, translations, article, tale, quartet.

ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

Ախտյան Հմմտ

Սուլիսան-Սաբա Օրբելիանու անվան պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսոր, հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու (Վրաստան)

Ասատրյան Աննա

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, երաժշտության բաժնի վարիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, գլխավոր գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ

Ասատրյան Գրիգոր

Հյուսիսային համալսարանի գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոնի ղեկավար, Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր

Ասլանյան Ասլան

Հյուսիսային համալսարանի պատվավոր պրոֆեսոր

Բիստրյանցև Մերգել

Սանկտ Պետերբուրգի պետական տնտեսագիտական համալսարանի պրոֆեսոր, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր (Ռուսաստան)

Գոմաա Մերվաթ

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու (Եգիպտոս)

Գրիգորյան Լիլիթ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մագիստրանտ

Գևորգյան Լիլիթ

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու

Դանիելյան Սուրեն

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայ նոր և նորագույն շրջանի գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դավթյան Վարդուհի

Հյուսիսային համալսարանի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Դավթյան Ռազմիկ

Բանաստեղծ

Դուրխանյան Աելիտա

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ

ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ

Երիցյան Սերգո

«Լոռվա ձոր» հայրենակցական միության նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Թոռունյան Նաիրա

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հայոց լեզվի և բժշկական տերմինաբանության ամբիոնի դասախոս

Հակոբյան Լիլիթ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

Հակոբյան Վահե

Երևանի պետական համալսարանի ասպիրանտ

Հակոբջանյան Անահիտ

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու

Համբարձումով Արսեն

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու

Հովհաննիսյան Սյուզաննա

Հյուսիսային համալսարանի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հովհաննիսյան Մուսաննա

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր

Հովսեփյան Մարիամ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու

Մակիյան Բորիս

Հյուսիսային համալսարանի ռեկտոր, Պետհավատարմագրված հայկական համալսարանների ռեկտորների խորհրդի նախագահ, մանկավարժական գիտությունների թեկնածու, մաթեմատիկայի դոցենտ

Միրզոյան Վալերի

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մկրտչյան Նունե

Հյուսիսային համալսարանի հայոց լեզվի, գրականության և լրագրության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու

Մուկույան Անահիտ

Հյուսիսային համալսարանի Ալավերդու բաժանմունքի դասախոս

Շահինյան Աշոտ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ջանփոլադյան Մագրա

Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր

Մահակյան Արմեն

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մարգսյան Տիգրան

Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանի գլխավոր ֆոնդապահ

Սուքիասյան Հենրիետա

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հայոց լեզվի և բժշկական տերմինաբանության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Վեսոլովսկի Քրիստոֆ

Շեցինի համալսարանի դասախոս (Լեհաստան)

Յալուդելաշվիլի Լևան

Բանաստեղծ (Վրաստան)

Քամայան Մարգարիտա

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտքարտուղար, ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու

НАШИ АВТОРЫ

Акопджанян Анаит

Доцент Ереванского государственного университета языков и социальных наук имени В. Брюсова, кандидат филологических наук

Акопян Ваге

Аспирант Ереванского государственного университета

Акопян Лилит

Младший научный сотрудник Института искусств НАН РА

Амбарцумов Арсен

Старший научный сотрудник Института искусств НАН РА, кандидат искусствоведения

Асатрян Анна

Заместитель директора, заведующая сектором музыки Института искусств НАН РА, доктор искусствоведения, профессор, главный научный сотрудник, заслуженный деятель искусства РА

Асатрян Григорий

Руководитель Центра научных исследований, новаторских программ и поствузовского профессионального образования Северного университета, президент Академии проблем гуманизма, доктор философских наук

Асланян Аслан

Почетный профессор Северного университета

Ахтян Эмма

Профессор, заведующая кафедры армянского языка и литературы Государственного педагогического университета имени Сулхана-Сабы Орбелиани, кандидат филологических наук (Грузия)

Быстрянец Сергей

Профессор Санкт-Петербургского государственного экономического университета, доктор социологических наук (Россия)

Весоловски Кристоф

Преподаватель Университета Щецина (Польша)

Геворкян Лилит

Доцент Ереванского государственного университета языков и социальных наук имени В. Брюсова, кандидат филологических наук

Гомеа Мерват

Доцент Ереванского университета языков и социальных наук имени В. Брюсова, кандидат филологических наук (Египет)

Григорян Лилит

Магистрант Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна

Давоян Размик

Поэт

Давтян Вардуи

Преподаватель Северного университета, кандидат филологических наук, доцент

Даниелян Сурен

Заведующий кафедрой армянской литературы нового и новейшего периодов и методики ее преподавания Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна, доктор филологических наук, профессор

Джанполадян Магда

Профессор Ереванского государственного университета, доктор филологических наук

Долуханян Аэлита

Заведующая кафедрой армянской древней и средневековой литературы и методики ее преподавания Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна, член-корреспондент НАН РА, доктор филологических наук, профессор, заслуженный деятель культуры РА

Ерицян Серго

Председатель Земляческого союза «Лорва дзор», доктор филологических наук, профессор

Камалян Маргарита

Ученый секретарь Института искусств НАН РА, кандидат искусствоведения, старший научный сотрудник

Макичян Борис

Ректор Северного университета, председатель Совета ректоров госаккредитованных армянских университетов

Мирзоян Валерий

Доктор философских наук

Мкртчян Нуне

Заведующая кафедрой армянского языка, литературы и журналистики Северного университета, кандидат филологических наук

Мукучян Анаит

Преподаватель Алавердского отделения Северного университета

Овсепян Мариам

Ведущий научный сотрудник Института истории НАН РА, кандидат филологических наук

Ованесян Сусанна

Ведущий научный сотрудник Института литературы имени М. Абеяна НАН РА, доктор филологических наук

Оганесян Сюзанна

Преподаватель Северного университета, кандидат педагогических наук, доцент

Саакян Армен

Заведующий кафедрой социологии и социальной работы Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна, доктор социологических наук, профессор

Саргсян Тигран

Заведующий отделом фондов Дома-музея Александра Спендиаряна

Сукиасян Генриета

Заведующая кафедрой армянского языка и медицинской терминологии Ереванского государственного медицинского университета имени М. Гераци, кандидат филологических наук, доцент

Торунян Наира

Преподаватель кафедры армянского языка и медицинской терминологии Ереванского государственного медицинского университета имени М. Гераци

Цалугелашвили Леван

Поэт (Грузия)

Шагинян Ашот

Кандидат исторических наук, доцент

Բովանդակություն

Բորիս Մակիյան

Մեծարանքի տուրք՝ հավերժող հանճարին 4

Սուսաննա Հովհաննիսյան

Հովհաննես Թումանյանը որպես պետականության, ազգի
հարատևության գաղափարի ու մշակույթի բարձրակետ 19

Աելիտա Դոլուխանյան

Հովհաննես Թումանյանի քառյակները համամարդկային են
ու հավերժական 32

Էմմա Ախտյան

Հովհաննես Թումանյանը և Վրաստանը..... 45

Մերգո Երիցյան

Թումանյանը՝ հրապարակախոս 57

Ռազմիկ Դավոյան

Թումանյանը և Նարեկացին (գաղափարական և
ստեղծագործական առնչություններից)..... 66

Աննա Ասատրյան

Հովհաննես Թումանյանը և երաժշտությունը 78

Հենրիետա Սուքիասյան, Նաիրա Թոռունյան

Մեծ լոռեցու բարոյագիտության և մարդեղբության դասերի
լուսաբանումը Հյուսիսային համալսարանում 91

Сергей Быстрянец, Армен Саакян

Ованнес Туманян как символ поэзии армянского народа..... 99

Սուրեն Դանիելյան

Թումանեան եւ Թէքէան. գրական առընչութիւններ.....111

Վահէ Հակոբյան, Մերվաթ Գոմաս

Համեմատական-վերլուծական հետազոտություն Թումանյանի պոեզիայի և արաբ պոետների միջև.....122

Магда Джанполадян

Юбилейная русская критика об Ованесе Туманяне136

Գրիգոր Ասատրյան

Անտրոպոմորֆիզմը Հովհաննես Թումանյանի
բանաստեղծական աշխարհում149

**Հովհաննես Թումանյանի հոգևոր ժառանգության անանց
արժեքը175**

Նունե Մկրտչյան

Հովհաննես Թումանյանը և ժողովրդական բանահյուսությունը
.....175

Սյուզաննա Հովհաննիսյան

Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների
մանկավարժական արժեքը.....186

Վալերի Միրզոյան

Հովհաննես Թումանյան. «Տիեզերքի տերն եմ ես»198

Մարիամ Հովսեփյան

Հովհաննես Թումանյանի՝ Կ. Պոլիս այցելության լուսաբանումը
պոլսահայ պարբերականների էջերում.....212

Վարդուհի Դավթյան

Կյանքի և մահվան դիալեկտիկան Հովհաննես Թումանյանի
քառյակներում225

Աշոտ Շահինյան

Հայկական ինքնության թումանյանական բացահայտումները
.....238

Անահիտ Մուկուչյան

Թումանյանական հայն ու հայի թումանյանը.....248

Ասլան Ասլանյան

Հանճարաշատ Սայիադ-Նովան մեծանուն բանաստեղծ
Հովհաննես Թումանյանի գրերում256

Անահիտ Հակոբջանյան

Հակադրույթի դրսևորումը Հովհաննես Թումանյանի
քառյակներում273

Հովհաննես Թումանյանը հայ արվեստում.....286

Մարգարիտա Քամայան

Հովհաննես Թումանյանը հայ կերպարվեստում286

Տիգրան Սարգսյան

Թումանյանի անգուգական պոեմով ներշնչված կամ «Ալմաստ»
օպերայի հավերժության առեղծվածը.....297

Арсен Амбарцумов

Экранизация рассказа Ованеса Туманяна “Гикор” Амасием
Мартиросяном (киноведческий анализ на основе теории
аргументации)310

Լիլիթ Հակոբյան

Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը՝ Նիկոլ
Գալանդերյանի ոգեշնչման աղբյուր317

Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը
միջմշակութային փոխառնչությունների համատեքստում ...327

Krzysztof Wesołowski

Hovhannes Tumanyan and Adam Mickiewicz - Prophets of Nations
Free in Spirit327

Լևան Ցալուղելաշվիլի

Հովհաննես Թումանյանը և ժամանակակից Վրաստանը339

Лилит Григорян

Творческое наследие Ованеса Туманяна и влияние русской
литературы на творчество поэта. межлитературные связи.....353

Լիլիթ Գևորգյան

Արևելքը Հովհաննես Թումանյանի ստեղծագործական
աշխարհում.....367

Մեր հեղինակները383

ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ СЕВЕРНЫЙ УНИВЕРСИТЕТ

Հովհաննես Թումանյանի հոգևոր
ժառանգությունը և արդիականությունը
(Հ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված
միջազգային գիտաժողովի նյութեր,
15-16 մայիսի 2019 թ.)

Духовное наследие Ованеса
Туманяна и современность
(материалы международной научной
конференции, посвященной 150-летию
Ов. Туманяна, 15-16 мая 2019 г.)

Համակարգչային ձևավորումը, էջադրումը և սրբագրումը՝
Անուշ Սարգսյանի
Կազմի նկարը՝ Հյուսիսային համալսարանի դոցենտ, մանկ. գիտ. թեկ.
Արմեն Հարությունյանի
Կազմի դիզայնը՝ Արփիինե Ալեքսանյանի